

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

---

ՄԵՆՔ  
ՀՐԱՎՏԱՆԳ  
ԵՆՔ,  
ԹԵ՞ ՀՐԱՎՅՈՒՆ

ՌԷՅՆՀԱՐՏ  
ՊՈՆՔԷ



Միրելի անտարանիչնե՛ր,

Այս գիրքը, որ Մուրբ Հոգիին եւ անտարանչութեան մասին է, իմ անտարանչական ծառայութեան ժառանգութեան մէկ մասն է: Գիրքին մէջ կը ներկայացնեմ Հոգիի դպրոցին մէջ ամբողջ կեանքի ընթացքին սորված իմ արդիւնաւէտ ծառայութեան մասին: Մեր ծառայութիւնը ականատես եղած է տասնեակ միլիոնաւոր թանկագին մարդոց փրկութեան:

Աստուած կը թափէ Մուրբ Հոգին՝ փառաւոր կերպով անտարբերութեան մատնելով մեր տարբերութիւնները: Կը թուայ՝ Ան կը թափէ Ինքզինքը որեւէ անօթի մէջ, որ բաց է Իրեն համար: «Վերջին օրերուն մէջ,- կ'ըսէ Աստուած,- Իմ Հոգիս պիտի թափեմ ամէն մարմինի վրայ...»: Մենք չենք վիճիր Աստուածաշունչին հետ: Մենք կը յենինք ատոր մէջ եղած ապացոյցներուն վրայ: Ան նման է վաւերական հաւատարմագրեր ունեցող դեսպանի: Ան կը հաստատէ Իր իսկութիւնը: «Ան կենդանի եւ յաւիտենական է,- կ'ըսէ Պետրոս առաքեալը (Ա Պետրոս 1.23),- եւ կը շարունակէ գոյութիւն ունենալ, քանի որ Ան կենդանի ճշմարտութիւն է»:

Այս գիրքը, որուն մէջ ամփոփուած է իմ ծառայութեան ժառանգութիւնը, նուէր է ձեզի: Խնդրե՛մ, կարդացէ՛ք այն անկէ քան մէկ անգամ, եւ ընդգծեցէ՛ք այն հաստատումները, որոնք կարևոր են ձեզի համար: Պահեցէ՛ք այն որպէս գանձ ձեր սրտին եւ հոգիին մէջ: Այն պիտի տանի ձեզ պտղաբեր կարճ ուղիով դէպի ձեր կոչումը Յիսուսին մէջ:

Աստուած օրհնէ՛ Հայաստանը եւ ամբողջ աշխարհով մէկ սփռուած հայերը: Ես կ'աղօթեմ ձեզի համար:

Յիսուս Քրիստոսի մէջ՝



Ռեյնհարտ Պոնքէ, Անտարանիչ

**CfaN** CHRIST  
FOR ALL NATIONS  
CfaN.org



ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

---

**ՄԵՆՔ  
ՀՐԱՎՏԱՐՆԳ  
ԵՆՔ,  
ԹԷ՞ ՀՐԱՎԱՅՈՒՆ**

Մինչև սկսիք այս գիրքի ընթերցանութեան,  
*ՄԱՐՔԸՐՆԵՐ (գունաւոր գրիչներ)* ունեցէք ձեր քով, որ-  
պէսզի ընդգծէք այն հատուածները, որոնք օրհնութիւն կը  
դառնան ձեզի համար:

Կրնա՞մ բան մը խնդրել: Եթէ, ընթերցելով այս գիրքը,  
դուք օրհնուիք, խոստացէք, որ խորհուրդ պիտի տաք  
այն ձեր ընկերներուն:

A handwritten signature in cursive script, reading "Richard Proulx", with a long horizontal line underneath.

ՍՈՒՐԲ ՀՈԳԻ

---

**ՄԵՆՔ  
ՀՐԱՎՏԱՐՆԳ  
ԵՆՔ,  
ԹԷ՞ ՀՐԱՎԱՅՈՒՆ**

ՌԷՅՆՀԱՐՏ

ՊՈՆՔԷ

Holy Spirit - Are we Flammable or Fireproof? – Western Armenian  
© 2019 by Reinhard Bonnke  
Published by Christ for all Nations  
PO Box 590588  
Orlando, FL 32859-0588, USA  
CfaN.org

Originally published in English as  
Holy Spirit - Are we Flammable or Fireproof?  
by Christ for all Nations  
ISBN: 978-1-933446-52-3 (paperback)  
ISBN-13: 978-1-933446-53-0 (e-book)

This book is a free gift from the author and it is NOT FOR SALE  
Follow Evangelist Reinhard Bonnke on Facebook

«Սուրբ Հոգի. Մենք հրավտա՞նգ ենք, թե՞ հրակայուն», Արեւմտահայերէնով  
© 2019 Ռէյնհարտ Պոնքէ  
Հրատարակուած է «Քրիստոսը՝ ազգերու համար» ծառայութեան կողմէն  
Փ/Ա 590588  
Օռլանտօ, Ֆլորիտա 32859-0588, ԱՄՆ  
CfaN.org

Այգբնապէս հրատարակուած է անգլերէնով  
«Holy Spirit - Are we Flammable or Fireproof?» վերնագիրով  
«Քրիստոսը՝ ազգերու համար» ծառայութեան կողմէն  
ISBN: 978-1-933446-52-3 (տպագրուած գիրք)  
ISBN-13: 978-1-933446-53-0 (էլեկտրոնային գիրք)

Այս գիրքը անվճար նուէր է հեղինակին կողմէն եւ ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱՅ ԶԷ  
Հետեւեցէ՛ք Աւետարանիչ Ռէյնհարտ Պոնքէին ֆէյսպուքով

## ՀՐԵՂԷՆ ԿԱՌՔ

Աւետարանչութիւնը հրեղէն կառք է՝ բոցավա-  
ռող անիւներով, որուն մէջ ջերմեռանդ աւետա-  
բերը կը քարոզէ կրակէ Աւետարանը:  
Թոյլ տուէք Սուրբ Հոգիին, որ ձեր ծառայութիւ-  
նը Իր կառքը դարձնէ:





## ԸՆԾԱՅԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Այս գիրքը կը նուիրեն իմ սիրելի կնոջը՝ Էննիին, որ  
հաւատարմօրէն կողքիս եղած է ամուսնութեան  
մէջ, ընտանիքին եւ համաշխարհային  
ծառայութեան մէջ աւելի քան 53 տարի:

Մէկ շաբաթ առաջ էր, որ ըսի անոր. «Երբ կը  
նայիմ դէմքիդ, ծագող արեւ կը տեսնեն»:

Սկսելով մեր համատեղ կեանքը՝ մենք  
ընտրեցինք Սաղմոս 113.3-ը.  
«Արեւելքէն մինչեւ արեւմուտք օրհնեալ ըլլայ  
Տիրոջ անունը»:

ՌԷՅՆՀԱՐՏ ՊՈՆՔԷ



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նախաբան.....	11
Ներածություն.....	13
Աւետարանը՝ որպէս գէնք.....	17
<b>ԲԱԺԻՆ 1. Ո՞Վ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ.....</b>	<b>19</b>
Հրաշքներու Աստուած.....	20
Մկրտուած՝ կրակով.....	24
Դուք գորութիւն կ'ընդունիք .....	27
Օգնական, Որ մշտապէս ներկայ է.....	30
Մի՛ սահմանափակէք Զինք .....	33
Լիովին նուիրուած Յիսուսին .....	36
<b>ԲԱԺԻՆ 2. ՀՈԳԻՆ ԵՒ ՈՐԴԻՆ. ՄԿՐՏՈՂ ՅԻՍՈՒՄԸ.....</b>	<b>39</b>
Օծեալը.....	40
Որդիին նախանձաւորութիւնը.....	45
Աստուածային առաջնահերթութիւն .....	48
Գինը վճարուած է.....	51
<b>ԲԱԺԻՆ 3. ՍԱՍՏԻԿ ՓՉՈՂ ՔԱՄԻ. ՊԷՆՏԷԿՈՍՏԷ .....</b>	<b>55</b>
Կատարուած խոստում.....	56
Մարգարէական աւետարանչութիւն.....	62
Պէնտէկոստէի Աւետարանը.....	65
Կրակէ համադրութիւն.....	69
Լոյս՝ հեթանոսներուն.....	73
<b>ԲԱԺԻՆ 4. ԸՆԿՐՄԱԾ ԿՐԱԿԻ ՄԷՋ. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ .....</b>	<b>77</b>
Վերջին անձրեւը.....	78
Սուրբ Հոգիին գործունէութիւնը.....	82
Խիստ լեցուն.....	86
Անժխտելի ապացոյց.....	89
<b>ԲԱԺԻՆ 5. ԿՐԱԿԷ ԳՈՐԾԻՔՆԵՐ. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՊԱՐԳԵՒՆԵՐՆ .....</b>	<b>93</b>
Ո՛ր ԶՕՐՈՒԹԻՒՆԸ.....	93
Թանկարժէք եւ անգին.....	94
Պարգեւներ, ոչ թէ գնուած իրեր.....	97
Մեծագոյն պարգեւը.....	101

Արժարժեղ պարգեւը .....	105
Զօրութիւն՝ ի վերուստ.....	109
<b>ԲԱԺԻՆ 6. ԿՐԱԿՈՏ ՄԱՐԴԻԿ. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՒ ՀԱԲՏԱՑԵԱԼԸ.....</b>	<b>113</b>
Ոչ մէկ կրկնօրինակ .....	114
Աւելի, քան կրկնակի չափը .....	118
Թագաւորական քահանայութիւն .....	122
Նոր չափումներ փառքի եւ զօրութեան մէջ.....	125
Աւելի, քան ունակ.....	128
Դուք երբեք միայնակ չէք.....	132
<b>ԲԱԺԻՆ 7. ԿՐԱԿԷ ԱՆՏԱՌ. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ.....</b>	<b>135</b>
Նոր Ծննդոց.....	136
Անփոփոխ Վերափոխողը.....	140
Օժտուած եկեղեցի.....	143
Զօրացած Սուրբ Հոգիով .....	148
Անոր ներքնակուող ներկայութիւնը .....	151
<b>ԲԱԺԻՆ 8. ԲՈՐԲՈՔԱԾ ԿՐԱԿ. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԿՈՉԸ.....</b>	<b>157</b>
Հիմա է ձեր ժամանակը.....	158
Հաւատք՝ մանանեխի սերմի պէս .....	163
Ո՛չ կարողութեամբ, եւ ոչ զգացումներով.....	167
Գերբնականօրէն գործող զօրութիւն.....	171
Աշխարհը կը սպասէ.....	174
Ընտրեցէք հաւա՛ւ տքը.....	177
Երթալու ժամանա՛կն է.....	181
<b>ԲԱԺԻՆ 9. ՄՈՒՏՔ ԴԷՊԻ ԿՐԱԿՈՏ ԿԵԱՆՔ. ԻՆՉՊԷ՞Ս ԸՆԴՈՒՆԻԼ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ .....</b>	<b>183</b>
<b>ՄԱՍ ՄԷԿ</b>	
Սուրբ Հոգիով մկրտութիւնը. ի՞նչ է այն .....	185
<b>ՄԱՍ ԵՐԿՈՒ</b>	
Սուրբ Հոգիով մկրտութիւնը. ինչպէ՞ս ընդունիլ այն .....	201

## ՆԱԽԱԲԱՆ

Ձիս հրաւիրած էին քարոզելու քրիստոնէական հաւաքոյթի մը, ուր մարդիկ չէին հաւատար Սուրբ Հոգիին զօրութեան: Յանկարծ իմ ծառայութեան ժամանակ Սուրբ Հոգին թափեցաւ. մարդիկ կը ցնծային, կը լեցուէին Սուրբ Հոգիով եւ կը փառաբանէին: Ես նայեցայ լսարանին, դահլիճին մէջտեղի մասը երեք, չորս մարդիկ կային, որոնց Ան բոլորովին չէր հպած: Անոնց աչքերը բաց էին, անոնք կը նայէին իրենց շուրջը, այդ գերբնական իրադարձութեան մասնակցելու փոխարէն: Ես մտածեցի. «Կ'երեւի, այս մարդիկ *անթափանցելի քրիստոնեաներ են*»: Անոնք հրակայուն էին նոյնիսկ Սուրբ Հոգիի կրակի թափման ժամանակ: Կ'ուզեմ ըսել ձեզի, որ անձամբ ես հրավտանգ ու բռնկուն եմ Աստուծոյ համար: Ես կ'ուզեմ վառիլ Սուրբ Հոգիին կրակով եւ տանիլ Անոր վառող ջահը մինչեւ իմ կեանքի աւարտը: Այս փորձառութենէն յառաջացաւ այս գիրքի վերնագիրը: Եւ այսօր կ'ուղղեմ այս հարցումը ձեզի. դուք հրավտա՞նգ էք, թէ՞ հրակայուն:



## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Գործք առաքելոց գիրքը ասելի լաւ կ'ընթերցուի, քան որեւէ ժամանակակից վէպ: Ատոր մէջ յստակ նշուած են գործող անձիք. ոմանք գլխաւոր դերերու մէջ են, ոմանք՝ երկրորդական: Գիրքին մէջ կան գործողութիւններ, արկածներ, յաղթանակներ եւ ողբերգութիւններ: Տեսարանները կը փոխուին՝ Երուսաղէմէն Դամասկոս, Անտիոք ու Հռոմ, եւ բանտախցերէն նաւաբեկութիւններ: Մենք կը հանդիպինք Սուրբ Հոգիի քամիին եւ խիզախ գեղջուկ առաքեալներուն, որոնք բացառիկ հրաշքներ կը գործէին եւ կը շփոթեցնէին իրենց օրերու պետութիւններու ղեկավարները: Այնուամենայնիւ, այս մեծ առաքեալները միշտ չէ, որ ակնառու էին, եւ միշտ չէ, որ ազնուագոյն կերպով կը վարուէին:

Ես ապշեցայ՝ Մարկոս 16.8-ն կարդալով, որ Յիսուսի Երկինք համբարձելէն առաջ աշակերտները չհաւատացին: Նոյն անհաւատութեան մասին գրուած է Մարկոսի 16.11-ին մէջ: Եւ երկու խօսք յետոյ՝ 13-ին մէջ, գրուած է նոյն բառը՝ *չհաւատացին*: Կրկին, 14-րդ խօսքին մէջ նոյն բառն է՝ *չհաւատացին*: Անոնք իսկական անհաւատներ էին: Բայց զիս ամէնէն շատ կը զարմացնէ այն փաստը, որ 15-րդ խօսքին մէջ Յիսուս ըսաւ այդ անհաւատ եւ վախկոտ հաւատացեալներուն. «Գացէ՛ք ամբողջ աշխարհով, Աւետարանը քարոզեցէ՛ք ամէն արարածի»: Թոյլ տուէք ըսել, որ եթէ ես հոն ըլլայի, կը մօտենայի Յիսուսին եւ ականջին կը շնջայի. «Տէ՛ր, մի՞թէ չես գիտեր, որ այն աշակերտները, որոնց հազիւ նոր տուիր Մեծ յանձնարարականը, պարզապէս անհաւատներ են: Անոնք չեն կրնար կատարել

այն»։ Կը կարծեմ՝ Յիսուս պիտի դառնար, մատը պիտի դնէր շրթունքին եւ ցած ձայնով պիտի ըսէր. «Պոնքէ՛, Ես գաղտնիք մը ունիմ, որուն մասին դուն չես գիտեր»։

Ո՞րն էր այդ գաղտնիքը։ Ինչ որ բան տեղի ունեցաւ 14-րդ եւ 20-րդ խօսքերուն միջեւ։ Քսաներորդ խօսքին մէջ գրուած է. «Անոնք ալ դուրս գացին, ամէն տեղ կը քարոզէին, եւ Տէրը կը գործակցէր անոնց հետ եւ խօսքը կը հաստատէր այն նշաններով, որ կը հետեւէին, ամէ՛ն»։ Ի՞նչ տեղի ունեցաւ 14-րդ եւ 20-րդ խօսքերուն միջեւ։ Ըստ ժամանակագրութեան՝ տեղի ունեցաւ Գործք առաքելոց 2-րդ գլուխին մէջ նկարագրուած իրադարձութիւնը։ Աշակերտները ձգեցին տկարութիւնը եւ ընդունեցին զօրութիւն, որ անհրաժեշտ էր՝ կատարելու համար այն, ինչ որ Յիսուս յանձնարարած էր իրենց Երկինք համբարձելու ժամանակ. «Բայց դուք զօրութիւն պիտի առնէք, երբ որ Հոգին ձեր վրայ գայ, եւ Իմ վկաները պիտի ըլլաք Երուսաղէմի, ամբողջ Հրէաստանի եւ Սամարիայի մէջ, մինչեւ երկրի ծայրերը» (Գործք 1.8)։ Նոյն կերպով, բոլորս կրնանք ձգել տկարութիւնը եւ քայլ ընել դէպի անսահման զօրութիւն։

Զօրութիւնը քրիստոնէական վկայութեան էութիւնն է։ Այն Աւետարանի լրացուցիչ պարագայ մը չէ։ Այն հեծանիւի գանգը չէ. այն ամբողջական հեծանի՛ւն է։ Աստուածաշունչին մէջ չկայ նոյնիսկ պզտիկ ակնարկ մը այն մասին, որ աշակերտներէն քանի մը հոգի անզօր պիտի ըլլան։ Եթէ ուղիղ խօսինք, քրիստոնէութիւնը կա՛մ գերբնական է, կա՛մ ոչինչ է։ Մենք ունինք գերբնական Յիսուս, որ ունի գերբնական ծառայութիւն եւ ստեղծած է գերբնական Եկեղեցի. մենք ունինք գերբնական Աւետարան եւ գերբնական Աստուածաշունչ։ Հեռացուցէք հրաշքները, եւ դուք կը հեռացնէք քրիստոնէութեան կեանքը։ Եկեղեցին կը վերածուի բարոյագիտական ընկերակցութեան կամ հասարակական ակումբի, մինչդեռ այն պէտք է ըլլայ միասնական ուժանիւթային համակարգ, որ կը փոխանցէ Աս-



տուժոյ զօրութիւնը այս անգոր աշխարհին: Այս աշխարհին համար մենք Աստուծոյ զօրութեան հաղորդիչներն ենք:

Սուրբ Հոգին եւ Քրիստոսի փրկարար սիրոյ Աւետարանը անքակտելիօրէն կապակցուած են կեանքի կապով: Եթէ կ'ուզէք տեսնել Աստուծոյ զօրութիւնը, անտեսեցէք բոլոր մեթոսները, հմտութիւնները եւ հոգեբանական հնարները եւ պարզապէս քարոզեցէք Խօսքը, քանի որ Աստուծոյ զօրութիւնը կը բխի անմիջապէս Աւետարանէն: Ես չեմ վերցնէր միայն մէկ բան Աստուծոյ գանձերու արկղէն: Ես կ'ազդարարեմ ամբողջ Աւետարանը, որ կը պարունակէ այն ամէնը, ինչին կարիքը մենք ունինք՝ փրկութիւն, ներում, բժշկութիւն, խաղաղութիւն, յոյս եւ ազատագրում:

Ես գրի առած եմ շարք մը ազդեցիկ ուսուցումներ Սուրբ Հոգիին մասին եւ կազմած եմ հզօր սկզբունքներ՝ Սուրբ Հոգիի ԿՐԱԿԷ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ: Կ'ուզեմ կոչ ընել, որ մտածէք Սուրբ Հոգիին մասին, եւ ոգեշնչել ձեզ, որ հաւատաք Հոգիին զարմանալի զօրութեան, որ ձեր մէջ է: Ձեր ներսը կայ ազդեցիկ ուժ մը, որ կրնայ յարութիւն տալ մեռելներուն: Աստուած տուած է այն իւրաքանչիւր հաւատացեալի: Մենք ոչ մէկ արդարացում ունինք՝ մեղքի եւ չարիքի առջեւ տկար ըլլալու համար: Չէ՞ որ մենք կրնանք ընել ամէն բան մեզ զօրացնող Քրիստոսով (տե՛ս Փիլիպ. 4.13):

Իրականութեան մէջ, այս գիրքը կ'ամփոփէ իմ կեանքի եւ ծառայութեան գաղտնիքները: Ես համոզուած եմ՝ եթէ դուք կիրառէք այս սկզբունքները, ատոնք ձեր կեանքին մէջ պիտի գործեն նոյն կերպով:

Մեր աւետարանչական հաւաքոյթներու ժամանակ բազմաթիւ մարդիկ մկրտուած են Սուրբ Հոգիով, եւ մենք մշտապէս Աստուծոյ զօրութեան եւ սիրոյ զօրաւոր դրսեւորումներու ականատեսներ կ'ըլլանք: Ես կ'ուզեմ ներկայացնել այն, ինչ որ հասկցած եմ այդ իրադարձութիւններէն: Իմ վերջնական հե-

դինակութիւնը մշտապէս Աստուածաշունչն է: Անշուշտ, փորձառութիւնը օգնած է ինծի հասկնալ բազմաթիւ իրողութիւններ Հոգիին մասին, սակայն, ինչպէս կը գրէ Պետրոսը, Աստուած «շնորհեց մեզի այն ամէնը, ինչ որ կեանքի եւ Աստուածապատուեան համար պէտք է» (Բ. Պետրոս 1.3): Աստուածաշունչը կը վաւերացնէ մեր փորձառութիւնը: Ներկայացնելով այն, ինչ որ հասկցած են Հոգիի իրողութիւններուն մասին՝ ես կը փորձեմ ցոյց տալ, որ իմ հետեւութիւնները եղած են Խօսքի միջոցով եւ պարզաբանուած են այն ամէնով, ինչ որ ես տեսած եմ:

# ԱԲԵՏԱՐԱՆԸ՝ ՈՐՊԷՍ ԶԷՆՔ

«Որովհետեւ ես Քրիստոսի Աւետարանը ամօթ չեմ համարեր, որովհետեւ Աստուծոյ զօրութիւնն է՝ փրկելու համար ամէն հաւատացողի, առաջ՝ հրեային, եւ յետոյ՝ յոյնին»:

ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ 1.16

## ԲԱՑԷՔ ԱՊԱՀՈՎԻՉԸ

Աւետարանը միակ գէնքն է, որ կրակելու պարագային մահացած մարդը կը կենդանանայ:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ

Աստուածաշունչը Աստուծոյ Թագաւորութեան սահմանադրութիւնն է: Ոչ մէկ երկրային խորհրդարան, կառավարութիւն կամ գերագոյն դատարան կրնայ փոխել այն: Աստուածաշունչի ճշմարտութիւնը չ'որոշուիր ժողովրդավարական քուէարկութեամբ կամ համաձայնութեամբ: «Ո՛վ Տէր, Քու Խօսքը յաւիտեան հաստատ է Երկնքի մէջ» (Սաղմոս 119.89): Յիսուս ըսաւ. «Ես եմ ճշմարտութիւնը» (Յովհաննէս 14.6):

## ԿԱՐԵՒՐ ԼՈՒՐ

Երբ Աւետարանը կը քարոզուի, այն կը կատարուի: Այն կը դառնայ կատարուած իրադարձութիւն:

## ԿՐԱ՛Կ ԲԱՑԷՔ

Մի՛ պաշտպանէք Աւետարանը փշոտ մետաղալարով: Աստուածաշունչը լաւագոյնս պաշտպանուած է, երբ այն կը ներկայացուի իր թշնամիներուն: Այն գիտէ՝ ինչպէս վարուիլ անոնց հետ:

## ԺԱՅՈՒ ՊԷՍ ԱՍՈՒՐ

Աստուծոյ Խօսքը ամուր ժայռ է, ոչ թէ քրիստոնէական կարծիքներու քարակոյտ:

## ԴԵՍՊԱՆՆԵՐ

Աւետարանը լրացում չէ՝ մարդկային օրէնքները բարելաւելու համար: Որքան ալ խոնարհ ըլլայ Աւետարանի քարոզիչը, ան, ըստ էութեան, Գահի պաշտօնեայ է, որ կը խօսի Աստուծոյ Թագաւորութեան իշխանութեամբ:

## ՈՉ ԲԱՐԿԱՑԱԾ ԼՈՒՐ

Աւետարանը դատաստան չէ: Այն ԲԱՐԻ լուր է, ոչ թէ ԲԱՐԿԱՑԱԾ լուր: Քրիստոսը Յարութիւնն է եւ Կեանքը:

## ՄԻՇՏ ՆՈՐ

Աւետարանը պահպանուած պատմութիւն չէ՝ նման Ալեքսանտր Մեծի պատմութեան: Այն անցեալի զմռտուած մասունք չէ: Գոյութիւն չունի հին ելեկտրականութիւն կամ հին քամի. նոյնպէս եւ գոյութիւն չունի չհին Աւետարան:

## ԱՆԺԱՄԱՆԱԿԵԱՅ

Աստուծոյ Խօսքը կեանքի պէս անժամանակեայ է: Այն հնութիւն չէ, որ պէտք է պահպանել: Աստուած կը պահպանէ եկեղեցին. «Մենք Անորմով կ'ապրինք, կը շարժինք եւ կանք» (Գործք 17.28):

## ԱԷՏԱՐԱՆԸ՝ ՈՐՊԷՍ ԶԵՆՆԱՌՈՒՄԲ

Երբ հաւատքը եւ վկայութիւնը կը միանան, պայթիւնի պէս բան մը տեղի կ'ունենայ: Պօղոս ըսաւ, որ Աւետարանը «Աստուծոյ զօրութիւնն է» (Հռովմայեցիս 1.16):

## ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹԻՒՆ

Աւետարանը ազգեր կը փրկէ: Այն զօրութիւն է ազգերու համար եւ ուժ կը հաղորդէ բոլորին: Յիսուսը կը փրկէ՝

# ԿՐԱԿԷ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐ

ԲԱԺԻՆ 1.

Ո՞Վ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ



## ՀՐԱՇՔՆԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾ

«Եւ երբ որ Ան նաւը մտաւ, Անոր աշակերտները Անոր ետեւէն գացին: Եւ ահա մեծ ալեկոծութիւն մը եղաւ ծովուն մէջ, այնպէս որ նաւն ալ կը ծածկուէր ալիքներէն, իսկ Ինք քնացած էր: Եւ Անոր աշակերտները, մօտենալով, արթնցուցին Ջինք եւ ըսին. «Տէ՛ր, փրկէ՛ մեզ, կը կորսուինք»: Եւ անոնց ըսաւ. «Ինչո՞ւ այդպէս վախկոտ էք, թերահաւատներ՛ր»: Այն ժամանակ ոտքի ելաւ, սաստեց քամիներուն եւ ծովուն, եւ մեծ խաղաղութիւն եղաւ: Իսկ մարդիկ զարմացան եւ կ'ըսէին. «Ասիկա ինչպիսի՞ մէկն է, որ քամիներն ու ծովն ալ կը հնազանդին Իրեն»»:

ՄԱՏԹԷՈՍ 8.23-27

## ՄԵԿԵԹՈՍ. ԱՆՅԱՐԹԱՀԱՐԵԼԻ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ

*Սուրբ Հոգիով մկրտուելու շնորհիւ բոլորիս համար հասանելի է մեռելներուն յարութիւն տուող, կենսատու զօրութիւն: Անզօր եկեղեցին խայտառակութիւն է: Սուրբ Հոգին մշտապէս կը գործէ, երբ դուք կը գործէք Աստուծոյ համար: Եթէ դուք չէք գործեր Աստուծոյ համար, ձեզի պէտք չէ զօրութիւն, եւ այն չի տրուիր ձեզի: Բայց երբ կը մկրտուիք Հոգիով, դուք անյարթահարելի կարողութիւն կը ստանաք:*

ՊՕՂՈՍ Կ'ԱՂՕԹԷ ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ (1.18-20), ՈՐ «... ՁԵՐ սրտերու աչքերը լուսաւորուելով՝ զիտնաք... Անոր զօրութեան գերազանց մեծութիւնը ՄԵՐ ՄԷՋ, որ հաւատացինք, Իր կարող զօրութեան յաջողութեան պէս, որ Քրիստոսին մէջ գործադրեց՝ Ձինք մեռելներէն յարութիւն տալով»: Այս հատուածին մէջ Պօղոս կ'օգտագործէ «մեկեթոս» բառը՝ նկարագրելու համար մեզի հասանելի միջոցներու մեծութիւնը: Միջուկային ռումբի պայթուցիչ ուժը կը չափուի մեկաթոննաներով: Բայց Պօղոսը ա՛լ աւելի առջեւ կ'երթայ՝ խօսելով «հիփըրմեկեթոսի» կամ գերազանց մեծութեան մասին: Ահա թէ ինչպէս պէտք է չափենք մեր արդիւնաւէտութիւնը քրիստոնէական ծառայութեան մէջ, եւ ահա թէ ինչ հասանելի է Աստուծոյ ծառաներէն իւրաքանչիւրին:

## ԱՆՀՆԱՐԻՆԸ ՏԵՐԻ Կ'ՈՒՆԵՆԱՅ

*Աստուածային բնութիւնը ոչ միայն գերբնական է, այլեւ՝ հրաշագործ: Աստուծոյ զօրութիւնը, սէրը եւ բարութիւնը կը գերազանցեն ամէն ինչ: Հոն, ուր որ Աստուծոյ ներկայութիւնն է, կարելի է ակնկալել լոյս, կեանք եւ գերազանցութիւն. լեռները կը ցածնան, ձորերը կը բարձրանան, եւ այն, ինչ որ ծուռ է, ուղիղ կը դառնայ (տե՛ս Եսայիա 40.4): Աստուծոյ բառարանին մէջ չկայ «անհնարին» բառը:*

ԱՆՀՆԱՐԻՆԸ ՏԵՐԻ Կ'ՈՒՆԵՆԱՅ, ԵՐԲ ԱՍՏՈՒԾ ՆԵՐԿԱՅ Է: ԱՅՆ անոր յատկանիշն է: Արարչագործութիւնը սկիզբ առաւ, երբ Ան ան-

ցաւ ասոր կողքով: Յոբը կը խօսի տիեզերքի մասին՝ անուանելով այն «Անոր ճանապարհներու ծայրերը» (Յոբ 26.14)՝ նման հետքերու, որոնք կը մնան թաց խոտի վրայ քալելէն յետոյ: Նոյնը կը վերաբերէր Յիսուսին: Երբ Ան կ'անցնէր ինչ որ հրէական գիւղէ մը, ատիկա ակնյայտօրէն կ'երեւէր. այդ գիւղին մէջ ոչ մէկ հիւանդ կը մնար: Հոն, ուր որ Ան կը գտնուի, առանց որեւէ խնդիրի կարելի է քալել ալիքներու վրայէն, բժշկել հիւանդները կամ կերակրել 5.000 մարդ՝ մէկ տղու մը նախաճաշով: Այդ ամէնը պարզապէս տեղի կ'ունենայ. նիւթական աշխարհը կ'ենթարկուի Անոր կամքին: «Աստուած կը դրդէ, որ ԱՄԷՆ ԻՆՉ միասնաբար գործէ դէպի բարին՝ զԱստուած սիրողներուն համար» (Հռովմայեցիս 8.28, NLT):

## ՀՐԱՇԱԳՈՐԾ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

*Աստուած պարզապէս գերբնական չէ: Ան հրաշագործ է՝ Իր բնութեամբ, եւ Անոր Հոգին՝ նոյնպէս: Անոր էութիւնը հրաշալի է, եւ Անոր գործերը լեցուն են հրաշքներով: Հոգին ունենալը կը նշանակէ սպասել հրաշքներու, Հոգիին հաւատալը կը նշանակէ հաւատալ հրաշքներու, եւ Հոգիով վարուիլը կը նշանակէ հրաշքներ գործել: Դուք ստեղծուած էք հրաշքներու եւ նշաններու համար:*

ՄԻԱԿ ՀՈԳԻՆ, ՈՐ ՅԻՍՈՒՄ ԽՈՍՏԱՑԱԿ ՄԵՁԻ, ՀՐԱՇԱԳՈՐԾ ՀՈԳԻՆ Է՝ Սուրբ Հոգին: Գոյութիւն չունի հրաշքներ չգործող Սուրբ Հոգի: Այն, որ մարդը կը պնդում է, որ Սուրբ Հոգին իր մէջ է, սակայն կը մերժէ այն գործը, որոնով Ան մշտապէս առանձնացած է, միայն կրնայ տրտմեցնել Զիմք: Ան սկսաւ Իր գործունէութիւնը մեծագոյն նիւթական հրաշալիքներով՝ ստեղծելով այս աշխարհը: Ան չէ փոխած Իր բնութիւնը: Ան եղած է, կայ եւ մշտապէս պիտի ըլլայ Աստուած, որ կը գործէ այս աշխարհին մէջ: «Ես Եմ Որ Եմ» (Ելից 3.14): Սուրբ Հոգին, Որ գերբնականօրէն ստեղծեց այս աշխարհը, առանց որեւէ դժուարութեան կը շարունակէ վարուիլ գերբնական ձեւով:



## ՉԵՐ ՍՊԱՍՈՒՄՆԵՐԷՆ ԱԲԵԼԻՆ

*Մենք՝ անկուճ ապրած եւ տկար մարդիկս, բնականօրէն հակուած ենք կասկածելու Հոգիի իրողութիւններուն եւ տրամաբանելու ատոնք, բայց Քրիստոս Յիսուսին մէջ մեր հոգիները վերածնած են: Այժմ մենք հաւատք ունինք, որպէսզի ապրինք գերբնական կեանքով եւ հաւատանք գերբնականին: Թոյլ մի՛ տաք, որ ձեր բնական վիճակը եւ հանգամանքները համոզեն ձեզ, որ դուք չէք ստանար ձեր հրաշքը:*

ԱՍՏՈՒԱԾ ՍՏԵՂԾԱԾ Է ԲՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ, ԵՒ ԱՆ ԿԸ ԳՈՐԾԷ ԲՆԱԿԱՆ օրէնքներու միջոցով: Սակայն Ան սահմանափակուած չէ ո՛չ այդ օրէնքներով, ո՛չ ալ մեր տկարութեամբ: Ան կրնայ գերազանցել մեր սպասումները եւ նոյնիսկ՝ մեր ամենահամարձակ երազանքները (տե՛ս Եփես. 3.20): Եւ մենք կրնանք հաւատալ այս ճշմարտութեան: Չէ՞ որ գրուած է. «Աստուած մարդ չէ, որ սուտ խօսի, ո՛չ ալ մարդու որդի, որ զղջայ: Մի՞թէ կ'ըսէ եւ չ'ըներ, կամ կը խօսի եւ չի գործադրեր (կամ՝ չի կատարեր)» (Թուոց 23.19):

## ՄԿՐՏՈՒԱԾ՝ ԿՐԱԿՈՎ

«Ես ջուրով կը մկրտեն ձեզ՝ ապաշխարութեան համար, բայց իմ ետեւէն Եկողը ինձմէ զօրաւոր է, Որուն կօշիկները կրելու արժանի չեն: Ան ձեզ պիտի մկրտէ Սուրբ Հոգիով եւ կրակով»:

ՄԱՏԹԷՈՍ 3.11

## ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԸՆԿՂՄԱԾ

Հոգիով մկրտութիւնը ձեր ամբողջ էութեան՝ հոգիի, անձի եւ մարմինի ամբողջական ընկղմումն է Սուրբ Հոգիին մէջ: Այն մասնակի, խորհրդապատկերային եւ ժամանակաւոր չէ: Ձեր էութեան ամէն մէկ մասնիկը ընկղմած է եւ ամբողջովին պատուած է այս թանկ Հեղուկ Կրակով, որուն արդիւնքը մշտատեւ է: Ասիկա մէկ անգամուան իրադարձութիւն չէ՝ նման ջուրով մկրտուելուն: Ասիկա շարունակական վերապրում է, որ կը փոխէ ձեր բնութիւնը եւ ձեզ շրջապատող ամէն ինչ:

ՈՐՈՇ ՄԱՐԴԻԿ ԿԸ ՑԱՆԿԱՆ ՊԱՂՊԱՂԱԿԻ ՊԷՍ ՔՐԻՍՏՈՆԵՌՈՒԹԻՒՆ՝ պաղ, բայց հաճելի: Անոնք կը ցանկան, որ իրենց եկեղեցիները թանգարաններու պէս ըլլան: Բայց եկեղեցին սառցարան չէ: Այն Հօր տունն է: Սուրբ Հոգին կը ջերմացնէ մեզ՝ Հօր տան համար:

## ՕԺՏՈՒԱԾ՝ ՄԱՐԳԱՐԷՆԵՐՈՒ ՀՈԳԻՈՎ

Աբրահամ, Մովսէս, Յեսու, Դեբօրա, Եղիա եւ Եղիսէ... այս անունները երկիւղածութիւն ու ակնածանք կը ներշնչեն, սակայն անոնք կիրքեր ունեցող մարդիկ էին, ինչպէս եւ մենք (տե՛ս Յակոբ. 5.17): Նոյն Հոգին, որ անոնց վրայ էր, մեր մէջ է: Մենք չստացանք երկրորդական Հոգի կամ վերապրում, եւ պէտք չէ երկրորդական արդիւնք ակնկալենք:

ՀՈԳԻՈՎ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ Կ'ՕԺՏԷ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒՄ ՄԱՐԳԱՐԷՆԵՐՈՒ Հոգիով: Երբ մարգարէները գերբնականօրէն վերապրեցան Աստուծոյ, անոնք անուանեցին Զինք Մարգարէներու Հոգի: Յովէլ 2.28-ն կը խոստանայ, որ նոյն Մարգարէներու Հոգին կը թափի ամէն մարմինի վրայ: Կը մարգարէանան բոլորը, ոչ թէ միայն յատուկ եւ եզակի մարդիկ:

## ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԼԱՐԸ ԱՆՎՆԱՍ ԿԸ ԹՈՒԱՅ, ՔԱՆԻ ՏԱԿԱԻՆ ԱՏՈՐ ՉԵՆ ԴՊԱԾ

*Աստուծոյ Թագաւորութիւնը եկած է, եւ բանալիները մեր ձեռքն են: Թերեւս մենք սովորական, անվնաս կամ անկարեւոր տեսք ունինք, բայց մի՛ խաբուիք արտաքինով. մենք լեցուած ենք զօրութեամբ՝ Սուրբ Հոգիին զօրութեամբ, եւ անփոխարինելի ենք Աստուծոյ փրկարար ծրագրին համար: Մեր լեզուները ի զօրու են ազդելու մարդոց կեանքերուն վրայ եւ փոխելու իրադարձութիւններու ընթացքը, իսկ մեր ձեռքերու ափերուն մէջ Պաշտարար բժշկարար բալասանն է:*

ԵՐԲ ՅԱՅՏՆԱՔԵՐՈՒԵՑԱԿ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ՇԱՏԵՐՈՒՆ ԿԱՐԾԻՔՈՎ՝ այն պարզապէս զուարճալի նորոյթ էր: Երկու հարիւր տարի առաջ քիչերը կը կարծէին, որ ելեկտրականութիւնը ի զօրու է գործարկելու արդիւնաբերութիւնը եւ լուսաւորելու ամբողջ քաղաքները: Երբ մարդիկ կը խօսին այլ լեզուներով, ասիկա կը վկայէ Սուրբ Հոգիի զօրութեան ներուժի մասին: Շնորհիւ Հոգիին այս դրսեւորման՝ մենք կրնանք վստահ ըլլալ, որ Աստուած պիտի գործէ մեր կեանքին մէջ: Աստուծոյ Հոգին չի սահմանափակուիր առանձին իրադարձութիւններով, այլ կը թափանցէ մեր ամբողջ ծառայութեան մէջ, եթէ թոյլ տանք Անոր: Դուք սովորական տե՞սք ունիք: Քրիստոնէաները կրնան անվնաս թուալ, բայց այդպիսին կը թուայ նաեւ ելեկտրական լարը, քանի տակաւին ատոր չեն դպած:

## ԴՈՒՔ ԶՕՐՈՒԹԻՒՆ Կ'ԸՆԴՈՒՆԻՔ

«Եւ անոնք, մէկտեղ գալով, կը հարցնէին Անոր եւ կ'ըսէին. «Տէ՛ր, այս ժամանակի՞ն Իսրայէլի թագաւորութիւնը նորէն պիտի հաստատես»: Եւ Ան ըսաւ անոնց. «Ձեզի չի վերաբերիր ժամերը եւ ժամանակները գիտնալը, որ Հայրը Իր իշխանութեան մէջ դրաւ: Բայց դուք զօրութիւն կ'առնէք, երբ որ Հոգին ձեր վրայ գայ, եւ Իմ վկաները պիտի ըլլաք Երուսաղէմի, բոլոր Հրէաստանի եւ Սամարիայի մէջ, մինչեւ երկրի ծայրերը»:

ԳՈՐԾՔ 1.6-8

## ԼԵՅՈՒՆՈՒԹԻՒՆ

*Յիսուս ըսաւ. «Դուք զօրութիւն կ'առնէք, երբ որ Հոգին ձեր վրայ գայ» (Գործք 1.8): Առանց այս կենսական ուժին՝ մենք կ'ունենանք աշխարհիկացուած, տրամաբանական եւ անզօր կրօն: Խորհրդապաշտական մտածողութիւնը չունի որեւէ առնչութիւն Նոր կտակարանի գործուն կեանքին հետ: Իրականութենէն անջատ ապրիլը պուտտայականներու համար է, ոչ թէ քրիստոնեաներու: Օգտագործեցէ՛ք այս զօրութիւնը:*

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՋՕՐՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ Է ԸԼԼԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԻ սովորական վիճակը: Հոգիին լեցունութիւնը գործողութեան կը մղէ եւ կ'օժտէ զօրութեամբ («Տունամիս»): Ասիկա տեղի ունեցած է թէ՛ Նոր կտակարանի հաւատացեալներու, եւ թէ անոնցմէ յետոյ ապրող միլիոնաւոր մարդոց կեանքին մէջ: Գոյութիւն ունին սակաւաթիւ հատուածներ Սուրբ գիրքէն, որոնց հիման վրայ մենք կրնանք ենթադրել, որ Սուրբ Հոգին կու գայ մարդոց վրայ մեղմ զեփիւռի նման՝ ուշադրութիւն չգրաւելով եւ աննկատ: Որպէս կանոն, Անոր գործունէութիւնը խիստ ուշագրաւ է: Հոգիին դրսեւորումներու կարգին են կրակը, քամին, աղմուկը, հրաշքները, արտաքին նշանները, զօրութիւնը եւ տեսանելի արդիւնքները:

## ՋՕՐՈՒԹԻՒՆ՝ ՅԱՂԹԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Սուրբ Հոգին հակասութեսային, հանգստացնող կամ խթանող դեղամիջոց չէ: Ան չի գար զգացմունքային վերապրում տալու համար, բայց, միեւնոյնն է, Անոր ներկայութիւնը կը հպի մեր սրտին: Կեանքը դժուար է: Աստուած կ'ուղարկէ Իր զօրութիւնը դժուար իրավիճակներուն մէջ գտնուող մարդոց: Ան այն սկզբնական կենսական ուժն է, որ կը զօրացնէ մեզ, որպէսզի մենք յաղթական եւ առատ կեանք ունենանք եւ վկաներ ըլլանք այս աշխարհին համար:*

«ԴՈՒՔ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ ՊԻՏԻ ՄԿՐՏՈՒԻՔ ՇԱՏ ՕՐԵՐ ԶԱՆՅԱԾ... դուք զօրութիւն պիտի առնէք, երբ որ Հոգին ձեր վրայ գայ» (Գործք 1.5,8): Կրնա՞յ ասիկա տեղի ունենալ մեր օրերուն մէջ: Ասիկա տեղի ունեցաւ իմ կեանքին մէջ: Չեմ կարծեր, որ մարդիկ կրնան Սուրբ Հոգիով մկրտութենէն աւելի հրաշալի վերապրում ունենալ: Այն կը նշանակէ լեցուած ըլլալ Աստուծով: Այն չի նշանակեր ունենալ «Աստուածային գինովութիւն»՝ տեսակ մը բերկրալի, գլխապտոյտ եւ անհոգ երջանկութիւն: Այն կը նշանակէ ունենալ իրական կարողութիւն, հաստատուն բնաւորութիւն, մարմինի բժշկութիւն, Աստուածային պաշտպանութիւն, իմաստութիւն եւ մտաւոր աճ, բարեհաճութիւն, ինչպէս նաեւ բոլոր այն բարիքները, որոնց կարիքը մենք ունինք այս կեանքին մէջ:

## ԶՕՐՈՒԹԻՒՆ՝ ՄԱՐԱԹՈՆԻ ՀԱՄԱՐ

*Օծութիւնը անչափ սուղ է, սակայն դուք չէք շահիր օծութիւնը այնպէս, ինչպէս որ մարգիկը կը շահի իր ողիմպիական շքանշանը: Մեր փրկութեան նման մենք Հոգին կը ստանանք հաւատքով, ոչ թէ այն պատճառով, որ մենք արժանի ենք, այլ որպէսզի զօրութիւն ունենանք՝ Քրիստոսի վկաները ըլլալու համար:*

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ԶԻ ՏՐՈՒԻՐ ՈՐՊԷՍ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆ: Զօրութիւնը մարաթոնի վերջաւորութեան տրուող յաղթանշան չէ: Մեզի զօրութիւն պէտք է սկիզբէն, եթէ կը ցանկանք վագել մեր մարաթոնը Աստուծոյ համար: Թերեւս մենք վարկաբեկենք մենք մեզ կամ սայթաքինք մեր ընթացքին մէջ, բայց ճիշդ այդ պատճառով անհրաժեշտ է, որ ընդունինք Սուրբ Հոգին: Ան չի տրուիր մեզի՝ կատարեալ ըլլալու պայմանով. Ան կը տրուի, քանի որ մենք կատարեալ չենք: Ան եկած է, քանի որ մենք Անոր կարիքը ունինք. Ան եկած է մեզմէ ամենալաւերու եւ ամենավատերուն համար: Պարզապէս կրկնեցի՞ք ձեր սրտին մէջ, «Սո՛ւրբ Հոգի, ես իսկապէս Քու կարիքդ ունիմ»: Ան անմիջապէս կ'արձագանգէ, քանի որ Ան ձեր կողքին է:

# ՕԳՆԱԿԱՆ, ՈՐ ՄՇՏԱՊԷՍ ՆԵՐԿԱՅ Է

«Եւ ես Հօրը պիտի աղաչեմ, եւ ուրիշ  
Մխիթարիչ մը պիտի տայ ձեզի, որ մնայ ձեզի  
հետ յաւիեան»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ 14.16



## ԱՄԵՆԱԿԱՐՈՂ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԿԸ ԳՈՐԾԷ ՄԵՐ ՄԻՋՈՑՈՎ

*Սուրբ Հոգին Աստուծոյ Հոգին է՝ Յիսուս Քրիստոսի Հոգին: Ան Աստուած է: Մենք չենք գորացներ Սուրբ Հոգին, երբ կ'աղօթենք. Ան ամենակարող է՝ առանց մեր օգնութեան: Այնուամենայնիւ, Աստուածաշունչին մէջ գրուած է, որ մենք պէտք է աղօթենք Հոգիով (տե՛ս Եփես. 6.18):*

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՏՈՒԱԾ Է՝ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԸ: ԱՆ ամենակարող, ամենագէտ եւ ամենագոյ է: Ան չունի մեր օգնութեան կարիքը, բայց կ'որոշէ գործածել մեզ՝ գործել մեզի հետ, մեր միջոցով եւ մեզի համար՝ սէրէն մեկնած: Աղօթքը չ'օգներ Աստուծոյ. այն կ'օգնէ մեզի համագործակցելու Աստուծոյ հետ՝ անձնատուր ըլլալով Անոր եւ առիթ տալով գրաւել Իր տեղը՝ որպէս մեր կեանքի Տէր եւ Փրկիչ: Ինչպիսի՜ պատիւ եւ հեղինակութիւն շնորհուած է մեզի, որ մենք դարձած ենք բարի, սուրբ եւ ողորմած Աստուծոյ գործակիցները՝ փրկութիւն առաջարկելով այս ցաւով եւ տառապանքով լեցուած աշխարհին:

## ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՓԱՓԱՔԻ ԳՈՐԾԵԼ ԶԵՋԻ ՀԱՄԱՐ

*Շատերը կը գործեն Աստուծոյ համար, այնինչ Աստուած կ'ուզէ գործել անոնց համար: Ան չ'ուզեր, որ մենք այնքա՛ն շատ աշխատինք Իրեն համար, որ իյնանք ու մահանանք: Ծառայութեան գործը խիստ կարեւոր է, անփոխարինելի է եւ պէտք է, որ կատարուի յստակ ժամկէտներու մէջ: Այնուամենայնիւ, Աստուած կը ցանկայ, որ մենք ժամանակ գտնենք, որպէսզի հանգստանանք մեր ընտանիքին եւ ընկերներուն հետ եւ վայելենք այն բարի բաները, որոնք ծրիաբար շնորհուած են մեզի:*

ԱՆՎԱՍ ՄԸ ԵՍ ԳԵՐԵՋՄԱՆԱՔԱՐ ՄԸ ՏԵՍԱՅ, ՈՐՈՒՆ ՎՐԱՅ ԳՐՈՒԱԾ էր տղամարդու մը անունը եւ հետեւեալ տապանագիրը. «Անոր կեանքը բաղկացած էր միայն աշխատանքէ»: Ես մտածեցի. «Այս տապա-

նագիրը համապատասխան է ջորիին, ոչ թէ մարդուն»։ Աստուծոյ կամ-  
քը չէ, որ մենք բեռնակիր անասուններ ըլլանք կամ աշխատինք ռո-  
պոթներու պէս։ Ան կրնար անթիւ բեռնակիր ծիւեր ստեղծել, եթէ Անոր  
կամքը այդպիսին ըլլար։ Սակայն մտածելով մեր մասին՝ Տէրը չնա-  
խատեսեց ստրուկներ. Ան կամեցաւ որդիներ, ոչ թէ աշխատանքային  
մեքենաներ։

## ՄԻ՛ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԷՔ ՁԻՆՔ

«Քանի՛ անգամ դառնացուցին Ձինք անապատին մէջ եւ բարկացուցին Ձինք անջուր տեղը: Կրկին եւ կրկին Աստուած փորձեցին, եւ Իսրայէլի Սուրբը նեղացուցին (կամ՝ սահմանափակեցին): Չյիշեցին Անոր ձեռքը այն օրը, որ փրկեց զանոնք թշնամիէն: Որ Իր նշանները ըրաւ Եգիպտոսի մէջ, եւ Իր հրաշքները՝ Տայանիսի դաշտին մէջ»:

ՍԱՂՄՈՍ 78.40-43

## ԱՆՓՈՒՆԱՐԻՆՆԵՒԻ

*Սուրբ Հոգին անփոխարինելի է: Ան քարոզիչի կեանքն է եւ քարոզի զօրութիւնը եւ այն Աստուածային մագնիսը, որ կը գրաւէ մարդիկ դէպի Եկեղեցին: Աստուծոյ Հոգին կը պատմէ Աստուծոյ մասին: Եթէ թոյլ տանք Անոր զբաղեցնել Իր տեղը Եկեղեցոյ մէջ եւ կառուցել այն, դժոխքի դռները չեն յաղթեր Եկեղեցոյ, եւ մենք աճ կը տեսնենք:*

ՈՐՔԱՆ ՔԻՉ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՄԻՋԵՒ, այնքան աւելի շատ սուրճ ու թխուածք պէտք է՝ մարդոց Եկեղեցոյ մէջ պահելու համար: Ես բոլորովին դէմ չեմ սուրճին եւ թխուածքին, բայց ճշմարտութիւնն այն է, որ Սուրբ Հոգին անփոխարինելի է: Անոր ներկայութիւնը եւ գործերը անզուգական են:

## ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԸ՝ ՅԻՍՈՒՄԻՆ ՀԱՄԱՐ

*Սուրբ Հոգին հնարաւոր կը դարձնէ Աւետարանչութիւնը: Առանց Սուրբ Հոգիի՝ Մեծ յանձնարարականը ընդամէնը անկարելի երազանք է: Սակայն, շնորհիւ Սուրբ Հոգիի խթանման եւ ներգրաւուածութեան, Աւետարանի քարոզումը բոլոր արարածներուն պարզապէս ցանկութիւն չէ: Այն հասանելի նպատակ է:*

ՆԱԽՈՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲԸ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ շրջադարձային կերպով աւելցան՝ նման Գործք առաքելոց 2-րդ գլխուն: Ատոնք Ամերիկայէն տարածուեցան Եւրոպա, Ասիա եւ աշխարհով մէկ: Իմ հարցումը հետեւեալն է. եթէ վերջին 100 տարուան ընթացքին 20 մարդ, որ կը վառէին Աստուծոյ համար, կրցան փրկութեան բերել 800.000 մարդու, քանի՞ մարդու կրնան այդ 800.000-ը փրկութեան բերել հիմա: Նոյնիսկ երկինքը սահման չէ Աստուծոյ համար:

## «ԵՍ ԿՐ ՏԵՍՆԵՄ ՅԻՍՈՒՍԸ ՔՈՒ ԱԶՔԵՐՈՒՆ ՄԷՋ»

*Սուրբ Հոգին կը բնակի ձեր մէջ եւ կը ցանկայ զօրաւոր կերպով գործել ձեր կեանքին մէջ: Ան կը կամենայ կապ հաստատել ձեր էութեան ամէն մէկ մասնիկի եւ ձեր անծի ամէն մէկ ունակութեան հետ: Յանձնեցէ՛ք Անոր ձեր լեզուն, մարմինը, միտքը, կամքը եւ նոյնիսկ ձեր աչքերը, եւ մարդիկ պիտի տեսնեն Ձինք ձեր մէջ:*

ՏԱՐԻՆԵՐ ԱՌԱՋ ԻՄ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԱՒԱԳԸ ԵՒ ԵՍ գտած էինք նոր գործիք մը գնելու: Ցերեկուան ժամերն էին, եւ մենք մտանք մեծ երաժշտական խանութ մը Եոհաննէսպուրկի մէջ՝ Հարաւ Ափրիկէի Հանրապետութեան մէջ: Յանկարծ յայտնուեցաւ վաճառողը: Ան կարծես զարմացած եւ լայն բացուած աչքերով ըսաւ ինծի. «Պարո՛ն, ես Յիսուսը կը տեսնեմ ձեր աչքերուն մէջ»: Ի՞նչ: Սուրբ Հոգին մտած էր այդ խանութը: Մենք մոռցանք գործիքին մասին եւ արթնութեան հաւաքոյթ սկսանք հոն: Բայց երբ կը վերադառնայի ինքնաշարժիս քով, ես շարունակ կը հարցնէի՝ Տէ՛ր, չեմ հասկնար, ինչպէ՞ս բոլորովին անծանօթ մարդը կրնայ մօտենալ ինծի եւ ըսել, որ Յիսուսը կը տեսնէ իմ աչքերուն մէջ: Եւ յանկարծ Սուրբ Հոգին խօսեցաւ հետս. «Յիսուս կ'ապրի քու սրտին մէջ, եւ երբեմն ԱՆՈՐ ՀԱՃԵԼԻ ԿԸ ԹՈՒԱՅ ՆԱՅԻԼ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐՔԵՆ»: Ես ծիծաղեցայ եւ լացի: Ինչպիսի՛ փառաւոր ճշմարտութիւն: Ես հասկցայ Անոր ըսածը: Տարիներ յետոյ հանդիպեցայ այդ վաճառողի կնոջը: Ան ըսաւ ինծի, որ իր ամուսինը մինչեւ կեանքին աւարտը հետեւած էր Յիսուսին: Փա՛ռք Աստուծոյ:

## ԼԻՈՎԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅԻՍՈՒՍԻՆ

«Ուստի մենք ալ, որ այսքա՛ն վկաներու բազմութեամբ շրջապատուած ենք, մէկդի ձգենք ամէն ծանրութիւն եւ մեզ դիւրաւ պաշարող մեղքը, եւ համբերութեամբ վազենք մեր արջեւ դրուած ասպարէզի ընթացքը: Մտիկ ընենք մեր հաւատքի Ջօրագլուխին եւ Կատարողին՝ Յիսուսին, որ Իր արջեւ դրուած ուրախութեան փոխարէն խաչը յանձն առաւ, եւ ամօթը արհամարհելով՝ Աստուծոյ աթոռին աջ կողմը նստաւ»:

ԵԲՐԱՅԵՑԻՍ 12.1-3

## ՀԱՆՐԱՅԻՆ, ՈՉ ԹԷ ՄԱՍՆԱԻՈՐ

*Մենք կ'ամչնա՞նք Աւետարանէն: Պօղոսը չէր ամչնար: Ան ածիլեց իր գլուխը՝ ցոյց տալու համար, որ երդում ըրած էր (տե՛ս Գործք 21.24): Մարդիկ կը նկատէին այդ ածիլուած առաքեալին գլուխը: Բայց ԱՆ ՉԷՐ ԱՄՉՆԱՐ: Ան երդում ըրած էր ինչ որ բան մը ընել Աստուծոյ համար: Ինչո՞ւ մենք՝ կրակոյ մկրտուած հաւատացեալներս, պէտք չէ նոյնը ընենք:*

ԵՐԲ 120 ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԴՈՒՐՍ ԵԱՆ ՎԵՐՆԱՏՈՒՆԷՆ, ԱՆՈՆՔ փոխուած էին: Անոնք կնքուած էին, փոխուած էին, եւ այդ փոփոխութիւնը նկատելի էր: Ինչպիսի՞ն են այն մարդիկ, որոնք դուրս կ'ելլեն մեր եկեղեցիներէն կիրակի առաւօտեան: Ի՞նչ պիտի ըլլար, եթէ Աստուծոյ կրակը թափէր մարգադաշտի մը մէջ՝ Աւետարանչական հաւաքոյթի ժամանակ, եւ բոլորը, գինովցած Սուրբ Հոգիով, դուրս ելլէին հոնկէ: Սուրբ Հոգիով մկրտութիւնը մասնաւոր հարց մը չէ: Այն հանրային իրադարձութիւն է: Փա՛ռք Աստուծոյ:

## ԱՌՋԵՒ՝ ԱՄԲՈՂՋ ՈՒԺՈՎ

*Այս աշխարհը կ'ընդունի խանդավառութեան որեւէ պոռթկում՝ բացի Աստուծոյ հանդէպ սէրէն: Մենք ի՞նչ կը ցանկանք: Արդեօ՞ք կը ցանկանք յարմարաւէտ մշակոյթ եւ կեանք, թէ՞ Աստուածային բնութեան կրակոտ եւ յուզիչ մղումը: Եթէ կը կամենաք լիովին վերապրիլ Անոր, պէտք է առջեւ շարժիք՝ ամբողջ ուժով:*

ԱՐԴԵՕ՞Ք ՄԵՆՔ ԿԸ ՎԱԽՆԱՆՔ ՄՏՆԵԼՈՒ ԱՍՏՈՒԾՈՅ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒ ովկիանոսը՝ առաջնորդուելով Հոգեգալուստի հզօր քամիով: Արդեօ՞ք այն օսլան, որ մենք քաղաքակրթութիւն կ'անուանենք, խստացուցած է մեր հանդերձները՝ վերածելով պողպատէ զրահի, եւ այժմ մեզի համար դժուար է «հագնիլ Քրիստոսին»: Ո՞ւր են Անոր արցունքները: Անոր տառապանքները եւ մեր խաչը կրելը: Ո՞ւր են մեր բացարձակ անձնուրացութիւնը եւ Աստուծոյն անձնատուր ըլլալը: Եթէ կը կամենաք լիովին վերապրիլ Անոր, պէտք է շարժիք առջեւ՝ ամբողջ ուժով: Ետ մի՛ կենաք:

## ՈՒՐԿԷ ՍԿՍԻԼ

Երիտասարդ մը ըսաւ ինծի, որ Աւետարանը քարոզելու կանչ ունի, բայց իր հովիւը չէր ուզեր զիջիլ իր ամպիոնը: Ես նայեցայ անոր եւ ըսի. «Ես ամպիոն պիտի տամ քեզի»: Ան զարմացած նայեցաւ ինծի եւ ըսաւ. «Ի՞նչ: Դուք կ'ուզէք ձեր ամպիոնը տալ ինծի»: Ես պատասխանեցի. «Ո՛չ, բայց ես կրնամ ամպիոն տալ քեզի: Ամէն մէկ փողոցի անկիւնը ամպիոն է»: Ես շարունակեցի. «Ես սկսած եմ ճիշդ այդտեղէն, եւ դուն նոյնպէս պէտք է այդտեղէն սկսիս»: Աստուածաշունչը կ'ըսէ. «Մի՛ անարգեր փոքր սկիզբը, քանի որ Տէրը կը ցնծայ՝ տեսնելով, որ գործը կը սկսի» (Զաքարիա 4.10, NLT):

ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԱՃՐ ՏԵՂԻ Կ՛ՈՒՆԵՆԱՅ ՓՈՒԼ ԱՌ ՓՈՒԼ: ԱՃՐ դանդաղ ընթացք է: Դուք պիտի հասուննաք Խօսքին մէջ, հաւատքին մէջ, Սուրբ Հոգիին մէջ եւ պտղաբերութեան մէջ: Մի՛ յանձնուիք հակառակութեան ժամանակ: Յիսուս դարձուց մեզ աւելի, քան յաղթող: Երկինքը բաց է մեզի համար, հրեշտակները կը բարձրանան եւ կ'իջնեն, մեր աղօթքները կը հասնին Երկինք անխոչընդոտ կերպով, եւ Սուրբ Հոգին մշտապէս կը յորդի մեր վրայ՝ նման արեւի լոյսի՝ անամպ երկնքի մէջ:



# ԿՐԱԿԷ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐ

ԲԱԺԻՆ 2

ՀՈԳԻՆ ԵՒ ՈՐԴԻՆ.

ՄԿՐՏՈՂ ՅԻՍՈՒՍԸ

## ՕՏԵԱԼԸ

«Եւ մկրտուելէն յետոյ Յիսուս շուտով դուրս ելաւ ջուրէն, եւ ահա Երկինքը բացուեցաւ Անոր համար, Ան տեսաւ Աստուծոյ Հոգին, որ աղաւնիի պէս վար կ'իջնէր եւ կու գար Իրեն վրայ: Եւ ահա Երկնքէն ձայն մը եկաւ, որ կ'ըսէր. «Ասիկա՛ է Իմ սիրելի Որդիս, Որուն Ես հաւնեցայ»»:

ՄԱՏԹԷՈՍ 3.16,17

## ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ԿՐԱԿՈՎ

*Յիսուս ըսաւ, որ Յովհաննէս Մկրտիչը վառող եւ լոյս տուող ճրագ էր, սակայն ան կը մկրտէր ջուրով՝ Յորդանան գետի պաղ ջուրերուն մէջ: Յիսուս ճրագ չէ. Ան Լոյսն է, եւ Ան Տէրն է: Ան կը մկրտէ այլ Յորդանանի մէջ՝ հոգեւոր գետին մէջ, որ կը վառի Աստուծոյ գոհասեղանի կրակով եւ բժշկութիւն ու զօրութիւն կը բերէ:*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉԸ ԳԻՏԵՐ ՀՈԳԻՈՎ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ. ԱՆ գիտցած էր այդ մասին Աստուծմէ: Իրականութեան մէջ, Յովհաննէսը ըսաւ մեզի, թէ ինչպէս կարելի է ճանչնալ Քրիստոսը. Անոր տարբերակիչ յատկանիշը կրակով մկրտութիւնն է: Ատիկա պիտի ըլլար այնպիսի բան մը, ինչ որ ոչ ոք ըրած էր եւ չէր ալ կրնար ընել: Գոյութիւն ունին բազմաթիւ կրօններ, բայց Քրիստոսը կը տարբերի անոնցմէ: Միայն Ան կը մկրտէ Սուրբ Հոգիով եւ կրակով (տե՛ս Մատթ. 3.11):

## ՅԻՍՈՒՍԸ ՄԿՐՏՈՒԱԾ ԷՐ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ

*Թէեւ Յիսուսին ծնունդը Սուրբ Հոգիէն էր, Ան Սուրբ Հոգիով մկրտուելու կարիք ունէր, երբ սկսաւ Իր ծառայութիւնը: Այն բանէն յետոյ, երբ Յովհաննէս Մկրտիչը ջուրով մկրտեց Յիսուսը Յորդանանի մէջ, տեղի ունեցաւ երկրորդ մկրտութիւնը: Աստուծոյ Հոգին իջաւ Անոր վրայ՝ աղանիի պէս, ոչ թէ կրակի բոցի պէս, քանի որ Յիսուսին մէջ չկար բան մը, ինչ որ պէտք էր այրել:*

ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ ՄԵԾՎՈՑՆ ՕՐԻՆԱԿԸ ՅԻՍՈՒՍՆ Է, ԵՒ ԱՆ մկրտուեցաւ Սուրբ Հոգիով: Մատթէոսի, Մարկոսի եւ Ղուկասի Աւետարանները կը նկարագրեն նոյն իրադարձութիւնը: Չորրորդը՝ Յովհաննէսի Աւետարանը, ատելի մանրամասնօրէն կը ներկայացնէ այն: Յովհաննէս Մկրտիչը, որ եկած էր Յիսուսէն առաջ, յայտարարեց. «Կը տեսնէի Հոգին, որ աղանիի պէս վար կու գար Երկնքէն եւ Անոր վրայ կը մնար» (Յովհաննէս 1.32): Յիսուս Ինքը ըսաւ. «Տիրոջ Հոգին Իմ վրաս է, որուն համար ալ Զիս օծեց. Ան Զիս ուղարկած է... ավետարանելու» (Ղուկաս 4.18): Պետրոս ըսաւ Գործք 10.38-ին մէջ. «Յիսուսը,

որ Նազարեթն էր, որ Աստուած օծեց Զինք Սուրբ Հոգիով եւ զօրութեամբ»: Յովհաննէս Մկրտիչը ապշեցուցիչ բան մը ըսաւ. «Որուն վրայ տեսնես, որ Հոգին կ'իջնէ ու կը հանգչի Անոր վրայ, Անկկա է Սուրբ Հոգիով մկրտողը» (Յովհաննէս 1.33):

Քրիստոսը մարդկային վերապրում ստացաւ Աստուծմէ, որպէսզի ցոյց տար, թէ ինչպիսին պէտք է ըլլայ մարդուն կատարեալ վիճակը: Ան առաջինն էր անթիւ մարդոց մէջ: Ան առաջին Սուրբ Հոգիով մկրտուած մարդն էր այս երկրին վրայ: Յովհաննէս 3.34-ին մէջ գրուած է. «Աստուած կու տայ Հոգին առանց չափի» (NIV): Յովհաննէս 1.16-ն կ'ազդարարէ. «Անոր լիութենէն մենք ամէնքս առինք...»: Ասկա հրաշալի ճշմարտութիւն է. այն, ինչ որ Ան ստացաւ, մեզի համար էր: Ան լեցուեցաւ մեզի համար, եւ մենք կը լեցուինք Անոր անսահման լիութենէն:

## ԱՅՆ ԱՄԷՆԸ, ԻՆՉ ՈՐ ՅԻՍՈՒՄԸ ԸՐԱՒ, ՄԵԶԻ ՀԱՄԱՐ ԷՐ

*Ան ծնաւ մեզի համար եւ ապրեցաւ մեզի համար: Ան ըսաւ, որ Ինքը մկրտուեցաւ ջուրով եւ Հոգիով՝ մեզի համար: Ան ծառայեց, մահացաւ, յարութիւն առաւ, համբարծաւ դէպի փառքը, եւ Ան պիտի վերադառնայ՝ մեզի համար:*

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԿՈՒ ՏԱՅ ՄԵԶԻ ՅԻՍՈՒՄԻՆ ԿԵԱՆՔԸ: ԳԱՆՈՎ ԱՅՍ աշխարհ որպէս մարդ՝ Յիսուս ընդունեց այն, ինչ որ մարդկութիւնը պէտք ունի՝ Սուրբ Հոգին: Ան նոյնացուց Ինքզինքը մեզի հետ եւ ըսաւ. «Այսպէս կը վայելէ մեզի, որ ամէն արդարութիւն կատարենք» (Մատթէոս 3.15): Յիսուս Աստուծոյ Որդին էր, բայց Ան զբաղեցուց մեր դիրքը, եւ եկաւ այն օրը, երբ Ան անցում կատարեց դէպի նոր փորձառութիւն՝ Հոգիով լեցուած կեանքը: Այս փորձառութիւնը դարձ կամ վերստին ծնունդ չէր: Աստուծոյ Որդին բոլորովին աստոր պէտքը չունէր: Անոր օրինակը ցոյց տուաւ, որ Հոգիով մկրտութիւնը պէտք չէ շփոթել վերստին ծնունդի կամ որեւէ այլ հոգեւոր իրադարձութեան հետ: Ան ընդունեց Սուրբ Հոգիին առանձին եւ եզակի փորձառութիւնը՝ Իր ծառայութեան համար: Նոյնը պէտք է կատարուի իւրաքանչիւր հաւատացեալի հետ, որ կը հետեւի Անոր օրինակին:

## ՕԾՈՒԱԾ ՇԱԻԻՂՆԵՐ

*Ատոնք Սուրբ Հոգիի հեղուկ կրակին մէջ ընկղմած տղամարդու կամ կնոջ հսկայ ոտնահետքերն են: Ամէն մէկ քայլէն կրակ կը կայթ, որ կ'այրի մեր ճանապարհի կարիճներուն եւ օծերուն՝ ազատութեան եւ օրհնութիւններուն արահետ բանալով:*

«ՄԿՐՏՈՒԹԻԻՒՆ» ԲԱՌԸ ԱՅՍՕՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՌ Է, ԲԱՅՑ ՀԻՆ Ժամանակներուն մէջ այն պարզապէս կը նշանակէր ընկղմում: Երբ ներկարարը կտորը ներկին մէջ մտցնէր, այն կ'ընկղմէր կամ կը մկրտուէր, ինչ որ կը նշանակէր, որ այդ գործուածքը կ'ընդունէր այդ ներկին բնոյթը: Երբ Յիսուս՝ կանգնած Սուրբ Հոգիի գետին մէջ, կը կանչէ մեզ, եւ մենք կը հետեւինք, Ան կը գրկէ մեզ Իր ձեռքով եւ կը մկրտէ Սուրբ Հոգիի հեղուկ կրակին մէջ: Մենք կը մտնենք կրակին մէջ, իսկ կրակը՝ մեր մէջ: Երբ մենք կը բարձրանանք այդ փառաւոր գետէն, կը գիտակցինք, որ կրակը բոլորովին համակած է մեզ եւ ամբողջովին ներծծուած է մեր մէջ: Այն նախատեսուած չէ մեր անհատականութեան որեւէ կողմի կամ առանձին գործառնոյթի համար. այն կ'ընդգրկէ մեր ամբողջ անհատականութիւնը: Պատկերացուցէք, որ դուրս կ'ելլէք այդ գետէն եւ կը զգաք, թէ ինչպէս կենդանի կրակը կը կաթկթի ձեզմէ: Ամէն մէկ դէմ ձեր քաղաքին մէջ պիտի գիտնայ, թէ դուք ուր զացած էք, քանի որ անոնք կը ճանչնան ձեր ոտնահետքերու կրակէ կաթիլները՝ օծուած շաւիղները:

## ԸՆԴԳՐԿՈՒԱԾ ԸԼԼԱԼ

*Յիսուս Իր երկրային կեանքին ընթացքին ոչ մէկուն կրակով մկրտեց: Ան ըսաւ, որ պիտի ընէր ատիկա Իր Հօր քով երթալէն յետոյ: Եւ այդպէս ալ վարուեցաւ՝ սկսելով Պէնտէկոստէի օրէն, ինչպէս որ գրուած է Գործք 2-րդ գլուխին մէջ: Այդ «յետոյ»-ն դեռ կը շարունակուի: Անոր ծրագիրը չէ փոխուած: Յիսուս դեռ Սուրբ Հոգիով Մկրտողն է: Ան թոշակի չէ անցած եւ չէ փոխած Իր դերը: Մի՞թէ նման բան կրնար տեղի ունենալ, եթէ այդ խոստումը «հեռաւորներու» համար էր (տե՛ս Գործք 2.39):*

ՆԵՐԿԱՅԻՍ ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ ԳԻՐՔԻՆ ԵՒՍ ՄԷԿ ԳԼՈՒՆ ՄԸ ԿԸ  
գրուի: Այսօր Հոգիով մկրտութիւնը կ'ոգեշնչէ հարիւր միլիոնաւոր նո-  
րահաւատներ՝ Աւետարանը զօրութեամբ քարոզելու համար: Ընդգր-  
կուեցէ՛ք այս գործին մէջ:

## ՈՐԴԻՒՆ ՆԱԽԱՆՁԱԲՈՐՈՒԹԻՒՆԸ

«Եւ Հրեաներու զատիկը մօտ էր, ուստի Յիսուս Երուսաղէմ գնաց: Տաճարին մէջ գտաւ եզներ, ոչխարներ ու աղաւնիներ ծախողներ եւ ստակ փոխողներ ալ, որոնք նստած էին: Չուանէ խարազան մը շինեց եւ ամէնքը տաճարէն դուրս հանեց՝ ոչխարներն ալ եւ եզներն ալ, եւ ստակ փոխողներուն պղինձները ցիրուցան ըրաւ ու սեղանները կործանեց: Եւ աղաւնի ծախողներուն ըսաւ. «Ասկէ վերցուցէք ասոնք. Իմ Հօրս տունը առելտրուի տուն մի՛ ընէք»: Եւ Անոր աշակերտները յիշեցին, որ գրուած է. «Քու տան նախանձը Չիս կերաւ»»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ 2.13-17

## ԱՍՏՈՒԾՈՅ ԿՐԱԿԸ ՅԻՍՈՒՄԻՆ ՄԵՋ

*Ոմանց համար այն երկրպագութեան վայր էր: Միսններուն համար այն աշխատանքի վայր էր, ուր անոնք կը շահէին իրենց ապրուստը՝ որեւէ միջոցով: Բայց Որդիին համար այն Իր Հօր Տունն էր՝ սուրբ հող եւ այնպիսի վայր, ուր աղօթքներ կը բարձրանան ազգերու փրկութեան, բժշկութեան եւ ազատագրման համար: Այնպէս որ, Ան մտրակ բարձրացուց ստակ փոխողներուն, գողերուն եւ չարաշահողներուն վրայ՝ դրդելով փարիսեցիներուն զայրոյթն դողայ, եւ վտանգի ենթարկելով Իր կեանքը: Այնուամենայնիւ, քանի որ վտանգուած էր Իր Հօր պատիւը եւ ազգերու փրկութեան աշխատանքը, Ան ծիծաղեցաւ մահուան վրայ: Արժէր գործել այդ նպատակներուն համար: Ան պատրաստ էր խաչուիլ ատոնց համար, եթէ հարկաւոր ըլլար: Ինչպիսի՛ նախանձաւորութիւն:*

ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՄԵՋ ԱՍՏՈՒԾՈՅ ԿՐԱԿԸ ԿԸ ՎԵՐԱԾՈՒԻ ՆԱԽԱՆՁԱՎՈՐՈՒԹԵԱՆ՝ այնպիսի նախանձաւորութեան, որ մենք տեսանք Յիսուսի կեանքին մէջ: Ան նախանձաւոր էր ոչ միայն խօսքով: Երբ Յիսուսը վերջին անգամ Երուսաղէմ կ'երթար, մենք կը կարդանք, որ Ան կ'երթար Իր աշակերտներուն առջեւէն: Անոնք կը տեսնէին, թէ ինչպէս Ան կը ստիպէր Ինքզինքը առջեւ երթալու: «Եւ ճանապարհին վրայ Երուսաղէմ կ'երթային, եւ Յիսուս անոնցմէ առաջ կ'երթար, եւ անոնք կը զարմանային եւ ետեւէն երթալով կը վախճային» (Մարկոս 10.32): Ինչո՞ւ: Այն կրակը, որ Անոր ներսն էր, կ'երեւէր նոյնիսկ Իր քայլերուն մէջ: Երբ անոնք տեղ հասան, Յիսուս տեսաւ, թէ ինչպէս կը պղծուէր տաճարը: Այդ պահուն աշակերտներն ա՛լ աւելի համոզուեցան Անոր նախանձաւորութեան մէջ: Անոր արծազանգը վերածեց Ձինք զարհուրելի անձնաւորութեան: Աշակերտները յիշեցին Սաղմոս 69.9-ը. «Որովհետեւ Քու տան նախանձը Ձիս կերաւ...»: Բայց Անոր բարկութիւնը ծնաւ սէրէն, ոչ թէ սառնասիրտ զայրոյթէն: Յիսուս խելագարուած մոլեռանդ չէր. Ան կը սիրէր Իր Հօր տունը, եւ վերջ: Ան կը ցանկար, որ մարդիկ երկրպագէին տաճարին մէջ՝ ազատ եւ երջանիկ: Բայց շահամոլութիւնը տաճարին մէջ փճացուցած էր այդ ամէնը: Անոր սիրտը յորդեց հրաբուխի պէս: Սուրբ Հոգիին կրակը Անոր ներսը դրդեց Ձինք մաք-



րելու տաճարը: Անոր արարքները վախ կը յառաջացնէին, եւ շատերն ալ փախուստի դիմեցին ատոր պատճառով:

Չնայած ատոր, երեխաները, կոյրերը եւ կաղերը մնացին, եւ Ան բժշկեց (տե՛ս Մատթ. 21.14-16): Ան ճիշդ ատիկա կը կամենար ընել, եւ ճիշդ այդ պատճառով Անոր բարկութիւնը բորբոքած էր՝ հնոցի պէս: Անոր ցասման նպատակը ուրախութիւնն էր, եւ Ան հասաւ Իր նպատակին. ի վերջոյ, երեխաները երգեցին «Ովսաննա»: Ասիկա միակ դէպքն է Աստուածաշունչին մէջ, ուր ոգեշնչումը Աստուծոյ վերաբերեալ յանդիմանուեցաւ՝ միակ դէպքը, երբ Տիրոջ սրահներուն մէջ հնչեց լռութեան պահանջ: Այդ լռութիւնը պահանջողները փարիսեցիներն էին. Տիրոջ փառաբանութիւնը կը խլացնէր անոնց դրամարկներէն հնչող զրնգոցը: Դրամի երաժշտութիւնը ստիպուած լռեց: Ասիկա Տիրոջ կրակի խորհուրդն էր. Անոր մաշող կրակի նպատակն էր ճանապարհ պատրաստել յորդացող փառաբանութեան համար:

# ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹԻՒՆ

«Եւ տօնի վերջին մեծ օրը Յիսուս կեցած էր, աղաղակեց եւ ըսաւ. «Եթէ մէկը ծարաւ է, թող քովս գայ ու խմէ: Ինձի հաւատացողը, ինչպէս Գիրքը կ'ըսէ, անոր փորէն կենդանի ջուրերու գետեր պիտի բխին»»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ 7.37,38

## ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԷՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Այն, ինչ որ Հոգին կ'առաջարկէ, անկարելի է ստանալ բազում բարի գործերու եւ կրօնի միջոցով: Աստուծոյ Հոգին կը յագեցնէ իւրաքանչիւրի խոր քաղցն ու ծարաւը: Ան թարմութիւն եւ նորոգութիւն կը բերէ ձեզի այնպէս, ինչպէս ոչինչ եւ ոչ ոք կրնայ: Եթէ դուք յոգնած էք եւ լեցունութեան պէտք ունիք, Յիսուս կ'առաջարկէ ձեզի գալ Իր քով, ընդմիջում մը վերցնել եւ խմել Սուրբ Հոգիին խոր ջուրերէն (տե՛ս Յովհ. 7.37,38):

ԱՄԵՆԱՀՐԱՇԱԼԻ ԶԱՅՆԸ, ՈՐ ԱՌՀԱՍԱՐԱԿ ԼՍՈՒԱԾ ԷՐ, ՊԻՏԻ ՀԱՍՆԵՐ հազարաւոր մարդոց ականջներուն, որոնք հաւաքուած էին Երուսաղէմի տաճարի սրահներուն մէջ: Տեղի կ'ունենային ազգային տօնակատարութեան վերջին ծէսերը: Բոլորին աչքերը կը հետեւէին այն ոսկիէ անօթին, որ լեցուած էր ջուրով ու գինիով: Թափելու ընծան պատրաստ էր Տիրոջը մատուցուելու համար: Քահանաներէն մէկը վեր բարձրացուց արեւի ճառագայթներէն փայլող անօթը եւ կեցաւ: Քար լռութիւն տիրեց. մարդիկ կը փորձէին լսել սուրբ ջուրի թափման ձայնը զոհասեղանին քով դրուած պրոնզէ անօթին մէջ: Յանկարծ այդ ամէնը ընդհատուեցաւ. Չայն մը, որ 1.000 տարի չէր հնչած, զարմացուց բոլորը: Ատիկա Յիսուս Քրիստոսի՝ Աստուծոյ Որդիին ձայնն էր: Ան այն խօսքն էր, որ խօսուած էր սկիզբէն եւ գոյութեան կոչած էր երկինքն ու երկիրը: Այժմ, կանգնած Երուսաղէմի մէջ, Ան կը հրատարակէր թագաւորական եւ Աստուածային հրովարտակը, որուն միջոցով Աստուծոյ գործելակերպը մարդոց հետ նոր փուլ պիտի թեւակոխէր. «Եթէ մէկը ծարաւ է, թող քովս գայ եւ խմէ: Ինծի հաւատացողը, ինչպէս Գիրքը կ'ըսէ, անոր փորէն կենդանի ջուրերու գետեր պիտի բխին» (Յովհաննէն 7.37,38): Կը մօտենար Սուրբ Հոգիի ժամանակաշրջանի սկիզբը:

## ՈՒՐԱԽԱԼԻ ԳՈՉԻՒՆ

*Սուրբ Հոգիի ազատություն բերող ազդեցության պատճառով դուք կը դժուարանաք, իսկ յաճախ՝ չէք կրնար հանդարտ մնալ, եւ աստոր պէտքն ալ չկայ: Զօրութիւն կայ ձեր գոչիւնին մէջ: Թոյլ տուէք դուք ձեզի տօնել Անոր ներկայութիւնը հիացական ուրախութեամբ: Գոչեցէ՛ք, եւ ձեր ներսէն ուրախութեան գետեր պիտի հոսին (տե՛ս Յովհ. 7.38, Ա. Պետր. 1.8):*

ԿԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ ԱՅՆ ԲԱՆԻՆ, ԻՆՉ ՈՐ ԱՍՏՈՒԾԱՆՈՒՆՉՈՐ Կ'ԸՍԵ Սուրբ Հոգիին մասին, «գետեր» բառը շարունակաբար կ'օգտագործուի՝ նկարագրելով հաւատացեալի կատարեալ վիճակը: Գետերը Սուրբ Հոգիին խորհրդապատկերն են: Եսայիա 58.11-ին մէջ կայ հետեւեալ ակնկալիքը. «...պիտի ըլլաս... ջուրի ակնի (կամ՝ գետի) պէս, որուն ջուրը չի պակսիր»: «Գետերը» վերապրելու համար անհրաժեշտ է Սուրբ Հոգիին հրաշագործ ներկայութիւնը: Շատերուն համար լեցունութիւնը անծանօթ է, անբնական եւ շփոթեցնող: Այնուամենայնիւ, անոնց համար, որոնք Աստուծոյ Թագաւորութեան մէջ են, այս աշխարհի մշակոյթը մեծ նշանակութիւն չունի: Մեր թագաւորութեան մէջ մարդիկ ուրախալի գոչիւններ կ'արձակեն: Մենք միայն պէտք է մէկ հարցում մը տանք՝ եթէ Քրիստոսը ընէր ճիշդ այն, ինչ որ խոստացաւ, եւ մարդիկ մկրտել Սուրբ Հոգիով ու կրակով, ինչպիսի՞ն անոնք պիտի ըլլային: Արդեօ՞ք պիտի ըլլային պաղարիւն, զուսպ եւ ինքնամիովի: Աստուծոյ զինանշանին վրայ պատկերուած է կրակ, ոչ թէ սառոյց:

## ԳԻՆԸ ՎՃԱՐՈՒԱԾ Է

«Միայն կ'ուզեմ սորվիլ ձեզմէ. «Օրէնքի գործերէ՞ն ընդունեցիք Հոգին, թէ՞ հաւատքով լսելէն: Այդքան անմիտ էք. Հոգիով սկսաք, եւ հիմա մարմինո՞վ կը վերջացնէք»»:

ԳԱՂԱՏԱՑԻՍ 3.2,3

## ՎԱՆԵԼ ԿԱՄ ԳՐԱԻԵԼ

*Ուշադրութիւն դարձուցէք. մեր տկարութիւնները չեն վաներ Աստուծոյ, այլ կը գրաւեն Ձիւնք: Թերեւս մենք անյոյս ենք, բայց Հոգին Աստուծոյ պարգեւն է յատկապէս տկարներուն համար, քանի որ Ան կը լրացնէ մեր տկարութիւնները: «Ան է յոգնածին (կամ՝ տկարին) ուժ տուողը, եւ Ան կարողութիւն չունեցողին զօրութիւնը կը շատցնէ» (Եսայիա 40.29):*

«ԶԱՐՄԱՆԱԼԻ ՇՆՈՐՀՔ, ՈՐՔԱՆՆ ՔԱՂՅՐ Է ԱՅՆ, ՈՐ ՓՐԿԵՑ ԻՆՇԻ պէս անզգամը»: Գողգոթային մէջ հնչեց ձայն մը, որ փրկութիւն բերաւ մարդկութեան, իսկ Պէնտէկոստէին օրը հնչեց ուրիշ ձայն մը՝ սաստիկ փշող քամիի ձայնը: Ատիկա նախանձաւորութեան, սիրոյ, Աստուծոյ Հոգիին ձայնն էր, որ կը փափաքէր Իր գիրկը առնել մարդկութիւնը: Լիովին գիտակցելով անկում ապրած մարդկութեան տկարութիւնները՝ Սուրբ Հոգին եկաւ, եւ Ան տակաւին հոս է՝ ձեզի համար: Մեր մեղքն էր, որ Յիսուսին խաչը հանեց, ոչ թէ մեր արդարութիւնը. մեր տկարութիւնն էր, որ Սուրբ Հոգիին մեր քով բերաւ, ոչ թէ մեր կատարելութիւնը:

## ԱՐԴԵՕ՞Ք ՄԵՆՔ ԱՐԺԱՆԻ ԵՆՔ

*Շատ քրիստոնէականեր կը կարծեն, որ իրենք արժանի չեն կամ բաւականաչափ լաւ չեն, որ Սուրբ Հոգին ընդունին: Այո՛, ճիշդ է, որ մենք երբեք այնքան լաւ չենք դառնար, որ Սուրբ Հոգիին արժանի ըլլանք, սակայն ատոր պէտքը չկայ: Իրականութեան մէջ, մենք նոյնիսկ չենք կրնար այսպիսի յոյս մը ունենալ: Ան լիովին սուրբ է: Բայց ճիշդ ատիկա է պատճառը, որ մենք Անոր պէտքը ունինք, եւ ճիշդ այդ պատճառով ալ Ան եկաւ:*

ՅԻՍՈՒՄԻՆ ԱՐԻԻՆԸ ԵՒ ՄԻԱՅՆ ԱՆՈՐ ԱՐԻԻՆԸ ԱՐԺԱՆԻ ԿԸ ԴԱՐՉՆԷ մեզ ստանալու Սուրբ Հոգիին զօրութիւնն ու լեցունութիւնը (տե՛ս Գործք 1.8): Քրիստոսը Հոգին կ'ուղարկէ ոչ թէ այն պատճառով, որ մենք հրաշալի քրիստոնէականեր ենք, այլ՝ ճիշդ այն պատճառով, որ մենք այդպիսին չենք: Աստուծոյ սիրտը կը փափաքի, որ Իր ստեղծած

մարդիկ փրկուին: Ան չէ ստեղծած այս երկրի միլիառաւոր մարդիկը՝ որպէս վառելիք դժոխքի կրակներուն համար, եւ ո՛չ ալ Քրիստոսէն զուրկ յաւիտենութեան համար: Ան ստեղծած է զանոնք երկինքը բնակեցնելու համար: Ան կ'ուղարկէ Սուրբ Հոգին՝ Փարաքլետոսին կամ Օգնականին, իսկ մենք միայն Անոր ծառաները կամ գործակալներն ենք: Ան կրնայ կատարել այդ առաջադրանքը, եւ Ան միայն կը ցանկայ, որ մենք համագործակցինք Իրեն հետ:

## ԻՍԿ ՄԵ՞Ր ՍՐԲՈՒԹԻՒՆԸ

*Այն զօրութիւնը, որուն միջոցով հրաշքներ եւ նշաններ կը գործուին, չի բխիր մեր սրբութենէն. այն կը բխի Սուրբ Հոգիէն: Մենք կրնանք տկար ըլլալ եւ նոյնիսկ ծախտողի, բայց ատիկա առաւել եւս ցոյց կու տայ, որ մենք պէտք է ընդունինք Սուրբ Հոգին: Ան չի տրուիր մեզի, քանի որ մենք կատարեալ ենք. Ան կը տրուի մեզի, քանի որ մենք կատարեալ չենք: ՄԵԾԱԳՈՅՆ ԳՈՐԾՕՆԸ ԱՅՆ Է, ՈՐ ՄԵՆՔ ՈՒՆԻՆՔ ԱՆՈՐ ՊԷՏՔԸ: ԻՍԿ ԴՈՒՔ ՊԷՏՔ ՈՒՆԻՔ ԱՆՈՐ:*

ԵԹԷ ԿՈՐՍՈՒԱԾՆԵՐԸ ՉԵՆ ԿՐՆԱՐ ՓՐԿՈՒԻԼ, ՔԱՆԻ ՏԱԿԱԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ բաղկացած չէ կատարեալ սուրբերէն, ուրեմն, անոնք ե՞րբ պիտի փրկուին: Կորսուածներու փրկութիւնը չի կրնար սպասել: Մենք պէտք է առաջնորդենք զանոնք դէպի Յիսուսը՝ լեցնելով Երկինքը եւ դատարկելով դժոխքը: Աստուած կատարած է Իր մեծագոյն աշխատանքը եւ տուած է Իր մեծագոյն զոհը, որպէսզի մարդիկ փրկուին, եւ ատիկա պայմանաւորուած չէ մեր կատարելութեան չափով: Ան չի սպասեր, մինչեւ որ մենք քալող կանոններու գիրք դառնանք: Մենք պէտք է ձգտինք սրբութեան, եւ Աստուածաշունչը կը խրախուսէ, որ ընենք ատիկա, սակայն մարդոց փրկութիւնը չի կրնար սպասել, մինչեւ մենք կատարելութեան հասնինք: Աստուծոյ ծրագիրները մշտապէս ենթադրած են, որ Հոգիին պարգեւը պիտի ըլլայ Մեծ յանձնարարականը կատարելու դրդապատճառն ու զօրութիւնը: Առանց ատոր ոչինչ կը յաջողի:

## ՀԻՆ ՄԱՐՏԿՈՑԸ

*Կարելոր չէ, թէ հոգեւորապէս որքան պաղ դարձած էք եւ որքան հեռացած էք հաւատքէն: Հին մարտկոցին պէս՝ ձեր մէջ մշտապէս կայ մնացորդային լիցք. մէկ անգամ Սուրբ Հոգիով զօրացած մարդը մշտապէս զօրացած է: Դուք միայն պէտք է մաքրուիք Յիսուսին արիւնով եւ նորի պէս պիտի դառնաք:*

ԻՄ ԸՆԿԵՐՆԵՐԷՆ ՄԷԿԸ ԿԸ ՄԱՔՐԷՐ ԻՐ ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ՏՆԱԿԸ ԵՒ մետաղի մը կտոր մետեց կուտակուած աղբին վրայ: Այն տեսանելի եւ լսելի առկայծում յառաջացուց: Պարզուեցաւ, որ հոն մեքենայի հին մարտկոց մը դրուած էր: Այդ մետաղին կտորը կարճ միացում մը յառաջացուցած էր մարտկոցին հաղորդալարերուն միջեւ: Այդ մարտկոցին մէջ դեռեւս քիչ մը լիցք մնացած էր, եւ ան դուրս հանեց այն աղբէն՝ մտածելով, որ դեռ կրնար օգտագործել: Ոմանց համար ասիկա կրնայ առակ դառնալ: Դուք յանձնուած էք եւ կը մտածէք, որ զօրութիւնը հեռացած է ձեզմէ: Այն երբեք չի հեռանար: Մաքրեցէ՛ք ձեր շուրջը գտնուող աղբը եւ պիտի յայտնաբերէք, որ Սուրբ Հոգիին այդքան դիւրին չէ անջատել: Տարիներ շարունակ քարոզելով հզօր մարգարէական օծութեան ներքոյ՝ Եղիսէն մահացաւ, բայց օծութիւնը մնաց անոր ոսկորներուն վրայ: Երբ մահացած երիտասարդ մը պատահաբար նետեցին Եղիսէին գերեզմանին վրայ, ան յարութիւն առաւ (տե՛ս Բ. Թագ. 13.21): Ձեզի համար տակաւին յոյս կայ:

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՒ ԳՈՂԳՈԹԱՆ

*Սուրբ Հոգիին նպատակն է իրական դարձնել Քրիստոսի խաչի յաղթանակները հաւատացեալի կեանքին մէջ, եկեղեցւոյ եւ աշխարհին մէջ: Որպէսզի ունենաք Սուրբ Հոգիին զօրութիւնը, դարձուցէ՛ք Քրիստոսի խաչը ձեր գործը, իսկ փրկութիւնը՝ ձեր ուղերձը:*

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԿԼԱՆՈՒԱԾ Է ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ: ԱՆ Կ'ԻՐԱԳՈՐԾԷ մարդոց սրտերուն մէջ այն, ինչ որ Յիսուս կատարեց մեզի համար խաչին վրայ: Դուք չէք կրնար հեռացնել Ձինք այդ առաջադրանքէն՝ դրդելով զբաղիլ որեւէ այլ գործով, որ չ'առնչուիր Գողգոթային հետ: Միայն փրկութեան հիմքին վրայ կայ ճշմարիտ հոգեւոր զօրութիւն: Հրաշքները՝ առանց խաչին, Սուրբ Հոգիին հրաշքները չեն:



# ԿՐԱԿԷ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ԲԱԺԻՆ 3

ՍԱՍՏԻԿ ՓԶՈՂ ՔԱՄԻ.

ՊԷՆՏԵԿՈՍԷ

## ԿԱՏԱՐՈՒԱԾ ԽՈՍՏՈՒՄ

«Եւ երբ որ Պէնտէկոստէի օրերը լրացան, ամէնը միաբան մէկտեղ էին: Եւ յանկարծակի երկնքէն ձայն մը եղաւ՝ սաստիկ փչող քամիի պէս, եւ լեցուց ամբողջ տունը, ուր որ նստած էին: Եւ բաժնուած լեզուներ երեւցան իրենց՝ որպէս թէ կրակէ, եւ նստաւ անոնցմէ ամէն մէկուն վրայ: Եւ ամէնը Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան ուրիշ լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին անոնց խօսիլ կու տար»:

ԳՈՐԾՔ 2.1-4

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ ՍԿՍԱԾ Է

*Սուրբ Հոգիին գալուստը փոխեց այս աշխարհի կարգը եւ թեքեց կշիռքի նժարները ի օգուտ Եկեղեցւոյ: Այնուամենայնիւ, կարելի էր հանգամանք մը կայ, որ պէտք է գիտնալ. միայն Աստուծոյ ժողովուրդը կրնայ օգտագործել այս ամենակարող զօրութիւնը: Ոչ մէկ չար ու ապստամբ ժողովուրդ... միայն՝ մենք:*

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ ՍԿՍԱԾ Է: ԱՅՆ, ՈՐ ՅԻՍՈՒՄ ուղարկեց Սուրբ Հոգին այս աշխարհ, տիեզերական նշանակութիւն ունեցող եւ անշրջելի իրադարձութիւն է: Այն ստեղծեց նոր հնարաւորութիւններ, որոնք կը գերազանցէին այն ամէնը, ինչ որ յայտնի էր Ադամի օրերէն: Այժմ մարդիկ կրնան ստանալ նոր կեանք՝ յարութեան կեանքը: Յարութեան կեանքը նման է ճառագայթման, ոչ թէ միջուկային կործանարար ճառագայթման, այլ՝ յարութեան ճառագայթման: Նոյն Հոգին, Որ Յիսուսին յարութիւն տուաւ մեռելներէն, յարութիւն պիտի տայ նաեւ մեզի՝ վեհ եւ զօրաւոր հոգեւոր կեանքի համար (տե՛ս Հռոմ. 8.11):

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ԳԱՆՈՒՍԸ

*Փրկութիւնը այս աշխարհ բերելու համար Սուրբ Հոգին բնակեցաւ Տէր Քրիստոսին մէջ, բայց փրկութեան մասին քարոզելու համար Սուրբ Հոգին կը բնակի Եկեղեցւոյ մէջ՝ տղամարդոց եւ կանանց մէջ, երիտասարդներուն եւ տարեցներուն մէջ՝ բոլոր ազգերէն եւ ցեղերէն, որոնք որ մաքրուած են Գառան թանկ արիւնով:*

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ԱՋՂԱՐԱՐԵՑ ԻՐ ԳԱՆՈՒՍԸ ԵՐՈՒՄԱՂԷՄ 120 ՄԱՐԴՈՑ կրկորդալիր զոչիւններով եւ հազաւ աշակերտներուն մարմինը: Մենք Անոր տաճարներն ենք ու Անոր բնակութեան հասցէն այս երկրի վրայ: Այդ պահէն աշակերտներուն կեանքը այլեւս առաջուանը չէր: Անոնք սկսան տարածել Աստուծոյ փառքը՝ խիզախութեամբ, բժշկութիւններով, հրաշքներով, մարգարէական նշաններով եւ զօրութիւններով, եւ մարդիկ հասկցան, որ անոնք Յիսուսին հետ էին (տե՛ս Գործք 2), քանի որ անոնց վրայ էր նոյն Սուրբ Հոգին, Որուն միջոցով կը գործէր Յի-

սուրբ: Սուրբ Հոգին բնակութիւն հաստատեց Եկեղեցւոյ մէջ եւ այլեւս չհեռացաւ Եկեղեցիէն: Այսօր նոյն Սուրբ Հոգին մեզի հետ է, մեր մէջ է եւ կը գործէ մեր միջոցով:

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ ԲՈՒՆՈՐԻ ՀԱՄԱՐ Է

*Սուրբ Հոգին չի տրուիր ըստ վիճակահանութեան, որուն միջոցով կ'ընտրուին ընդամէնը քանի մը հոգի: Ասիկա բախտախաղ չէ, որուն մէջ կան յաղթողներ եւ պարտուողներ: Աստուած կը սպառազինէ զանոնք, որ կը կանչէ, եւ Անոր զօրութիւնը աւելի քան բաւական է: Ոչ ոք դուրս կը մնայ, եւ ոչ ոք մնացորդներ կը ստանայ: Մի՛ որակազրկէք դուք ձեզ այն պարագային, երբ դուք արդէն ընդունուած էք:*

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԸ ՊԱՐՁ Է, ԵՒ ԱՏՈՐ ՄԷՋ ԶԿԱՅ ՈՐԵՒԷ ԱՆՈՐՈՇՈՒԹԻՒՆ: Սուրբ Հոգիով մկրտութիւնը նախատեսուած չէ միայն քանի մը «Աստուծոյ ընտրեալներուն» համար: Իրականութեան մէջ, բոլորս Անոր սիրելիներն ենք: Պէնտէկոստէի օրը 120 տղամարդ եւ կին Վերնատունն էին՝ Երուսաղէմի մէջ, եւ Գործք 2,3,4-ին մէջ գրուած է. «Եւ երեւցան անոնց բաժնուած լեզուներ՝ ինչպէս կրակէ, եւ նստաւ անոնցմէ ամէն մէկուն վրայ: Եւ ամէնը Սուրբ Հոգիով լեցուեցան...»: Ասիկա ո՛չ պատահականութիւն էր, Ո՛Չ ԱՒ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ: Այդ 120-էն «ամէն մէկը» ստացաւ, եւ «ամէնը», այսինքն՝ բոլորը, լեցուեցան: Հաշուի չառնուեցաւ ո՛չ անոնց սեռը, ո՛չ տարիքը, ո՛չ ռասան, եւ ո՛չ ալ հասարակական դիրքը: Դուք որակաւորուած էք Սուրբ Հոգիով մկրտութեան համար: ԱՅՆ Աստուծոյ ԲՈՒՆՈՐ զաւակներուն ՀԱՄԱՐ Է, որոնք մաքրուած են Անոր արիւնով, եւ այն կը վերաբերի նաեւ ձեզի եւ ինձի: Աստուծոյ զօրութիւնը անսահմանափակ է. Անոր վառելիքը չի վերջանար, եւ Անոր զօրութիւնը աւելի քան բաւական է Իր ամբողջ ժողովուրդին համար՝ անոնք, որոնք քաղց ու ծարաւ ունին:

## ԿՐԱԿԷ ԼԵԶՈՒ՝ ՁԵՐ ԳԼԽՈՒՆ

Վերնատունը 120 մարդ կար: Ինչ որ մեկը երկինքը պէտք է որ հաշուած ըլլար անոնց գլուխները, քանի որ անոնցմէ «ամէն մէկուն» գլխուն մէկական կրակէ լեզու իջաւ: Եթէ դուք գլուխ ունիք, Աստուած կրակէ լեզու ունի ձեզի համար: Ճիշդ հիմա դուք Անոր հաշուարկին մէջ էք: «Դուք զօրութիւն կ'արձնէք...» (Գործք 1.8): Միայն պատկերացուցէք. ձեր գլուխը վայրէջքի գօտի կը դառնայ Սուրբ Հոգիի կրակին համար: Ան կ'իջնէ եւ կը բնակի ձեր մէջ, որպէսզի այլեւս չծագէ ձեզ:

ՊԵՆՏԷԿՈՍՏԻ ՕՐԸ ՎԵՐՆԱՏՈՒՆԸ ԳՏՆՈՒՈՂ 120 ԱՇԱԿԵՐՏՆԵՐԷՆ իւրաքանչիւրը ընդունեց Սուրբ Հոգիով մկրտութիւնը: Ոչ ոք անստեւտեցաւ: Այն միայն 12 առաքեալներու համար չէր, որոնց մասին մենք գիտենք, եւ որոնք Յիսուսին հետ էին: Կային անյայտ մարդիկ, որոնք նոյնպէս ընդունեցին այս կրակը: Թերեւս անոնք յայտնի չէին, բայց հաւատարիմ էին: Անոնք ներկայ էին Վերնատունը եւ կը սպասէին խոստումին: Սուրբ Հոգին եկաւ բոլորին վրայ, եւ բոլորին գլուխներուն վրայ մէկական կրակէ լեզու իջավ. 120 կրակէ լեզու՝ 120 մարդու համար: Եթէ դուք ներկայ ըլլաք, դուք կրակէ լեզու կը ստանաք՝ ձեզի տրուած յանձնարարութեան համար:

## ԶԱՐԿԱՏՈՒ ՍԱՐՔ

Սուրբ Հոգին Աստուածային ներդաշնակութեան մէջ կը բերէ մեզ եւ կարողութիւն կու տայ, որ քալենք Աստուծոյ ծրագիրներուն համընթաց՝ իրագործելով Անոր Թագաւորութեան նպատակները: Հռովմայեցիս 8.14-ին մէջ գրուած է. «Որովհետեւ, որոնք որ Աստուծոյ Հոգիով կը վարուին, անոնք Աստուծոյ որդիներ են»:

ԶԱՐԿԱՏՈՒ ՍԱՐՔԸ ՓՈՔՐԻԿ ՍԱՐՔ ՄԸՆ Է, ՈՐ ԿԸ ԴՐՈՒԻ ՍԱՐԴՈՒ կրծքավանդակին կամ որովայնին վրայ՝ սրտի ռիթմի խանգարումները վերահսկելու համար: Ես կը հաւատամ, որ Սուրբ Հոգիին կրակը ամէն հաւատացեալի կեանքին մէջ կը գործէ զարկատու սարքին պէս:

Այն կը շտկէ անկանոն ռիթմերը եւ կը դարձնէ մեզ ներդաշնակ Աստուծոյ սրտին հետ: Անո՞ր նպատակները, թէ՞ մերը: Անո՞ր կամքը, թէ՞ մերը: Իմ գլխուն վրայ գտնուող կրակէ լեզուն, որուն վրայ գրուած է իմ անունը, կ'առաջնորդէ զիս՝ համաձայն Աստուծոյ սրտի զարկերուն:

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ՄԱՐՄՆԱԴՈՐՈՒՄԸ

*Հայրը ուղարկեց Որդին՝ մեզ փրկելու համար, եւ Ան կու տայ Իր Հոգին՝ մեզ լեցնելու եւ զօրացնելու համար: Սուրբ Հոգին չի գար, քանի որ մենք արժանի ենք: Ան կու գայ Հօր սիրոյ եւ Որդիի զոհին պատճառով, եւ քանի որ մենք Օգնականի եւ Մխիթարիչի պէտք ունինք: Պէտք չկայ, որ ինչ որ բան մը ընենք. մենք պէտք է պարզապէս ընդունինք:*

ՊԵՆՏԷԿՈՍՏԻ ՕՐԸ ԱՆՈՆՔ ՍԿՍԱՆ ՔԱՐՈՋԵԼ ԱԲԵՏԱՐԱՆԸ «Սուրբ Հոգիով, որ Երկնքէն ուղարկուեցաւ» (Ա. Պետրոս 1.12): Ան իջաւ եւ մուտք գործեց այս երկիր, ինչպէս որ Յիսուսը Երկնքէն եկաւ: «Խօսքը մարմին դարձաւ» (Յովհաննէս 1.14). Յիսուս մուտք գործեց այս աշխարհ եւ մարդկային կերպարանք հագաւ: Նմանապէս, Սուրբ Հոգին զգեստաւորուեցաւ աշակերտներով՝ բնակուելով անոնց մէջ: Այս աշխարհը չէր կրնար ընդունիլ Ջինք, բայց հարիւրաւոր մարդիկ կը սիրէին Յիսուսը, եւ անոնցմէ 120-ը դարձան առաջին Հոգիով լեցուած մարդիկ այս աշխարհին մէջ՝ տղամարդիկ, կանայք, առաքեալներ եւ աշակերտներ: Անոնք պարզապէս միասին նստած էին. անոնք չէին կեցած, ծունկի չէին եկած եւ չէին աղօթեր: Անոնք պարզապէս կը սպասէին, ինչպէս որ Յիսուս պատուիրած էր իրենց. «Մի՛ հեռանաք Երուսաղէմէն, այլ սպասեցէ՛ք այն պարգեւին, որ Իմ Հայրը խոստացաւ» (Գործք 1.4, NIV): Քրիստոս համբարձաւ Երկինք եւ խնդրեց Հօրմէն ուղարկել Իր պարգեւը՝ Սուրբ Հոգին: Տասը օր յետոյ Ան եկաւ:

## ՄԻԱՄԻՆ՝ ՈՐՊԷՍ ՄԷԿ

*Պէնտէկոստէի ժամանակ Աստուած եւ մարդը միաբան ուրախացան խարիզմաթիք լեզուով: «Լեզուներով խօսիլը» (Գործք 2) կը նշանակէ, որ Աստուածային Փեսան Իր գիրկը առած է Իր Հարսը (տե՛ս Կողոս. 2.9,10):*

ՄԵԾ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ ՀԱՍԱՒ գագաթնակէտին Բաբելոնի մէջ, երբ Աստուած իջաւ ու խառնեց մարդկութեան լեզուները (տե՛ս Ծննդ. 11.1-9): Պէնտէկոստէի օրը Աստուած չեղեալ դարձուց այն, ինչ որ ըրած էր Բաբելոնի մէջ՝ միաւորելով մարդիկ այլեւայլ լեզուներով: Աստուած գնեց մեզ Իր արիւնով տարբեր ռասաներէն, մշակոյթներէն եւ հասարակական խաւերէն (տե՛ս Յայտն. 5.9,10) եւ միաւորեց մեզ, ոչ թէ որ մենք կառուցենք աշտարակ՝ մարդկային փառքի եւ հանճարի համար, այլ՝ որ կառուցենք Աստուծոյ Թագաւորութիւնը՝ Անոր փառքին համար: Սուրբ Հոգիով մարդկութիւնը եւ Աստուած ցնծացին՝ տօնելով այս մեծ վերամիաւորումը միասնական օրհնեալ լեզուով:

## ՄԱՐԳԱՐԷԱԿԱՆ ԱԲԵՏԱՐԱՆՉՈՒԹԻՒՆ

«Եւ Երուսաղէմի մէջ բնակած էին հրեաներ՝ Աստուածավախ մարդիկ՝ երկնքի տակ գտնուող բոլոր ազգերէն ժողովուած: Եւ երբ որ այս ձայնը եղաւ, բազմութիւնը մէկ կողմ եկաւ եւ շփոթեցաւ, որովհետեւ կը լսէին, որ անոնք իրենց ամէն մէկուն լեզուովը կը խօսէին: Եւ ամէնքը կը հիանային եւ կը զարմանային եւ իրարու կ'ըսէին.

«Զէ՞ որ ահա ասոնք ամէնքը, որ կը խօսին, գալիլիացի են: Եւ ինչպէ՞ս մենք ամէն մէկս մեր լեզուով կը լսենք, որուն մէջ ծնած ենք... կը լսենք, որ անոնք մեր լեզուներով կը պատմեն Աստուծոյ մեծամեծ բաներու մասին»: Եւ կը հիանային ամէնքը եւ կը զարմանային, եւ իրարու կ'ըսէին.

«Ասիկա ի՞նչ պիտի ըլլայ»»:

ԳՈՐԾՔ 2.5-12



## ԿՐԱԿ ԵՒ ՄԱՐՄԻՆ

*Հոգին կը կամենայ կապ հաստատել մեզի հետ: Պէնտէկոստէի օրը Վերնատունը ներկայ մարդոց գլխուն վրայ գտնուող կրակէ լեզուները կապ հաստատեցին անոնց մարմնեղէն լեզուներուն հետ, եւ վերջաւորութեան տեղի ունեցաւ հզօր մարգարէական, միջմշակութային եւ աւետարանչական պոռթկում, որ վերապիտ- խուեցաւ հաւատացեալներուն եւ փոխեց ամբողջ աշխարհը:*

ՅԱԿՈՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԸ ՇԱՏ ԱԶԴԵՑԻԿ ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄ ՄԸ Կ'ԸՆԵ մարդկային լեզուի մասին: Ան կ'ըսէ, որ մենք կ'անիծենք մարդիկ եւ կ'օրհնենք զԱստուած նոյն բերանով (տե՛ս Յակոբ. 3-րդ գլուխ): Սա- կայն Պէնտէկոստէի օրը, երբ պարզ տղամարդիկ եւ կանայք անծ- նատուր եղան Աստուծոյն, անոնց լեզուները դարձան զօրութեան եւ փրկութեան գործիքներ: Անոնց գլխուն վրայ գտնուող կրակէ լեզուները կապ հաստատեցին անոնց մարմնեղէն լեզուներուն հետ: Երկնայինը միացաւ երկրայինին, գերբնականը՝ բնականին: «...եւ սկսան ուրիշ լե- զուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին անոնց խօսիլ կու տար» (Գործք 2.4):

## ՓՐԿԱՐԱՐ ԸՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

*Պէնտէկոստէիէն յետոյ Աստուած կը խօսի մարդոց միջոցով, ինչպէս որ Սուրբ Հոգին Անոնց ԽՕՍԻԼ կու տայ: Ասիկա աւելին էր, քան ոգեշնչումը: Պէնտէկոստէի օրը բոլոր հաւատացեալ- ները լեցուեցան Սուրբ Հոգիով: ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՍԻՆ քարոզող- ները կը խօսին ԱՍՏՈՒԾՈՅ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ: Ասիկա «ԽՕՍՔԻ» դուռն է (տե՛ս Կողոս. 4.3): Ըշմարիտ քարոզը ՓՐԿՈՒԹԻՒՆ ԿԸ ԲԵՐԷ: Սուրբ Հոգին կ'օժտէ քարոզուող Խօսքը Իր զօրութեամբ՝ մարդիկ սատանայէն փրկելու համար: «Անոր Խօսքը իմ սրտին մէջ նման էր վառող կրակի...» (Երեմիա 20.9, KJV):*

ԳՐՈՒԱԾ Է, ՈՐ ՊԵՆՏԵԿՈՍՏԵԻ ՕՐԸ «ԵՐԵՒՑԱՆ ԱՆՈՆՑ ԲԱԺՆՈՒԱԾ լեզուներ՝ ինչպէս կրակէ, եւ նստաւ անոնցմէ ամէն մէկուն վրայ... եւ սկսան ուրիշ լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին անոնց խօսիլ կու տար» (Գործք 2.3,4): Սուրբ Հոգին վերափոխեց աշակերտներուն

աղօթքները, փառաբանութիւնը եւ քարոզը՝ ազդեցիկ դարձնելով: Աշակերտներու փառաբանութիւնը՝ լեցուած զարմանքով, աւիւնով եւ զօրութեամբ, հատեց ազգային եւ ռասայական սահմանները (տե՛ս Գործք 2.5-12): Կրօնական մարդիկ, որոնց երկրպագութիւնը պաղ եւ ծիսական էր, առաջին անգամ վերապրեցան Հոգիով զօրացուած երկրպագութեան եւ փառաբանութեան նոր ալիք: Պետրոսը քարոզեց աննախադէպ խիզախութեամբ եւ վստահութեամբ, եւ այդ օրը 3.000 մարդ փրկուեցաւ ու աւելցաւ Եկեղեցւոյ մէջ:

## ԱՍՏՈՒԾՈՅ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՐԳՈՒԻԱԾՈՒԹԻՒՆԸ

*Աստուծոյ սրտին մէջ մշտապէս եղած են եւ պիտի ըլլան ազգերը՝ բոլոր ժողովուրդները: Ան չի կամենար, որ ռեւէ մէկը կորսուի, այլ որ բոլորը ճանչնան ճշմարտութիւնը (տե՛ս Բ. Պետրոս 3.9): Սուրբ Հոգին կը ցանկայ զօրացնել ձեզ, որ փոխէք ազգերը՝ ամէն ցեղին, ռասային եւ մշակոյթին պատկանող մարդիկ: Գործեցէ՛ք Աստուծոյ համար, ուր ալ ըլլաք, բայց աղօթեցէ՛ք համաշխարհային հունձքին համար: Մի՛ վախճաք հատել մշակութային եւ աշխարհագրական սահմանները:*

ՊԵՆՏԵԿՈՍՏԻ ՕՐԸ, ԵՐԲ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԹԱՓԵՑԱԷ, ՀՐԵԱՅ աշակերտները չխօսեցան եբրայերէնով, այլ բազմաթիւ հեռաւոր երկիրներէն եկած մարդոց լեզուներով (տե՛ս Գործք 2.8-12)՝ ցոյց տալով Աստուծոյ Հոգիին էթնիկական շահագրգռուածութիւնը եւ ջնջելով որեւէ կասկած, որ Ան սէր եւ յոյս կը տածէ բոլոր ժողովուրդներուն հանդէպ: Պէնտէկոստէի օրը կատարուեցաւ Աստուծոյ խոստումը՝ տրուած Յովէլի միջոցով, որ վերջին օրերուն մէջ Ան պիտի թափէր Իր Հոգին բոլորին վրայ (տե՛ս Յովէլի 2.28-32): Աստուած կը կամենայ Իր Հոգին թափել բոլոր մարդոց վրայ: Ասիկա կը համապատասխանէ Աւետարանին. «Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց այս աշխարհը, որ Իր միածին Որդին տուաւ, որ ամէն Անոր հաւատացողը չկորսուի, այլ՝ յաւիտենական կեանք ունենայ» (Յովհաննէս 3.16): Տրամաբանական է, որ Աստուած, եթէ Իր Որդին տուաւ բոլորին համար, նոյնպէս ալ Իր Հոգին պիտի տար բոլորին համար: Ան տուաւ Իր Որդին՝ մեր փրկութեան համար, եւ Իր Հոգին՝ մեզ զօրացնելու համար:

## ՊԵՆՏԵԿՈՍՏԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ

«Եւ Պետրոս ոտքի ելաւ այն տասնմէկին հետ, իր ձայնը բարձրացուց եւ անոնց հետ խօսեցաւ... «Ո՛վ իսրայէլացի մարդիկ, այս խօսքերը լսեցէ՛ք: Յիսուս Նազովրեցին՝ այն մարդը, որ Աստուծո՛մէ ցոյց տրուեցաւ ձեր մէջ՝ զօրութիւններով եւ հրաշքներով եւ նշաններով, որ Աստուած Անոր ձեռքով ըրաւ ձեր միջեւ, ինչպէս դուք ալ գիտէք, Անիկա, որ Աստուծոյ սահմանուած խորհուրդով եւ կանխագիտութեամբ մատնուած էր, առիք անօրէններու ձեռքով եւ փայտի վրայ բեւեռած սպաննեցիք, որուն Աստուած յարութիւն տուաւ՝ մահուան ցաւերը լուծելով, որովհետեւ կարելի չէր, որ Ան բռնուի անորմէ... Ապաշխարեցէ՛ք, եւ ձեզմէ ամէն մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերու թողութեան համար, եւ Սուրբ Հոգիին պարգեւը կ'ընդունիք»»:

ԳՈՐԾՔ 2.14,22-24,38

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹԻՒՆԸ

*Երբ Սուրբ Հոգին կու գայ ձեր վրայ, դուք ոչ միայն զօրութիւն կը ստանաք՝ հրաշքներ գործելու համար, այլեւ կը զօրանաք ֆիզիքապէս, հոգեբանօրէն եւ զգացմունքօրէն: Հոգիով մկրտութիւնը համարձակութիւն կու տայ. ամենաթոյլ վախկոտը կրնայ վերափոխուիլ՝ դառնալով ամենախիզախ եւ հերոսական անձը:*

ՅԻՍՈՒՄ ՏԵՍՆԵԼԸ ԵՒ ԱՆՈՐ ՁԱՅՆԸ ԼՍԵԼԸ ԶԷՐ, ՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՄ ԿՐԻՆԱԿԱՆ ԴԱՐԾՈՒԳ՝ ԱՅՆԱԿԻՍԻՆ, ԻՆՃԱԿԻՍԻՆ ԱՆՈՆՔ ԿԵՏԱԳԱՅԻՆ ԷԻՆ, քանի որ անոնցմէ ոմանք նոյնիսկ կասկածեցան (տե՛ս Մատթ. 28.17, Մարկ. 16.13,14, Ղուկ. 24.41): Անոնք կը կղպէին դուռը, երբ կը հաւաքուէին, քանի որ կը վախճային հրեաներէն (տե՛ս Յովհ. 20.19): Անոնք գաղտնի կը հաւաքուէին եւ այնքան վախցած էին, որ չէին կրնար դուրս փողոց ելլել եւ գոչել. «Յիսուսը կենդանի՛ է»: Սկիզբը, երբ աշակերտները դեռ Գալիլիոյ մէջ էին, անոնք նոյնիսկ վերադարձան իրենց հին գործին՝ ձկնորսութեան (տե՛ս Յովհ. 21.3): Այնուամենայնիւ, այդ ամէնը փոխուեցաւ Պէնտէկոստէի օրը, երբ անոնք ընդունեցին Սուրբ Հոգիով մկրտութիւնը եւ համարձակութիւնը: Անոնք այլեւս չէին վախճար հրեաներու բազմութենէն. փոխարէնը բազմութիւնները կը դողային անոնց ամօքեւ՝ աղաղակելով. «Ի՞նչ ընենք, մարդիկ եղբայրներ՝» (Գործք 2.37): Իրականացաւ այն, ինչի մասին կ'ըսէր Յիսուսը. «Բայց դուք զօրութիւն կ'առնէք, երբ որ Հոգին ձեր վրայ գայ, եւ Իմ վկաները պիտի ըլլաք... մինչեւ երկրի ծայրերը» (Գործք 1.8):

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ՆՊԱՏԱԿԸ

*Ի՞նչ նպատակով Հայրը ուղարկեց Սուրբ Հոգին: Անկասկած, որպէսզի հնարաւոր ըլլար Աւետարանը քարոզել այս երկրի վրայ գտնուող ամէն արարածի:*

ՊՕՐՈՍ Կ'ԱՆՈՒԱՆԷ ԱՏԻԿԱ ԱՌԱՋՆՈՐԴԵԼ ԱԶԳԵՐԸ ԴԷՊԻ ԱՒԵՏԱՐԱՆԻ ԿՐԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ (տե՛ս Հռովմ. 1.5): Քրիստոսին համակող փափաքը եւ Անոր գործն էր «փնտռել եւ ապրեցնել կորսուածը» (Ղուկաս 19.10):

Յիսուս ընդամենը հրաշագործ մը չէր: Նախելառաջ, Ան Փրկիչ էր, եւ Ան Փրկիչ է նաեւ այսօր: Փրկութեան աշխատանքն էր, որ Խաչը բարձրացուց Ջիւնք: Ատիկա Անոր երկրային կեանքի վերջնական նպատակն էր. ոչ թէ ընկերակցական բարօրութիւնը՝ պարզապէս բազմութիւններուն կերակրելը, այլ՝ մարդկութեան փրկութիւնը: Ասիկա Անոր առաջնահերթութիւնն էր: Որեւէ խօսակցութիւն «աւելի մեծ գործերու» մասին պէտք է համապատասխանէ Անոր «մեծագոյն գործին», որ կորսուածները փրկելն է: Փրկութիւնը մեծագոյն աշխատանքն է եւ մեծագոյն հրաշքը, որ Աստուած երբեք նախածեռնած է:

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՈՐՊԷՍ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻ ՄԵԿՆԻԶ

*Սուրբ Հոգին կը լուսաւորէ Սուրբ գիրքը՝ հասկնցնելով Աստուծոյ Խօսքը եւ յայտնելով պահուած խորհուրդները: Առանց Աստուածաշունչի Հեղինակի լոյս սփռելուն՝ մենք կրնանք միայն ենթադրութիւններ ընել:*

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՈՍԿԷ ԿԱՆՈՆԸ ԱՅՆ Է, ԻՆՉ ՈՐ Պօղոսը գրեց Ա. Կորնթացիս 2.12,13-ին մէջ. «...որ ճանչնանք այն բաները, որ Աստուծոմէ տրուեցան մեզի, որն ալ կը խօսինք՝ ոչ թէ մարդկային իմաստութեան սորված խօսքերով, այլ Սուրբ Հոգիին սորվեցուցածներով՝ հոգեւորները հոգեւորներուն հետ համեմատելով»: «Հոգեւորները» բառը այս խօսքին մէջ նոյն բառն է, որ թարգմանուած է որպէս «հոգեւոր պարգեւներ» Ա. Կորնթացիս 12.1-ին մէջ՝ «փնեւմաթիքա» բառը: Աստուածաշունչը անկարելի է հասկնալ ենթադրութիւններ ընելով: Պարզապէս օգտուեցէ՛ք Աստուածաշունչի Մեկնիչին՝ Սուրբ Հոգիին օգնութենէն:

## ՈՉ ՄԷԿ ԿՈՄԻՏԷ

Սուրբ Հոգիով լեցուած մէկ մարդ շատ աւելի լաւ է, քան 100 կոմիտէներ, որոնք, ինչպէս ինչ որ մէկը ըսաւ, «Ժամեր կը վատնեն՝ վայրկեանական որոշումներու համար»: Երբ Աստուած սիրեց այս աշխարհը, Ան կոմիտէ չկազմեց, այլ ուղարկեց Իր Որդին, իսկ Անոր Որդին ուղարկեց Սուրբ Հոգին (տե՛ս Յովհ. 3.16, Դուկ. 24.49): Քրիստոս ըսաւ, որ հաւատացեալները այս աշխարհի լոյսն են, բայց անհրաժեշտ է, որ Սուրբ Հոգին միացնէ մեր լոյսը: Արդեօ՞ք դուք լոյս կու տար:

ՊԷՆՏԷԿՈՍՏԻ ՕՐԸ ՊԵՏՐՈՍԸ ՈՏՔԻ ԿԵՅԱԷ, ԹԹԹՈՒԵՅ ԻՐ ԱՄՕԹՆ ու վախերը եւ ներկայացուց միակ Աստուածաբանութիւնը, որ գիտէր՝ Յիսուսը, եւ այն ալ՝ խաչուածը: Այսպիսով, փրկուեցաւ 3.000 մարդ տարբեր երկիրներէ՝ առանց որեւէ կոմիտէի, պիտոճէի եւ տնտեսական խորհուրդի նիստին: Ահա եւ Սուրբ Հոգիին զօրութիւնը. Ան հրապարակաւ կը կենդանացնէ Աւետարանը եւ յանդիմանութիւն կը բերէ: Եթէ՛ աւելի շատ ուշադրութիւն դարձնենք Սուրբ Հոգիին, մենք աւելի քիչ ժամանակ պիտի տրամադրենք կոմիտէներ կազմելուն եւ աւելի շատ արդիւնքներ պիտի տեսնենք:

## ԿՐԱԿԷ ՀԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ

«Յիսուսն ալ պատասխանեց... անոնց... «Մէկը չի կրնար Ինձի գալ, եթէ Չիս ղրկող Հայրը, գանիկա չքաշէ... Հոգին է կենդանացնողը, մարմինը շահ մը չ'ըներ. այն խօսքը, որ Ես ձեզի կը խօսիմ, հոգի եւ կեանք է»»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ 6.44, 64

## ԱՒԵՏԱՐԱՆԸ ԵՒ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ.

### ԿՐԱԿԷ ՀԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ

*Ամէն ձեռով քարոզեցէ՛ք Աւետարանի ճշմարտութիւնը: Չկայ աւելի պատուելի առաջադրանք եւ աւելի լաւ յանձնարարական, քան ասիկա, բայց առանց Սուրբ Հոգիի զօրութեան՝ այն կը վերածուի սովորական խօսքերու, փաստերու, պատմութեան եւ մեկնութեան: Նման Աւետարանը նոյնքան անօգուտ է՝ մարդիկ փրկելու համար, որքան թերթը՝ ուղեգիծէն դուրս գտնուող մարդատար շոգեկառքին մէջ:*

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՀՐԱՇԱԼԻ Է, ԲԱՅՑ ԱՅՆ ԻՆՔՆԻՆ ՄԱՀԱՅԱԾ Է՝ նման ցախատունը ածուխի դրուած: Մեզի պէտք է աւելին, քան ուղղադաւան Աստուածաշնչեան ուսուցումը: Ածուխը կ'օգտագործէ իր ներուժը միայն կրակի հետ: Անհրաժեշտ է Սուրբ Հոգիին կրակը՝ ճշմարտութիւնը բոցավառելու համար (տե՛ս Դուկ. 24.32): Յիսուս ըսաւ. «Այն խօսքը, որ Ես ձեզի կը խօսիմ, հոգի եւ կեանք է» (Յովհաննէս 6.64): Այն ուղերձը, որ կը քարոզէր Յիսուս՝ մկրտուած Սուրբ Հոգիով, աւելին էր, քան սովորական խօսքերը. այն կը կրէր կեանք եւ համոզուածութիւն, եւ 2.000 տարի յետոյ այն տակաւին կը փոխէ միլիառաւոր մարդոց կեանքերը աշխարհով մէկ:

## ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

*Սուրբ Հոգին կը զօրացնէ Աւետարանը՝ նման այն բանին, թէ ինչպէս ելեկտրականութիւնը ուժ կու տայ ջրամատակարարման կայանին: Այնուամենայնիւ, մենք չենք յառաջացներ Սուրբ Հոգիին զօրութիւնը աղօթքով, քրտինքով, տառապանքով, ժամանակով, ջանքերով, բարի գործերով կամ որեւէ այլ բանով: Հայրը կու տայ մեզի Սուրբ Հոգին՝ որպէս պարգեւ, ոչ թէ վարձատրութիւն կամ աշխատավարձ՝ այն, ինչ որ մենք կը շահինք:*



ՎԱՂՈՒՑ ԱՐԴԷՆ ԺԱՄԱՆԱԿՆ Է, ՈՐ ՀԱՍԿՆԱՆՔ, ԹԷ ՈՎ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ. ԱՆ ԱՆԵՏԱՐԱՆԻ զօրութեան գաղտնիքն է: Մենք չենք ստանար Հոգին՝ ճիգ գործադրելով եւ աշխատելով, այլ պարզապէս թոյլ տալով Անոր, որ մեր կեանքը մուտք գործէ: Անոր զօրութիւնը չի գար մեր աջակցութեամբ. այն պարզեւ է Աստուծմէ (տե՛ս Ղուկ. 11.13): Ոչ մէկ բարի գործ անհրաժեշտ է ատոր համար: Եթէ մենք կարենայինք այնքան լաւ դառնալ, որ արժանի ըլլայինք Սուրբ Հոգիին, մենք չէինք ունենար Անոր կարիքը:

## ՁԵՈՔ՝ ՁԵՈՆՈՑԻ ՄԷԶ

*Առանց Սուրբ Հոգիի զօրութեան՝ Անետարանը դատարկ եւ անարդիւնաւէտ է: Այն ունի Աստուածապաշտութեան ձեւ, բայց զուրկ է փրկելու եւ վերափոխելու զօրութենէն:*

ԱԲԵՏԱՐԱՆԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳԻՏ ԿԱՄ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԶԷ: ԱՍՏՈՒԾ Է ԱՆԵՏԱՐԱՆԻՆ Հեղինակը, եւ Ան յանձնարարած է մարդոց՝ պատմել այն ամբողջ աշխարհին: Սուրբ Հոգին նման է ձեռքի՝ քարոզուող Անետարանի ձեռնոցին մէջ: Անետարանը պէտք է քարոզուի Աստուածային օժութեան ներքոյ, եւ այդ ժամանակ մենք կ'իրագործենք որեւէ նպատակ: Զօրութիւնն է, որ կ'ապահովէ Մեծ յանձնարարականի կատարումը:

## ԿՐԱԿԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ

*Անետարանը ոչ պակաս, քան Աստուծոյ ծայնն է: Երբ Անետարանը քարոզուի Հոգիով լեցուած մարդու կողմէն կամ կրակով լեցուն Եկեղեցւոյ մէջ, մարդիկ կը լսեն: Նման Անետարանը կը փոխանցէ Աստուծմէ եկող կրակը: Առանց Անետարանին եւ առանց կրակին՝ որքան ալ յարմարաւէտ կամ տրամադրող ըլլայ միջավայրը, ունկնդիրները պաղ եւ մահացած կը մնան: Արտաքին շուքը զօրութիւն չէ: Հոգին կը կենդանացնէ խօսքը (տե՛ս Յովհ. 6.63):*

ԱՍԻԿԱ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԶԱՀ ԶԷ, ԱՅԼ՝ ՀՈԳԻԻՆ ՎԱՌՈՂ ԶԱՀԸ, ՈՐ փոխանցուած է յաւիտենութենէն ժամանակի մէջ, եւ կը փոխանցուի սերունդէ սերունդ: Այն կրակը, որ տեսաւ Մովսէսը, հանգչեցաւ աշակերտներուն վրայ. վառող մորենիէն սկսեալ (տե՛ս Ելից 3.1,2), այն վառեց Սողոմոնի զոհասեղանը (տե՛ս Բ. Մնաց. 7.1) եւ իջաւ աշակերտներու գլխուն (տե՛ս Գործք 2.3): Աստուծոյ կրակը՝ բոցեղէն լեզուներով, կը ցատկէր ամէն մէկուն գլխուն. ատիկա սովորական տեսարան կամ դրսեւորում չէր, այլ՝ այնպիսի վերապրում, որուն մէջ Աստուած եւ մարդը միասին են: Ան կրակի եւ այրման Աստուած է: Մենք կ'ապրինք հոգեւորապէս խաւար եւ ցուրտ աշխարհի մէջ: Չսառելու լաւագոյն միջոցը Սուրբ Հոգիով վառիլն է: Աստուած կը վառէ ձեր սրտի զոհասեղանի կրակը, որպէսզի դուք Անոր կրակը տարածող դառնաք:

## ԼՈՅՍ՝ ՀԵԹԱՆՈՍՆԵՐՈՒՆ

«Եւ կ'ըսէ. «Ատիկա դեռ քիչ է, որ Դուն իմ ծառան ըլլաս՝ Յակոբի ցեղերը վերականգնելու համար եւ Իսրայէլի ազատուածներուն ետ դարձնելու համար. Ես Քեզ ազգերու լոյս ալ շինած եմ, որ Դուն իմ փրկութիւնը ըլլաս մինչեւ երկրի ծայրը»»:

ԵՍԱՅԻԱ 49.6

## ԱԶԳԵՐՈՒ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Ազգերու բժշկութեան համար անհրաժեշտ է քարոզել Աստուծոյ Խօսքը՝ կենդանի Աստուծոյ Հոգիին զօրութեամբ: Բայց աստիկա կը սկսի մեզմէ: Մենք պէտք է երթանք, սակայն մենք պէտք է հաւատանք Խօսքին, ունենանք Հոգիի զօրութեան հպումը եւ անձնապէս ազատ ըլլանք: Երբ կրակոտ ըլլանք, մենք պիտի դառնանք Աստուծոյ բժշկարար գործիքները եւ, ինչպէս Բարի Սամարացին՝ այս աշխարհի փոշոտ ճանապարհներուն մէջ, պիտի բժշկենք սատանային զոհերը:

«ՈՒՐԵՄՆ ՀԱԲԱՏՔԸ ԼՍԵԼԷՆ Է, ԵՒ ԼՍԵԼԸ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԷՆ» (Հռովմայեցիս 10.17): Երբ Սուրբ Հոգին կը լուսաւորէ Սուրբ գիրքը ձեզի համար, այն հաւատքի կայծ կը յառաջացնէ եւ կը դրդէ վարուիլ Խօսքին հիման վրայ: Իմ հաւատքը գործեց, երբ Սուրբ Հոգին սկսաւ օգտագործել Աստուածաշնչեան հատուածներ՝ վառող նետերու պէս, որոնք բոցավառեցին իմ միտքը: Օրինակ՝ Յայտնութիւն 22-ին մէջ գրուած է, որ կեանքի ծառը ունի տերեւներ՝ ազգերու բժշկութեան համար: Աստուծոյ Խօսքը դարձաւ իմ կեանքին ծառը, իսկ այդ գիրքի տերեւները՝ երկնային դեղամիջոց: Փա՛ռք Աստուծոյ:

## ՅԱՂԹԵԼ ՅԱՂԹՈՂՆԵՐՈՒՄ

Յիսուս ըսաւ. «Ես եկայ, որ կրակ ձգեմ երկրի վրայ» (Ղուկաս 12.49): Անոր հետեւորդները որսացին այդ կրակոտ հաւատքը. «Անոնք ալ դուրս գացին, ամէն տեղ կը քարոզէին, եւ Տէրը կը գործակցէր անոնց հետ» (Մարկոս 16.20): Անոնք կրակով լեցուցին խաւար եւ պաղ հեթանոսական աշխարհը եւ հալեցուցին Հռոմէական կայսրութեան երկաթէ արծիւի խորհրդանիշը՝ յաղթելով յաղթողներուն:

ԿԱՅՈՐԵՐԸ ԾԱԼԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԾՈՒՆԿՆԵՐԸ ՅԻՍՈՒՄԻՆ ԱՈՋԵՒ, ՈՐՈՒՄ ԱՆՈՆՔ ԽԱՀԱԾ ԷՒՆ՝ ՈՐԱՒԱՆ ԵՄՍԵՂՈՒՄ ԵՐԵՎԱՆ:

նման արդիւնքի՝ բացի Աստուծոյ զօրութենէն: Գաղտնիքը այն էր, որ խոնարհ մարդիկ, որոնք մկրտուած էին կրակով, կը վառէին Աստուծոյ համար: Այդ ժամանակ անոնք կրակ ունէին, բայց մի՞թէ այսօր այդ կրակը կ'երեւի միայն մոմերու միջոցով: Մի՞թէ ատիկա է առաքելական ժառանգութիւնը: Եթէ մենք կը պնդենք, որ առաքելներու ժառանգորդներն ենք, այդ պնդումը վաւերացնելու համար մեր եւ անոնց միջեւ պէտք է նմանութիւններ ըլլան՝ գեղազարդ հանդերձներէն բացի: Մեզի անհրաժեշտ է ճշմարիտ առաքելական թիկնոցը: Այսօր շատերը եկեղեցի կ'երթան միայն ծնելու, ամուսնանալու եւ թաղուելու համար: Սակայն մահացած եւ չոր առարկաները դիւրաբար կը բռնկին: Պետրոս ըսաւ. «Որովհետեւ ձեզի եւ ձեր որդիներուն համար է այս խոստումը, եւ այն բոլոր հեռաւորներուն համար...» (Գործք 2.39): Մենք կը համապատասխանինք այս որակաւորման. մենք հեռաւորներն ենք:

## ԱԶԳԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾ

*Ձեր կոչումը մեծապէս կը գերազանցէ ձեր կեանքը եւ ձեզ շրջապատող մարդոց: Այն կը վերաբերի այս աշխարհին: Հունձքի դաշտերը ազգերն են: Թոյլ մի՛ տաք, որ ձեր միջավայրը մարդէն տեսիլքն ու կրակը: Բացէ՛ք ձեր աչքերը, որպէսզի աւելին տեսնէք, քան ձեզ շրջապատող աշխարհը եւ ձեր անձնական խնդիրները: Աշխարհը հասած է եւ պատրաստ է հունձքի (տե՛ս Ղուկ. 10.2):*

ՅԻՍՈՒՄ ՄԵՌԵԼՆԵՐԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂՆԵԼԷՆ ՇԱՏ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՏՈՅ աշակերտները պահպանած էին հրէական աշխարհայեացքը: Անոնք կը համարէին, որ իրենց նոր հաւատքը կը պատկանէր միայն Իսրայէլին: Անոնք նոյնիսկ հարցուցին Տիրոջը Անոր համբարծումէն կարճ ժամանակ առաջ. ««Տէ՛ր, այս ժամանակի՞ն կը հաստատես Իսրայէլի թագաւորութիւնը»: Եւ Ան ըսաւ անոնց. «Ձեր բանը չէ գիտնալ ժամերն ու ժամանակները, որ Հայրը Իր իշխանութեան մէջ դրաւ: Բայց դուք զօրութիւն կ'առնէք, երբ որ Հոգին ձեր վրայ գայ, եւ Իմ վկաները կ'ըլլաք Երուսաղէմի մէջ եւ ամբողջ Հրէաստանի եւ Սամարիայի մէջ, մինչեւ երկրի ծայրերը»» (Գործք 1.6-8): Յիսուս կը կամենար, որ Իր

աշակերտները հասնելին ամբողջ աշխարհին, ոչ թե միայն Հրէաստանին: Անոնց սկզբնակէտը Երուսաղէմն էր, բայց անոնց նշանակման վայրը ազգերն էին:

# ԿՐԱԿԷ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐ

ԲԱԺԻՆ 4

ԸՆԿՂՄԱԾ՝ ԿՐԱԿԻ ՄԷՋ.

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ

ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

## ՎԵՐՋԻՆ ԱՆՁՐԵԻԸ

«Այն օրը դուք կը ճանչնաք, որ Ես իմ Հօր մէջ  
եմ, եւ դուք՝ իմ մէջ, եւ Ես՝ ձեր մէջ»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ 14.20



## ԼԻՈՎԻՆ ԱՆՋՈՒԳԱԿԱՆ

Սուրբ Հոգիով մկրտութիւնը անկարելորդ, սովորական կամ պատահական չէ: Այն պարզապէս կրօնական եւ ձեւական ծէս մը չէ, որուն նպատակը օրինութիւն հռչակելն է: Այն անզուգական է: Այն Յիսուս Քրիստոսի բացառիկ խոստումն է, եւ միայն Ան նման խոստում մը տուած է: Այն հրաշալի է, եւ այն մեր կեանքին մէջ կատարած Անոր աշխատանքի անժխտելի ապացոյցն է: Յիսուս «Հոգիով Մկրտողն է» (Մատթէոս 3.11): Ասիկա Անոր ամենաերանելի գործերէն մէկն է:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԿԱՄ ԾԻՍԱԿԱՆ չէ. այն պարզապէս եկեղեցական բառապաշարի մէկ մասը չէ, որ կ'օգտագործուի ժամերգութեան կամ պաշտամունքի ժամանակ: Այն Սուրբ Հոգիին զօրութիւնն է, որ ուղարկուած է, որպէսզի զօրացնէ եկեղեցին՝ իր երկրային առաջադրանքը կատարելու համար: Առանց ատոր՝ մարդիկ չեն կրնար փրկուիլ՝ անկախ մեր ջանքերէն: Առանց Սուրբ Հոգիին՝ ոչ մէկ տեւական փոփոխութիւն կրնայ տեղի ունենալ եկեղեցւոյ մէջ եւ եկեղեցւոյ միջոցով: Առանց Սուրբ Հոգիով մկրտութեան՝ եկեղեցին պիտի պարտուի այս աշխարհի խաւարէն եւ թշնամիի հնարներէն (տե՛ս Յովհ. 16.13):

## ՔՇԵԼ-ՏԱՆԻԼ ՄԵՐ ԱՒԱՆԴՈՅԹՆԵՐԸ

*Թերեւս մենք երգենք. «Բարի գալու՛ստ, Սո՛ւրբ Հոգի», բայց Ան չի գայ մեր հրաւերին պատճառով: Ան հիւր կամ օտարական չէ, որուն կարելի է հրաւիրել մէկ-երկու ժամով: Ան Երկնքի Տէրն է, եւ Ան կը հրաւիրէ մեզ Իր ներկայութեան մէջ: Ան կը գտնէ Իր բնական միջավայրը հոն, ուր կայ հաւատք եւ Աստուծոյ խօսքը:*

ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ ԶԷՒՆ ԱՂՕԹԵՐ ՀՈԳԻՒՆ ՀԱՄԱՐ, ԲԱՅՅ ԱՆ ԵԿԱԷ եւ գրաւեց այդ վայրը: Որեւէ մթնոլորտ, ուր այդ պահուն անոնք կը գտնուէին, քշուեցաւ-տարուեցաւ «սաստիկ փչող քամիի» կողմէն, որ ներխուժեց այդ վայրը (տե՛ս Գործք 2.2): Հոգին երկնքի մթնոլորտն է,

Եւ Անոր հետ երկինքը կու գայ մեր քով: Ան *փնեւման* է՝ երկնքի քամին, որ կը քշէ-կը տանի մեր ասանդոյթներն ու լճացած վիճակները, եւ թարմութիւն կը բերէ բոլորին վրայ:

## ԿԱՍՈՒՐՁ՝ ԵՐԿՆՔԷՆ ԴԷՊԻ ԵՐԿԻՐ

*Սուրբ Հոգիով մկրտուած՝ կը նշանակէ ըլլալ վերջին անձրեւի շարունակական ընթացքի մէջ (տե՛ս Յովէլի 2.23,28,29): Այն կը նշանակէ կապել երկինքը երկրի հետ՝ օրհնութիւններու կենսարար գետերով, պտուղ բերել եւ վերջ տալ երաշտին:*

ՀՈԳԻՈՎ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ ԿԱՍՈՒՐՁ Է ԵՐԿՆՔԻ ԵՒ ԵՐԿՐԻ ՄԻՋԵՒ՝ իւրաքանչիւրին համար: Միքիա 5.7-ին մէջ գրուած է, որ Տէրը կ'իջնէ՝ «այն շաղին (կամ՝ անձրեւի) պէս, որ կու գայ խոտին վրայ»: Թերեւս պատահած է, որ քաղաքէն դուրս ըլլաք եւ հեռուէն անձրեւախառն փոթորիկ տեսնէք: Երկինքը մանուշակագոյն է՝ լեցուն անձրեւային ամպերով: Ամպերուն տակ անձրեւի պարիսպ է, որ երկնքէն երկիր կը հասնի: Անձրեւը կը կապէ ամպերը գետնի հետ, կամ երկինքը՝ երկրի հետ: Այդ ամպերը (երկինքը), թափուող անձրեւը եւ երկրի վրայ հոսող ջուրերը բաղկացած են միեւնոյն նիւթէն: Երկինքը եւ երկիրը միացած են: Երբ մենք կը լեցուինք Հոգիով, ասիկա «վերջին անձրեւն» է:

## ԳԵՐԲՆԱԿԱՆ ԿԱՊ

*Երբ կը մկրտուինք Հոգիով, մենք կը վերապրինք նոյն մթնոլորտը, որ պիտի ճաշակենք Երկինքը: Սուրբ Հոգին Սուրբ Տէրն է, եւ Ան կը յայտնէ զԱստուած ե՛ւ գերբնական, ե՛ւ նիւթական իրականութիւններու մէջ: Սուրբ Հոգիով մկրտութիւնը մեզ կը կապէ երկնքին հետ այնպէս, որ մենք երբեք չենք վերապրած:*

ԱՍՏՈՒԾՈՅ ԳՈՐԾԵՐԸ ՄՇՏԱՊԷՍ ՅԱՅՏՆՈՒԱԾ ԵՆ ԱՅՍ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ Սուրբ Հոգիին միջոցով: Ան է կապը երկնքի եւ երկրի միջեւ: Երբ մենք կը մկրտուինք Հոգիով, Աւետարանը կը հասնի այս երկրի գաւակներուն:

Մենք կը յայտնուինք Աստուծոյ վերջին անձրեւի փոթորկալի ամպերուն մէջ: Մենք կը թրջուինք Հոգիին ջուրերով: Ուր ալ որ երթանք Վերնատունը ըլլալէն յետոյ, մենք կը տանինք ատոր նշանները եւ ապացոյցները: Աստուած նոր կերպով մեզի հետ կ'ըլլայ, եւ մեզի համար դժուար պիտի ըլլայ պահել Անոր ներկայութեան նշանները: Մեր լոյսը կը լուսաւորէ անոնց, որոնց որ պիտի հանդիպինք մեր ճանապարհին: Եւ մենք միայնակ չենք ըլլար, քանի որ մեր ետեւէն եկող մարդիկ պիտի ունենան երկնքի հետ գերբնական կապի նոյն նշանները:

## ԵՐԿԻՆՔԸ ԲԱՅ ԿԸ ՄՆԱՅ

*Երկնքի դուռը բաց է եւ բաց պիտի մնայ: Ձեր աղօթքները եւ պատասխանները չեն կրնար խոչընդոտուիլ: Դուք ունիք ազատ մուտք շնորհքի աթոռին քով. «Ուրեմն, համարձակութեամբ մօտենանք... որ ողորմութիւն ընդունինք եւ շնորհք գտնենք՝ պատշաճ ժամանակին օգնելու» (Եբրայեցիս 4.16): Այլեւս ոչ մէկ խոչընդոտ կայ:*

Ե՛՛՛՛ ԴԱԻԻԹԸ, Ե՛՛՛՛ ԵՍԱՅԻԱՆ Կ՛ԱՂՕԹԵԻՆ. «ՏԷ՛Ր, ՃԵՂՔԷ՛ (ԿԱՄ՝ պատռէ) երկինքը եւ վա՛ր իջիր (տե՛ս Սաղմ. 144.5, Եսայիա 64.1): Ատիկա տեղի ունեցաւ, երբ Յիսուս եկաւ: Քրիստոսը պատռեց ու բացաւ երկինքը՝ գալով մեր քով: Անկէ յետոյ Ան վերադարձաւ նոյն ճանապարհով՝ երաշխաւորելով, որ երկինքը մշտապէս բաց պիտի մնայ: Երկինքը յաւիտեան պատռուած է, եւ այն չէ կարուած՝ ո՛չ սատանային, ո՛չ ուրիշ արարածի մը ասեղով: Սուրբ Հոգին իջաւ այդ բաց երկնքով՝ որպէս վերջին անձրեւ: Երկինքը այլեւս պղինձի պէս չէ: Դժոխքը չի կրնար արգելքներ դնել Աստուծոյ Թագաւորութեան վրայ եւ շրջափակել այն: Դժոխքը ի գօրու չէ սահմանափակել Աստուծոյ քաղաքացիները: Բացուած է նոր եւ կենդանի ճանապարհ, որ անվերահսկելի է թշնամիին համար:

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

«Քամին ուր որ ուզէ, կը փչէ, եւ անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր, թէ ուրկէ կու գայ, եւ ուր կ'երթայ: Այսպէս է ամէն Հոգիէն ծնածը»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ 3.8

## ՍԱՓՈՐԻՆ ՄԷՋԻ ՕՂԸ ՔԱՄԻ ՉԷ

*Սաստիկ փչող քամին Վերնատուն ներխուժեց Պենտէկոստէի օրը եւ չկեցաւ: Պենտէկոստէն յետոյ Սուրբ Հոգին մշտապէս կը շարժի եւ կը գործէ՝ թարմութիւն եւ զօրութիւն բերելով Եկեղեցիին: Աստուծոյ Հոգին սկսաւ Իր պայքարը շատ դարեր առաջ եւ երբեք չնահանջեցաւ: Ան «չ'այցելէր» ժամանակ առ ժամանակ: Ան եկած է՝ մշտապէս բնակելու համար:*

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՊԵՆՏԵԿՈՍՏԷ: Ի՞ՆՉ Է ԱՅՆ: ԱՅՆ ՍԿՍԱԲ, ԵՐԲ ՅԻՍՈՍ համբարձաւ՝ մտնելով փառքի դարպասներով: Ան բաց ձեց ատոնք, եւ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԻԶԱԲ՝ անցնելով նոյն դարպասներով (տե՛ս Գործք 7.55): Փչեց ուժգին քամի՝ սաստիկ փչող քամին: Այն քշեց-տարաւ լճացած կրօնական աւանդոյթներու խեղդուկ օդը: Վերնատունը օդորակիչի պէտք չկար. այն լեցուած էր յարութեան զարթօնքի թարմութեամբ:

Սուրբ Հոգին մշտապէս կը շարժի եւ կը գործէ: «Հոգի» բառը Նոր կտակարանին մէջ «*փնտնման*» է, որը կը նշանակէ քամի կամ շունչ՝ օդ, որ կը շարժի: «*Փնտնմա*» ՉԻ նշանակեր կեցած օդ: Դուք երբեք լսա՞ծ էք այնպիսի քամիի մասին, որ չի փչեր: Քամին մշտապէս շարժման մէջ է: Ես երբեք չեմ լսած «հանդարտ փոթորիկի» կամ «հանգիստ մրրիկի» մասին: Սափորին մէջ գտնուող օդը քամի չէ: Եթէ Սուրբ Հոգին քամի է, Ան մշտապէս շարժման մէջ է, կամ ալ՝ Սուրբ Հոգին չէ: Երբ մարդիկ կը խնդրեն Սուրբ Հոգիէն շարժիլ, նոյնն է, թէ՛ խնդրեցէք կրակին տաք ըլլալ: Աստուածաշունչին յայտնի չէ գաղափարը չշարժուող Սուրբ Հոգիին մասին: Սուրբ Հոգին մշտապէս կը նշանակէ Աստուածային գործողութիւն: Ան Աստուածային Գործիչն է այս երկրին վրայ:

## ԳԵՐԻՇԽՈՂ ՔԱՄԻՆԵՐ ԵՐԿՆՔԷՆ

*Օդերելութաբանները կը խօսին գերիշխող քամիներու մասին: Քամիները կը փոխուին, բայց մշտապէս գոյութիւն ունի քամիի սովորական կամ հիմնական ուղղութիւն, օրինակ՝ արեւմտեան քամիները: Օդային հոսանքները բնականօրէն կը փչեն այդ ուղղութեամբ: Նոյն կերպով, գոյութիւն ունի գերիշխող քամի երկնքէն: Սուրբ Հոգին մշտապէս կը փչէ փառաւոր թարմութեամբ, ջերեկ ու զիշեր՝ ուղղելով Իր հոսանքները դէպի մեզ:*

ԲՈՒՈՐՍ Կ՛ԸՍԵՆՔ, ՈՐ ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՇԱՐԺԻ ՄԵԶԻ ՀԱՄԱՐ՝ Ի պատասխան մեր աղօթքներուն: Ատիկա ճիշդ է, սակայն գոյութիւն ունի եւս մէկ բան: Ան մշտապէս կը շարժի: Աստուած կը շարժի ԴԷՊԻ մեզի ամէն ժամանակ՝ օրինութեան եւ զօրութեան գերիշխող հոսանքներով: Աստուած չի գար մեր քով պոռթկումներով՝ յանկարծակի պայթիւններու պէս (կիրակի առաւօտեան կամ ուրբաթ երեկոյեան աղօթքի հաւաքոյթի ժամանակ): Անոր գերիշխան կամքը բոլորովին այդպիսին չէ: Անոր կամքը այն է, ինչ որ կը սորվեցնէ Աստուածաշունչը: Աստուած օր մը թոյլ չէ, օր մը՝ ուժեղ: Մեզի պէտք չէ ճնշաչափ կամ ջերմաչափ՝ Աստուծոյ ուժը գնահատելու համար: Այնպէս չէ, որ Ան միայն երբեմն մեզի հետ է՝ արթնութեան կամ բժշկութեան համար: Ան մշտապէս մեզի հետ է, սակայն Անոր մասնակցութիւնը կախուած է մեզմէ, ոչ թէ Անորմէ: Ան երբեք չի փոխուիր: Ան չունի տրամադրութիւններ: Աստուծոյ մէջ չկայ անորոշութիւն: մեր հաւատքն է, որ պէտք է յաղթահարէ անորոշութիւնը:

## ՈՉ ՄԷԿ ԶՕՐՈՒԹԵԱՆ ՊՈՌԹԿՈՒՄ

*Նոր կտակարանը որեւէ կերպով չի դասակարգեր Աստուծոյ գործերը: Աստուածաշունչը չի խօսիր Աստուծոյ յատուկ «շարժումներուն», զօրութեան պոռթկումներուն կամ արթնութեան բռնկումներուն մասին: Քրիստոնէութիւնը Սուրբ Հոգիին շարժումն է՝ սկիզբէն մինչեւ վերջ: Աստուծոյ Հոգին մշտապէս կը շարժի եւ մշտապէս թարմութիւն կը բերէ Իր գործին մէջ:*

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԻՆ ՄԷՋ ԳՐՈՒԲԾ Է ԲԵԹՀԵԶԴԱՅԻ ԱԲԱԶԱՆԻՆ մասին, որուն մէջ հրեշտակը ժամանակ առ ժամանակ ջուրերը կը շարժէր (տե՛ս Յովհ. 5.1-9): Ով որ առաջինը մտնէր աւազանին մէջ, կը բժշկուէր: Այդ աւազանը լուծում կ'առաջարկէր, բայց ատիկա մշտական հոսք չէր, եւ կար մեծ մրցակցութիւն՝ անկէ օգտուելու համար: Մարդ մը պառկած էր ատոր քով 38 տարի շարունակ, բայց ան չբժշկուեցաւ, մինչեւ չհանդիպեցաւ Յիսուսին, որովհետեւ երբ ջուրերը կը շարժէին, Ան չէր հասնէր առաջինը մտնելու աւազանին մէջ: Յիսուսին սէրը, ողորմութիւնը եւ զօրութիւնը չեն նմանիր Բեթեզդայի աւազանին: Ատոնք մշտական են եւ երբեք չեն դադորիր: Ատոնք կախուած չեն մեր անձնական ջանքերէն. Ան միայն կը հարցնէ՝ արդեօ՞ք մենք կը ցանկանք ընդունիլ:

## ԳՐԹՈՒՆ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՄԱՐ

*Մշտապէս գործուն Սուրբ Հոգիին անհրաժեշտ են գործուն մարդիկ: Պէնտէկոստէն՝ իր իսկ սահմանումով, շարժիչ ուժ է: Հոգին անդադար կը շարժի: Մատթէոս 28.10-ին մէջ յստակ գրուած է Սուրբ Հոգիին քամիի նպատակը. «ԳԱՅԷ՛Ք, ԻՍ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ ԸՍԷ՛Ք»:*

ՄՇՏԱԿԱՆ ՊԵՆՏԵԿՈՍՏԷՆ ՊԷՏՔ Է ՇԱՐԺՈՒՆ ԸԼԼԱՅ, ԵՒ ՄԵՆՔ մշտապէս պէտք է ԵՐԹԱՆՔ եւ ՊԱՏՄԵՆՔ: Երբ մենք կը հաւաքուինք, Ան ներկայ է՝ օրհնելու, բժշկելու եւ փրկելու համար: Աւետարանչութիւնը՝ Սուրբ Հոգիին միջոցով, թարմութեան զեփիւռ է, որ կը փչէ մեր փողոցներու աղտոտ մթնոլորտին մէջ: Մենք միայն պէտք է համագործակցինք Սուրբ Հոգիին հետ եւ առիթ տանք, որ Անոր քամին փչէ:

## ԽԻՍՏ ԼԵՑՈՒՆ

«Դուն իմ գլուխը կ'օծես իւղով.  
Իմ բաժակը խիստ լեցուն է»:

ՍԱՂՄՈՍ 23.5



## ՈՉ ԹԷ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ, ԱՅԼ՝ ՄՇՏԱԿԱՆ

*Քրիստոսին մէջ մենք մշտապէս վերականգնուող ուժ եւ եռանդ ունինք: Անոր մէջ գոյութիւն չունի սնուցման խափանում: Դուք երբեք չէք կրնար սպառել Աստուծոյ զօրութիւնը: Սուրբ Հոգին կը շարունակէ զօրացնել մեզ այնպէս, ինչպէս որքը կը սնուցէ ճիւղերը՝ ամէն ակնթարթ:*

ԳՐՈՐԾԲ ԱՌԱՔԵԼՈՑ 2-ՐԴ ԳԼՈՒԽԻՆ ՄԷՋ ԳՐՈՒԿԾ Է, ՈՐ ՊԵՆՏԵԿՈՍԵԻ ՕՐԸ աշակերտները լեցուեցան Սուրբ Հոգիով, եւ մինչեւ այդ գիրքի աւարտը մենք կը տեսնենք, թէ ինչպէս անոնք գացին: Անոնք շարունակ կը լեցուէին, ամէն ակնթարթ՝ նման հին օրհներգերէն մէկուն բառերուն. «Ամէն ակնթարթ ես կը պահուիմ Երկնքէն: Ամէն ակնթարթ ես կեանք ունիմ վերէն: Նայելով Յիսուսին...»: Ասիկա կը նշանակէ, որ Ան Որթն է, իսկ մենք՝ ճիւղերը: Մենք ամէն օր թարմ պաշարներ կը ստանանք Անորմէ: Յիսուսին խօսքերով՝ այս մատակարարումը գետի պէս շարունակական է (տե՛ս Յովհ. 7.37,38): Մենք կը նորոգուինք հոգեւոր զօրութեամբ՝ ըստ մեր անհրաժեշտութեան եւ այն գործածելու չափով:

## ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՀՈՍՔ

*«Աստուած Հոգին չափով չի տար» (Յովհաննէս 3.34), երբ Ան կու տայ Անոր: Չափով չտալը կը նշանակէ, որ այն չի չափուիր, որ այն չի տրուիր ճի՛շդ այսքան, եւ ոչ՝ ատելի, այլ՝ «աղէկ չափով, կոխուած, ցնցուած, լեփլեցուն» (Ղուկաս 6.38): Աստուած երբեք որեւէ բան՝ հաշիւով չի տար: Օրինակ՝ Ան կու տայ կեանք, բայց այդ կեանքը չափով չէ, ՔԱՆԻ ՈՐ ԱՅՆ ԻՐ ԿԵԱՆՔՆ Է, եւ այն ՅԱԻՏԵՆԱԿԱՆ է (տե՛ս Յովհ. 3.36):*

ԵՂԻՍԵԻ ԿՐԿՆԱԿԻ ԶՓՈՐ ՊԱՐԶԱՊԵՍ ԵՂԻԱՅԻՆ ՈՒՆԵՑԱԾԷՆ որոշ չափով ատելին չէր: Աստուած երբեք չ'որոշէր, որ ոմանք ստանան ինչ որ մէկուն ունեցածին կէսը, իսկ միւսները՝ աստոր կրկնակին: Սուրբ Հոգին կու տայ Իրմէ՝ Իր լիութենէն, ոչ թէ հաշուարկուած չափով: Աստուածաշունչը կը խոստանայ անձրեւներ եւ գետեր, ոչ թէ՝

Կաթիլներ: Ջօրաւոր գետերը չեն հոսիր պոռթկումներով եւ դադարներով. Հոգին նոյնպէս չի գար պատահական պոռթկումներով: Քրիստոս ընտրեց «գետեր» բառը՝ Հոգիին շարունակական հոսքը նկարագրելու համար (տե՛ս Յովհ. 7.37,38):

## ԱՆԺԽՏԵԼԻ ԱՊԱՑՈՅՑ

«Անոնց ալ, որ հաւատացին, այս նշանները պիտի հետեւին. Իմ անունով դէւեր պիտի հանեն, նոր լեզուներով պիտի խօսին, օձեր պիտի բռնեն, եւ եթէ մահադէղ մը խմեն, անոնց վնաս պիտի չտայ, հիւանդներուն վրայ ձեռք պիտի դնեն, եւ անոնք պիտի առողջանան»:

ՄԱՐԿՈՍ 16.17,18

## ԿՐԱԿԷ ՍԻՒՆ

*Պէնտէկոստէի օրը Սուրբ Հոգին յայտնուեցաւ 120 աշակերտներէն իւրաքանչիւրին զլիտուն վրայ հանգչող կրակէ լեզուներու տեսքով: Ատիկա Աստուածային ներկայութեան եւ զօրացման նշան էր: Անոր կրակը տրուեցաւ Աստուածային յանձնարարականի եւ պաշտպանութեան համար:*

ԿՐԱԿԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՆՇԱՆՆ Է: ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԻՆ ՄԷՋ ԿԱՅ ԱԲԵԼԻ քան 100 յղում Աստուծոյ կրակին մասին: «Մեր Աստուած մաշող կրակ է» (Եբրայեցիս 12.29): Երեք մեծագոյն հոգեւոր իրադարձութիւններէն երկուքը կնքուեցան Աստուածային կրակով. Իսրայէլ ժողովուրդի հիմնադրումը Ելից գիրքին մէջ եւ Եկեղեցւոյ հիմնադրումը՝ կրակէ լեզուներով: Ելից գիրքին մէջ Իսրայէլի եւ եգիպտացիներու միջեւ կրակէ վարագոյր կար, որ, ռազմական դրօշի պէս, կը վստահեցնէր Իսրայէլին, որ զօրքերու Տէրը իրենց հետ էր: Այսօր մենք ունինք նոյն վստահութիւնը, որ Աստուած մեզի հետ է: Պէնտէկոստէի լեզուները կը յիշեցնեն մեզ այդ մասին: Յիսուս ըսաւ. «Ես եկայ, որ կրակ ձգեմ երկրի վրայ» (Ղուկաս 12.49): Նման կրակոտ նետի՝ Աստուած կ'արձակէ ձեզ դէպի թշնամիին ճամբարը՝ կապեալները փրկութիւն տալու համար:

## ՆՇԱՆ-ՊԱՐԳԵԻԸ՝ ՈՐՊԷՍ ՑՈՒՑԱՆԻՇ

*Մկրտութիւնը Սուրբ Հոգիով՝ մշտական եւ լիակատար յեղափոխութիւն է Եկեղեցւոյ կեանքին մէջ: Այն, որ Հոգին թափեցաւ բոլորին վրայ, մեծագոյն փոփոխութիւնն էր, որ կրնար տեղի ունենալ: Ատոր ցուցանիշը այն նշան-պարգեւն էր, որ անոնք ստացան: Ատիկա յայտնութիւն էր անոնց համար: Անոնք հասկցան, որ զօրութիւնը եկած է, որ Սուրբ Հոգին իրենց հետ է, եւ այլեւս չխնդրեցին, որ Ան գայ: Առաքեալները ընդունեցին նոյն նշանը Սուրբ Հոգիէն. «Եւ ամէնը Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան ուրիշ լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին անոնց խօսիլ կու տար» (Գործք 2.4): Գոյութիւն չունի այլ զօրութիւն՝ բացի Սուրբ Հոգիէն: Եւ այն իրաշայի նշանը, որ անոնք ստացան, կ'ապացուցէր, որ որեւէ իրաշք հնարաւոր է:*

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ԲԱԶՄԱԹԻ ՏՂԱՄԱՐԴԻԿ ԵՒ ԿԱՆԱՅՔ մշտապէս պահանջած եւ ստացած են նշաններ՝ իրենց հաւատքը ամրապնդելու համար: Նոյի ջրհեղեղէն յետոյ Աստուած տուաւ ծիածանը՝ որպէս նշան, որ համաշխարհային ջրհեղեղ այլեւս պիտի չըլլար (տե՛ս Ծննդ. 9.12-17): Աստուած նշան տուաւ Աբրահամին, երբ ան տակաւին անգաւակ էր՝ որպէս երաշխիք, որ ան շատ ազգերու հայր պիտի ըլլար (տե՛ս Ծննդ. 15-րդ գլուխ): Լեզուներով աղօթելը նշան է, բայց այն դատարկ նշան չէ: Այն գործուն գերբնական ապացոյց է, որ կը վկայէ Սուրբ Հոգիի ներկայութեան մասին հաւատացեալին ներսը: Այն կը խրախուսէ մեր հաւատքը, բայց նոյնպէս հաղորդակցման միջոց է, որ կ'օգնէ մեզի աղօթքի, երգելու, մարգարէութեան եւ ծառայութեան մէջ: Լեզուները նոյնպէս ցուցանիչ են, որոնք կը մատնանշեն մարդոց հետ Աստուծոյ յարաբերութիւններու նոր փուլ. «Վերջին օրերուն մէջ... Իմ Հոգիէն պիտի թափեմ ամէն մարմինի վրայ» (Գործք 2.17):

## ՀԱՒԱՆՈՒԹԻՒՆ

*Լեզուներով խօսիլը Սուրբ Հոգիի ներկայութեան եւ զօրութեան նշանն է մեր կեանքին մէջ: Այն կ'օգնէ մեզի վստահիլ Սուրբ Հոգիին եւ կը դառնայ բնական եւ անձնական վերապրում մը մեզի համար: Պէնտէկոստէն խարիզմաթական լեզուով կը նշանակէ, որ Աստուած եւ մարդը միասին կը ցնծան:*

«ԽՕՍԻԼԸ» ՀԱՒԱՆՈՒԹԵԱՆ ՆՇԱՆ Է, ՈՐ ՑՈՅՑ ԿՈՒ ՏԱՅ, ՈՐ ՍՈՒՐԲ Հոգին մեր ներսն է եւ մեզի հետ է: Առանց ասորը՝ մենք երբեք չենք կրնար վստահ ըլլալ (արդեօ՞ք եւ բաւականաչափ աղօթած են, արդեօ՞ք եւ բաւականաչափ սուրբ են, արդեօ՞ք եւ բաւականաչափ վկայած են): Բայց Աստուած ստեղծած է մեզ Իր Հոգիին համար: Հոգիով մկրտուիլը ե՛ւ ֆիզիքական, ե՛ւ հոգեւոր իրադարձութիւն է (տե՛ս Ա. Կորնթ. 6.19), եւ ասոր նշանը ֆիզիքական է եւ հոգեւոր:

## ՆՇԱՆ, ՈՐ ԱՄԷՆ ԻՆՉ ՀՆԱՐԱՒՈՐ Է

*Անձի փրկութենէն յետոյ լեզուներով աղօթելը ամենազարմանալի երեւոյթն է: Ի՞նչ որ կրնայ աւելի ազդեցիկ ըլլալ, քան մահկանացուի վերածնուած հոգին, որ կենդանացուած եւ արդարացուած է եւ իր Հօր հետ կը խօսի երկնային լեզուով: Լեզուներով աղօթելը կ'ապացուցէ, որ անհնարին ոչինչ կայ:*

ՊԵՆՏԵԿՈՍՏԻԻ ՕՐԸ 120-Ը ԽՕՍԵՑԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ, ԵՒ ԱՅՆ բազմութիւնը, որ կը լսէր անոնց, ցնցուեցաւ: Իմ կեանքին մէջ տեսած եմ, թէ ինչպէս մէկ միլիոն մարդ՝ մէկ հաւաքոյթի ժամանակ, ընդունեց նոյն կրակէ մկրտութիւնը եւ աղօթեց Տիրոջը Հոգիէն ստացած նոր լեզուներով: Ատիկա նման էր շատ ջուրերու ձայնին. «Եւ պիտի ըլլայ, որ վերջին օրերուն մէջ,- կ'ըսէ Աստուած,- որ Իմ Հոգիէն պիտի թափեմ ամէն մարմինի վրայ...» (Գործք 2.17): Այդ օրերը հիմա՛ են:

# ԿՐԱԿԷ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐ

ԲԱԺԻՆ 5

ԿՐԱԿԷ ԳՈՐԾԻՔՆԵՐ.  
ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ՊԱՐԳԵԻՆԵՐՆ  
ՈՒ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

## ԹԱՆԿԱՐԺԷՔ ԵՒ ԱՆԳԻՆ

«Եւ երբ որ Յիսուս Բեթանիա էր՝ Սիմոն բորոտին տունը, կին մը եկաւ Անոր քով, որ շիշ մը ծանրագին իւղ ունէր: Իւղը թափեց Յիսուսի գլխուն վրայ, երբ որ Ան սեղան նստած էր: Անոր աշակերտներն ալ, տեսնելով, բարկացան եւ ըսին. «Ինչո՞ւ եղաւ այդ կորուստը, որովհետեւ կրնար այդ իւղը սուղ գինով ծախուիլ եւ աղքատներուն տրուիլ»: Յիսուսն ալ, գիտնալով, ըսաւ անոնց. «Ինչո՞ւ այդ կնոջը նեղութիւն կու տաք, որ ատիկա բարի բան մը գործեց Ինծի համար»»:

ՄԱՏԹԷՈՍ 26.6-10



## ԸՆԴԱՄԷՆԸ ԴԱՏԱՐԿ ԿԱՂԱՊՄՐ

*ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ լրացուցիչ պարագայ չէ. Ան մեր հաւատքի էութիւնն է: Ան Աստուած է երկրի վրայ, որ գործուն կերպով կը ներբնակուի մեր ներսը եւ կը յագեցնէ մեր էութեան ամէն մէկ մասնիկը: Ասիկա կը նշանակէ, որ քրիստոնէութիւնը գերբնական հաւատք է: Ոչ գերբնական Աւետարանը դատարկ կաղապար է:*

ՀԱՏ ՀԱՄԱՏՅԵԱԼՆԵՐ ԸՆՏՐՈՎԻ ԿԸ ՀԱՄԱՐԵՆ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ընդունիլը, ըսես անոնք կրնան մերժել այս առաջարկը եւ քրիստոնէայ մնալ: Ան յաւելուած չէ քրիստոնէական հաւատքին մէջ. Ան հաւատքի հեղինակն է, եւ Ան կը պահպանէ հաւատքը հազարամեակներ շարունակ՝ Քրիստոսէն առաջ եւ յետոյ: Ան Տանտէրն է. առանց Անոր խնձոյք չկայ: Մենք կ'անտեսենք Չինք՝ ի վնաս մեզի: Սուրբ Հոգին կար ամենասկիզբը եւ պիտի ըլլայ ամէն ինչին աւարտէն յետոյ: Ան Ալֆան ու Օմեկան է, եւ մենք պէտք է ուշադրութիւն դարձնենք Անոր, եթէ կը կամենանք անցնիլ եւ աւարտել մեր ընթացքը:

## ՍԻՐՈՅ ՎԱՏՆՈՂ ՇՈՒՅԼՈՒԹԻՒՆԸ

*Հոգիին օծութիւնը երկրորդական վերապրում մը չէ, որ ուղարկուած է, որպէսզի խաղաղեցնէ ձեր խիղճը եւ համոզէ, որ ձեր մէջ Աստուածային բարութեան ինչ որ չափ մը կայ: Ո՛չ, այն իրական է: Այն Աստուծոյ լաւագոյնն է: Նոյնիքն Աստուած է: Մենք ստացած ենք այն խաչուած Քրիստոսին միջոցով, որ կոտորած է ծանրագին իւղի անօթը՝ Իր Մարմինը, եւ թափած է ատոր թանկ անուշահոտութիւնը մարդկութեան վրայ:*

ՍԱՐԻԱՍԻ ԻԻՂԻ ԲՈՒՐՍՈՒՆՔԸ ԱՅՆՔԱՆՆ ՅԱԳԵՑԱԾ ԷՐ, ՈՐ տարածուեցաւ տունով մէկ: Այն ահռելի զոհ էր եւ սիրոյ վատնող շռայլութիւն: Այն կը նկարագրէ Աստուծոյ սէրը՝ Յիսուս Քրիստոսի միջոցով, որ տուաւ մեզի Սուրբ Հոգիի օծութեան անգին պարգեւը: Այն աման վերապրում մը չէ, այլ՝ Աստուծոյ լաւագոյնը: Երբ Քրիստոս բարձրացաւ Գողգոթայի խաչը, Ան զոհեց Իր մարմինը, որ ամենաթանկ զոհն

է՝ տարածելով Սուրբ Հոգիին անգին բուրմունքը եւ Աստուծոյ ամբողջ բարութիւնը մարդկութեան վրայ:

## ՏԱՐԱԾԵԼ ԱՆՈՐ ԲՈՒՐՄՈՒՆՔԸ

*Աստուած փչած է Իր շունչը Իր Խօսքին մէջ: Ասիկա նման է այն բանին, որ ծաղիկը կ'ընդունի քամին եւ արեւի ճառագայթները եւ կը վերադարձնէ ատոնք՝ գեղեցկութեան եւ անուշահոտութեան տեսքով: Մենք կ'անուանենք ատիկա լուսաբաղարկում (photosynthesis): Իւրաքանչիւր քրիստոնեայի կեանքին պէտք է հոգեւոր լուսաբաղարկումի պէս բան մը տեղի ունենայ: «Լեցուցէ՛ք Հոգիով» (Եփեսացիս 5. 18), եւ ատիկա պիտի արտայայտուի ոչ միայն կրօնական նուիրութեամբ, այլեւ հաճելի բնաւորութեամբ, քանի որ դուք պիտի տարածէք Անոր բուրմունքը:*

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՉԼԵՍԱԲՈՐ ԱՇԵՍԱՆՔԸ ՄԵՉ՝ ԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ դարձնելն է: Մէկ անգամ փոքրիկ աղջիկ մը կ'աղօթէր. «Սիրելի՛ Տէր, բոլոր չար մարդիկ բարի դարձո՛ւր, եւ բոլոր բարի մարդիկ՝ հաճելի»: Ինչ որ կերպով ան հասկցած էր, որ «բարին» պարտադիր չէ, որ «հաճելի» ըլլայ: Աստուած տայ, որ մենք երկուքն ալ ըլլանք: Ահա թէ ինչպէս այս աշխարհը պիտի զիտնայ Անոր մասին:

ԵՐԲ ԱՒԵՏԱՐԱՆԸ


ԿԸ ԶԱՐՈՉՈՒԻ,  
ԱՅՆ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ:

ԱՅՆ ԿԸ ՎԵՐԱԾՈՒԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ:



ԻԼԵ-ԻՖԷ, ՆԻՃԵՐԻԱ, 2002





1.6 ՄԻԼԻՈՆ ՍԱՐԴ՝ ՆԵՐԿԱՅ ՄԵԿ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՆԻՃԵՐԻՈՅ ԼԱԿՈՍ ԶԱՂԱՔԻ ՄԷՋ, 2000




ԱԻԵՏԱՐԱՆԸ Ի ԶՕՐՈՒ Է  
**ԱԶԳԵՐԸ ՓՐԿԵԼ:**

ԱՅՆ ԿԸ ԲԱՐՁՐԱՑՆԵ ԱԶԳԵՐԸ

ԵՒ ԿԸ ԼԵՑՆԵ ՈՒԺՈՎ ԱՅՆ ԱՍԵԼԸ, ԻՆՉԻՆ ՍԷՋ ՈՐ  
ԿԵԱՆՔ ԿԱՅ: **ՅԻՍՈՒՄԸ ԿԸ ՓՐԿԵ:**








ԱԻՏՏԱՐԱՆԻ ՀԱՍԱՐ ՄԵԾ ԲԱՐՑ ՈՒՆԵՓՈՂ ՄԱՐԴԻԿ, ՄՊՈՒՃԻ-ՄԱՅԻ, 1991

ԱՅՆ, ԻՆՉ ՈՐ ԱՆՅՆԱՐ Է,  
ԻՐԱԿԱՆ ԿԸ ԴԱՌՆԱՅ, ԵՐԲ

ԱՍՏՈՒԱԾ ՆԵՐԿԱՅ Է:







ՃՈՍ, ՆԻՃԵՐԻԱ, 2005




ԻՐԱՔԱՆՉԻՐԸ,  
ՈՎ ՈՐ ԿԸ ԿԱՆՉԷ ՏԵՐԸ,

ԿԸ ՓՐԿՈՒԻ:





ԽԱՐԹՈՒՄ, ՍՈՒՏԱՆ, 2000



ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵԿԱԾ Է, Ե՛  
ԲԱՆԱԼԻՆԵՐԸ  
ՄԵՐ ՁԵՌՔՆ ԵՆ:



ԻՊԱՏԱՆ, ՆԻՃԵՐԻԱ, 2001

## ՊԱՐԳԵԻՆԵՐ, ՈՉ ԹԷ ԳՆՈՒԱԾ ԻՐԵՐ

«Սիմոնը, երբ որ տեսաւ, թէ առաքեալներուն վրայ ձեռք դնելով Սուրբ Հոգին կը տրուի, դրամ բերաւ անոնց եւ ըսաւ. «Ինձի ալ տուէք այս իշխանութիւնը, որ որուն վրայ ձեռք դնեմ, Սուրբ Հոգին առնէ»: Պետրոսն ալ ըսաւ անոր. «Քու արձաթդ քեզի հետ կորսուի, որովհետեւ դուն կարծեցիր, թէ Աստուծոյ պարգեւը դրամով կ'անուի»»:

ԳՈՐԾՔ 8.18-20

## ՀԱՍԿՆԱԼ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ԱՆՁՐ

*Անհրաժեշտ է հասկնալ, որ Սուրբ Հոգին Անհիկա է, ոչ թե «այն»:  
Հոգին անանձնական ուժ է՝ նման հոգեւոր ելեկտրականու-  
թեան: Աստուծոյ օծութիւնը պարզապէս զօրութիւնը կամ պար-  
զեւները չեն, այլ յատուկ Ինքը՝ Սուրբ Հոգին:*

ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՁՐ ԿՕՊՏԱԳՈՐԾԷ ԶԱՆԱԶԱՆ ՏԱՐԵՐ՝ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ  
նկարագրելու համար՝ կրակը, քամին եւ ջուրը: Սակայն կարեւոր է  
հասկնալ, որ Սուրբ Հոգին անկենդան տարր չէ, այլ՝ Անձ է: Ան ուժ  
չէ, ինչպէս տիեզերքի քաշողութիւնը կամ ելեկտրական հոսանքը: Ան  
Սուրբ Երրորդութեան Երրորդ Անձն է: Ո՛չ Անոր պարզեւները, ո՛չ Հո-  
գիին պտուղը պէտք է դիտարկուին Անոնցմէ առանձին: Չեր ներսը կը  
բնակուի լիարժէք Աստուած, ոչ թէ միայն Անոր պարզեւները:

## ՊԷՏՔ Է ԳԻՆ ՎՃԱՐԵԼ ՊԱՐԳԵՒՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

*Պէ՛տք է գին վճարել պարզեւներու համար: Եթէ այո, ատոնք  
պիտի ըլլային ոչ թէ պարզեւներ, այլ՝ գնումներ (տե՛ս Գործք  
8.18-20): Այնուամենայնիւ, թերեւս անհրաժեշտ ըլլայ գին վճա-  
րել՝ ատոնք գործածելու համար: Այն մարդիկ, որոնք պատ-  
րաստ չեն զոհելու իրենց ազատ ժամանակը, յարմարաւէտու-  
թիւնը, համբաւը, թերեւս նաեւ շատ աւելին, քիչ կը գործածուին  
Աստուծոյ կողմէն, թէեւ Ան, անկասկած, շնորհած է Իր զօրու-  
թեան պարզեւները:*

ԳՈՐԾԻՔՆԵՐՈՒ ԱՍԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՒԱՔԱԾՈՒՆ ԿՐՆԱՅ ՀՐԱՇԱԽ  
նուէր ըլլալ հիւսնի համար, բայց այն անօգուտ կ'ըլլայ՝ առանց անոր  
քրտինքին: Պարզեւները կը դրդեն մեզ նուիրման, ինչպէս որ գրուած է  
Հռովմայեցի 12.7-ին մէջ. «Եկէ՛ք օգտագործենք ատիկա մեր ծառա-  
յութեան մէջ» (NKJV): Անոր կեանքը կը թափի մեր կեանքին հետ: Պար-  
զեւները պարզեւներ տուողներու համար են: Տուէ՛ք, որ ստանաք: Երբ  
Յիսուս ուղարկեց Իր 12 աշակերտները, Ան տուաւ անոնց իշխանու-  
թիւն՝ բազմաթիւ հրաշքներ գործելու համար, եւ պատուիրեց. «Եւ երբ

որ երթաք, քարոզեցէ՛ք եւ ըսէ՛ք, որ Երկնքի Արքայութիւնը մօտեցած է: Հիւանդները բժշկեցէ՛ք, բորոտները սրբեցէ՛ք, մեռելներուն յարութիւն տուէ՛ք, դեւերը հանեցէ՛ք. ծրի առած էք, ծրի տուէք» (Մատթէոս 10.7,8): Յիսուս յստակ նշեց, որ Ան ծրիաբար տուած էր պարգեւները, եւ ասոնք պէտք է նոյն կերպով բաժնուէին մարդոց: Այնուամենայնիւ, աշակերտները պէտք է ծախսէին իրենց ուժերը՝ երթալով, անցնելով վտանգաւոր տարածքներով, զոհաբերելով իրենց յարմարաւէտութիւնը եւ թերեւս հալածուելով: Պարգեւը ծրի է, բայց ձեզմէ ինչ որ բան պիտի պահանջուի, որպէսզի անցնիք այն ընթացքը, որուն համար այդ պարգեւը պիտի զօրացնէ՝ ձեզ:

## ԽՆԴՐԵՑԷՔ ԵՒ ՍՏԱՑԷՔ

*Սուրբ Հոգիին օծութիւնը չի վաճառուիր, եւ եթէ այն վաճառուէր, ոչ ոք կրնար գնել այն: Միակ պահանջքը այն է, որ դուք գաք եւ ծրիաբար խմէք. «Ո՛վ բոլոր ծարաւներ, եկէ՛ք ջուրերու քով, եւ դուք, որ դրամ չունիք, եկէ՛ք, ծախո՛ւ առէք եւ կերէ՛ք, եկէ՛ք առէ՛ք՝ առանց դրամի, առանց վճարի՝ զինի եւ կաթ» (Եսայիա 55.1):*

ՍՈՒՐԲ ՀՐԳԻԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԿԱՐԵԼԻ Է ՅԱՆՍՏԱՅՆԵԼ, ԶՍՊԵԼ, կեղծել կամ ստանալ ծանր աշխատանքով եւ բազում աղօթքներով: Սուրբ Հոգին չի սպասեր, մինչեւ որ դուք քրտնիք: Յիսուս ըսաւ. «Խնդրեցէ՛ք, եւ պիտի տրուի ձեզի... ամէն խնդրող կ'առնէ» (Մատթէոս 7.7,8): Աստուած միայն պարգեւներ ունի. Ան չունի որեւէ բան՝ վաճառքի համար: Ան չ'առաջարկեր շահաւէտ գնումներ եւ զեղչեր. Ան բանակցութիւններ չի վարեր, գործարքներ չի կնքեր եւ չի սակարկեր: Ան միակողմանի է. Ան պարգապէս կու տայ: Եւ մենք կրնանք ընել միայն մէկ բան. ընդունիլ: Ան ոչինչ կը ցանկանայ մեզմէ՝ ի հատուցում: Եթէ դուք մահացած ածուխ էք, ընդունեցէ՛ք Սուրբ Հոգիին կրակը եւ դարձէ՛ք կենդանի ածուխ: Ան անմիջապէս պիտի վառէ ձեզ:

## ԱՍՏՈՒԾՈՅ ԱՆՈՒՇԵՂԷՆԸ ԶԵՁԻ ՀԱՄԱՐ

Աստուած Իր բոլոր գաւակներուն համար ունի աւելին, քան բաւական է, եւ անկասկած՝ եւ Իր ամբողջ արարչագործութեան համար: Կարիք չկայ, որ նախանձիք ուրիշ մարդու մը: Եւ կարիք չկայ, որ սաղորէք, չարախօսէք կամ զրպարտէք մարդոց՝ յառաջ-խաղացում ստանալու համար: Եթէ Ան չխնայեց Իր Որդին մեզի համար (տե՛ս Հռովմ. 8.32) եւ ծրիաբար տուաւ մեզի Իր Հոգին (տե՛ս Ա. Կորնթ. 2.12), ուրիշ ի՞նչ կը պահէ մեզմէ:

ՅԵՏՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ ՄԵՆՔ՝ ԵՐԵՆԱՆԵՐԱՍ, անուշեղէն կը ստանայինք թերեւս տարին մէկ անգամ: Երբ ես սառնաշաքար կը տեսնէի իմ եղբայր Փիթըրին բերանը, ՉԷԻ փորձեր խլել այն. փոխարէնը՝ ես կը սկսէի արագ մտածել: Որմէ՞ եղբայրս վերցուցած էր այն: Կար միայն մէկ հնարաւոր աղբիւր՝ մայրս: Ես գիտէի, որ մայրս շատ ազնիւ էր: Ան անուշեղէն չէր տար իր երեխաներէն մէկուն, եթէ չունենար ամէն մէկուն համար: Ես կը վազէի մայրիկիս քով եւ կը գոչէի. «Մայրի՛կ ո՞ւր է ԻՄ սառնաշաքարը»: Եւ ան կը դնէր այն ձեռքիս ափին մէջ: Նոյն կերպով, եթէ դուք կը տեսնէք, որ Աստուած կ'օրհնէ ոեւէ քրիստոնեայ մը, որեւէ եկեղեցւոյ կամ որեւէ ծառայութեան, մի՛ նախանձիք: Գացէ՛ք Յիսուսին քով: Ան ունի «անուշեղէն» նաեւ ձեզի համար: Դուկաս 15.31-ին մէջ Հայրը ըսաւ Իր որդիին. «Այն, ինչ որ Իմս է, քուկդ է»: Այս խոստումը կը վերաբերի նաեւ մեզի:

## ՄԵԾԱԳՈՅՆ ՊԱՐԳԵԻՆ

«Բայց երբ որ դէպի Տէրը դառնան, այն քողը պիտի վերցուի: Որովհետեւ Տէրն է Հոգին. ուր Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատութիւն է: Բայց մենք ամէնքս, բաց երեսով Տիրոջ փառքը ինչպէս հայելիի մէջ տեսնելով, նոյն պատկերին պէս կը կերպարանափոխուինք փառքէ դէպի փառք, ինչպէս թէ Տիրոջ Հոգիէն»:

Բ. ԿՈՐՆԹԱՑԻՍ 3.16-18



## ԱՆԻԿԱ Է ՄԵԾԱԳՈՅՆ ՊԱՐԳԵԼ

*Սուրբ Հոգին պէտք չէ շփոթել Անոր պարգեւներուն եւ գործերուն հետ: Սուրբ Հոգին աւելին է, քան Իր ազդեցութիւնը մեր կեանքին մէջ, եւ նոյնիսկ՝ այս աշխարհին մէջ: Անոր ներկայութիւնը մեր կեանքին մէջ աւելին է, քան Անոր պարգեւները: Սուրբ Հոգին չի գար միայն, որպէսզի մենք կարենանք խօսիլ լեզուներով, բայց երբ Ան ներկայ է, լեզուները կը վկայեն այդ մասին: Անոր բոլոր պարգեւներուն նպատակն է՝ խթանել Իր հաղորդակցութիւնը մեզի հետ եւ այս աշխարհին հետ:*

ՀԱՐՍԸ Զ'ԱՄՈՒՄՆԱՆԱՐ ՓԵՍԱՅԻՆ ՀԵՏ ՅԱՆՈՒՆ ԱՆՈՐ ՄԱՏԱՆԻՒՆ, այլ՝ յանուն անոր: Աստուած ցուցադրական ոչինչ կ'ընէ: Անոր նպատակը մշտապէս եղած է սէրը՝ սիրել մեզ, ստանալ մեր սէրը եւ մշտապէս հաղորդակցիլ մեզի հետ: Ան մեր բազուկի ուժն է, եւ Ան անշէջ կրակ է մեր անձին մէջ: Ան կու տայ մեզի հոգեւոր պարգեւներ, հոգեւոր պտուղ եւ միաբանութիւն (տե՛ս Ա. Կորնթ. 12): Սկիզբը Ան կը գործածէ Քրիստոսի արիւնը՝ մեր մեղքի հետքը մաքրելու համար, իսկ յետոյ կը վերածնի մեզ՝ տալով կեանք եւ աւելին: Այնուամենայնիւ, Իր բոլոր գործերէն բացի՝ Հոգին Անձամբ կու գայ, քանի որ յատկապէս Ինքն է մեր մեծագոյն պարգեւը: Աստուծոյ հանդէպ փափաքն է, որ ճշմարիտ քրիստոնէայ կը դարձնէ մեզ, ոչ թէ միայն նշաններն ու հրաշքները:

## ՄԵՆՔ ԻՆՔՆԱԲԱԷ ԶԵՆՔ

*Մենք այնպէս ստեղծուած ենք, որ կախուած ըլլանք Աստուծոյ շնորհքէն եւ զօրութենէն: Առանց Անոր՝ մենք ոչինչ կրնանք ընել (տե՛ս Յովհ. 15.5): Մեր բաւականութիւնը Անորմէ է (տե՛ս Բ. Կորնթ. 3.5): Աստուած կը դնէ մեր մէջ Իր Հոգին, քանի որ մենք կարիք ունինք, որ Ան մխիթարէ, առաջնորդէ եւ նոյնիսկ ուղղէ մեզ: Ան կու տայ Իր պարգեւները եւ զօրութիւնը, քանի որ ատոնք անհրաժեշտ են՝ Իր առաքելութիւնը կատարելու համար: Ատիկա մեր հոգեւոր սպառազինութիւնն է՝ հոգեւոր յանձնարարութիւններու համար:*



ԱՍՏՈՒԱԾ ԶԷ ՆԱԽԱՏԵՍԱԾ, ՈՐ ՄԵՆՔ ՍԿՍԻՆՔ ՍԵՓԱԿԱՆ գործունեութիւնը՝ ստանալով միանուագ հոգեւոր միջոցներ, որոնք անկախ կը դարձնեն մեզ: Մենք ինքնաբաւ փոքրիկ «քրիստոսներ» չենք: Մենք ամէն վայրկեան կ'ընդունինք Քրիստոսի լիութիւնը եւ կը լեցուինք ասորմով, ինչպէս որ ճիւղերը կ'ընդունին որթի բուսահիւթը: Մենք որթեր չենք, որոնք առանձին կը պաշտպանեն իրենց գոյութիւնը. մենք ամբողջական ենք միայն Անոր մէջ (տե՛ս Կողոս. 2.10):

Մենք կանչուած չենք երթալու այս աշխարհ մեր փոքրիկ ելեկտրակայանով, որպէսզի մարդիկ մտածեն, թէ որքան հրաշալի ենք մենք: Մենք կրնանք ցուցադրել մեր տաղանդները եւ տպաւորել մարդիկ մէկ ժամուան ընթացքին, բայց շուտով մեր փոքրիկ ելեկտրակայանի ուժը կը սպառի: Մենք զօրութիւն չենք արտադրեր. մենք ընդամենը Անոր զօրութեան հաղորդիչներն ենք: Եփեսացիս 1.22 եւ 23 խօսքերը կը նկարագրեն «...եկեղեցւոյ... որ Անոր մարմինն է՝ այն լրումը, որ ամէնը ամէնուն մէջ կը լրացնէ»: Ան պէտք է լեցնէ մեզ եւ գործէ մեր միջոցով: Մենք աղբիւրը չենք. մենք միայն ջրատար խողովակներ ենք: Յիսուս յայտարարեց. «Կեցէ՛ք Իմ մէջ, եւ Ես՝ ձեր մէջ: Ինչպէս որ ճիւղը իր անձէն չի կրնար պտուղ բերել, եթէ որթին մէջ չմնայ, այսպէս ո՛չ ալ դուք, եթէ Իմ մէջ չմնաք» (Յովհաննէս 15.4):

## ՆՈՐ ՕՐԷՆՔ ԿԸ ԳՈՐԾԷ

*Եղէ՛ք կենսունակ Հոգիին մէջ: Դուք ստեղծուած էք, որ լողաք Սուրբ Հոգիի ջուրերուն մէջ: Մի՛ հակառակիք եւ մի՛ պայքարիք. պարզապէս հանդարտեցէ՛ք: Յանձնուեցէ՛ք Սուրբ Հոգիին մեծ եւ փառաւոր հոսանքներուն, եւ թոյլ տուէ՛ք, որ ատոնք տանին ձեզ դէպի ձեր կոչումը:*

ՄԷԿ ԱՆԳԱՍ ԱՍՏՈՒԱԾ ՀԱՐՑՈՒՑ ԻՆՇԻ. «ԴՈՒՆ ԳԻՏԵ՞Ս, ԹԷ ԻՆՉ կը նշանակէ լողալ»: Ես լաւ լողորդ եմ եւ մտածեցի, որ գիտէի: Բայց արդեօ՞ք ես գիտէի: Սուրբ Հոգին օգնեց ինձի հասկնալ բան մը, ինչ որ նախկինին չէի հասկնար եւ չէի գնահատեր: Ան ըսաւ. «Երբ դուն կը լողաս, դուն կը գտնուիս ուրիշ տարերքի մը մէջ, որուն մէջ նոր օրէնք կը գործէ: Դուն պէտք է յանձնուիս գետի ջուրերուն եւ բոլորովին կռթնիս ատոնց վրայ: Այդ ջուրերը կը տանին քեզ»: Ես հասկցայ,

թէ ինչ կ'ըսէր ան: Երբ ես կը լողամ Սուրբ Հոգիին մէջ, Անոր ջուրերը կը տանին զիս: Հոգին կը բարձրացնէ զիս, ինչպէս որ լողալը կ'ազատէ իմ կշիռքի ծանրութիւնը իմ ոտքերէն, արձակուող կու տայ իմ մէջքին եւ հանգիստ՝ իմ յօդերուն: Հոգին կը կատարէ ամբողջ աշխատանքը: Այդ պարագային, ո՞րն է իրական խոչընդոտը: Իրական խոչընդոտը սեփական ուժերու վրայ կռթնիլն է: Հենուեցէ՛ք ձեր ուժերուն եւ կարողութիւններուն վրայ, եւ դուք պիտի թափառիք այն գետի հասակով, որ կրնար տանիլ ձեզ՝ ձեր կողմէն նուազագոյն ջանքերով:

## ԱՐԾԱՐԾԵԼ ՊԱՐԳԵԻԸ

«Միտքս բերելով այն անկեղծ հաւատքը, որ քու մէջդ է... Այդ պատճառով միտքդ կը բերեմ, որ արծարծես Աստուծոյ այն շնորհքը, որ քու մէջդ է՝ իմ ձեռքերը քու վրայդ դնելով»:

Բ. ՏԻՄՈԹԵՈՍ 1.5,6

## ՀՈԳԵՒՈՐԱՊԷՍ ԳՈՐԾԱԴՐՈՒԱԾ

*Հոգիին պարգևները բնական տաղանդներ չեն: Մարդու բնական տաղանդները չեն կրնար կոչուիլ «հոգեւոր պարգևներ»: Հոգեւոր պարգևները կը գործադրուին Աստուծոյ կողմէն: Աստուած կրնայ գործել ոեւէ մարդու միջոցով: Ան չի տար լեզուները միայն լեզուաբաններուն, իմաստութիւնը՝ միայն փորձառու խորհրդատուներուն, եւ բժշկութեան պարգևները՝ միայն բժիշկներուն: Կարիք չկայ, որ մենք փայլուն ըլլանք, որպէսզի Ան գործածէ մեզ:*

ՄԱՐԴԸ ՍՏԵՂԾՈՒԱԾ Է ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՏԿԵՐՈՎ ԵՒ ՕԺՏՈՒԱԾ Է ԲՆԱԿԱՆ տաղանդներով, որոնք թոյլ կու տան անոր կեդրոնանալ Աստուծոյ փրկարար նպատակին վրայ եւ մասնակցութիւն ունենալ ատոր մէջ: Այնուամենայնիւ, ատոր հետ մէկտեղ, Աստուած յաւելեալ պարգևներ կու տայ վերածնած մարդուն՝ Սուրբ Հոգիին միջոցով (տե՛ս Ա. Կորնթ. 12.1-11): Ատոնք բնական տաղանդներ չեն, այլ՝ հոգեւոր պարգևներ, որոնք կ'աւելցնեն Աստուծոյ փրկարար աշխատանքի մէջ մասնակցելու մեր կարողութիւնը: Հոգիի պարգևներուն միջոցով մենք կրնանք գերազանցել բնական արդարացումները, թերութիւնները եւ անհամապատասխանութիւնները (տե՛ս Բ. Կորնթ. 12.9) եւ ընել ամէն ինչ Անոր մով, որ կը զօրացնէ մեզ (տե՛ս Փիլիպ. 4.13):

## ՈՉ ՄԷԿ ՀՐԱՇՔ՝ ՅԱՆՈՒՆ ՀՐԱՇՔԻ

*Հոգիին պարգևները կը գործեն, երբ մենք կը հաւատանք Աստուծոյ, ոչ թէ՛ ինչ որ տեսութեան: Ատոնք չեն բխիր որեւէ ուսմունքէ՝ փրկութեան ուսմունքէն բացի: Սուրբ Հոգին միայն կը փառաւորէ խաչեալ Քրիստոսը:*

ԱՍՏՈՒԱԾ ՉԻ ԳՈՐԾԵՐ ՈՉ ՄԷԿ ՀՐԱՇՔ՝ ՅԱՆՈՒՆ ՀՐԱՇՔԻ: ԱՆ ցուցարկու շոունեն չէ. Ան չի զբաղիր շշմեցուցիչ իրողութիւններ ապահովելով՝ նոյնիսկ ամենափքուն եսասէրի հաւանութեան արժանանալու համար: Սուրբ Հոգին միաւորուած է խաչուած Քրիստոսին հետ,

Եւ նոյնիսկ կապուած է Անոր հետ Իր անունով՝ որպէս Քրիստոսի Հոգի: Ան (Քրիստոսը եւ Սուրբ Հոգին) ունի մէկ նպատակ՝ պարտութեան մատնել սատանան Աւետարանին միջոցով: Հոգին բաւականութիւն կը գտնէ միայն Աւետարանին մէջ: Աւետարանը խիստ մեծ եւ համապարփակ է. այն ոչինչ կ'անտեսէ՝ տեսանելի եւ անտեսանելի, երկրի վրայ, երկնքին եւ դժոխքին մէջ:

## ՈՉ ՊԱՏՈՒՅՑ ՇՔԱՆՇԱՆ

*Հոգիին պարգեւները (տե՛ս Ա. Կորնթ. 12.7-11) պատուոյ շքանշաններ չեն՝ կիրակի առաւօտեան եկեղեցւոյ մէջ կրելու համար: «Ես ունիմ հինգ հատ, իսկ դո՞ւն»: ԱՏՈՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՆ եւ կը տրուին այն պահուն, երբ դուք կը ներկայանաք՝ Աստուծոյ գործը կատարելու համար: Ան մուրճ չի տար ձեզի, եթէ ձեզի հասոյչ պէտք է: Տէրը ամէն օր կու տայ ձեզի այն գործիքը, որ կը համապատասխանէ ձեզի յանձնարարուած աշխատանքին: Եթէ օգտագործէք ձեզի տրուած գործիքները, դուք հրաշքներ կը տեսնէք:*

«ԶՕՐՈՒԹԻՒՆ» ԲԱՌԸ ԳՈՐԾՔ 1.8-ԻՆ ՍԷՋ (ՏՈՒՆԱՄԻՍ) ԿԸ ՆՇԱՆԱԿԵ ներուժ, պահուած զօրութիւն՝ նման Տինամիթի: Այն քարի պէս դրուած կը մնայ, քանի տակաւին չէ գործադրուած: Մարդիկ կ'աղօթեն «զօրութեան» համար եւ, անկասկած, կը ստանան: «Տունամիսը»՝ ներուժը, կ'ուղղորդուի դէպի մարդկային կարիքը: Մենք կրնանք ըլլալ հոգեւոր մարմնամարզիկներ, որոնք կը մարզուին՝ զօրաւոր ըլլալու համար: Ի՞նչ օգուտ, որ տղամարդը մարզական միջոցառման ժամանակ կրնայ 200 քիլոկրամ ծանրութիւն բարձրացնել զլուխէն վեր, եթէ ան մատն ալ չի շարժեր, որ օգնէ իր կնոջը խոհանոցին մէջ: Ի՞նչ օգուտ, որ մենք կը պարծենանք մենք մեր զօրութեան համար, եթէ չենք կատարեր այն գործը, որ պէտք է եղած ըլլայ: Հոգիին զօրութիւնը չի կրնար արձակուիլ, եթէ մենք չգործենք:

## ՄՆՈՒԻԼ ԽՕՍՔՈՎ

*Յիսուս կը յորդորէ մեզ գանձեր չհաւաքել այս երկրին վրայ, ուր ատոնք ենթակայ են քայքայման եւ կրնան գողցուիլ, այլ հաւաքել ատոնք Երկինքը, ուր ապահով կը պահուին (տե՛ս Մատթ. 6.19-21): Մենք պէտք է զգոյշ ըլլանք, որ չհարստացնենք մեր միտքն ու զգացումները՝ անտեսելով մեր հոգին:*

ՀԵԹԱՆՈՍՆԵՐԸ «ԿԸ ՏԱՐՈՒԷԻՆ» ԸՍՏ՝ ՆԱԽԿԻՆԻՆ ՁԵՈՔ ԲԵՐՈՒՄԾ իրենց գիտելիքին, որ նման էր իմաստութեան, սակայն կը պատկանէր «համր կուռքերուն» (Ա. Կորնթացիս 12.2): Յոյները յայտնի էին աշխարհիկ գիտելիքով, բայց Սուրբ Հոգիին իրողութիւնները ուրիշ են: Դոկտորական աստիճանը հասարակագիտութեան բնագավառին մէջ մեզ իմաստուն չի դարձներ Աստուածային իրողութիւններուն մէջ: Աստուածային իրողութիւններուն մէջ իմաստուն մարդիկ կրակ ընդունած են իրենց Հոգիին մէջ, ոչ թէ միայն պաղ փաստեր՝ իրենց մտքին մէջ: Եթէ կ'ուզենք հոգեւորապէս աճիլ, մենք պէտք է սնուցենք մեր հոգին Աստուծոյ Խօսքով եւ աղօթենք Հոգիով:

## ՕԳՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

*Ինչո՞ւ մշտապէս կասկածիլ Աստուծոյ Խօսքին: Ինչո՞ւ չկասկածիլ սատանայի սուտերուն: Այսօր որոշում կայացուցէք կասկածիլ ձեր կասկածներուն եւ հաւատալ Աստուծոյ Խօսքին: Եթէ այդպէս վարուիք, շուտով դուք երկնային օգնութիւն պիտի ստանաք Սուրբ Հոգիէն:*

ԻՆՉՈՒՒ ԱՅՐՔԱՆ ԴԻՒՐԻՆ Է ՀԱՄԱՏԱԼ ՍԱՏԱՆԱՅԻ ՍՈՒՏԵՐՈՒՄ: Ի՞նչ կ'ըլլար, եթէ փոխարէնը Եւան որոշէր կասկածիլ օձի խօսքերուն: Ակնյայտ է՝ արդիւնքը ուրիշ պիտի ըլլար բոլորիս համար (տե՛ս Ծննդ. 3): Երբ որոշում կայացնէք վստահիլ Աստուծոյ արեւի շատ, քան վստահիք ձեր կասկածներուն, դուք պիտի ստանաք օգնութիւն Աստուծմէ: Սուրբ Հոգին պիտի օգնէ կառուցել ձեր հաւատքը, իսկ հաւատքը այն է, ինչ որ կը շարժէ կասկածի կողմէն ստեղծուած լեռները:

# ԶՕՐՈՒԹԻՒՆ՝ Ի ՎԵՐՈՒՄՏ

«Ամէն բան կրնամ զիս զօրացնող Քրիստոսով»:

ՓԻԼԻՊՊԵՑԻՍ 4.13

## ԱՆՍՊԱՌ ԶՕՐՈՒԹԻՒՆ

Դուք կրնաք գիտնալ ամէն ինչ ելեկտրական կայանի մասին, բայց, միեւնոյն է, մնալ ցուրտի եւ խաւարի մէջ: Դուք կրնաք հպիլ միջուկային գործարանի պատերուն, բայց, միեւնոյնն է, մսիլ: Զերմութիւն ստանալու համար, դուք պէտք է վերցնէք ուժի աղբիւրէն: Ձեր ներսը կայ Սուրբ Հոգիին անսահմանափակ զօրութիւնը, որուն շնորհիւ դուք կրնաք յաղթահարել գայթակղութիւնները եւ սուրբ ըլլալ, իմաստութեամբ վարուիլ եւ գերազանցութեան հասնիլ ձեր ապագայ աշխատանքային գործունէութեան մէջ, յաղթահարել տկարութիւններն ու հիւանդութիւնները, միայն եթէ սորվիք վերցնել ատորմէ (տե՛ս Բ. Պետր. 1.3):

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ Կ'ԱՊՐԻ ՄԵՐ ՆԵՐՍԸ ԵՒ ԿԸ ԶՕՐԱՑՆԷ ՄԵՁ, ՈՐ հակառակինք սատանային եւ յաղթենք չարին: Մենք միայն պէտք է խնդրենք Անորմէ օգնել մեզի: Մտածեցէ՛ք այսպէս. ձեր տունը ելեկտրականութիւն կայ: Այն միացած է ելեկտրական կայանին՝ լարերու միջոցով: Եթէ դուք ուշ գիշերով տուն գաք, ձեր տունը թերեւս չըլլայ ո՛չ լոյս, ո՛չ ջերմութիւն, սակայն պիտի գիտնաք, թէ ինչ ընէք: Դուք պիտի միացնէք անջատիչը, եւ ելեկտրականութիւնը ներս պիտի մտնէ. դուք պիտի ստանաք լոյս եւ ջերմութիւն: Հոգիի զօրութեամբ ապրիլը նման է անջատիչը միացնելուն: Մնացեալ բաները պատրաստ են եւ կը սպասեն միայն մեզի:

## ԱՍՏՈՒԾՈՅ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՒ ԳԱՅ

### ՉՋՏՈՒԱԾ ՏԵՍՔՈՎ

Սուրբ Հոգիին զօրութիւնը իրական է. այն իրական Աստուածային զօրութիւն է, ոչ թէ կեղծիք կամ կրկնօրինակ: Աստուծոյ ձայնը խլացուած չէ՛ Սուրբ գիրքին մէջ: Այն կը խօսի իշխանութեամբ եւ ստուգութեամբ. «Եկէ՛ք ինձի, բոլոր յոգնածներ եւ բեռնաւորուածներ, եւ Ես հանգիստ պիտի տամ ձեզի» (Մատթէոս 11.28): Այս առաջարկը պարզ եւ յստակ է. եթէ ընդունիք Քրիստոսը, դուք Աստուածային կեանք կ'ունենաք:



ՄԵՐ ՏՈՒՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԵԼԵԿՏՐՈՎԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՉԻ ԳԱՐ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԵԼԵԿՏՐՈՎՈՆԻԿԱԿԱՆ ԶԱՐԺԻՋՆԵՐԷՆ: Այն կը գտուի ենթակայաններու եւ հոսանքափոխարկիչներու միջոցով՝ լարումը կրճատելու համար: Սակայն Աստուծոյ զօրութիւնը չի գար մեր քով գտուած տեսքով: Երբ Յիսուս կը յայտնուի, Ան Իր ճշմարիտ ինքնութեան գունատ ստուերը չէ՝ ոգեղէն տեսքով: Գոյութիւն չունի ուրուական Քրիստոս: Ան կենդանի Յիսուսն է, ոչ թէ՝ հեռաւոր յոյսի արտացոլք: Սուրբ Հոգին պարտաւորուած է պատուել Աւետարանը, եւ Անոր միջոցով Յիսուս յայտնուած է մեզի: Դուք չէք կրնար տանիլ Աւետարանը՝ առանց զօրութեան, ինչպէս որ չէք կրնար կրակ վառել՝ առանց ջերմութեան: Ես տեսականօրէն չեմ մօտենար այս հարցին, այլ կը խօսիմ Անոր հետ ունեցած իմ ընթացքին մասին: Անոր զօրութիւնը իրական է, եւ այն կը գործէ:

## ԱՆՄԱՐ

*Աստուծոյ զօրութիւնը անանձնական զօրութիւն չէ, որ կրնայ մարել կամ սպառուիլ: Աստուծոյ զօրութիւնը ԱՍՏՈՒԱԾ Է: Սուրբ Հոգիին զօրութիւնը ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ Է: Աստուած չի շոգիանար, չի հանգչիր, չի ցամքիր կամ չի թուլնար: Ժամանակը չ'ազդեր Աստուծոյ վրայ, նոյնիսկ՝ 1.000 տարին: Եթէ պահպանէք կապը Աստուծոյ հետ, դուք զօրութիւն կ'ունենաք:*

ԱՍՏՈՒԾՈՅ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ՄՇՏԱՊԷՍ ՀԱՍՏԱՏՈՒՆ Է ԵՒ ՀԱՍԱՆԵԼԻ Է: Պօղոսը կրնար խոստանալ հռովմայեցիներուն մէկ-երկու տարի առաջ, որ պիտի գար «Քրիստոսի Աւետարանի առատ օրհնութեամբ», եւ «հոգեւոր շնորհք» (օգուտ) էր հաղորդելու եկեղեցւոյ (տե՛ս Հռովմ. 15.29, 1.11) ոչ թէ՛ ռելե՛ անհատի: Ան կը ճանչնար Աստուծոյ Հոգիին մշտական եւ շարունակական հոսքը: Միակ դէպքը, երբ քրիստոնէաները վերալիցքաւորման կարիք ունին այն է, երբ անոնք կը դադրին հնազանդելէ, եւ իրենց կապը Աստուծոյ հետ կը խաթարուի (նման՝ ժանգոտած ինքնաշարժի մարտկոցի): Այդ ժամանակ անոնք պէտք է մաքրուին իրենց գործերէն եւ կրկին առջեւ երթան: Աստուծոյ զօրութիւնը կու գայ, երբ դուք կ'երթաք, ոչ թէ՛ երբ դուք մտած էք:

## ՉԿԱՅ ՆՈՐ ՕԾՈՒԹԻՒՆ

*Մէկ անգամ օծուելէն յետոյ դուք մշտապէս օծուած էք: Գարնան, ամրան, աշնան, թէ՛ ձմրան, անապատին մէջ, թէ՛ անտառններուն, միայնակ, թէ՛ այլ մարդոց հետ՝ օծութիւնը մշտապէս ձեզի հետ է: Դուք կրնաք յարձակիլ ձեր մեծագոյն թշնամիին վրայ, յաղթահարել ձեր մեծագոյն խոչընդոտը եւ կատարել այն կոչումը, որ ստացած էք Աստուծմէ. դուք միայն պէտք է հաւատաք:*

ԴԱԻԻԹԸ ԿԸ ԶԱՐՄԱՑՆԷ ԶԻՍ: ԱՆ ԱՅՆ ՄԱՐԴՈՑՄԷ ԷՐ ՀԻՆ Կտակարանն մէջ, որ գիտէր, թէ ինչ կը մշանակէ օծուած ըլլալ: Ան կլանուած էր այն գիտակցութեամբ, որ Աստուծոյ իրեն հետ է: Օրինակ՝ ան մարտակոչ նետեց Գողիաթին՝ վստահելով միայն իր օծութեան: Ան չխնդրեց Սամուէլին կրկին օծել զինք, այս անգամ, թերեւս, «Գողիաթի օծութեամբ»: Ան չխնդրեց բարեխօսներէն աղօթել իրեն համար: Ան նոյնիսկ ինքը չաղօթեց իրեն համար: Ան օծուած էր, եւ ան օծուած ալ մնաց, եւ ժամանակը ոչինչ փոխած էր: Ան վազեց դէպի փղշտացին եւ գոչեց. «Դուն սուրով, նիզակով եւ գեղարդով կու գաս վրաս, բայց ես կու գամ քեզի Ջօրաց Տիրոջ՝ Իսրայէլի զօրքերու Աստուծոյ անունով» (Ա. Թագաւորաց 17.45): Եւ ի՞նչ տեղի ունեցաւ: Դեռահաս Դաւիթը տապալեց այդ հսկան:

# ԿՐԱԿԷ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ԲԱԺԻՆ 6

ԿՐԱԿՈՏ ՄԱՐԴԻԿ.  
ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՒ  
ՀԱԲԱՏԱՑԵԱԼԸ

## ՈՉ ՄԷԿ ԿՐԿՆՕՐԻՆԱԿ

«Միայն թէ զանազան պարգեւներ ունինք՝ այն շնորհքին պէս, որ մեզի տրուած է. թէ մարգարէութիւն՝ հաւատքի չափով մարգարէանանք, թէ պաշտօն՝ պաշտօնի մէջ ըլլանք, թէ մէկը սորվեցնող է՝ վարդապետութեան մէջ ըլլայ, թէ մխիթարող է՝ մխիթարութեան մէջ. բաշխողը՝ զուարթութեամբ, վերակացու դրուածը՝ ջանքով, ողորմողը՝ յօժարութեամբ»:

ՀՈՌՎՄԱՅԵՑԻՍ 12.6-8

## ՆՈՐՈԳՄԱՆ ՀՈԳԻ

«Ահա Ես նոր բան մը կ'ընեմ. հիմա պիտի յայտնուի. մի՞թէ չէք գիտեր (կամ՝ մի՞թէ չէք հասկնար)» (Եսայիա 43.19): Աստուծոյ Հոգին կը գործէ՝ մեր մէջ՝ նորոգելով եւ թարմացնելով մեզ, որպէսզի մենք չվերադառնանք մեր հին ճանապարհներուն եւ նոյնիսկ՝ բարի աւանդոյթներուն: Ձեր կեանքի ամբողջ ընթացքին Աստուած կը ցանկայ նոր բաներ ընել, նոր ցուցանիշներ սահմանել, նոր գաղափարներու ծնունդ տալ եւ գործել ձեր միջոցով՝ այս աշխարհը փոխելու համար: Մի՛ կարչիք հինէն. ձեր մէջ կը բնակի Նորոգման Հոգին:

ԵՅՔ ԵՍ ԹԵԿՈՒՋ ԻՆՉ ՈՐ ՉԱՓՈՎ ԿԸ ՀԱՍԿՆԱՄ ԱՍՏՈՒԾՈՅ, ԱՆ արարիչ է. Ան ստեղծող է: Ան ամէն անգամ գլուխգործոցներ կը ստեղծէ: Ան չի ստեղծեր նոյնիսկ երկու ձիւնի փաթիլ, երկու արեւամուտ եւ երկու մարդ, որոնք իրար նման են: Անոր միտքը չափազանց արգասաւոր եւ ստեղծարար է՝ կրկնողական աշխատանքի համար: «ՆՈՐ» բառը Աստուծոյ կը պատկանի: Սուրբ Հոգին նորոգման Հոգի է, եւ Ան մշտապէս նորոգում եւ ծաղկունք կը բերէ: Նոր ծնունդ, նոր լեզուներ, նոր գինի, նոր երգեր եւ նոր սիրտ: Ան կը բերէ նոր հոգի, նոր ուխտ, նոր անուն՝ դարձնելով մեզ նոր արարած: Ան տուած է մեզի նոր պատուիրան եւ ստեղծած է նոր երկինք ու նոր երկիր: Այնուամենայնիւ, այս ամէնը կ'ընէ նոյն Հոգին, Որուն նպատակը նոյնն է՝ աշխարհի փրկութիւնը: Եւ մեր դերը աստոր մէջ Քրիստոսի գործակիցները ըլլալն է (տե՛ս Ա. Կորնթ. 3.9):

## ՄԵԾ ԿԱՄ ՓՈՔՐ ԿՐԱԿԷ ԼԵԶՈՒՆԵՐ

Դուք Աստուածային Տի Էն Էյ (DNA) ունիք: Այն զորութիւնը, որ կը կրէք, կը բխի անձամբ Աստուծմէ: Այն ւաւելի ցած չէ Աստուծոյ զօրութենէն, եւ ոչ ալ աստոր կեղծիքն է. այն իրական է: Ան, Որ ձեր մէջն է, շատ ւաւելի մեծ եւ գերազանց է, քան ան, որ այս աշխարհին մէջն է (տե՛ս Ա. Յովհ. 4.4): Եղէ՛ք խիզախ եւ համարձակ:

ԳՐՈՒԹ Է, ՈՐ ՊԷՆՏԵԿՈՍՏԷԻ ՕՐԸ, ԵՐԲ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵԿԱՒ աշակերտներուն վրայ Վերնաստունը, անոնց երեւցան «բաժնուած

լեզուներ՝ ինչպէս կրակէ» (Գործք 2.3): ԲԱԺՆՈՒԱԾ ինչէ՞: Կրակէ լեզուները բաժնուած էին ՄԵԾ ԿՐԱԿԷՆ՝ ԱՍՏՈՒԾՄԷ: Փոքրիկ կրակէ լեզուները կտրուեցան Աստուծմէ, եւ մէկական կրակէ լեզու իջաւ ամէն մէկուն վրայ: Այդ կրակէ լեզուներէն ամենափոքրը զԱստուած կը ներկայացնէր ճիշդ նոյն կերպով, ինչպէս եւ ամենամեծը:

## ԱՅԼԵՒՍ ՈՉ ՍՈՎՈՐԱԿԱՆ

*Այն Աստուածային կրակը, որ կու գայ, երբ դուք կը մկրտուիք Սուրբ Հոգիով, կը փոխէ ձեր կարգավիճակը՝ ձեզ սովորակաւնէն արտասովոր դարձնելով: Դուք կը ստանաք Աստուածային առաքելութիւն եւ յանձնարարութիւն, որպէսզի այլեւս չապրիք ձեզի համար, եւ կը յանձնէք ձեր վախերն ու ձգտումները Աստուածային նպատակին: Դուք ընտրեալ անօթ կը դառնաք:*

ՍՈՎԱՄԵՐ ԹՈՒՓԵՐ ՈՒ ՄԱՅԱՈՆՆԵՐ ԿԸ ՏԵՍՆԷՐ ԱՄԷՆ ՕՐ՝ 40 ՏԱՐԻ շարունակ: Ան չէր շրջեր՝ նայելով եւ ուսումնասիրելով թուփերը: Անպատային թուփերը գեղեցիկ, մշակուած, գունազեղ եւ ծաղկուն չեն: Ատոնք բաւականին անհրապոյր են: Բայց Աստուած վերցուց ատոնցմէ մէկը, որ ինքնին շատ սովորական էր, եւ արտասովոր դարձուց: Այն բոցավառեցաւ, սակայն չսպառեցաւ (տե՛ս Ելից 3.2): Եւ Ան խօսեցաւ ատոր մէջէն. Անոր ծայրը եկաւ վառող մորեմիէն: Ինչ որ առումով, Մովսէսը նման էր այդ մորեմիին՝ սովորական, եւ նոյնիսկ՝ ցած կարգով: Ան նման էր հոսանքով տարուող լողարկափայտի. ան փախուստի դիմած մարդասպան էր, որ կը պահուըտէր արդարադատութենէն եւ չուներ ապագայ: Ան ընդամենը հովիւ էր, եւ «ամէն հովիւ եգիպտացիներուն առջեւ գարշելի է» (Շննդոց 46.34): Մովսէսը տեսաւ, որ մորեմին կը վառէր եւ չէր մոխրանար: Ան նոյնիսկ գաղափար չուներ, որ այդ պահը իր կեանքը պիտի փոխէր: Հետաքրքրասիրութենէն մեկնած՝ ան մօտեցաւ եւ հիացմունքով կը նայէր այդ տեսարանին: Եւ յանկարծ Աստուածային կրակը դուրս ցատկեց այդ մորեմիէն ու փոխանցուեցաւ անոր: Մահկանացու Մովսէսը դարձաւ Կրակէ Մարդ: «Ան... ըրաւ... Իր պաշտօնեաները կրակի բոց» (Եբրայեցիս 1.7): Այն օրը, երբ դուք թեքուիք ձեր ճանապարհէն՝ վառող մորեմին տեսնելու համար, այլեւս սովորական չէք ըլլար:

## ՉԵՐ ԻԻՐՕՐԻՆԱԿ ՕԾՈՒԹԻՒՆԸ

*Դուք եզակի ստեղծուած էք, օծուած էք եւ նշանակուած էք Աստուծոյ կողմէն Իր նպատակներուն համար՝ ձեր ժամանակին եւ ընթացքին մէջ: «Քու ուժդ քու օրերուդ չափ պիտի ըլլայ» (Երկրորդ Օրինաց 33.25): Այն ամէնուն համար, որ չունիք, անհանգստանալու փոխարէն, կեդրոնացէ՛ք այն բաներուն վրայ, ինչ որ ունիք, քայլ ըրէ՛ք հաւատքով եւ տեսէ՛ք, թէ ինչպէս Աստուած կը գործէ ձեր միջոցով:*

ՊԵՆՏԵԿՈՍՏԻՆ ՕՐԸ 120 ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՉԷՆ ԱՂԱՂԱԿԵՐ կրկնակի օծութեան համար: Ուշադրութիւն դարձուցէք, որ ՈՉ ՈՔ ՀԵՌՈՍԱՒ ՎԵՐՆՈՒՏՆԵՆ՝ ԿՐԵԼՈՎ ԻՐ ՂԵՆՈՒՆ ՎՐԱՅ ԵՐԿՈՒ ԿՐԱԿԵ ԼԵԶՈՒ: Միայն մէկ կրակէ լեզու «նստաւ անոնմէ ամէն մէկուն վրայ» (Գործք 2.3): Բայց այդ կրակէ լեզուն կը խորհրդանշէր Աստուծոյ ամբողջական կրակը՝ Անոր իշխանութիւնը, զօրութիւնը եւ փառքը: Երբ ես կը ճամբորդեմ աշխարհով մէկ, ինձմէ յաճախ կը խնդրեն. «Աղօթեցէ՛ք ինձի համար: Ես կ'ուզեմ ստանալ ձեր օծութիւնը»: Ես այսպէս կը պատասխանեմ անոնց: «Մի՞թէ դուք կը կարծէք, որ ես պիտի տամ ձեզի իմ օծութիւնը եւ տուն պիտի երթամ առանց ատոր: Անշուշտ՝ ո՛չ»: Բայց զարմանալի գաղտնիք մը կայ: Եթէ դուք ստանայիք Ռէյնհարտ Պոնքէի օծութիւնը, դուք պիտի դառնայիք Պոնքէի պատճէնը: Եւ թոյլ տուէք ըսել՝ անձամբ ես չէի ուզեր ըլլալ պատճէնի պատճէնը, եւ Աստուած ալ չ'ուզեր ատիկա ձեզի համար:

Եթէ կ'ուզէք ինչ որ բան մը հասկնալ Աստուծոյ բնաւորութեան մասին, պարզապէս նայեցէ՛ք բնութեան: Ամբողջ աշխարհին մէջ ապրող աւելի քան 7.5 միլիարդ մարդոցմէ ոչ մէկուն մատնահետքերը կը կրկնուին, եւ ամբողջ աշխարհին մէջ չկայ երկու տերեւ, որոնք միեւնոյն կառուցուածքը ունին: Ինչո՞ւ: Քանի որ Աստուած պատճէններ պատրաստող չէ. Ան Արարիչ է: Ան կը ստեղծէ միայն ԻԻՐՕՐԻՆԱԿ բաներ եւ չ'աշխատիր պատճէնահանող գործիքով: Չեր ստացած կրակէ լեզուն այնքան անձնական է, որ այն կը կրէ ձեր անունը: Այն ստեղծուած է յատուկ ձեզի համար: Այն այլեւս ոչ մէկուն կը համապատասխանի: Ոչ ոք այս երկրին մէջ կրնայ ծառայել Աստուծոյ այնպէս, ինչպէս դուք: Դուք իւրօրինակ էք, եւ ձեր օծութիւնը՝ նոյնպէս:

## ԱԻԵԼԻ, ՔԱՆ ԿՐԿՆԱԿԻ ՉԱՓԸ

«Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեսն ծեզի, թէ Ձիս հա-  
ւատացողը, այն գործերը, որ Ես կը գործեմ, ինքն  
ալ պիտի գործէ, եւ անոնցմէ ա՛լ աւելի մեծ բա-  
ներ պիտի գործէ, որովհետեւ Ես Իմ Հօրս քով  
կ'երթամ: Եւ ինչ ալ, որ խնդրէք Իմ անունով, այն  
պիտի ընեն, որ Հայրը փառաւորուի Որդիին մէջ:  
Եթէ Իմ անունովս բան մը խնդրէք,  
Ես պիտի ընեն»:

ՅՈՎՀԱՆՆԵՍ 14.12-14



## ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՏՁ

Մատ մը կայ, որ ուղղուած է ձեր վրայ, բայց այն կործանման մատ չէ: Այն Աստուծոյ Մատն է, որուն նպատակն է՝ օրհնել, առանձնացնել եւ զօրացնել ձեզ՝ Իրեն ծառայելու համար, որպէսզի դուք բժշկէք հիւանդները, յարութիւն տաք մեռելներուն եւ դեւեր հանէք: Աստուծոյ մատը Սուրբ Հոգին է (տե՛ս Գործք 10.38): Ան կ'ազատէ ձեզ խաւարի ամէն ուժէ եւ կ'արձակէ Աստուծոյ բարութիւնը ձեր կեանքին մէջ:

ԻՍՐԱՅԷԼԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏՐՈՒԱԾ ԷՆ «ԻՍՐԱՅԷԼԻ քաղաքակցութեան»՝ ուխտի համեմատ (տե՛ս Եփես. 2.12): Քրիստոս Յիսուսը միացուց հրաշքները նոր քրիստոնէական քաղաքակցութեան. «Եթէ Ես Աստուծոյ մատով կը հանեմ դեւերը, ուրեմն Աստուծոյ արքայութիւնը ձեր վրայ հասած է» (Ղուկաս 11.20): Չկայ անելի մեծ զօրութիւն, քան Սուրբ Հոգիին զօրութիւնը: Այն Աստուծոյ Թագաւորութեան զօրութիւնն է, եւ ոչ մէկ ուժ կրնայ հաւասարիլ ասոր: Հոգիին միջոցով Ան կը բաժնէ Իր ծառայութիւնները այն մարդոց, որոնց որ կը ցանկայ:

## ԵՂԻԱՅԻ ՎԵՐԱՐԿՈՒՄ

Յիսուս ըսաւ. «Ահա Սողոմոնէն ալ մեծն է հոս» (Մատթէոս 12.42), «Աբրահամը ըլլալէն առաջ եմ Ես» (Յովհաննէս 8.58), եւ Յովհաննէս Մկրտիչին վերաբերեալ. «Եթէ կը կամենաք ընդունիլ, ան Եղիան է, որ պիտի գար» (Մատթէոս 11.14): Կարելոր է հասկնալ, որ դուք ստացած էք վերարկու մը, որ շատ անելի կը գերազանցէ այն, ինչ Եղիան ունէր. դուք ստացած էք Յիսուսի վերարկուն՝ Սուրբ Հոգիով մկրտութիւնը:

ՀՈԳԵԳԱԼՍՏԱԿԱՆ-ԽԱՐԻԶՄԱԹԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԷՋ ԱՆՍՈՎՈՐ ԲԱՆ ՉԷ ԼՍԵԼՐ, որ մարդիկ կ'աղօթեն Եղիայի վերարկուին համար, որպէսզի Եղիային պէս կրակ իջեցնեն եւ հրաշքներ ու նշաններ գործեն: Այնուամենայնիւ, Յիսուս պարզ կ'ըսէ. «Անոնց ալ, որ հաւատա-

ցին, այս նշանները պիտի հետեւին. Իմ անունովս դեւեր պիտի հանեն, նոր լեզուներով պիտի խօսին, օձեր պիտի բռնեն, եւ եթէ մահադէղ մը խմեն, անոնց վնաս պիտի չտայ, հիւանդներուն վրայ ձեռք պիտի դնեն, եւ անոնք պիտի առողջանան» (Մարկոս 16.17,18): Արդեօ՞ք մենք պէտք է աղօթենք Եղիային վերարկուն համար: Չեմ կարծեր: Յիսուս կու տայ մեզի Իր վերարկուն՝ Սուրբ Հոգիով մկրտութիւնը: Մենք միայն պէտք է հաւատանք եւ վարուինք ատոր համեմատ, եւ նշաններն ու հրաշքները պիտի հետեւին մեզի:

## ԱՆՀԱԲԱՆԱԿԱՆԸ

*Տէր Աստուած ոչ միայն «մեր միջեւ» է, այլեւ մեր ներսն է: Պնդումները Անոր բացակայութեան մասին անհաւանական են: Կարիք չկայ փնտռել Անոր ներկայութիւնը, ծոմ պահել ատոր համար, պահանջել կամ դաւանիլ այն: Անոր ներկայութիւնը անբաժան է քրիստոնէական հաւատքէն:*

ՄԱՐԳԱՐԷՆԵՐԸ ԿԱՆԵԱԲ ԸՍԻՆ ԱՍԻԿԱ, ԲԱՅՅ ԱՅԴՊԷՍ ԱԼ չվերապրեցան: Վերջինը մարգարէներէն՝ Յովհաննէս Մկրտիչը, ըսաւ. «Ես ջուրով կը մկրտեմ ձեզ... բայց... Ան ձեզ պիտի մկրտէ Սուրբ Հոգիով եւ կրակով» (Մատթէոս 3.11): Որպէս փրկութեան մաս՝ Նոր կտակարանի հաւատացեալները կը վայելեն Աստուծոյ հետ մտերմութեան նոր խորութիւն: Բացի այն, որ մենք հաղորդակցութիւն ունինք Աստուծոյ հետ, Ան կը բնակի մեր մէջ՝ ամէն մարդու մէջ, որ փրկուած է Անոր շնորհքով (տե՛ս Յովհ. 14.17): Կարիք չկայ, որ մենք Անոր ներկայութիւնը շահինք. Անոր սէրը կ'երաշխաւորէ այն: Եթէ մենք վերստին ծնած ենք եւ մաքրուած ենք մեր մեղքերէն Աստուծոյ Գառնուկի արիւնով, պէտք չկայ, որ ինչ որ բան մը ընենք՝ Անոր ներկայութիւնը ստանալու համար. Ան արդէն իսկ մշտապէս մեզի հետ է: Ասիկա մեր հաւատքի փառքն է:

## ԱՆ ԿԸ ԲՆԱԿԻ ՄԵԶԻ ՀԵՏ

Աստուած մօտ է մեզի ցերեկ ու գիշեր: Եթէ Ան սպասէ եկեղեցւոյ մէջ, մինչ մենք կը բախտինք կեանքի մարտահրաւիրներուն, ինչպէ՞ս Ան կրնայ փրկել մեզ եւ մեր զօրութիւնը ըլլալ: Հեթանոսները կ'երթան իրենց աստուածներու տաճարները, բայց Քրիստոսը միշտ մեզի հետ է: Ան հետս է հիմա, երբ ես կը գրեմ՝ նստած իմ սեղանիս քով, նոյն կերպով, ինչպէս այն ժամանակ, երբ կը քարոզեմ աւետարանչական հաւաքոյթներուն: Մենք փոփոխական ենք, իսկ Ան՝ ոչ (տե՛ս Յակոբ. 1.7): Հանգամանքները չեն թելադրեր Անոր: Ան չունի տրամադրութիւններ եւ չի շահարկուիր մեր տրամադրութիւններով: Ան շարունակ չի գար ու հեռանար՝ կախուած մեր զգացումներէն: Մենք փոփոխական ենք, բայց Ան յաւիտեան նոյնն է:

ԱՅՆՊԷՍ ԶԷ, ՈՐ ԱՍՏՈՒԾ ՄԵԶԻ ՀԵՏ Է ՄԻԱՅՆ՝ ԵՐԲ ՄԵՆՔ ՀՈԳԵՒՈՐԱՎԷՆ տրամադրուած ենք: Ուր ալ ըլլանք, Ան մեզի հետ է, նոյնիսկ երբ քնացած ենք կամ չենք մտածեր այն մասին, որ Ան մօտ է: Սաղմոս 4.8-ին մէջ գրուած է. «Ես խաղաղութեամբ կը պառկիմ եւ կը քնանամ, որովհետեւ Դուն ես միայն, ո՛վ Տէր, որ զիս ապահովութեամբ կը բնակեցնես»: Մենք կրնանք ապահով բնակիլ, քանի որ Ան «կը բնակի» մեզի հետ: Քրիստոս ըսաւ. «Եւ ահա Ես ձեզի հետ եմ ամէն օր՝ մինչեւ աշխարհի վերջը» (Մատթէոս 28.20):

## ԹԱԳԱԻՈՐԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆ

«Բայց դուք ընտիր ազգ էք, թագաւորական  
քահանայութիւն, սուրբ ազգ, սեփական  
ժողովուրդ, որ քարոզէք Անոր  
առաքինութիւնները, որ ձեզ խաւարէն  
կանչեց Իր զարմանալի լոյսին մէջ»:

Ա. ՊԵՏՐՈՍ 2.9

## ԿՐԱԿՈՎ ՊՍԱԿՈՒԱԾ ԳԼՈՒԽՆԵՐ

*Դուք թագադրուած արքայազններ եւ արքայադուստրեր էք: Աստուած պսակած է ձեզ փառքով եւ կրակով: Դուք կը կրէք իշխանութիւն եւ զօրութիւն ձեր գլխուն վրայ՝ Սուրբ Հոգիին կրակէ լեզուները: «Ահա իշխանութիւն տուի ձեզի՝ կոխելու օձերու եւ կարիճներու վրայ եւ թշնամիին ամբողջ զօրութեան վրայ» (Դուկաս 10.19): Դուք անգոր չէք: Մի՛ վախնաք թշնամիին առջեւ եւ մի՛ ապրիք սովորական կեանքով:*

ԴՈՒՔ ՍՏԵՂԾՈՒԱԾ ԷՔ ԿՐԱԿԵ ՊՍԱԿ ԿԱՍ ԿՐԱԿԵ ԹԱԳ ԿՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ: Ոչ մէկ կոմիտէ որոշած է ատիկա: Աստուծոյ կամքն է, որ իւրաքանչիւր հաւատացեալ կրէ այդ կրակէ լեզուն՝ Սուրբ Հոգիի զօրութեան արքայական ՊՍԱԿԸ: Մեր գլխուն դրուած է ազնուազարմ ԿՐԱԿԵ ՊՍԱԿ, ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ, ԿԵՆԴԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԹԱԳ: Մենք մկրտուած ենք Հոգիով, այսինքն՝ ՊՍԱԿՈՒԱԾ ԵՆՔ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՄ: Երբ Մովսէս կ'օրհնէր Իսրայէլը, անոր խօսքերը Յովսէփի մասին գեղեցիկ բանաստեղծութենէ աւելին էին (տե՛ս Երկր. Օր. 33.13-17): Այն, ինչ որ ան ըսաւ, մարգարէական խոստում էր. «Թող որ վառող մորինիին մէջ Բնակողի բարեհաճութիւնը հանգչի Յովսէփի գլխուն վրայ՝ անոր զագաթին վրայ, որ իշխան է իր եղբայրներուն միջեւ»: Այն, որ մորենիին մէջ Բնակողի բարեհաճութիւնը կը թագադրէ Յովսէփը, սուրբգրային խոստում է մեզի համար: Երբ վառող մորենիին Աստուածը կը թագադրէ մեզ, այդ թագը հոգեւոր վեհութիւն եւ իշխանութիւն կը հաղորդէ մեզի: Մենք կը սկսինք խօսիլ զօրութեամբ եւ վստահութեամբ, քանի որ ԿԸ ՃԱՆՉՆԱՆՔ Զինք, Որուն մէջ իշխանութեամբ կը խօսինք:

## ԲԱՐՁՐ ԳԼՈՒԽՈՎ

*Աւետարանը տրուած չէ, որ հաւասարեցնէ բոլորս նուազագոյն ընդհանուր յայտարարին: Աւետարանի նպատակն է՝ ստեղծել նոր արարածներ եւ տալ մեզի Աստուծոյ որդիներու յատուկ արժանապատուութիւն: Անոնք, որոնք ժամանակ մը չարագործներ էին, այժմ վերականգնուած են եւ արքայադններ կը համարուին: Հալելուի՛ ա: Ինչպիսի՛ պատճառ՝ Աւետարանը քարոզելու հա-*

*մար: Մի՞թե կայ աւելի ոգեւորիչ, արկածային եւ արժանի ճանապարհ: Մի՞թե կայ ուրիշ բան, որուն արժէ նուիրել մեր կեանքը:*

ՀԱՄԱՍՏԱՅԱԼՆԵՐԸ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ ԿՐՆԱՆ ՔԱԼԵԼ ԲԱՐՁՐ զԼՈՒԽՈՎ՝ որպէս Երկնքի թագաւորութեան տիկնայք եւ պարոնայք՝ կրելով Աստուծոյ ընտանիքի արժանապատուութիւնը: «Թող թոյլը ըսէ՛ հզօր եմ ես» (Յովէլ 3.10, NKJV): Մենք Փրկիչին թանկ եւ արժէքաւոր ձեռքբերումն ենք: Աստուած մեզի հետ է: Մենք օժտուած ենք Ամենակարողին զօրութեամբ, պաշտպանուած ենք հրեշտակներու կողմէն, գօտեպնդուած ենք ուժով, կ'առաջնորդուինք Ամենագետին կանչով, ներգրաւուած ենք Արարիչին յաւիտենական պատուէրները կատարելու մէջ եւ օծուած ենք շնորհքի բուրմունքով: Աւետարանը յաւիտեան կը միաւորէ զԱստուած եւ մեզ:

## ԿԵՆԴԱՆԻ ԿՐԱԿ

*Ջարմանայի է, թէ ինչպիսի մարդիկ Աստուած կը գործածէ: Ան հազուադէպ կը գործածէ այս աշխարհի ազդեցիկ մարդիկ, փայլուն առաջնորդներ կամ յայտնի կատարողներ: Սովորաբար Ան կ'ընտրէ անոնց, որոնք չունին մեծ ձեռքբերումներ այս աշխարհին մէջ: Աստուած չի գործածեր թագադրուած պետական այրերը. Ան կ'ընտրէ կրակով պսակուածները: Անոր գործը կատարելու որակաւորումը հաւատքի եւ կրակի իշխանութիւնն է:*

ՅԻՍՈՒՄ ԿՐՆԱՐ ԳՈՐԾԱԾԵԼ ԲԱԶՄԱԹԻ ԿԵՍԱՐՆԵՐ ԵՒ ԻՇԽԱՆՆԵՐ՝ Պիղատոսը, Կայիափա քահանայապետը եւ այդ ժամանակուան կրօնական եւ քաղաքական վերնախաւը: Սակայն Ան անցաւ բոլոր այդ մարդոց քովէն եւ ընտրեց ցած խաւի պատկանող ձկնորսները եւ հարկահաւաքները՝ անուս եւ անբարեկիրթ առետրականները, որոնք կ'ապրէին Գալիլիայի ծովին քով: Անոնցմէ քանի մը հոգի ստախօս էին, իսկ մէկը գող էր, սակայն, քանի որ անոնք ենթարկուող եւ զիջող էին, Ան կրնար այս աշխարհը փոխողներ դարձնել զանոնք, եւ այդպէս ալ ըրաւ: Մինչեւ օրս Յիսուս նոյնը կ'ընէ. Ան կը գործածէ որեւէ կենսագրութիւն ունեցող տղամարդիկ եւ կիներ: Ան կը մաքրէ զանոնք Իր արիւնով, կը զօրացնէ Իր Հոգիով եւ կը գործածէ՝ այս աշխարհը փոխելու համար: Դուք նոյնպէս կրնաք ըլլալ անոնցմէ մէկը՝ ըլլալ կենդանի կրակ:

# ՆՈՐ ՉԱՓՈՒՄՆԵՐ ՓԱՌՔԻ ԵՒ ԶՕՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

«Պետրոսը եւ Յովհաննէսը կ'երթային միասին տաճար իններորդ ժամի աղօթքին: Եւ մարդ մը կար՝ իր մօր որովայնէն կաղ, որուն վերցուցած ամէն օր կը դնէին տաճարի այն դրան քով, որ Գեղեցիկ կը կոչուէր՝ տաճար մտնողներէն ողորմութիւն խնդրելու համար: Երբ որ ան տեսաւ Պետրոսը եւ Յովհաննէսը, որ կ'երթային տաճար մտնելու, կ'աղաչէր, որ ողորմութիւն ամեն անգամէն: Պետրոսը Յովհաննէսին հետ մտիկ ըրաւ անոր եւ ըսաւ. «Մե՛զի նայիր»: Ան ալ ուշադրութիւն դարձուց դէպի անոնց՝ սպասելով, որ բան մը ամեն անգամէն: Պետրոսն ալ ըսաւ. «Արժաթ եւ ոսկի չունիմ, բայց ինչ որ ունիմ, այն քեզի կու տամ: Յիսուս Քրիստոսի՝ Նազովրեցիի անունով, ոտքի կեցի՛ր եւ քալէ՛»: Եւ այժ ձեռքէն բռնեց, ոտքի հանեց զինք: Եւ շուտով հաստատուեցան անոր սրունքը եւ բարձքը: Ոտքի ելաւ, կեցաւ եւ կը պտըտէր, եւ անոնց հետ մտաւ տաճարը՝ քալելով եւ վազելով ու զԱստուած օրհնելով: Եւ ամբողջ ժողովուրդը տեսաւ զինք, որ կը քալէր եւ զԱստուած կ'օրհնէր: Եւ կը ճանչնային զինք, որ ասիկա էր, որ ողորմութեան համար կը նստէր տաճարի Գեղեցիկ դրան: Եւ լեցուեցան երկիւղով եւ զարմանքով այն եղածին համար»:

ԳՈՐԾՔ 3.1-10

## ՆՈՐ ՉԱՓՈՒՄ

*Հոգիով մկրտութիւնը, որուն նշանը լեզուներով խօսիլն է, նոր Բարեկոխում, նորոգութիւն կամ զարդարանք չէ: Հոգիով մկրտութիւնը ազատութիւն կու տայ մեզի եւ նոր չափում կը հաղորդէ քրիստոնէական վարդապետութեան: Հոգիով մկրտութիւնը՝ այն, որ Սուրբ Հոգին զօրութեամբ կ'օժտէ մեզ, ցոյց կու տայ, թէ ինչպիսին է Ան:*

ՀԻՆ ՈՒՄՏԻ ՍԱՐԳԱՐԷՆԵՐԸ ՀՈԳԻՈՎ ՄԿՐՏՈՒՄԾ ՉԷՆ, ԲԱՅՑ անոնք կը շարժէին Հոգիով, երբ Ան կու գար իրենց վրայ: Ճիշդ ատիկա ցոյց կու տար, որ անոնք մարգարէներ էին: Երբեմն անոնց միջոցով նաեւ հրաշքներ տեղի կ'ունենային: Երբ այդ գերբնական գործերը կը յայտնուէին, կը վերագրուէին Աստուծոյ շունչին: «Շունչ» բառը եբրայերէնին մէջ նոյնն է, ինչ Հոգին (*«ռուախ»*): Երբ Աստուած հպաւ Սաւուղ թագաւորին, բոլորը տեսան ատիկա: Անոնք ըսին, որ Աստուծոյ շունչը կամ Հոգին եկաւ Անոր վրայ: Հին ուխտին մէջ Ան չէր բնակէր մարդոց մէջ, այլ ժամանակ առ ժամանակ կը գործածէր զանոնք՝ յատուկ նպատակներու համար: Նոր ուխտին մէջ Սուրբ Հոգին կը բնակի հաւատացեալներուն մէջ եւ կը զօրացնէ զանոնք. այնպէս որ, Նոր ուխտի վերապրումը շատ անելի գերազանց է, քան այն, ինչ որ Հին ուխտին մէջ էր:

## ԳԱՆՁԵՐ՝ ՀՈՂԷ ԱՆՕԹՆԵՐՈՒՄ ՍԷՋ

*Սուրբ Հոգին գանձ է, որ մեր ներսն է, բայց մենք նման չենք զարդերով եւ թանկարժէք առարկաներով լեցուն գանձերու արկղի, որ ծովու յատակը գտնուող խորտակուած նաւուն մէջ է՝ ժամգոտած, պաղ եւ անգործ: Մենք անօթներ ենք, որոնք կը կրեն մաքուր, տաք, հեղուկ ոսկի: Անհնար է հպիլ կամ նայիլ մեզի՝ առանց ջերմութիւն գալու:*

ՈՐՈՆՔ ԱԷԼԻ ԱՆՀԵԹԵԹ ՏԵՍՔ ՈՒՄՆ: ԱՅՆ ՍԱՐԴԻԿ, ՈՐՈՆՔ ուրախութեամբ կը պարե՞ն՝ համակուած Աստուծոյ տեսիլքով, թէ՞ անոնք, որոնք անխռով կեցուածք ունին՝ նման Սֆինքսին, որ չսասա-



նեցաւ տեղէն, նոյնիսկ՝ Նափուլէոնէն թնդանօթի զարկ ստանալէն յետոյ: Մարմինը եւ արիւնը քարէն չեն եւ պէտք չէ անարծազանգ ձգեն Հոգիին հպումը: Մենք «գանձ» կը կրենք մեր երկրային անօթներուն մէջ, որպէսզի յայտնի ըլլայ, որ մեր մէջ գործող գերազանց զօրութիւնը Աստուծմէ է (տե՛ս Բ. Կորնթ. 4.7): Հանդիպելով մեզի՝ Աստուծմէ օտարացած միտք ունեցող մարդիկ պէտք է բացայայտեն այն, ինչին մասին, որ իրենք նոյնիսկ պատկերացում չունէին, նման այն բանին, որ Փետտոսը ըսաւ Պօղոսին. «Կը խելագարիս, Պօղո՛ս, շատ կարդացած ըլլալդ քեզ կը մոլորեցնէ» (Գործք 6.24): Արդեօ՞ք մարդիկ, որոնք որ այսօր կը հանդիպին իրական Քրիստոնէութեան, կրնան այլ արծազանգ ունենալ:

## ԱԲԵԼԻ, ՔԱՆ ՈՒՆԱԿ

«Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ է մեզի հակառակ, որ Իր Որդին ալ չխնայեց, այլ մեր ամէնուն համար մատնեց Ջինք, ալ ինչպէ՞ս Անոր հետ ամէն բան չշնորհէ մեզի. Ո՞վ պիտի բաժնէ մեզ Քրիստոսի սէրէն. տառապա՞նք, թէ՞ նեղութիւն, թէ՞ հալածանք, թէ՞ սով, թէ՞ մերկութիւն, թէ՞ վտանգ, թէ՞ սուր... Բայց այս բոլոր բաներուն մէջ առաւել եւս կը յաղթենք Անոր միջոցով, որ մեզ սիրեց: Որովհետեւ հաստատ զիտեմ, որ ո՛չ մահ, ո՛չ կեանք, ո՛չ հրեշտակներ, ո՛չ իշխանութիւններ, ո՛չ զօրութիւններ, ո՛չ ներկայ բաներ, ո՛չ գալու բաներ, եւ ո՛չ բարձրութիւն, ո՛չ խորութիւն, եւ ո՛չ մէկ ուրիշ ստեղծուած բան կրնայ մեզ բաժնել Աստուծոյ սէրէն, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսին մէջ է»:

ՀՈՌՎՄԱՅԵՑԻՍ 8.31,32,35,37-39

## ՆԱԽԱՏԵՍՈՒՄԸ ԱՆՀԱՐԹ ՏԵՂԱՆՔԻ ՀԱՄԱՐ

*Քրիստոնեան տկար չէ. ան անպաշտպան տեսակ չէ, որ ենթակայ է բնութեան տարերքներու քնահաճոյքին եւ մարդկային դաժանութեան: Ինչպէս Եսթերի պարագային, նոյնիսկ ամէնէն ազնուական, արքայական եւ նրբանկատ հաւատացեալներուն հետ կատակներ ընելը վտանգաւոր է (տե՛ս Եսթեր 7.3-10): Սուրբ Հոգիին զօրութիւնը առիծի պէս համարձակ կը դարձնէ մեզ (տե՛ս Առակ. 28.1): Մենք կը մոնչենք՝ Յուդայի ցեղի Առիծին պէս, եւ ինչո՞ւ ոչ: Մենք Աստուծոյ որդիները եւ դուստրերն ենք:*

ԵՐԲ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵԿԱՒ ՀԱԲՏԱՏԵԱԼՆԵՐՈՒՆ ԿՐԱՅ, ԱՆՈՆՔ ստացան աւելին, քան հրաշքներ ու նշաններ գործելու զօրութիւնը: Ան դիմացկուն դարձուց զանոնք՝ սպասուող մարտահրաւիրներու եւ հալածանքներու համար: Սուրբ Հոգիի գալուստին հետ առաքեալները իրենց ներսը բացայայտեցին նոր եռանդ, նոր ուժ եւ նոր զօրութիւն, որ կը գործէր իրենց տկարութեան մէջ՝ դրդելով երթալ դաժան հեթանոսական աշխարհ՝ կռապաշտութիւնը կործանելու եւ պատմութիւնը փոխելու համար: Ասիկա Հոգիով լեցուած կեանքի ճշմարիտ յատկանիշ է:

## ՄՇՏԱԿԱՆ ԳԱՐՈՒՆ

*Հոգիով լեցուած կեանքը այնպիսի վերապրում մը չէ, որ պէտք է զարգացնել յատուկ միջավայրին մէջ՝ ջերմոցային շուշաններու պէս: Քրիստոնեաները ծաղիկներ չեն: Սուրբ Հոգին կը դարձնէ հաւատացեալները դիմացկուն՝ բոլոր պայմաններուն համար: Անոնց սրտին մէջ մշտական գարուն կայ, բայց անոնք պատրաստ են «ծմերնային պայմաններու»:*

ԴՈՒՔ ՆՄԱՆ ԶԷՔ ԶԵՐՍՈՅԻՆ ՄԷՋ ԱՃԱԾ ԲՈՅՍԻ, ՈՐ ՄԻԱՅՆ ԿՐՆԱՅ ապրիլ յատուկ պայմաններու մէջ եւ անկարող է ինքնուրոյն գոյատեւել: Հաւատացեալը տնկուած է կենդանի ջուրի աղբիւրներուն քով: Ձեր մէջ մշտական գարուն կայ. ձեր տերեւները չեն թառամիր՝ անկախ արտաքին պայմաններէն եւ միջավայրէն: Անկախ հանգամանքներէն՝ դուք պտուղ պիտի բերէք Աստուծոյ համար (տե՛ս Սաղմ. 1):

## Կրակարան

*Առանց կրակարանի՝ ամենահաճելի տունը կրնայ անցանկալի թուալ ցուրտ ծմրան: Նման վառարանի՝ դուք ստեղծուած էք, որ ջերմութիւն եւ յարմարաւէտութիւն բերէք այս ցուրտ, խաւար եւ չար աշխարհին մէջ: Թող տուէք, որ Աստուծոյ Հոգիին քամին փչէ ձեր ածուխներուն վրայ՝ հեռացնելով անհաւատութեան եւ անյուսութեան փոշին: Երբ աւելցնէք Աստուծոյ Խօսքէն վերցուցած հաւատքի փայտեր ձեր կրակարանին, այն կը վառի Սուրբ Հոգիին կրակով եւ մեծ ջերմութիւն կու տայ:*

ԱՍՏՈՒԾ ՍՏԵՂԾԵՑ ՄԱՐԴՈՒ ՍԻՐՏԸ՝ ՈՐՊԷՍ ԿՐԱԿԱՐԱՆ: ՍԿԻԶԲԸ պէտք է գար «սաստիկ փչող քամին», որպէսզի ամբողջութեամբ քշէր-տանէր մոխիրն ու աղբը, եւ յետոյ միայն՝ կրակը (տե՛ս Գործք 2.1-4): Իրական կրակը ջերմութիւն կ'արծակէ: Ձուկը ունի միեւնոյն ջերմաստիճանը, որ ունի այն ջուրը, ուր այն կը լողայ, եւ որոշ քրիստոնեաներ ճիշդ այդպիսին են: Անոնք ունին այս աշխարհի անաստուած զուարճութիւններու ջերմաստիճանը, եւ կը զարմանան, թէ ինչը իրենց կեանքին մէջ սխալ է: Երբ մեր կրակարան մէջ կրակ կայ, մենք տաք ենք եւ կը փոխենք մեր միջավայրի ջերմաստիճանը:

## ԿՐԱԿԸ ԽՆԴԻՐՆԵՐ ԿԸ ԼՈՒԾԷ

*Սատանան յարմարաւէտ կը զգայ իրեն հոն, ուր մարդիկ հոգեւորապէս պաղ են՝ անկախ այն բանէն, թէ որքան կրօնական են անոնք: Լեցուեցէ՛ք Սուրբ Հոգիին կրակով, եւ այդ ջերմութիւնը պիտի հեռացնէ թշնամին:*

ԿԻՆ ՄԸ ԸՍԱԿ ԻՆԾԻ. «ԻՄ ԳԼՆՈՒՆ ԴԵՒ ՆՍՍԱԾ Է»: «ԴՈՒՔ ԱՍՏՈՒԾՈՅ զաւա՞կ էք», - հարցուցի ես: Ան գլուխով նշան ըրաւ: Ես զարմացած էի: Յանկարծ Սուրբ Հոգին խօսեցաւ հետս, եւ ես հարցուցի անոր. «Դուք գիտէ՞ք, որ ճանձերը կը սիրեն նստիլ պաղ վառարանի վրայ, յաճախ՝ երկար ժամանակ: Լեցուեցէ՛ք Սուրբ Հոգիին կրակով եւ ջերմութեամբ, եւ ձեր խնդիրը դեւերուն հետ յաւիտեան կը լուծուի»: Եթէ ձեր «վա-

ռարանը» տաք է, եւ ինչ որ ճանճ մը մօտենայ ձեզի, այն անմիջապէս պիտի զգայ տաքութիւնը եւ արագօրէն հեռու պիտի փախչի: Փա՛ռք Աստուծոյ, մենք պաշտպանուած ենք «կրակէ պարիսպով»՝ Սուրբ Հոգիին կրակով:

## ԴՈՒՔ ԵՐԲԵՔ ՄԻԱՅՆԱԿ ՉԷՔ

«Եւ հիմա այսպէս կ'ըսէ Տէրը՝ քեզ Ստեղծողը, ո՛վ Յակոբ, եւ քու Արարիչդ, ո՛վ Իսրայէլ. մի՛ վախնար որովհետեւ ես քեզ փրկած եմ, քու անունովդ կանչած եմ, թէ դուն Իմն ես: Երբ որ ջուրերէն անցնիս, ես քու հետդ եմ, եւ եթէ՝ գետերով, անոնք քեզ չեն ողողեր. երբ որ երթաս կրակի մէջէն, չես այրիր, եւ բոցը քեզ պիտի չվառէ, որովհետեւ ես՝ Տէրս, քու Աստուածն եմ, Իսրայէլի Սուրբս քու Փրկիչն եմ...»:

ԵՍԱՅԻԱ 43.1-3

## ԿԱՅՈՒՆՈՒԹԻՒՆԸ՝ ԵՐԱՇԵՆԻՔ

*Աստուած չէ տուած մեզի Իր ներկայութիւնը խմբային ձեւով: Ո՛չ, Անոր ներկայութեան, այսինքն՝ Անոր Սուրբ Հոգիին պարգեւը տրուած է մեզի անձնապէս: Այն ձեզի համար է: Այն ինձի համար է: Այն իւրաքանչիւրիս համար է՝ անհատապէս:*

ԱՍՏՈՒԱԾ ԸՍՍԱԲ. «ԻՆՉՊԵՍ ՈՐ ՄՈՎՍԵՍԻՆ ՀԵՏ ԷԻ, ՔԵԶԻ ՀԵՏ Կ'ՈՒՆԱՍ» (Յեսու 1.5): Գրուած է. «Տէրը Յովսէփին հետ էր» (Ծննդոց 39.2): Այս անհատական հաւաստիացումը կը վերաբերէր ամբողջ Իսրայէլին՝ յաւիտեան: Ան ըսաւ այդ առաջնորդներուն, որ չի ձախողիր իրենց, եւ այդ խոստումը կը վերաբերէր ամբողջ ազգին: Մենք կը կարդանք Աստուածաշունչին մէջ, որ Ան շատ վաղուց խոստացած է մօտ ըլլալ բոլոր հաւատացեալներուն, եւ Անոր խոստումը անորոշ չէ: Ատիկա անձնական երաշխիք է ինձի համար, ձեզի համար եւ Աստուածաշունչի ամէն մէկ ընթերցողին համար:

## ԱՍՏՈՒԱԾ ԱԲԵԼԻ ՄԵ՞Ծ ԶԱՓՈՎ

*Ձեր մէջ կը բնակի ամբողջական Սուրբ Հոգին՝ Իր Անձով եւ գօրութեամբ, ոչ թէ՛ մասնակի Սուրբ Հոգի: Ան ներկայ չէ փոքր չափով: Ձեզի պէտք չէ Աստուած՝ աւելի մեծ չափով, քանի որ Ան ձեր մէջ է՝ ամբողջովին եւ լիարժէք: Պարզապէս անձնատո՛ւր եղէք Անոր, հաւատացէ՛ք, որ Ան իրականութեան մէջ լիարժէքօրէն ձեզի հետ է, եւ դուք պիտի տեսնէք Սուրբ Հոգիին զարմանալի դրսեւորումները ձեր կեանքին մէջ:*

ԱՍՏՈՒԱԾ՝ ԱԲԵԼԻ ՄԵ՞Ծ ԶԱՓՈՎ: ԿԸ ԽՆԴՐԵՄ, ՀԱՍՎՑԷՔ ՀԵՏԵԻԵԱԼԸ. Եթէ մենք ովկիանոսի մէջ ենք, մենք թրջուած ենք, եւ չենք կրնար աւելի շատ թրջուիլ: Մենք թրջուած ենք Հոգիին Խաղաղ ովկիանոսի բոլոր ջուրերով, Հոգիին Ատլանտեան ովկիանոսի բոլոր ջուրերով, ոչ թէ մէկ կաթիլ ջուրով՝ մանկական ջուրի դոլլէն: Այն թրջուածութիւնը՝ այն ջուրը, որ դպած է մեզի, կը գտնուի Աստուծոյ անապի հարստութիւններու մէջ: Մտածեցէ՛ք այս մասին: Պօղոս առաքեալը ըսաւ. «Որովհետեւ մենք ալ ամէնքս մէկ

Հոգիով մկրտուեցանք՝ մէկ մարմին ըլլալու... Եւ ամէնքս մէկ Հոգիէն խմեցինք» (Ա. Կորնթացիս 12.13): Այս իրողութեան հոգեւոր նշանը կրակն է՝ ջերմեռանդութիւնը, իսկ ֆիզիքական նշանը լեզուներով խօսիլն է:

## ԿՐԿՆԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

*Հայրը կը միանայ Որդիին, որպէսզի պատշաճ կերպով հոգ տանի մեր մասին. «Ձեր կեանքը ծածկուած է Քրիստոսին հետ՝ Աստուծոյ մէջ» (Կողոսացիս 3.3): Ես կը սիրեմ մտածել, որ ասիկա նման է անվտանգ սենեակին մէջ ապահով կերպով փակուած ըլլալուն: Մենք կրկնակի ապահովութեան մէջ ենք: Ոչինչ կրնայ բաժնել մեզ:*

ԵՍ Կ'ԱՊՐԻՄ ԱՅՆ ՎՍԱՀՈՒԹԵԱՄԲ, ՈՐ ԼՈՒԱՅՈՒԱԾ ԵՄ ՅԻՍՈՒՄԻ արիւնով, եւ ոչ ոք կրնայ խլել զիս Անոր ձեռքէն (տե՛ս Յովհ. 10.28-30): Սատանան չի կրնար փախցնել իմ անձը: Այն ծածկուած է Քրիստոսին հետ՝ Աստուծոյ մէջ, եւ այն կը կրէ Քրիստոսի արեան կնիքը (տե՛ս Ա. Պետր. 1.18,19): «Ուրա՛խ եղէք... դարձեալ կ'ըսեմ՝ ուրա՛խ եղէք» (Փիլիպպեցիս 4.4):

## ՇՏԿՈՒՄ՝ ԱՂՕԹՔԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

*Թո՛յլ տուէք, որ այս ճշմարտութիւնը խորապէս թափանցէ ձեր անձի մէջ: Թո՛յլ տուէք, որ այն արտացոլուի ձեր կեանքին մէջ, ինչ ալ ընէք, եւ ուր ալ երթաք: Տէրը ձեզի հետ է: Ան երբեք չի ձգեր եւ չի լքեր ձեզ (տե՛ս Եբր. 13.5): Ասիկա ծեծուած կամ խարիզմաթական խօսակցական արտայայտութիւն չէ: Ասիկա հոգեւոր ճշմարտութիւն եւ իրողութիւն է:*

ՄԵՆՔ ՎԱՐԺՈՒԱԾ ԵՆՔ ԱՂՕԹԵԼ, ԻՆՉՊէՍ ՈՐ ԵՍ Կ'ԱՂՕԹԵԻ, ԵՐԲ երիտասարդ էի. «Տէր Յիսո՛ւս, կը խնդրե՛մ, եկո՛ւր մեր քով»: Օր մը արթնցայ եւ հարցուցի ես ինձի. «Ինչպէ՞ս ես կրնամ խնդրել ինչ որ մէկէ մը գալ քովս, եթէ ան խոստացած է, որ երբեք չի ձգեր զիս»: Յիսուս խոստացաւ երբեք չձգել մեզ (տե՛ս Մատթ. 28.20): Մենք պէտք է գիտակցինք, որ Ան մշտապէս մեզի հետ է, եւ փոխենք մեր աղօթքի հին ոճը:



# ԿՐԱԿԷ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ԲԱԺԻՆ 7

ԿՐԱԿԷ ԱՆՏԱՌ.

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ



## ՆՈՐ ԾՆՆՂՈՑ

«Եւ անոնք, որ անոր (Պետրոսի) խօսքը յօժարութեամբ ընդունեցին, մկրտուեցան, եւ այն օրը երեք հազարի չափ հոգիներ աւելցան: Եւ միշտ կը հետեւէին առաքեալներուն վարդապետութեան եւ հաղորդութեան եւ հաց կտրելուն եւ աղօթքներուն: Եւ ամէն անձի վրայ վախ եկաւ. շատ հրաշքներ եւ նշաններ ալ կը գործուէին առաքեալներուն ձեռքով»:

ԳՈՐԾՔ 2.41-43

## ԻՆՉՊԻՍԻ՛ ՊԱՐԳԵԻ

*«Եւ յանկարծ երկինքէն հնչիւն մը եղաւ՝ սաստիկ փշող քամիի պէս...» (Գործք 2.2): Սուրբ Հոգին եկաւ մեծ թափով եւ զօրութեան դրսեւորմամբ: Եկեղեցին ծաղկունք կ'ապրի, երբ կը ծառայէ այս զօրութեամբ, եւ դժոխքի դռները չեն կրնար յաղթել այն:*

ԵՐԲ ԼԻՈՎԻՆ ՀԱՍՎՆԱՔ, ԹԵ ԻՆՉ ԿՐ ՆՇԱՆԱԿԵ ՌԵՆԵՆԱԼ ՍՈՒՐԲ Հոգիով մկրտութիւնը, դուք այլ մարդ պիտի դառնաք: Դուք պիտի միանաք այն բանակին, որ կեցած է Խաչի Խօսքի պարսպակործան մեքենայով եւ կը փոշիացնէ սատանայի ամրութիւնները՝ Աստուծոյ անպարտելի բանակը, որ առջեւ կ'երթայ թմբուկներու որոտալից հարուածներու ներքոյ: Երբ Աստուած լեցուց զիս Իր Հոգիով եւ բացաւ իմ շուրթերը՝ լեզուներով խօսելու համար, Ան բացաւ իմ ականջները՝ լսելու համար փողի յաղթական ձայնը, որ կ'ազդարարէ, որ Յիսուսին կը պատկանի ամբողջ զօրութիւնը երկնքի եւ երկրի վրայ: Ինչպիսի՛ պարգեւ:

## ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՐ

*Առաջին քրիստոնէական համայնքը հանդիսաւոր էր, բայց այն անզօր խումբ մը անաղմուկ հաւաքոյթ մը չէր: Հոն կային մարգարէութիւններ, քարոզներ, փրկութիւններ եւ մկրտութիւններ: Աստուծոյ Հոգին սկսաւ գործել զօրաւոր կերպով, եւ Ան մինչեւ օրս չէ կեցած:*

ՈՐՊԵՄՋԻ ԽՕՍԻՆՔ ԱՆՈՐ ՄԱՍԻՆ, ՄԵՆՔ ՆԱԽ ՊԵՏՔ Է ՀԱՍՎՆԱՆՔ, ԹԵ ով է Ան: Սուրբ Հոգին Պէնտէկոստէի զօրութիւնն է: Ան դրաւ քրիստոնէական եկեղեցւոյ սկիզբը: Մենք կրնանք ճշդօրէն ըսել, թէ երբ եւ ուր ատիկա տեղի ունեցաւ: Ատիկա տեղի ունեցաւ մ.թ. 29 թուականին՝ Պէնտէկոստէ կոչուող ամենամեայ հրէական տօնի ժամանակ, որ տեղի ունեցաւ Քրիստոսի խաչելութենէն 50 օր յետոյ: Այդ առաւօտ Աստուծոյ Հոգին թափեցաւ այս աշխարհ՝ ոչ թէ որպէս հաճելի մթնոլորտ, այլ բառացիօրէն որպէս փոթորիկ (տե՛ս Գործք 2.1-4): Ան յայտարարեց Իր գալուստը հրաշքով. 120 աշակերտներ զօրութիւն ստացան եւ

խօսեցան լեզուներով: Այդ աղմկոտ պորթկույնը յառաջացուց առաջին քրիստոնեական համայնքը:

## ՄՇՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

*Ղուբ չէք կրնար հեռացնել Սուրբ Հոգին եկեղեցիէն: Սուրբ Հոգին կը բնակի. Ան եկած է՝ մնալու համար: Ասիկա Անոր գործն է՝ Անոր յանձնարարականը: Ան մեզի հետ է միշտ, նոյնիսկ՝ երկրի ծայրերը (տե՛ս Գործք 1.8): Ան մեզի հետ է՝ զօրացնելու, խրախուսելու եւ առաջնորդելու համար: Այնպէս չէ, որ մենք քիչ մը կը ստանանք Սուրբ Հոգիէն, ինչ որ բաւական է միայն կարճ ժամանակով, եւ յետոյ կրկին կը վերադառնանք, որպէսզի նոր չափաբաժին ստանանք՝ նման պարբերաբար հանրախաճուրթ երթալուն: Մենք մշտապէս լեցուած ենք:*

ԱՇԿԵՐՏՆԵՐԸ ԱՅԼԵՒ ՉԿԵՐԱԴԱՐՁԱՆ ԿԵՐՆԱՏՈՒՆ՝ ԻՐԵՆՑ վերապրուող կրկնելու համար: Յիսուս ըսաւ աշակերտներուն, որ Ինք կ'երթայ, բայց պիտի ուղարկէ Մխիթարիչը, Որ երբեք չհեռանայ: Յիսուս պէտք է հեռանար, բայց ոչինչ կրնայ ստիպել Սուրբ Հոգին, որ բացակայի մեր կեանքէն: Մշտականութիւնը Հոգիին էական յատկանիշներէն է: Հոգին ԿԸ ԲՆԱԿԻ: Առաջին Յովհաննէս 2.27-ին մէջ գրուած է, որ օծութիւնը «կը բնակի»: «Բնակիլ» բառը (յունարէն՝ «մենօ») Յովհաննէսի ամենասիրելի բառն է: Այն կ'օգտագործուի 120 անգամ Նոր կտակարանին մէջ, որոնցմէ 63-ը կը պատկանի Յովհաննէսի գրիչին: Ան կ'օգտագործուի այն 38 անգամ իր Աւետարանին մէջ եւ 25 անգամ՝ իր նամակներուն մէջ: Ասիկա միայն մէկն է այն միջոցներէն, որոնցմով Յովհաննէսը կ'ընդգծէ Աստուծոյ օրհնութեան, զօրութեան եւ օծութեան շարունակական բնոյթը: Ան կ'օգտագործէ նաեւ այլ միջոցներ: Ան կը խուսափի այնպիսի բառերէ, որոնք կրնան ենթադրել, որ Աստուծոյ գործերը աւարտած են, վերջացած են կամ ընդհատուած են անցեալի մէջ ինչ որ պահէ մը: Ան մշտապէս կը ներկայացնէ Աստուծոյ գործը շարունակական ձեւով:

## ԱՆՏՈՒՆ

*Առանց եկեղեցւոյ՝ Սուրբ Հոգին անտուն է: Ան նման է Նոյի աղանիհին, որ չգտաւ հանգիստի վայր տապանէն դուրս: Առանց Աստուծոյ Հոգիին՝ եկեղեցին դամբարան է: Բայց Սուրբ Հոգիին հետ եկեղեցին կը դառնայ զօրաւոր ամրոց: Այդ ժամանակ մենք նուաճումներ կ'ունենանք, եւ մենք չենք նուաճուիր:*

«ՅԻՍՈՒՄՆ ԱԼ ԸՍԱԿ ԱՆՈՐ. «ԱՐՈՒԷՄՆԵՐԸ ՈՐՋԵՐ ՈՒՆԻՆ, ԵՒ ԵՐԿՆՔԻ թռչունները՝ բոյներ, բայց մարդու Որդին տեղ չունի, որ Իր գլուխը դնէ» (Մատթէոս 8.20): Երբ Յիսուս այս երկրին վրայ էր, Ան առաքելութիւն ունեցող մարդ էր եւ չէր հաւակներ որեւէ բնակութեան վայրի: Բայց Սուրբ Հոգիին միջոցով Ան կու գայ, որ բնակի մեզի հետ (տե՛ս Յովհ. 14.23): Յօժար սրտերը եւ մտքերը Աստուծոյ ատելին կու տան, քան հարթակ՝ Իր նպատակները իրագործելու համար. անոնք Սուրբ Հոգիին կու տան տուն՝ այս երկրի վրայ: Աստուած կը ցանկայ բնակիլ ձեր կեանքին մէջ: Ինչպէս որ երկինքն է, այնպէս ալ պէտք է ըլլայ ձեր կեանքին մէջ (տե՛ս Մատթ. 6.9-13): Աստուած կը ցանկայ, որ ձեր կեանքը ըլլայ մխիթարութեան, ուրախութեան, խաղաղութեան եւ երջանկութեան վայր:

## ԱՆՓՈՓՈՒՆ ՎԵՐԱՓՈՒՆՈՂԸ

«Եւ Պետրոսի եւ Յովհաննէսի համարձակութիւնը տեսնելով եւ գիտնալով, որ տգէտ եւ առանց ուսմունքի մարդիկ են՝ կը զարմանային: Միայն կը ճանչնային զանոնք, որ Յիսուսին հետ էին»:

ԳՈՐԾՔ 4.13

## ՄԵԶԻ ՊԷՍ ԿԻՐՔԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԻԿ

*Արբահամ, Մովսէս, Յեսու, Ղերօրա, Եղիա եւ Եղիսէ. այս անունները երկիրաձուլութիւն կը ներշնչեն, բայց անոնք մեզի պէս կիրքեր ունեցող մարդիկ էին (տե՛ս Յակոբ. 5.17): Նոյն Հոգին, որ անոնց վրայ էր, մեր մէջ է: Մենք չստացանք երկրորդական Հոգի կամ վերապրում, եւ մենք պէտք չէ ակնկալենք երկրորդական արդիւնքներ:*

ՀՈԳԻՈՎ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ Կ'ՕԺՏԷ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒՆ ՄԱՐԳԱՐԷՆԵՐՈՒ Հոգիով: Երբ մարգարէները գերբնականօրէն վերապրեցան Աստուծոյ, անոնք անուանեցին Անոր Մարգարէներու Հոգի: Յովէլ 2.28-ը կը խոստանայ, որ նոյն Մարգարէներու Հոգին պիտի թափի ամէն մարմինի վրայ: Պիտի մարգարէանան բոլորը, ոչ թէ միայն յատուկ եւ եզակի մարդիկ: Աւելին՝ այս թափումը նախատեսուած չէր ըլլար մէկ անգամուան առաջադրանքի համար, այլ որպէս Քրիստոսի մշտական պարգէւ՝ իւրաքանչիւրի համար: Պէնտէկոստէի օրը, ինչպէս որ գրուած է Գործք առաքելոցին մէջ, «...ինչին մը եղաւ՝ սաստիկ փչող քամիի պէս, եւ լեցուց ամբողջ տունը, ուր նստած էին... եւ... բաժնուած լեզուներ՝ ինչպէս կրակէ, եւ նստաւ անոնցմէ ամէն մէկուն վրայ»: Բոլորը խօսեցան նոր լեզուներով՝ «Աստուծոյ մեծամեծ բաներուն» մասին: Յովէլի մարգարէութիւնը այն էր, որ պիտի մարգարէանան թէ՛ երիտասարդները, թէ՛ ծերերը: Պետրոսը յայտարարեց. «Ասիկա Յովէլ մարգարէի ծեռքով ըսուածն է»: ան մարգարէութիւն անուանեց նոր լեզուները (տե՛ս Գործք 2.15-17): Մարգարէութիւնը կը նշանակէ խօսիլ Աստուծոյ զօրութեան ներքոյ, եւ մենք կը տեսնենք ասիկա այս վերջին օրերուն մէջ, քանի որ մենք օժտուած ենք նոյն Հոգիով, որ հին ժամանակներու մարգարէներու վրայ էր:

## ՎԵՐԱՓՈԽՈՂ ԶՕՐՈՒԹԻՒՆ

*Սուրբ Հոգիին վերափոխող զօրութիւնը անվիճարկելի է: Ձկնորսները եւ գեղջուկները դարձան մեծ առաքեալներ. թոյլ եւ անվճռական մարդիկ դարձան ուժեղ եւ ազդեցիկ: Անոնք դարձան առաջնորդներ Աստուծոյ Թագաւորութեան մէջ՝ ցրելով այս աշխարհի խաւարը Աւետարանի կրակով:*

ԴՈՒՔ ՊԻՏԻ ՄՏԱԾԷՔ, ՈՐ ԱՏԻԿԱ ԱՆԿԱՐԵԼԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ԷՐ. խումբ մը ձկնորսներու յանձնարարուեցաւ փոխել այս աշխարհը: Այնուամենայնիւ, այդ անուս եւ անյայտ մարդիկ յառաջխաղացում ունեցան՝ նոր գաղտնիքով մը: Աստուած անձամբ կը գործէր անոնց հետ՝ հրաշքներով եւ նշաններով: Աւելին՝ Ան կը համակէր անոնց պարզ խօսքերը համոզուածութեամբ եւ կ'ուղղորդէր ատոնք դէպի ունկնդիրներու սրտերը՝ նոյնքան անսխալական եւ հզօր ձեւով, որքան Դաւիթի քարը՝ Գողիաթի գլխուն: Թէեւ անոնք չունէին տպաւորիչ տաղանդներ, Աստուծոյ Հոգին կ'օժտէր զանոնք Իր շնորհքով: Անոնց «գաղտնիքը» պարզ էր. այն Սուրբ Հոգին էր:

## ՄԵԶՄԷ ԼԱՒԱԳՈՅՆՆԵՐՈՒ ԵՒ ՎԱՏԱԳՈՅՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

*Սուրբ Հոգին չ'ընտրեր ուժեղ եւ ընդունակ մարդիկ, թէեւ Ան չ'անտեսեր ալ զանոնք: Այնուամենայնիւ, Անոր գլխաւոր նպատակն է՝ զօրացնել տկարներն ու կարիքաւորները: Անոնց տկարութիւնը կը գրաւէ Անոր զօրութիւնը, ինքնաբաւ բնութիւնը եւ կենսատու ուժը: Ան կու գայ մեզմէ լաւագոյններու եւ վատագոյններու համար՝ որպէս Հօր Խոստում՝ ուղարկուած Որդիին կողմէ: Նայեցէ՛ք Պետրոս առաքեալի կեանքին:*

ՊԵՏՐՈՍ ՈՒՐԱՅԱՒ ՅԻՍՈՒՍԸ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ՝ ԿԱՆԳԱԾ ԿՐԱԿԻ քով, այն գիշերը, երբ Յիսուս ձերբակալուեցաւ (տե՛ս Մարկ. 14.66-72): Հարցումները իր ինքնութեան մասին զարմանքի բերին զինք, եւ ան անհեթեթ կերպով ուրացաւ իր Տիրոջը՝ Յիսուսին: Արցունքները կը թափուէին անոր խռնուած մօրուքին վրայ, եւ երբ Յիսուս լուռ նայեցաւ անոր, ապաշխարութիւնը սկսաւ հալեցնել անոր սիրտը: Բայց ահա, թէ ինչ կատարուեցաւ Պետրոսին հետ Պէնտէկոստէի օրը: Այդ օրը ան դարձաւ Գառնուկի առաքեալներուն խօսնակը եւ 3.000 մարդ առաջնորդեց դէպի Տէրը (տե՛ս Գործք 2): Աստուած այդպէս կը զօրացնէ ամենաթշուառ մարդիկ:



## ՕԺՏՈՒԱԾ ԵԿԵՂԵՑԻ

«Պարզեւները զանազան են, բայց Հոգին նոյնն է: Եւ պաշտօնները զանազան են, բայց Տէրը նոյնն է: Եւ ներգործութիւնները զանազան են, բայց Աստուած նոյնն է, որ ամէնը ամէնուն մէջ կը ներգործէ: Բայց ամէն մէկուն տրուած է Հոգիին յայտնութիւնը՝ օգուտի համար... Ինչպէս ալ մարմինը մէկ է եւ անդամներ շատ ունի, եւ մէկ մարմինի բոլոր անդամները, շատ ըլլալով, մարմինը մէկ է, այսպէս ալ՝ Քրիստոսը... Արդ դուք Քրիստոսի մարմինն էք, եւ մէկ-մէկ՝ Անոր անդամներ»:

Ա. ԿՈՐՆԹԱՑԻՍ 12.4-7,12,27

## ՎԱՌՈՂ ՄՈՐԵՆԻՆ

*Նոյնիսկ ամենամեկուսի եւ ամենաչոր անապատին մէջ վառող մորենին հրաշալի է. այն լեցուն է գորութեամբ եւ յոյս կը ներշնչէ: Աստուած որոշած է, որ մեր եկեղեցիները ըլլան վառող մորենիներ, որոնց միջէն Ինք կը խօսի: Վառող մորենի տեսնելով՝ եկեղեցւոյ մարդիկ պիտի լսեն եւ պիտի հասկնան Աստուծոյ ծայնը: Մեզի պէտք է վառող մորենիներու ամբողջ անտառ մը:*

ՄԵՆՔ ՄՈՐԵՆԻՆԵՐ ԵՆՔ, ՈՐՈՆՔ ԿԸ ՎԱՌԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌՔՈՎ Եւ Սուրբ Հոգիին կրակով, ոչ թէ թառամած եղէգներ՝ աղտոտ ճահճուտի մէջ, որոնք թուլցած են, թաց են եւ չեն կրնար վառիլ: Երբ Մովսէսը հանդիպեցաւ վառող մորենիին, անոր կեանքը վերափոխուեցաւ: Այդ անյոյս, թափառական եւ աննպատակ մարդը Աստուծոյ նպատակ ստացաւ, որ փոխեց անոր կեանքը, անոր ընթացքը եւ անոր ժողովուրդը: Մարդ մը, որ կը պահուըտէր օրէնքէն, գորութիւն ստացաւ՝ վերադառնալու արդարութեան գաւազանով, որպէսզի ազատէր ստրկութեան մէջ գտնուող մարդիկը: Աստուծոյ կամքն է, որ մեր եկեղեցիները ըլլան վառող մորենիներ, որոնց մէջէն Ան կը խօսի զրկուած, անյոյս, մոռցուած եւ լքուած մարդոց՝ անոնց կեանքի նպատակ եւ ապրելու պատճառ տալու համար:

## ԱՂՕԹՔԻ ԵԼԵԿՏՐՈՎԿԱՅԱՆ

*Ծածուկ աղօթքը գորութեան գաղտնիքն է: Աղօթքի սենեակը Հոգիին ելեկտրակայանն է: Այնուամենայնիւ, Աստուած կը կամենայ աւելին: Ան կը կամենայ, որ Իր տունը ըլլայ աղօթքի տուն՝ ազգերու համար (տե՛ս Եսայիա 56.7): Թո՛ղ տուէք, որ աղօթքը երթայ դէպի ազգերը եւ բարձրանայ ազգերու համար, եւ թո՛ղ տուէք, որ աղօթքի բժշկարար ջուրերը հեղեղեն ամբողջ երկիրը:*

ՅԻՍՈՒՄ ԸՍԱԲ. «ԲԱՅՅ ԴՈՒՆ, ԵՐԲ ՈՐ ԱՂՕԹՔ ԸՆԵՍ, ՄՏԻՐ ՔՈՒ ՍԵՆԵԱԿՆ Եւ դուռդ փակած աղօթք ըրէ դէպի քու Հայրդ, որ ծածուկ

կի մէջ է» (Մատթէոս 6.6): Փակեցէ՛ք ձեր աղօթքի սենեակի դուռը, եւ Երկնքի դուռը պիտի բացուի: Երբ աշակերտները Վերնատունն էին, փառքի պատուհանները բացուեցան, եւ Սուրբ Հոգին անձրեւի նման թափեցաւ անոնց վրայ (տե՛ս Գործք 2): Սատանան պիտի փորձէ խանգարել ձեզ, որ չաղօթէք, քանի որ աղօթքը կը կանգնեցնէ զինք: Նման աղօթքասենեակ-վերնատուներ կան ամբողջ աշխարհին մէջ: Ատոնք կը գտնուին եկեղեցիներուն, համալսարաններուն եւ նոյնիսկ կառավարական գրասենեակներուն մէջ: Ատոնք սովորական վայրեր են՝ լեցուած Աւետարանով եւ Հոգիով լեցուն քրիստոնէաներով: Աղօթքի սենեակը նման է ելեկտրակայանի: Այսօր «Անդադար աղօթեցէ՛ք» (Ա. Թեսաղոնիկեցիս 5.17):

## ԵԿԵՂԵՑԻՆ Ի՞ՆՉ ՉԷ

*Նշաններէն, հրաշքներէն, նոր լեզուներէն եւ բժշկութիւններէն շատ աւելի առաջնահերթ է Աստուծոյ Խօսքի քարոզումը եւ ուսուցումը: Հրաշքները միայն կ'օժանդակեն ճշմարտութեան:*

ԱՄԷՆ ՄԵԿ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԳԼԽԱԲՈՐ ՆՊԱՏԱԿԸ ՊԷՏՔ Է ըլլայ աւետարանչութիւնը: Ինչո՞ւ բոլոր հաւաքոյթները պէտք չէ բաց ըլլան դուրսի մարդոց համար, յատկապէս՝ Սուրբ Հաղորդութեան հաւաքոյթները, որոնց մէջ կ'ընդունուին հացի եւ զինիի խորհուրդները: Ինչպիսի՛ փայլուն հնարաւորութիւն՝ նախ՝ փրկութեան մասին քարոզելու համար: Կարմիր գինիին բաժակը աշխարհի մեծագոյն քարոզիչն է՝ մեղաւորներուն իրենց մեղքի մէջ յանդիմանելու համար: Այն Աւետարանն է՝ բաժակի մէջ. այն հնարաւորութիւն է՝ կոչ ընելու կորսուած մեղաւորներուն ընդունիլ խաչի զոհը: Մի՞թէ միայն մաքուրները պէտք է մօտենան աղբիւրին:

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ՊԱՐԳԵՒՆԵՐՈ

### ՄԻԱՅՆ ԱՆՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՐ ԵՆ

*Հոգիին պարգևները չեն տրուած մեզի, որ խաղանք զօրութեան հետ: Աստուծոյ զօրութիւնը կը պատրաստէ մեզ ԻՐ նպատակներուն համար, ոչ թէ՛ ՄԵՐ. «Դուն ստեղծեցիր բոլոր բաները, եւ Քու կամքովդ կան եւ ստեղծուեցան» (Յայտնութիւն 4.11): Ինչպիսի՛ պատիւ է կանչուած ըլլալ՝ կառուցելու համար Աստուծոյ յաւիտենական Թագաւորութիւնը: Մեր մահկանացու ծեռքերը կրնան կառուցել Անոր յաւիտենական Թագաւորութիւնը այս երկրին վրայ: Չկայ ատելի մեծ բան:*

ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԿԱՆ ԺճՊՈՒՆԸ ԵՂԱԾ Է ԵԿԵՂԵՍՈՅ ԱՄՆԵՆԱՍԿԻՉԲԷՆ: Յակոբոսը եւ Յովհաննէսը՝ տասներկու աշակերտներէն երկուքը, խնդրեցին Յիսուսէն. «Տո՛ւր մեզի, որ մէկը աջ կողմդ եւ միւսը ձախ կողմդ նստինք Քու փառքիդ մէջ» (Մարկոս 10.37): Յիսուսին արծագանգը քաղաքավար էր, բայց խիստ. «Նոյնիսկ եթէ դուք կրնաք խմել Իմ բաժակը, եւ անկասկած պիտի խմէք այն, Ես չեմ կրնար շնորհել այն, ինչ որ կը խնդրէք» (Մարկոս 10.39,40): Ամբողջ պատմութեան ընթացքին մարդիկ պայքարած են իշխանութեան, քաղաքական ազդեցութեան եւ տարածքներու համար: Իրենց հերթին, հաւատացեալները պայքարած են, որպէսզի դիրք ունենան եկեղեցւոյ մէջ՝ ցանկալով կառուցել իրենց թագաւորութիւնը եւ կատարել իրենց ծրագիրները: Սակայն գոյութիւն ունի միայն մէկ բան, ինչ որ կարելի է. Աստուծոյ նպատակը: Յոյսով եմ՝ մենք կրնանք նուիրել մեզ, մեր տաղանդները եւ հաւակնութիւնները Աստուծոյ Թագաւորութեան կառուցման: Ի վերջոյ, մենք «Անոր ստեղծածն ենք՝ Քրիստոս Յիսուսով հաստատուած բարի գործերու համար...» (Եփեսացի 2.10):

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ Է

*Չկայ նոյնիսկ երկու մարդ, որոնք կը գործեն Սուրբ Հոգիով միեւնոյն կերպով: Նոյնպէս չկայ երկու միանման եկեղեցի: Միաբանութիւնը չի նշանակեր միատեսակութիւն, եւ մէկութիւնը չի նշանակեր նոյնութիւն:*

ՏԱՐԲԵՐԻԼԸ ՄԵՂՔ ԶԷ: «ՕԳՈՒՏԻ ՀԱՄԱՐ» ԱՐՏԱՅԱՅՏՏՈՒԹԻՒՆԸ Ա. Կորնթացիս 12.7-ին մէջ յունարէն «սիմֆերոն» բառն է, որմէ յառաջացած է «սիմֆոնիա» բառը: Սուրբ Հոգին ստեղծագործող է, Որ, որպէս խմբավար, կը ղեկավարէ Իր իսկ ստեղծագործութիւնը՝ հասնելով ձայնակարգութեան եւ ներդաշնակութեան՝ բազմաթիւ միակցուած թեմաներու եւ երաժշտական գործիքներու միջոցով: Ան կարիք չունի, եւ ոչ ալ կը ցանկայ, որ բոլորը նուազեն միեւնոյն մեղեդին: «Պարգեւները զանազան են, բայց Հոգին նոյնն է: Եւ պաշտօնները զանազան են, բայց Տէրը նոյնն է: Եւ ներգործութիւնները զանազան են, բայց Աստուած նոյնն է, որ ամէնը ամէնուն մէջ կը ներգործէ» (Ա. Կորնթացիս 12.4-6):

## ԶՕՐԱՑԱԾ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ

«Որովհետեւ միտքս չէի դրած ուրիշ բան մը գիտնալ ձեր մէջ, բայց միայն Յիսուս Քրիստոսին, եւ այն ալ՝ խաչուածին: Եւ ես տկարութեամբ ու վախով եւ շատ դողով եղայ ձեր քով: Եւ իմ խօսքը եւ քարոզութիւնը ոչ թէ մարդկային իմաստութեան պատիր խօսքերով եղաւ, այլ՝ Հոգիին եւ զօրութեան ապացուցմամբ, որ ձեր հաւատքը մարդոց իմաստութեամբ չըլլայ, այլ՝ Աստուծոյ զօրութեամբ»:

Ա. ԿՈՐՆԹԱՑԻՍ 2.2-5

## ԼԵՑՈՒԱԾ ԵՌԱՆԴՈՎ

*Քրիստոնեաները երբեք պետք չէ պայքարելին այս աշխարհին, մարմինին եւ սատանային դէմ միայն իրենց բնական միջոցներով եւ մտքով, անկախ այն բանէն՝ անոնք կ'ապրին առաջի՞ն, թէ՞ 21-րդ դարի մէջ: Աւետարանը «Աստուծոյ զօրութիւնն» է (ՀՈՈՎՄԱՅԵՑԻՍ 1.16): Սուրբ Հոգին կու տայ մեզի այն զօրութիւնը, որուն կարիքը մենք ունինք, բայց ոչ այն ժամանակ, երբ մենք կ'անտեսենք Զինք:*

ՈՐՔԱՆ ՔԱՐՈՋՆԵՐ ԱՅՍՕՐ ԱՅՆՊԵՍ ԿՐ ՀՆՉԵՆ, ըսես քարոզիչը նոր վերադարձած է Վերնատունէն, ուր ան առաքելներուն հետ էր: Որքա՞ն քարոզներ այսօր այնպէս կը հնչեն, ըսես Աւետարանը իրականութեան մէջ Աստուծոյ զօրութիւնն է: Յաճախ ծառայողները կը քարոզեն իրենց համայնքներուն բժիշկներու պէս՝ առանց եռանդի, Սուրբ Հոգիին գործելու ոչ մէկ հնարաւորութիւն տալով: Քրիստոնէական առաքելութիւնը չի կրնար իրականանալ առանց Հոգիին օծութեան: Մեր հրահանգն է. «Լեցուեցէ ք Հոգիով» (Եփեսացիս 5.18): Նպատակաւորութեամբ ըլլալը ատոր մէկ մասն է, բայց Նոր կտակարանի նմուշը Հոգիով ուղղորդուած ըլլալն է: Ան մեզ խթանող եւ մեր շարժիչ ուժն է:

## «ԱՆՈՆՔ ԿՐ ՀԵՏԵԻԻՆ...»

*Եթէ մենք կը ցանկանք ունենալ Նոր կտակարանի պայմանները, պետք է ուսումնասիրենք Նոր կտակարանի նմուշը, որպէսզի գիտնանք, թէ ինչ ակնկալենք: Եթէ մենք վարդապետներու պէս, պիտի ստանանք անոնց արդիւնքները: Եթէ մենք քարոզենք իրական Աւետարանը, պիտի ստանանք իրական արդիւնքներ:*

«ԵՒ ՄԻՇՏ ԿՐ ՀԵՏԵԻԻՆ ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ հաղորդութեան եւ հաց կտրելուն եւ աղօթքներուն: Եւ ամէն անձի վրայ վախ եկաւ. շատ հրաշքներ ու նշաններ ալ կը գործուէին առաքելներուն ձեռքով... եւ Տէրը ամէն օր փրկուածներուն թիւը կ'աւելցնէր եկեղեցւոյ հետ» (Գործք 2.42,43,47): Մարդիկ կ'աղօթեն. «Տէ՛ր, կրկի՛ն ըրէ ատիկա»: Բայց ճիշդ մենք պետք է *կրկին* ընենք այն, ինչ որ կ'ընէին

Առաջին եկեղեցւոյ քրիստոնեաները. անոնք անդադար կը վկայէին (տե՛ս Գործք 5.42): Անոնք կը քարոզէին, կը վկայէին եւ կը գործէին այնպէս, ըսես ամէն ինչ կախուած էր իրենցմէ, սակայն կ'աղօթէին այնպէս, ըսես ամէն ինչ կախուած էր Աստուծմէ: Անոնք կախուած էին Աստուծմէ, եւ Աստուած կախուած էր անոնցմէ: Երանի՛ Աստուած կարենար կախուած ըլլալ ձեզմէ եւ ինձմէ, որ մենք յարատեւէինք նոյն բաներուն մէջ՝ որ հաւատարիմ ըլլայինք քարոզելու, սորվեցնելու եւ վկայելու մէջ:

## ԱՆՍԱՀՄԱՆ ՅԻՍՈՒՍ.

### ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀՐԱՇՔՆԵՐ

*Հռչակումը կը նախորդէ հաստատման: Եթէ քարոզէք սահմանափակ Յիսուս, Ան չի կրնար լիարժէք գործել: Ան չի փրկէր, քանի որ տակաւին չէք քարոզած Փրկիչին մասին: Ան չի բժշկէր, քանի որ տակաւին չէք քարոզած Բժշկողի մասին: Ան կ'օրհնէ, եթէ դուք քարոզէք Օրհնողի մասին: Սուրբ Հոգին կը հաստատէ Աստուծոյ Խօսքը (տե՛ս Մարկ. 16.20), ոչ թէ մեր անհատականութիւնը կամ «ես»-ը:*

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՄԻԱՅՆ ԿՐՆԱՅ ՕՐՀՆԵԼ ԱՅՆ, ԻՆՉ ՈՐ ԴՈՒՔ Կ'ԸՍԵՔ Յիսուսի մասին: Հոգին չի կրնար օրհնել այն, ինչ որ դուք չէք ըսեր Անոր մասին: Եթէ «այս Յիսուսը»՝ «այն Յիսուսը, որ կը քարոզէ Պօղոսը», քարոզուի հիմա, Աստուծոյ Հոգին կը հաստատէ այդ խօսքերը (տե՛ս Գործք 1.11, 19.13): Քանի՞ հոգի մեղաւոր են մեր թանկ Տէրը զրկելու մէջ: Քանի մը հոգի զրկեցին Ձինք հագուստէն՝ խաչելու համար, իսկ անհաւատութիւնը կը զրկէ Ձինք Իր զօրութենէն: Շատ եկեղեցիներու մէջ Ան այլեւս չունի փրկելու եւ բժշկելու զօրութիւն: Եթէ օգտագործենք Պօղոսի արտայայտութիւնը, Ան «կը նեղուի» մեր կեանքին մէջ, ինչ կը նշանակէ, որ Ան «սահմանափակուած է՝ չունենալով զործելու հնարաւորութիւն» (Բ. Կորնթացիս 6.12)՝ պաղ, քարացած անհաւատութեան պատճառով: Կրկին, Մարկոս 16.20-ին մէջ գրուած է. «Անոնք ալ դուրս գացին, ամէն տեղ կը քարոզէին, եւ Տէրը կը գործակցէր անոնց հետ, եւ Խօսքը կը հաստատէր այն նշաններով, որ կը հետեւէին»: Անոնք կը քարոզէին, եւ Տէրը կը հաստատէր: Հռչակումը կը նախորդէ հաստատման:



# ԱՆՈՐ ՆԵՐՔՆԱԿՈՒՈՂ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ

«Զօրացէ՛ք եւ քա՛ջ եղէք, մի՛ վախնաք եւ անոնց  
երեսէն մի՛ զարհուրիք, որովհետեւ քու Տէր Աս-  
տուածդ Ինքը քեզի հետ կ'երթայ. Ան քեզ չի ձգեր  
եւ քեզ չի լքեր»:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 31.6

## ԻՄՍԱՆՈՒԷԼ՝ ԱՍՏՈՒԹՄԵՋԻ ՀԵՏ

*Աստուծոյ ներկայութիւնը չի տատանուիր. այն չի գար եւ երթար: Նոր կտակարանին մէջ ոչինչ կ'ակնարկէ այս մասին: Աստուածաշունչի ամբողջ շեշտադրումը Անոր մշտական ներկայութեան վրայ է: Նոյնիսկ Աստուծոյ անուններէն մէկն է «Եահուէի Շամմա»՝ «Տէրը ներկայ է» (Եզեկիէլ 48.35): Աստուած մեզի հետ է՝ այնպէս, ինչպէս որ միշտ եղած է եւ միշտ պիտի ըլլայ:*

ՄԱՐԳԱՐԷԱՆԱՆՈՎ ՅԻՍՈՒՄԻ ԾՆՆԴԵԱՆ ՄԱՍԻՆ՝ ԱՍՏՈՒԹՄԱՇՈՒՄՁԸ կ'օգտագործէ «Էմմանուէլ՝ Աստուած մեզի հետ» անունը (Մատթէոս 1.23): Աստուածաշունչը բազմաթիւ ձեւերով կը հաւաստիացնէ մեզ Աստուծոյ ներկայութեան մասին: Աստուած երբեք միայնակ չի ձգեր մեզ. «Թէեւ երթամ մահուան շուքի ծորով, չար բանէ չեմ վախնար, որովհետեւ Դուն ինձի հետ ես...» (Սաղմոս 23.4): «Տէրը Իր մեծ անուան համար Իր ժողովուրդը չի ձգեր, որովհետեւ Տէրը ուզեց, որ ձեզ Իրեն համար ժողովուրդ ընէ» (Ա. Թագաւորաց 12.22): Տէրը ըսաւ Մովսէսին. «Ես քեզի հետ կ'ըլլամ», եւ Յեսուին. «Ինչպէս որ Մովսէսին հետ էի, քեզի հետ պիտի ըլլամ. քեզ չեմ ձգեր եւ անտես չեմ ըներ» (Ելից 3.12, Յեսու 1.5): Սաղմոս 146.6-ը կը յայտարարէ, որ Ան «հաւատարմութիւն կը պահէ յաւիտեան»: Տէրը հաւատարիմ է մեզի:

## ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ

*Մենք յատուկ ենք. մենք կրնանք մտերիմ եւ անձնական հաղորդակցութիւն ունենալ երկնքի եւ երկրի Արարիչի եւ Տիրոջ հետ: Սուրբ Հոգիին միջոցով մենք կը հաղորդակցինք Հօր եւ Անոր Որդի Յիսուս Քրիստոսին հետ: Ասիկա քրիստոնէական հաւատքի երանութիւնն է: Այլեւ ոչ մէկ Աստուածութիւն կամ Աստուած կ'առաջարկէ նման մտերմութիւն: Մենք սիրուած ենք:*

ՅԻՍՈՒՄ ԽՈՍՏԱՑԱԲ, ՈՐ ՄԻՇՏ ՄԵՋԻ ՀԵՏ Կ'ԸՆԼԱՅ: ԻՆՉՊԷ՞Ս ԱՏԻԿԱ տեղի կ'ունենայ: Անոր ներկայութիւնը հաղորդակցութիւն է: Աստուածաբանները կ'օգտագործեն «Աստուածային ներյատկութիւն» թերմինը,

սակայն Յիսուս այդպիսի բան չէ խոստացած: «Ներյատկութիւնը» կ'ենթադրէ, որ Աստուած կը լեցնէ Իրմով այս աշխարհը՝ մթնոլորտի պէս, որուն միջոցով կը համակուի ամբողջ մոլորակը, սակայն Աստուած մթնոլորտ չէ: Աստուածաշունչը կը խօսի Անոր հետ հաղորդակցութեան մասին: Մենք չենք կրնար հաղորդակցիլ մթնոլորտի հետ: Քրիստոնէաները ունին հաղորդութեան ծառայութիւն, որուն մէջ մենք կը բաժնեկցինք Անոր կեանքին հետ: Ասիկա այն հրաշալի անձնական մտերմութեան օրինակն է, որ գոյութիւն ունի Արարիչի եւ Անոր արարածներուն միջեւ: Ասիկա երկնքի եւ երկրի Տիրոջ եզակի առանձնայատկութիւնն է: Ասիկա անհնար է ոեւէ անձնաւորութեան համար՝ բացի միակ ճշմարիտ Աստուծմէ, եւ չկան այլ աստուածներ՝ Անորմէ բացի: Աստուած իւրայատուկ է այն բանով, որ մօտ է իւրաքանչիւրին (տե՛ս Եբր. 13.5):

## ԵՍ ԱՅՆՏԵՂ ԵՍ

*Աստուած ներկայ չէ ընդհանուր իմաստով. Անոր ներկայութիւնը չի վերաբերիր ընդհանուր առմամբ՝ բոլորին, բայց մասնաւորապէս՝ ոչ ոքի: Ան հաւասարաչափ կերպով բաժնուած չէ բոլոր մարդոց միջեւ: Անոր ներկայութիւնը չ'որոշուիր մեր կարելորութեամբ: Ան լիարժէք կերպով ներկայ է թէ՛ մեզմէ ամէն մէկուն կեանքին մէջ, թէ՛ այն ժամանակ, երբ մենք կը հաւաքուինք: Մենք չենք յառաջացներ կամ գրաւեր Անոր ներկայութիւնը: Ան արդէն իսկ Ներկայ է. Ան «Ես Եմ»-ն է:*

ՔՐԻՍՏՈՍ ԸՍԱԿ. «ՈՐՈՎՎԵՏԵՒ ՈՒՐ ՈՐ ԵՐԿՈՒ ԿԱՄ ԵՐԵՔ ՀՈԳԻ ԻՍ անունով հաւաքուած ըլլան, Ես այնտեղ անոնց մէջ եմ» (Մատթէոս 18.20): Ան չըսաւ. «Ես պիտի գամ», այլ՝ «Ես այնտեղ եմ»: Այն, թէ ինչպէս մեր Աստուած կը միանայ մեր հաւաքոյթներուն, անոր փառաւոր առեղծուածներէն մէկն է: Մենք չենք յառաջացներ կամ գրաւեր Անոր ներկայութիւնը, երբ միասին կը հաւաքուինք: Ան չի գար, քանի որ մենք հաւաքուած ենք: ՄԵՆՔ կու գանք, քանի որ Ան այդտեղ է: «Անորն է ժողովուրդներու հնազանդութիւնը (կամ՝ հաւաքուիլը)» (Ծննդոց 49.10): «Երկուքը կամ երեքը» կը նշանակէ ոեւէ երկու կամ երեք հաւատացեալ, որոնք հաւաքուած են Անոր անունով: Այդ հաւաքոյթը կրնայ բաղկացած ըլլալ ընտանիքէ, եւ նոյնիսկ միայն անու-

սինէ ու կնոջմէ: Ան չի հեռանար ընտանեկան միջավայրէն: Ընտանիքի մտահոգութիւնները Անոր մտահոգութիւններն են: Առաջին անգամ Քրիստոս ընտանիք եկաւ՝ Մարիամի եւ Յովսէփի ընտանիքը:

## ԼԻՈՎԻՆ ՆԵՐԿԱՅ

*Աստուած մեզի հետ է Իր լիութեամբ, ոչ թէ ինչ որ չափով: Աստուծոյ Հոգին չի հեռանար, ետ չի քաշուիր, չի շոգիանար, չի պակսիր եւ չի սպառիր: Ան կը բնակի (տե՛ս Ա. Յովհ. 4. 15):*

ԱՍՏՈՒԾՈՅ ՀՈԳԻՆ ՉԻ ԳԱՐ ԱՅՆՊԷՍ, ԻՆՉՊԷՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ համայնքը՝ կիրակնօրեայ հաւաքոյթին: Ան չի սպասեր, մինչեւ որ մենք պատրաստուինք Անոր ներկայութեան պատշաճ երգերով: Կարիք չկայ, որ աղօթենք Աստուծոյ ներկայութեան համար, քանի որ Ան ՄՇՏԱՊԷՍ ներկայ է: Ան լիովին ներկայ է: Ան երբեք կախուածութեան մէջ չէր դնէր ԻՐ փրկարար աշխատանքը մեր զգացմունքային վիճակէն, որ կը բարձրանայ եւ կ'իջնէ երկնաքերի վերելակին պէս՝ պահ մը հասնելով գետնին, իսկ յաջորդ պահուն՝ ամպերուն: Աստուծոյ արեւը երբեք մայր չի մտներ. այն մշտապէս կիզակէտին մէջն է՝ կէսօրի դիրքին մէջ:

## ԳՈՐԾՈՒՆ, ՈՉ ԹԷ ԱՆԳՈՐԾ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ

*Տիրոջ ներկայութիւնը ԳՈՐԾՈՒՆ է, ոչ թէ անգործ: Ան մեզի հետ չէ նման շողքի՝ անձայն, անզօր, անտեսուած եւ անարդիւնք: Ան նման է արեւին, որմէ մենք չենք կրնար եւ չենք ալ համարձակիր փախչիլ, որ իր զօրութեամբ եւ լոյսով կեանք կը պարգեւէ մեզի:*

ԵՐԲ ԱՍՏՈՒԾՈՅ ՀՈԳԻՆ ԿՈՒ ԳԱՅ ՁԵՐ ՎՐԱՅ, ՁԵՐ ԿԵԱՆՔԸ ԿՐ փոխուի եւ կը շարունակէ փոխուիլ՝ փառքէ դէպի փառք (տե՛ս Բ. Կորնթ. 3.18): Ձեր կեանքը չի կրնար լճանալ. ատիկա հակառակ է Աստուծոյ բնութեան: Քամիներու Տէրը կը խաղաղեցնէ փոթորիկները: Խաղաղութեան Իշխանը խաղաղութիւն կը բերէ ձեր կեանքին մէջ: Ան կը բժշկէ ձեր մարմինը, կ'օրհնէ ձեր ձեռքի գործը, կ'օրհնէ ձեր որովայնի պտուղը եւ կենդանի վկայ կը դարձնէ ձեզ: Աստուծոյ ներկայու-

թիւնը նկատելի է, եւ այն իր ազդեցութիւնը կը ձգէ ձեր կեանքին մէջ: Տէրը ըսաւ. «Ես քեզի հետ կ'ըլլամ», իսկ Յիսուս ըսաւ. «Ես ձեզի հետ եմ ամէն օր՝ մինչեւ աշխարհի վերջը» (Ելից 3.12, Մատթէոս 28.20): Յիսուս պահեց Իր խոստումը. «Անոնք ալ դուրս գացին, ամէն տեղ կը քարոզէին, եւ Տէրը կը գործակցէր անոնց հետ» (Մարկոս 16.20):



# ԿՐԱԿԷ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

ԲԱԺԻՆ 8

ԲՈՐԲՈՔԱԾ ԿՐԱԿ.  
ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ԿՈՉԸ

## ՀԻՄԱ Է ՁԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ

«Որովհետեւ ձեզի եւ ձեր որդիներուն համար է այս խոստումը, եւ այն բոլոր հեռաւորներուն համար, որոնց մեր Տեր Աստուած կը կանչէ»:

ԳՈՐԾՔ 2.39



## ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ԵԿԵՂԵՑՈՅ ԳՈՐԾԵՐԸ

Սուրբ Հոգին կանգ չառաւ Գործք առաքելոց գիրքի 28 գլուխներէն յետոյ: Արդէն 2.000 տարիէն աւելի է՝ Պէնտէկոստէն ընթացքի մէջ է: Այսօր մենք կը շարունակենք Գործք առաքելոց գիրքը: Առաքեալներու գործերուն յաջորդեցին Առաջին եկեղեցւոյ գործերը, իսկ այժմ՝ Վերջին ժամանակուան եկեղեցւոյ գործերը: Գործք առաքելոց գիրքը կը նկարագրէր փոքր բաներու սկիզբի օրը եւ պարզապէս հիմք կը դնէր մեզի համար:

ՊԵՆՏԵԿՈՍՏԻ ՕՐԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ: ՊԵՆՏԵԿՈՍՏԵՆ ՅԵՏՈՅ Աստուծոյ Հոգին՝ նման սաստիկ քամիի, սկսած է գործել նոր եւ ազդեցիկ կերպով ամբողջ աշխարհով՝ մտնելով այս երկրի բոլոր խաւար վայրերը: Առաջին եկեղեցին եւ առաքեալները ըրին իրենց գործը, ինչի մասին գրուած է Գործք առաքելոց գիրքին մէջ, բայց ասիկա այն ամէնը չէր, ինչ որ Սուրբ Հոգին ըրաւ, ըրած է եւ կ'ընէ: Այժմ մենք՝ այս սերունդի մարդիկս, պէտք է կատարենք Սուրբ Հոգիի գործերու մեր բաժինը:

Հոգիին քամին կը շարժի, եւ մենք պէտք է շարժինք աստոր հետ: Կարելոր չէ, թէ ուր էք դուք, եւ ինչպիսի խաւարի մէջ էք. դուք պէտք է հաւատաք, որ Աստուծոյ Հոգիին քամին կը փչէ ձիշդ այդտեղ, եւ եթէ դուք քարոզէք Խօսքը, կ'ըլլայ լոյս, փրկութիւններ, ազատագրումներ, բժշկութիւններ եւ հրաշքներ: Այնպէս որ, համարձակ եղէք եւ քարոզեցէ՛ք Խօսքը, ուր որ ալ ըլլաք: Դուք պիտի տեսնէք արդիւնքներ, քանի որ Հոգիին քամին կը փչէ, եւ այն արդէն գացած է ձեր առջեւէն:

## ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ

Մեր օրինակը առաջին քրիստոնէաները չեն. մեր օրինակը Յիսուսն է: Գործք առաքելոց գիրքը չի նկարագրեր Աստուծոյ զօրութեան գազաթնակէտը. այն Սուրբ Հոգիի հնարաւորութիւններու առաջին օրինակն է: Անսահմանօրէն վստահեցէ՛ք Աստուծոյ. Ան չունի առաւելագոյն սահման:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ԳԱԼՈՒՄՏԻ, ԱՌԱՋԻՆ ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԵՒ ԾԱՂԿՈՒՄՔ  
 ապրող եկեղեցւոյ պատմութիւնը ընդամէնը Սուրբ Հոգիի ծառայու-  
 թեան հնարաւորութիւններու առաջին օրինակն է: Այս դաշտը բաց է  
 մեզի համար: Քրիստոս ըսաւ. «Ապա թէ ոչ, իսկ այն գործերուն համար  
 հաւատացէ՛ք Ինձի: Ճշմարի՛տ, Ճշմարի՛տ կ'ըսեմ ձեզի, թէ՛ Ինձի հա-  
 վատացողը, այն գործերը, որ Ես կը գործեմ, ինք ալ պիտի գործէ, եւ  
 անոնցմէ՛ ա՛լ աւելի մեծ բաներ պիտի գործէ...» (Յովհաննէս 14.12):  
 Յիսուս մեր օրինակն է: Պօղոս աղօթեց. «Որ ձեր սրտերուն աչքերը  
 լուսաւորուելով՝ գիտնաք, թէ ինչ է Անոր կոչման յոյսը, եւ ինչ է Իր ժա-  
 ռանգութեան փառաւոր մեծութիւնը սուրբերուն մէջ, եւ ինչ է Անոր զօ-  
 րութեան գերազանց մեծութիւնը մեր մէջ, որ հաւատացինք՝ Իր կարող  
 զօրութեան յաջողութեան պէս, որ Քրիստոսին մէջ գործադրեց՝ Անոր  
 մեռելներու մէջէն յարութիւն տալով, եւ Իր աջ կողմը նստեցուց երկնա-  
 տիրներուն մէջ» (Եփեսացիս 1.18-20):

## ԱՅՍՕՐ

*Այս ժամանակաշրջանին մէջ տեղի կ'ունենան զանգուածային  
 դարձեր երկրագունդի քանի մը ամենաբարդ տարածաշրջան-  
 ներու մէջ: Բժշկութիւնները, հրաշքներն ու նշանները առատօրէն  
 կը դրսեւորուին Եկեղեցւոյ մէջ: Այսօր մարդիկ կը վերապրին Աս-  
 տուծոյ Խօսքի ճշմարտութիւնը՝ այնպէս, ինչպէս Առաջին եկեղեց-  
 ւոյ մէջ, եւ այս ամէնը տեղի կ'ունենայ Սուրբ Հոգիին զօրութեամբ:*

ԱՅՍՕՐ ՄԱՐԴՈՑ ՀԵՏ ԻՆՉ ՈՐ ԴՐԱԿԱՆ ԲԱՆ ՏԵՂԻ Կ'ՈՒՆԵՆԱՅ: ՄԵՆՔ  
 կը տեսնենք այն Աստուածաշնչեան նշանները, որոնք Տէրը խոստա-  
 ցաւ Իր Խօսքին մէջ. «Եւ պիտի ըլլայ վերջին օրերուն մէջ, - կ'ըսէ Աս-  
 տուած, - որ Իմ Հոգիէն պիտի թափեմ ամէն մարմինի վրայ, եւ ձեր  
 որդիները, եւ ձեր աղջիկները պիտի մարգարէանան, եւ ձեր երիտա-  
 սարդները տեսիլքներ պիտի տեսնեն, եւ ձեր ծերերը երագներ պի-  
 տի տեսնեն: Եւ Իմ ծառաներուն վրայ եւ Իմ աղախիններուն վրայ ալ  
 այն օրերուն մէջ Իմ Հոգիէն պիտի թափեմ, եւ պիտի մարգարէանան»  
 (Գործք 2.17,18): Աստուած կը պահէ Իր Խօսքը, եւ Յիսուս կը մկրտէ  
 Սուրբ Հոգիով: Ոչ մէկ փաստարկ կայ ասոր դէմ: Ատիկա տեղի կ'ու-  
 նենայ, եւ ատիկա տեղի պիտի ունենայ ձեզի հետ:

## ՏԱՐՈՒԻԼ ՀՈՍԱՆՔՈՎ

*Աստուծոյ գետը զօրեղ է: Երբ մեր կեանքը կապակցուած է Անոր նպատակներուն հետ, մենք կը տարուինք այդ գետի հոսանքով, որ կ'երթայ յաւիտենական անցեալէն դէպի յաւիտենական ապագան: Թո՛ղ տուէք ձեզի տարուիլ Սուրբ Հոգիին հոսանքով:*

ՄԻՆՉԵՒ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ ԴԱՌՆԱԼԸ, ԱՆ ՍՕՂՈՍՆ ԷՐ: ԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ հաւաքած էր իր օրերու քահանայապետներէն եւ կրօնական առաջնորդներէն, որոնք կը լիազօրէին զինք հալածել եկեղեցին: Դամասկոսի ճանապարհին Տէրը յայտնուեցաւ անոր. «Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, ինչո՞ւ Ջիս կը հալածես. դժուար է քեզի խթանի դէմ քացի տալ» (Գործք 26.14): Սօղոսը կ'երթար ճակատագրի հոսանքներուն հակառակ: Երբ ան անձնատուր եղաւ Յիսուսին, մտաւ Սուրբ Հոգիի հոսանքներուն մէջ եւ դարձաւ զօրաւոր առաքեալ, որուն Աստուած գործածեց՝ միլիառաւոր հաւատացեալներու վրայ ազդեցութիւն ձգելու համար: Եթէ ներկայիս ձեր կեանքը արժէքաւոր չէ, փորձեցէ՛ք նոր բան՝ կեանք, որուն հեղինակը Սուրբ Հոգին է:

## ԿՐԱՎ՝ ՎԱՌԱՐԱՆԻՆ ՄԷՋ

*Անկախ այն բանէն, թէ ով էք դուք, եւ ինչպիսին եղած է ձեր անցեալը, դուք նոյնպէս կրնաք զօրաւոր կերպով գործածուիլ Աստուծոյ կողմէն: Եթէ լեցուիք կրակով, Ան պիտի գործածէ ձեզ: Պարզապէս անձնատուր եղէք Անոր եւ թո՛ղ տուէք, որ Սուրբ Հոգին զօրացնէ ձեզ՝ աղօթքի, ուսումնասիրութեան, երկրպագութեան եւ քարոզելու համար, որպէսզի երթաք դէպի ազգերը, եւ դուք պիտի տեսնէք այն նշանները եւ հրաշքները, որոնք կը հետեւին (տե՛ս Բ. Տիմոթ. 2.20,21):*

ԻՆՉՈՒՒ ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԳՈՐԾԱԾԷ ՈՐՈՇ ՄԱՐԴԻՎ, ԵՒ ՈՉ՝ ՄԻԻՄՆԵՐԸ: Պատկերացուցէք, որ ձեր տունը երկու վառարան կայ: Ատորմէ մէկը տաք է, իսկ միւսը՝ պաղ, եւ դուք կ'ուզէք գաւաթ մը սուրճ պատրաստել: Այդ երկուքէն ո՞ր մէկը կը գործածէք: Անշո՛ւշտ, ՏԱՔ ՎԱՌԱՐԱՆԸ:

Դուք հասկցա՞ք: Ահա թէ ինչու Աստուած կրնայ գործածել ոմանք եւ չի կրնար գործածել միւսները: Շատերը կ'աղօթեն. «Գործածէ՛ զիս, Տէր», բայց ատիկա սխալ դիրքորոշում է: Փոխարէնը, աղօթեն. «Տէ՛ր, գործածելի՛ դարձուր զիս»: Անոր կրակը գործածելի կը դարձնէ մեզ: Ան ինքնաբերաբար կը գործածէ այն մարդիկը, որոնք գործածելի են: Հալելուի՛ ա:

# ՀԱԻԱՏՔ՝ ՄԱՆԱՆԵԽԻ ՍԵՐՄԻ ՊԷՍ

«Որովհետեւ ճշմարիտ կ'ըսեն ձեզի՝ եթե  
մանանեխի հատի (կամ՝ սերմի) չափ հաւատք  
ունենաք, այս լերան կ'ըսէք՝ փոխադրուի՛ր հոսկէ  
հոն, եւ այն կը փոխադրուի, եւ ոչինչ անկարելի  
կ'ըլլայ ձեզի համար»:

ՄԱՏԹԵՈՍ 17.19

## ՀԱՄԱՔԻ ԹԵՒԵՐԸ

Հոգիին պտուղի՝ ուրախության, բարության, հեզության եւ այլնի հիմքը անսահմանափակ զօրութիւն ունեցող սերմն է: Քրիստոնեան ո՛չ երկչոտ է, ոչ ալ սանձահարուած: Թերեւս մենք դարձնենք մեր միւս այտը կամ հալածանք կրենք յանուն Քրիստոսի, բայց համոզուած եղէք, որ մեր էութեան ներսը մենք կը կրենք Սուրբ Հոգիին անբողջական զօրութիւնը, որ յարութիւն կու տայ մեռելներուն, պարտութեան կը մատնէ դժոխքը եւ կը վերափոխէ մարդիկ: Մենք լեռներ շարժող եւ ձորեր բարձրացնող հաւատք ունինք: Աստուծոյ հետ ոչինչ անկարելի է մեզի համար (տե՛ս Դուկ. 1.37):

ՈՉ ՄԵՎ ԱՐԱԶԱԴՐԱՆՔ ՄԵԾ Է ՄԻԻՍԷՆ, ԵՐՔ ԱՅՆ ԿՐ ԶԱՓՈՒԻ ՄԵՐ հաւատքով: Ցանկապատը, տունը, բլուրը կամ լեռը հաւասարապէս խոչընդոտ չեն աստուծոյ վերը սաւառնող թռչունի, կամ՝ հաւատքի թելերով սաւառնող մարդու համար: Այն, ինչին համար որ Աստուած կանչած է ձեզ, հնարաւոր է կատարել միայն հաւատքով. երբ դուք վարուիք (եւ սաւառնիք) հաւատքով, կրնաք ապրիլ եւ գործել Սուրբ Հոգիին մէջ նոր ծեւերով:

## ՍԱՒԱՌՆԻՒ, ՈՉ ԹԷ ՔՆԱՆԱԼ

Հաւատքով մենք «վեր կը սլանանք (կամ՝ կը սաւառնինք) արծիւներու պէս» (Եսայիա 40.31): Մենք կը սաւառնինք, ոչ թէ կը քնանանք: Մի՛ քնանաք, երբ կը բախիք կեանքի խոչընդոտներուն: Սաւառնեցէ՛ք աստուծոյ վրայով՝ տարածելով ձեր հաւատքի թելերը, եւ ՎԱՐՈՒԵՑԷ՛Ք ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ:

ՄԵՆՔ Կ՛ԱՊՐԻՆՔ ՀԱՄԱՔՈՎ, ՈՉ ԹԷ ԵՐԵՒՈՅԹՈՎ (Ք. ԿՈՐՆԹԱՅԻՍ 5.7): Որոշ իրավիճակներ մեր կեանքին մէջ կրնան վիատեցնող թուալ այն պատճառով, թէ ինչպէս մեր զգայարանները կ'ընկալեն աստուծոյ: Բայց սպասեցէ՛ք: Մի՛ թուլցնէք ձեր ձեռքերը: Մեր հաւատքը հիմնուած է Աստուծոյ խօսքին վրայ: «Ամէն բան կրնամ զիս զօրացնող Քրիստոսով» (Փիլիպպեցիս 4.13):

## ՃԵՂՔԵԼ ԱՆՀԱՒԱՏՈՒԹԵԱՆ ԿԵՂԵԸ

*Դուք պէտք է Աստուծոյ կրակի գործող հրաբուխ ըլլաք: Դուք պէտք չէ ըլլաք սառնաշունչ ծիւնածածկ լեռան պէս՝ վեհ, սակայն պաղ եւ անզօր: Թո՛յլ տուէք, որ հրաբուխը ժայթքէ խառնարանէն. թո՛յլ տուէք, որ Սուրբ Հոգիին կրակը բխի ձեր ներսէն (տե՛ս Եբր. 12.29):*

ՀԱՒԱՏՔԸ ՆՄԱՆ Է ՀՐԱԲՈՒՄԻ, ՈՐ Կ'ԵՌԱՅ ԵՒ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ ԴԵՊԻ խառնարանը: Հագի որ այն ճեղքէ անհաւատութեան կեղեւը, տեղի պիտի ունենայ հզօր ժայթքում: Երբ Աստուած կարենայ ճեղքել մեր անհաւատութեան կեղեւը, տեղի կ'ունենայ Անոր զարմանալի զօրութեան դրսեւորումը, որ կ'արհամարհէ մեր տրամադրութիւնները եւ շփոթմունքները: Որքա՞ն հաստ է մեր անհաւատութեան կեղեւը: Որքա՞ն մենք կը հակառակինք Աստուծոյ վստահելու հարցին մէջ: Եթէ հրաժարինք մեր անհաւատութենէն, մենք կը ստանանք Աստուծոյ կրակը՝ Սուրբ Հոգիին կրակը, որ կը զօրացնէ մեզ:

## ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐ, ՈՉ ԹԷ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ

*Աստուած կու տայ մեզի Իր Հոգին՝ ոչ միայն Իր սիրոյ եւ առատածեռնութեան շնորհիւ, այլեւ՝ մեկնելով անհրաժեշտութենէն: Աստուած ի սրտէ կը ցանկայ լեցնել մեզ Իր Հոգիով եւ զօրացնել Իր գործին համար: Կարիք չկայ, որ խնդրենք եւ աղաչենք Անոր այս օրհնութեան համար: Ան ոչ միայն կը կամենայ, այլեւ պատրաստ է: Ան կազմ ու պատրաստ է: Պարզապէս հաւատացէ՛ք, եւ դուք պիտի ստանաք:*

Ի՞նչ Կ'ԸՍԷՔ «ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ՄԷՋ ՆՍՏԵԼՈՒՆ» ՄԱՍԻՆ (ԴՈՒԿԱՍ 24.49): Յիսուս պատուիրեց աշակերտներուն սպասել, քանի որ այդ ժամանակ Սուրբ Հոգին դեռ չէր տրուած, եւ պիտի չտրուէր, մինչեւ որ Յիսուս չփառաւորուէր (տե՛ս Յովհ. 7.39): Անոնք պէտք էր սպասէին այդ պատմական պահուն՝ Պէնտէկոստէի օրուան: ԲԱՅՑ ԱՅՑՄ ԱՆ ԱՅՍԵՐ Է: Պէնտէկոստէն իրողութիւն է, եւ դուք կրնաք անծանր

վերապրիլ այն ամէն օր: Մեր հաւաքոյթներուն ժամանակ մենք չենք աղաչեր. մենք կ'ընդունինք: Յիսուս կը սիրէ կատարել Իր Խօսքը մեր կեանքին մէջ: Մենք հաւատացեալներ ենք, ոչ թէ մուրացկաններ:



# Ո՛Չ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲ, ԵՒ Ո՛Չ ԶԳԱՑՈՒՄՆԵՐՈՎ

«...ոչ թէ գորութեամբ, եւ ոչ թէ ուժով, այլ՝ իմ  
Հոգիով,- կ'ըստ Զօրաց Տէրը»:

ԶԱՔԱՐԻԱ 4.6

## ԶՕՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԳԱՑՈՒՄՆԵՐ

*Հոգիով մկրտութիւնը կ'օժտէ մեզ մշտական զօրութեամբ, սակայն չի տար զօրութեան մշտական զգացում: Բարեբախտաբար, մենք չենք չափեր զօրութիւնը մեր զգացումներով եւ այն ամէնով, ինչ որ կը տեսնենք: Հոգեւոր զօրութիւնը աննկատ է եւ կը գտնուի մեր հոգիին մէջ: Բայց երբ հանգամանքները կը պահանջեն, որ այն օգտագործուի, այն ի յայտ կու գայ: Հոգեւոր զօրութեան մատակարարումը ակնթարթային է, եւ այն կը տրուի ըստ յառաջացած կարիքի չափի: Թոյլ մի՛ տաք, որ ձեր կախումաւորութիւնը զգացումներէն գողնայ ձեր հոգեւոր յաղթանակները:*

ԱՅՆ ՀԱՂՈՐԴԱԼՐԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿՐՆԱՆ 110.000 ԿՈՒԹ ՀՈՍԱՆՔ տեղափոխել, նոյն տեսքը ունին ե՛ւ լարման տակ ըլլալու, ե՛ւ չըլլալու ժամանակ: Նմանապէս, մենք չենք կրնար դատել մեր մկանային ուժի մասին ըստ մեր զգացումներու, այլ միայն՝ ըստ փորձարկման: Ուժեղ մարդիկ չեն զգար իրենց ուժը: Անոնք չեն կրնար նստիլ կրակի քով եւ վայելել իրենց ուժը: Այնուամենայնիւ, երբ անոնցմէ կը խնդրեն ինչ որ ծանր առարկայ բարձրացնել, անոնք, ԳԻՏՆԱԼՈՎ իրենց ուժի մասին, պարզապէս կ'ընեն ատիկա: Երբ մենք հանդարտ վիճակի մէջ ենք, չենք զգար, որ լեցուած ենք ուժով: Մենք կրնանք զգալ մեզ սովորականին պէս եւ չմտածել Անոր մեծ զօրութեան մասին, որ մեր ներսն է (տե՛ս Բ. Կորնթ. 10.1-6):

Գրեթէ բոլոր պարագաներուն, երբ մենք կ'աղօթենք զօրութեան համար, նկատի ունինք ԶՕՐՈՒԹԵԱՆ ԶԳԱՑՈՒՄԸ: Մենք կը ցանկանք վերապրիլ զօրութեան յատուկ ներքին դողը եւ թրթռը: Ասիկա թիրմբեմունք է: Զօրութիւնը ակնյայտ է այն ժամանակ, երբ այն կ'օգտագործուի: Երբ մարդը մարգաքարեր կը բարձրացնէ, անոր ուժը կ'երեւի: Ոմանք երբեք ոչինչ կ'ընեն Աստուծոյ համար, քանի որ չեն «զգար» իրենց ներսի զօրութիւնը կամ ուժը: Անոնք շարունակ կ'աղօթեն այն բանի համար, ինչ որ իրենք, ամենայն հաւանականութեամբ, արդէն ունին: Ժամանակի եւ ջանքերու ինչպիսի՛ վատնում: Աստուծոյ զօրութիւնը կը յայտնուի, երբ ատոր կարիքը ըլլայ: Հարուստ մարդիկ միլիոնաւոր տոլարներ չեն պահեր իրենց քով: Անոնք դրամ կը վերցնեն իրենց պահոցներէն, երբ կը ցանկան: Կարիք չկայ, որ առաւօտէն երեկոյ դողանք Աստուծոյ զօրութեան տակ: Մենք կը գործենք, քանի

որ ամբողջ զօրութիւնը կը պատկանի Անոր, ոչ թէ մեզի: Ահա թէ ինչը կարելու է:

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՐԲԵՔ ՉԻ ՀԵՌԱՆԱՐ

*Սուրբ Հոգին լիովին ներկայ է, անկախ այն բանէն՝ մենք կը զգա՞նք Անոր ներկայութիւնը, թէ՞ ոչ: Անոր պարգեւները եւ զօրութիւնը կախուած չեն մեր զգալու կարողութենէն: Եթէ մենք հաւատքով հենինք Անոր խօսքին վրայ, Մխիթարիչը կու գայ եւ կը բնակի մեզի հետ (տե՛ս Յովհ. 14.16): Մենք գիտենք, որ Ան մշտապէս մեզի հետ է եւ երբեք չի ձգեր եւ չի լքեր մեզ՝ անկախ հանգամանքներէն (տե՛ս Եբր. 13.5):*

ՄԵԿ ԱՆԳԱՄ ԵՍ ԼՍԵՑԻ ԱԲԵՏԱՐԱՆԻՉԻ ՄԸ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀՐԱԺԱՐԱԾ ԷՐ ԲԵՄ ԵԼԼԵԼ ԵՒ քարոզելէ՝ պատճառաբանելով, որ չէր զգար Աստուծոյ օժութիւնը: Բեմ ելլելու փոխարէն, ան սկսած էր աղաղակել եւ աղօթել ասոր ետեւը՝ խնդրելով Աստուծոյ ներկայութիւնը: Սակայն ան սխալ էր. Սուրբ Հոգին յարմարանք չէ. Ան անձ է՝ Երրորդութեան երրորդ Անձը: Ոչ մէկ անձ կրնայ ներկայ ըլլալ մասնակիօրէն՝ կէս չափով կամ մէկ քառորդ չափով: Սուրբ Հոգին մշտապէս լիարժէք կերպով ներկայ է, նոյնիսկ եթէ մենք մտովի ցրուած ենք կամ չենք զգար Ձինք: Երբեմն, քարոզելով հարիւր հազարաւոր մարդոց առջեւ, ես չեմ զգար Անոր ներկայութիւնը: Ինչպէ՞ս ես կը վարուիմ: Ես կը յիշեմ Յիսուսին խօսքերը, որ Սուրբ Հոգին յաւիտեան կը մնայ մեզի հետ, եւ հաւատքով կ'ընդունիմ այդ խոստումը: Ես կը քարոզեմ Աստուծոյ խօսքը, որ Աստուծոյ Հոգին մշտապէս կը պատուէ եւ կը հաստատէ: Մենք միշտ չէ, որ կը զգանք Անոր զօրութիւնը, բայց Ան միշտ մեզի հետ է: Սուրբ Հոգին երբեք չի ձգեր մեզ:

## ԺԱՄԱՆԱԿՆ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԻԼ ՍՈՒՐԲ ՀՈԳԻԻՆ ՀԵՏ

*Այն ամէնը, ինչ որ ոգեշնչուած չէ Աստուծմէ, ժամանակաւոր է, բայց Յիսուսի եւ Սուրբ Հոգիին համագործակցութիւնը կը յարատեւէ՝ մնալով շատ ատելի երկար, քան որեւէ այլ բան: Այսպէս որոշած է Աստուած, երբ հաստատած է արարչագործութեան կարգը, եւ այսպէս պիտի ըլլայ յաւիտեան՝ մեզի հետ, կամ առանց մեզ: Մենք կրնանք ըլլալ ձախող մարդիկ, եթէ այդպէս կը կամենանք, կամ կրնանք ըլլալ հաւատքի հերոսներ:*

«ԻՆՉ ՈՐ ԱՍՏՈՒԱԾ Կ'ԸՆԷ, ԱՅՆ ՅԱԻՏԵՆԱԿԱՆ Է» (ԺՈՂՈՎՈՂ 3.14): Ասիկա կը վերաբերի թէ՛ Աստուծոյ արարչագործութեան, թէ՛ մեր կեանքին եւ ծառայութեան: Մենք կրնանք որոշում կայացնել, որ պիտի ընդգրկենք Աստուծոյ մեր կեանքի ամէն բնագաւառին մէջ եւ Քրիստոսակեդրոն պիտի ըլլանք մեր բոլոր գործերուն մէջ, կամ կրնանք բոլորովին անտեսել զԱստուած: Բայց անձամբ ես կը ցանկամ կոչ ընել, որ ընէք ատելին, քան Աստուծոյ մասին մտածելը. ես կը ցանկամ, որ դուք համագործակցիք Աստուծոյ հետ: Թո՛ղ տուէք, որ Ան օգնէ ձեր կեանքին մէջ, ձեր առողջական հարցերուն մէջ, ձեր ընտանիքին մէջ, ձեր ծառայութեան մէջ եւ այլն: Ան է՛ւ կը կամենայ, է՛ւ կրնայ օգնել ձեզի, որ լուծէք որեւէ խնդիր, որ կը մտահոգէ ձեզ:

# ԳԵՐԲՆԱԿԱՆՕՐԷՆ ԳՈՐԾՈՂ ԶՕՐՈՒԹԻՒՆ

«Որովհետեւ Աստուած է, որ կը ներգործէ ձեր  
մէջ, կամենալն ալ, ընելն ալ՝  
իր հաճութեան պէս»:

ՓԻԼԻՊՊԵՑԻՍ 2.13

## ԱՄՐԱՑՆԵԼ ԲԵՌԸ ՎԵՐԱՄԲԱՐՁ ԿՈՌՒՆԿԻՆ

*Եթէ անհրաժեշտ ըլլար 1.000 թոն ծանրութիւն ունեցող երկաթէ պլոք բարձրացնել վերամբարձ կռունկով, որքանո՞վ դուք պիտի կարենայիք օգնել: Պատկերացուցէք, որ փորձէիք բռնել այն՝ բարձրացնելու կամ հրելու համար: Ատիկա ի՞նչ կը փոխէր: Ոչինչ կը փոխէ, եւ դուք որեւէ կերպով չէիք կրնար օգնել:*

Ի՞նչ Կ'ըՍԵԻՔ ԱՄԲՈՂՑ ԱՇԽԱՐՀԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ: ԱՏԻԿԱ կրնայ ընել միայն Աստուած՝ Իր քաւչարար մահուան եւ յարութեան զօրութեամբ: Մի՞թէ կը կարծէք, որ կրնաք վերցնել այդ բեռը Անոր ուսերէն եւ կրել այն՝ Հերքուլէսի պէս: Մի՞թէ Ամենակարող Աստուած ունի մեր օգնութեան կարիքը: Յիսուս ըսաւ, որ ԱՄԲՈՂՑ զօրութիւնը կը պատկանի Իրեն: Անկասկած՝ Անոր զօրութիւնը բաւական է: Եթէ այդպէս է, դուք կրնաք յանձնել ամէն բան Աստուծոյ զօրութեան. «Քու հոգի Աստուծոյ վրայ նետէ՛» (Սաղմոս 55.22):

Մի՞թէ ասիկա կը նշանակէ, որ մենք պէտք է անգործ նստինք: Ո՛չ մէկ պարագայի: Քա՛ւ լիցի, քանի որ դուք արտօնեալ եւ կարելոր դեր ունիք: Ո՞րն է այն: Ի՞նչ կ'ընեն կռունկավարները: Անոնք չեն փորձեր անձամբ ծանր բեռ բարձրացնել, բայց ո՛չ ալ կը կենան՝ ձեռքերը գրպանները դրած: Անոնք գիտեն, որ ինչ պիտի ընեն, եւ առանց իրենց՝ բեռը երբեք չի բարձրանար: Անոնք կ'ամրացնեն բեռը վերամբարձ կռունկին: Ահա թէ որն է մեր գործը: Մի՛ փորձէք ինքնուրոյն բարձրացնել բոլորին բեռը: Միայն Աստուած կրնայ ընել ատիկա: Մեր պարզ առաջադրանքն է՝ մարդիկ Անոր քով բերել: Աւետարանը Աստուծոյ զօրութիւնն է, որ կրնայ բարձրացնել ամբողջ աշխարհը (տե՛ս Հռովմ. 1.16): Կայ զօրութիւն՝ անսահման զօրութիւն, որուն մասին ըսաւ Յիսուսը (տե՛ս Մատթ. 28.18):

## ԱՆԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

### ԶՕՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՔ ԶԷ

*Տեսիլքը Քրիստոսի արեամբ լուացուած աշխարհամասերու մասին՝ կրնայ իրականութիւն դառնալ, միայն եթէ հաւատանք Աստուծոյ եւ գործենք ըստ մեր հաւատքին: Եթէ մենք ոչինչ ընենք, ոչինչ կը կատարուի: Աստուած չի տար մեզի ոգեշնչող տեսիլքներ այն մասին, ինչ մենք կրնանք ընել մեր ուժերով: Անոր տեսիլքները այն մասին են, ինչ մենք անձնապէս չենք կրնար: Մեր քով շատ լաւ կը յաջողի սովորական ըլլալը, այնինչ Յիսուս ընտրեց մեզ արտասովոր կեանքի համար: Որսացէ՛ք Անոր տեսիլքը: Մարդիկ կ'ըսեն. «Ես տեսիլքներու եւ երազներու մարդ չեմ»: Բայց Յովսէփը, որ «երազ տեսնող» էր, չէր երազեր Խոստման երկրի մասին: Փոխաբեր, ան ընդունեց իր կեանքին մէջ Աստուծոյ Խօսքը, որ ուղղուած էր Աբրահամին, Իսահակին եւ Յակոբին, եւ «իր ոսկորներուն համար հրաման տուաւ», որպէսզի իսրայէլցիները իրենց հետ Քանան տանէին իր զմռտուած մարմինը (տե՛ս Եբր. 11.22):*

ՈՄԱՆՔ Կ'ԱՂՕԹԵՆ ԶՕՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ՍԱԿԱՅՆ ՈՉԻՆՉ Կ'ընեն: Անգործութեան համար զօրութիւն պէտք չէ: Բացէ՛ք ձեր հոգին Աստուծոյ Հոգիին համար, եւ տեսիլքն ու զօրութիւնը պիտի հոսին վարար գետի պէս: Յիսուս չի նստիր նստողներուն հետ, ո՛չ ալ կը քնանայ քնացողներուն հետ, այլ կը գործէ գործողներուն հետ եւ կ'օժտէ զանոնք Սուրբ Հոգիին զօրութեամբ: Ան մարտական հոգի կը դնէ վախկոտ նապաստակներու մէջ եւ թզուկներուն Ամենագետ Աստուծոյ հետ համագործակցող հսկաներ կը դարձնէ: Յիսուս կը փոխէ մեր նստակեաց վարքագիծը, կը լեցնէ մեզ Իր Սուրբ Հոգիով եւ անկարելին կարելի կը դարձնէ:

## ԱՇԽԱՐՀԸ ԿԸ ՄՊԱՍԷ

«Եւ անոնց ըսաւ. «Գացէ՛ք ամբողջ աշխարհով, Աւետարանը քարոզեցէ՛ք ամէն արարածի: Ով որ հաւատաց եւ մկրտուեցաւ, պիտի փրկուի, եւ ով որ չհաւատաց, պիտի դատապարտուի: Անոնց ալ, որ հաւատացին, այս նշանները պիտի հետեւին. Իմ անունով դէւեր պիտի հանեն, նոր լեզուներով պիտի խօսին, օձեր պիտի բռնեն, եւ եթէ մահադէղ մը խմեն, անոնց վնաս պիտի չտայ, հիւանդներուն վրայ ձեռք պիտի դնեն, եւ անոնք պիտի առողջանան»»:

ՄԱՐԿՈՍ 16.15-18



## ԼՈՒՍՈՒՄՆԸ ԲԱԻՍՎԱՆ ՉԷ

*Մենք պետք է ոչ միայն կրկին սորվինք քարոզել Աւետարանը եկեղեցիներուն մէջ, այլեւ վերագտնենք այն փողոցները եւ արահետները, որոնց մէջ կորսուածներն են: Յիսուսի Մեծ յանձնարարականը մեր օրերուն համար է:*

ԵԹԷ ԿՈՒՉԷՔ ՄԱՐԴԻԿ ՇԱՀԻԼ, ՄԻ՛ ՆԵՏԷՔ ՁԵՐ ՑԱՆՑԸ ԼՈՒՍՈՒՄՆԻՆ մէջ: Ատոր մէջ ծուկ չկայ: Լաւագոյն պարագային, դուք կտոր մը օճառ պիտի բռնէք: Եթէ դուք սրտանց կը ցանկաք մարդոց փրկութիւնը, նետեցէ՛ք ձեր ցանցը գետի, լիճի կամ ովկիանոսի մէջ: Դուք պետք է երթաք հոն, ուր որ ծուկ կայ՝ հոն, ուր որ Աստուած կ'ուղարկէ ձեզ: Եթէ կը մտածէք, թէ ուր են այդ գետերը, պարզապէս հեռացէ՛ք սրբարանին քովէն, դո՛ւրս ելէք եկեղեցիէն եւ քալեցէ՛ք փողոցներով: Ճիշդ այդտեղէն կը սկսի հունձքը: Ձեր քովէն անցնող բոլոր մարդիկ Յիսուսին կարիքը ունին: Մենք չափազանց յարմարաւէտ կը զգանք մենք մեզի մեր գունաւոր ապակիներով պատուած շէնքերուն մէջ. մենք պետք է վերագտնենք փողոցներն ու արահետները:

## ՍԱԿԸՆԹԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍԿՍԻ

*Սուրբ Հոգին կու գայ սաստիկ փշող քամիի պէս, իսկ Աւետարանը կը քարոզուի մեծ ուրախութեան ալիքներով (տե՛ս Դուկ. 2.10): Աւետարանը նման է մակընթացութեան. այն կը բարձրանայ՝ գետնէն փրցնելով այն ամենը, ինչ կը գտնուի իր ճանապարհին: Այն լողալ կու տայ թաղուած կոչումները եւ կը պահէ ատոնք մեծութեան հոսանքներու վրայ:*

ԵՍ ՄԵԾՑԱԾ ԵՍ ԷԼՊԱՅԻ ԳԵՏԱԲԵՐԱՆԻՆ ՔՈՎ՝ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ: Տեղատուութեան ժամանակ մենք տղաներով կը խաղայինք ցեխի մէջ խրուած նաւերուն քով: Ես կը կարծէի, որ անհնար էր տեղաշարժել ատոնք: Բայց մակընթացութեան ժամանակ այդ նաւերը յանկարծ վեր կը բարձրանային: Ես կրնայի տեղաշարժել ատոնք նաւամատոյցէն մէկ ոտքով: Երբ մենք կը քարոզենք Աւետարանը, մակընթացութիւնը

կը սկսի, եւ անշարժը կը սկսի շարժիլ, անբուժելին՝ բուժուիլ, անհնա-  
րը՝ հնարաւոր դառնալ: Եկէք վստահի՛նք Աստուծոյ:

## ՅՈՅՍ՝ ԲՈՒՈՐԻՆ ՀԱՄԱՐ

*Երբ մակընթացութիւնը կը սկսի, այն չի բարձրանար մէկ կամ եր-  
կու նաւ. այն կը բարձրացնայ բոլոր նաւերը՝ բացի հատակ չու-  
նեցողներէն: Բայց նոյնիսկ այդ նաւերուն համար յոյս կայ. Սուրբ  
Հոգին կրնայ նորոգել աստոնք: Նորոգուելէն եւ վերականգնուե-  
լէն յետոյ այդ նաւերը կը բարձրանան նոր ծառայութեան մէջ:*

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ԿՐՆԱՅ ԲԱՐՉՐԱՆԱԼ ՄԱՐԴՈՑ  
անձնական կարիքներէն եւ շարժիլ՝ հպելով ընտանիքներուն, հա-  
մայնքներուն եւ քաղաքներուն: Մի՛ սահմանափակէք Սուրբ Հոգիին  
ազդեցութիւնը եւ գօրութիւնը: Սուրբ Հոգիին ծրագիրը միշտ աւելի մեծ  
է, քան մէկ մարդը, մէկ ընտանիքը եւ նոյնիսկ՝ մէկ բնակավայրը: Երբ  
Սուրբ Հոգին կը գործէ, Ան կը հպի աւելի քան մէկ մարդու: Երբ Պետ-  
րոսը գնաց Կոռնելիոսին տունը՝ ծառայելու համար, Սուրբ Հոգին իջաւ  
ոչ միայն անոր վրայ, այլեւ՝ անոր ամբողջ տան (տե՛ս Գործք 10): Երբ  
Փիլիպպոսը ծառայեց եթովպիացի ներքինիին, աստոր ազդեցութիւնը  
կրեց անոր ամբողջ ազգը (տե՛ս Գործք 8.26-40):

## ԸՆՏՐԵՑԷՔ ՀԱԻԱ՛ՏՔԸ

«Եւ երկիրը լրտեսողներէն Նաւէի որդի Յեսուն եւ Յեփոնէի որդի Քաղէբը իրենց հանդերձները պատռեցին եւ Իսրայէլի որդիներու ամբողջ ժողովքին հետ խօսեցան՝ ըսելով. «Այն երկիրը, որուն մէջէն անցանք՝ զինք լրտեսելու համար, շատ-շատ բարի երկիր է: Եթէ Տէրը մեր վրայ հաճի, Ան մեզ այն երկիրը պիտի տանի եւ մեզի պիտի տայ, որ կաթ ու մեղր բխող երկիր է: Միայն թէ Տիրոջ դէմ մի՛ ապստամբիք եւ այն երկրի ժողովուրդէն մի՛ վախնաք, որովհետեւ անոնք մեր կերակուրն են. անոնց պաշտպանութիւնը գացած է իրենց վրայէն, ու Տէրը մեզի հետ է: Անոնցմէ մի՛ վախնաք»»:

ԹՈՒՌՑ 14.6-9

## ՂԱՏԱՐԿ զԵՐԵԶՄԱՆ, ԹԵ՞ ԿԵՐՆԱՏՈՒՆ

*Մովսէս ըսաւ. «Կեանքը եւ մահը, օրհնութիւնը եւ անէծքը ձեր արջեւ դրի. ուրեմն, կեանքը ընտրէ՛ք» (Երկրորդ Օրինաց 30.19):  
Դուք կրնաք կենդրոնանալ այն հարցերուն վրայ, որոնք կը յառաջացնեն կասկածներ, յուսալքութիւն եւ մահ, կամ՝ այն պատասխաններուն վրայ, որոնք կը բերեն կեանք, յոյս եւ օրհնութիւններ: Սուրբ Հոգին կու տայ ձեզի պատասխաններ եւ զօրութիւն՝ լիարժէք կեանքի համար:*

ԱՅՆ ԲԱՆԷՆ ՅԵՏՈՅ, ԵՐԲ ՅԻՍՈՒՄ ՓԱՌԱՒՈՐ ԿԵՐՊՈՎ ՅԱՐՈՒԹԻՒՆ արաւ մեռելներէն, արաջին անգամ Յովհաննէսն ու Պետրոսը մտան Անոր գերեզմանը: Անոնք կրնային նստիլ հոն երկար ժամանակ եւ, գիտնականներու պէս, ուսումնասիրել Անոր Տի Էն Էյը (DNA)՝ ըստ Թուրինեան պատանքի: Եթէ անոնք մնային հոն, կրնային գիտական գիրքեր գրել հետագայ սերունդներուն համար: Բայց գոհութիւն Աստուծոյ, անոնք դուրս ելան գերեզմանէն, գտան Կերնատունը, եւ հոն իջաւ Աստուծոյ կրակը:

## ՊԱՏՈՒԵԼ ՄԱՐԴՆ՞, ԹԵ՞ ԱՍՏՈՒԾ

*Եկէ՛ք հաճեցնենք ոչ թէ մարդոց, այլ Աստուծոյ: Ան, որ փառք չ'ընդունիր մարդոցմէ, վնաս չի կրեր մարդոց քննադատութենէն: Թող Տէրը ըլլայ ձեր փառքը եւ ձեր գլուխը բարձրացնողը:*

ՎԱԽԸ ՊԱՐԶԱՊԷՍ ՍԱՏԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆ Է. ԱՆ ՉԻ ԿՐՆԱՐ ԻՐԱԿԱՆ վնաս հասցնել մեզի, սակայն կրնայ վախցնել մեզ: Սատանան խաբեբայ է: Բաղաամը հարկադրուած էր խօսիլ ճշմարտութիւնը (տե՛ս Թուոց 22.24), եւ մենք համոզուեցանք անոր խօսքերէն, որ Աստուծոյ ժողովուրդը անկարելի է անիծել: Մենք անձեռնմխելի ենք: Մենք փրկուած ենք: Այն, ինչ կը վերաբերէր Աստուծոյ փրկուածներուն այդ ժամանակ, ճշմարիտ է նաեւ այսօր: Վախը կը լսէ Գողիաթի գոչիւնը, իսկ հաւատքը՝ թագաւորներու Թագաւորի գոչիւնը:

## ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻՈՒԹԻՒՆ

*Քրիստոնեան ունի հաւատքի վահան՝ ընդդէմ սատանայի բոլոր յարձակումներուն: Այն անխոցելի է: Մենք անձեռնմխելի ենք սատանայի վերահսկողութեան համար եւ կ'ապրինք փրկութեան, յաղթանակի եւ ազատութեան մէջ: Մենք կրնանք ըլլալ համարձակ եւ անխոցելի՝ Քրիստոսի փրկարար արեան հանդէպ ունեցած հաւատքի եւ Սուրբ Հոգիին միջոցով:*

ՄԷԿ ԱՆՊԱՄ ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑ ՄԸ ՔՆՆԱԴԱՏԵՑ ԶԻՍ ԵՒ ԻՍ ԳՈՐԾԸ: Քանի մը ծառայողներ հեռաձայնեցին ինձի եւ ըսին. «Ռէյնհա՛րտ, դուն պէտք է պաշտպանես քեզ»: Ես ծունկի իջայ եւ ըսի. «Տէ՛ր, ի՞նչ ընենմ»: Սուրբ Հոգին խօսեցաւ հետս. «Դուն հնձող մեքենայով (combine) բերքահաւաք կ'ընես Իմ հունձքի դաշտին մէջ: Մի՛ կենար մուկ մը բռնելու համար»: Զիս պաշտպանելու փոխարէն, ես մշտապէս կը խօսիմ իմ յաջորդ աւետարանչական հաւաքոյթներու մասին: Ատիկա ուրախութիւն կը պատճառէ ինձի եւ կը բարկացնէ սատանային: Տէրը կ'արդարացնէ զիս: Երբ գայ այն օրը, ես կ'ուզեմ լսել. «Լա՛ւ, բարի եւ հաւատարիմ ծառայ» (Մատթէոս 25.21):

## ԱՐՏԱՑՈՒԵԼ ԱՆՈՐ ՓԱՌՔԸ

*Աստուծոյ փառքը կ'արտացոլուէր քահանայապետի լանջապանակի թանկարժէք քարերով (տե՛ս Ելից 28.15-21): Ատոնցմէ արձակուող լոյսի երփներանգ փունջը կը թափանցէր խորանի քթանէ վարագոյրներէն՝ արտացոլելով միայն Տիրոջ փառքը: Ասիկա կատարեալ խորհուրդ է: Մենք չունինք սեփական փառք, որքան ալ մեր տաղանդները փայլին թանկարժէք քարերու պէս: Միակ ճշմարիտ լոյսը կը բխի Յիսուս Քրիստոսէն: Մենք այդ լոյսի վկաներն ենք (տե՛ս Յովի. 1.8), երբ կը դարձնենք Անոր մեր երեսը եւ կ'արտացոլենք Զինք: Մինչեւ մենք չորսանք Անոր լոյսը մեր կեանքին մէջ, ոչ ոք կը տեսնէ այն: Հոգիին պարգեւները Անոր պարգեւներն են, ոչ թէ մեր բնական տաղանդները կամ շնորհները:*

ՄԵՐ ԲՆԱԲՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳՈՐԾԵՐԸ՝ ԹԷ՛ ԲՆԱԿԱՆ, ԵՒ ԹԷ ԳԵՐԲՆԱԿԱՆ,  
պէտք է արտացոլեն Սուրբ Հոգիին կրակն ու լոյսը, որպէսզի փառքը  
երեւի Եկեղեցւոյ մէջ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով: «Որովհետեւ Քուկդ է  
Թագաւորութիւնը եւ զօրութիւնը եւ փառքը յաւիտեանս: Ամէ՛ն» (Մատ-  
թէոս 6.13):

## ԵՐԹԱԼՈՒ ԺԱՄԱՆԱ՛ԿՆ Է

«Եւ Փիլիպպոսը իջաւ Սամարիայի մէկ քաղաքը  
Եւ Քրիստոսի մասին կը քարոզէր անոնց:  
Ժողովուրդներն ալ միաբան ականջ կը դնէին  
Փիլիպպոսի խօսածներուն՝ լսելով եւ տեսնելով  
այն նշանները, որ կ'ընէր: Որովհետեւ պիղծ  
ոգիներ ունեցողներէն շատերէն մեծածայն  
աղաղակելով դուրս կու գային, եւ շատ  
անդամալոյծներ եւ կաղեր կը բժշկուէին: Եւ մեծ  
ուրախութիւն եղաւ այն քաղաքին մէջ»:

ԳՈՐԾՔ 8.5-9

## ԱՍԻԿԱ ԹՈՒՉՔԻ ԿԵՂԾԱԿԵՐՊԻՉ (SIMULATOR) ՉԷ

*Աւարտելով այս գիրքը՝ դուք հասաք «Աստուծոյ հրթիռին»:  
Բոլոր շարժիչները եւ համակարգերը միացած են եւ պատրաստ  
են թռիչքի: Այնուամենայնիւ, կայ մէկ բացակայ մասնիկ. դո՛ւք:  
Քա՛յլ ըրէք: Մտէ՛ք օդաչուի խցիկը եւ թո՛յլ տուէք Սուրբ Հոգիին  
ուղարկել ձեզ Աստուծոյ գերագոյն նպատակներուն ուղեծիրը:*

ՏԻԵՉԵՐԱԳՆԱՑՆԵՐԸ ՀԱՐԻՒՐԱՒՈՐ ԺԱՄԵՐ Կ'ԱՆՑՈՆԵՆ՝ ՄԱՐԶՈՒԵԼՈՎ  
թռիչքի կեղծակերպիչներու միջոցով, որպէսզի զարգացնեն այն թեք-  
նիքական եւ գոյատեւման հմտութիւնները, որոնք վճռորոշ դեր պիտի  
խաղան իրենց առաքելութեան բարեյաջող ընթացքին համար: Բայց  
թռիչքի կեղծակերպիչը պարզապէս կը ձեւակերպէ իրական միջա-  
վայրը. այն իրական միջավայր չէ, այլ ընդամէնը իրական միջավայրի  
նմանակում եւ կեղծակերպում: Ի վերջոյ, տիեզերագնացները պէտք է  
ձգեն իրենց յարմարաւէտութիւնը եւ ապահովութիւնը եւ երթան դէպի  
մեկնարկային հարթակ՝ իրենց առաքելութիւնը իրականացնելու հա-  
մար: Նոյն կերպով, Սուրբ Հոգին կը ցանկայ, որ քայլ ընէք դէպի ձեր  
կոչումը: Ժամանակն է մտնել տիեզերանաւ-հրթիռի քթամասը Սուրբ  
Հոգիին հետ եւ թռչիլ դէպի հրաշքներով ու հնարաւորութիւններով լե-  
ցուն զարմանալի կեանք:



# ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱԺԻՆ 9

ՄՈՒՏՔ ԴԷՊԻ ԿՐԱԿՈՏ ԿԵԱՆՔ.  
ԻՆՉՊԷ՞Ս ԸՆԴՈՒՆԻԼ ՍՈՒՐԲ  
ՀՈԳԻՈՎ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

«Եւ եղաւ, որ Ապօղոսը Կորնթոսի մէջ եղած  
ժամանակ, Պօղոսը, որ վերի կողմերը կը  
պտըտէր, եկաւ Եփեսոս: Եւ քանի մը աշակերտ  
գտնելով՝ ըսաւ անոնց. «Արդե՞՞ք Սուրբ Հոգին  
ընդունեցիք, երբ որ հաւատացիք»: Անոնք ըսին  
անոր. «Մենք չենք ալ լսած, թէ Սուրբ Հոգի կայ»:  
Եւ ըսաւ անոնց. «Ապա ինչո՞վ մկրտուեցաք»:  
Անոնք ալ ըսին. «Յովհաննէսի մկրտութեամբ»:  
Եւ Պօղոս ըսաւ. «Յովհաննէսը ժողովուրդին  
ապաշխարութեան մկրտութեամբ կը մկրտէր եւ  
կ'ըսէր, թէ Ան, որ անոր ետեւէն պիտի գայ, Անոր  
հաւատան, այսինքն՝ Քրիստոս Յիսուսին»: Եւ երբ  
որ լսեցին, Տէր Յիսուսի անունով մկրտուեցան:  
Եւ երբ որ Պօղոսը ձեռք դրաւ անոնց վրայ, Սուրբ  
Հոգին եկաւ անոնց վրայ, եւ անոնք լեզուներով  
կը խօսէին եւ կը մարգարէանային»:

ԳՈՐԾՔ 19.1-6

# ՄԱՍ ՄԷԿ

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ.

### Ի՞ՆՉ Է ԱՅՆ

Սուրբ Հոգիով մկրտութիւնը անչափ կարելոր է հաւատացեալի կեանքին եւ ծառայութեան համար: Որպէսզի ողջամիտ Աստուածաշնչեան պատկերացում կազմէք Սուրբ Հոգիով մկրտութեան մասին, ես ներկայացուցած եմ Պենտէկոստէի նախորդող եւ յաջորդող շարք մը իրադարձութիւններ՝ ըստ յաջորդականութեան: Ասիկա Սուրբ Հոգիին ժամանակագրութիւնն է:

### ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Ամենահրաշալի ծայնը, որ երբեք լսուած էր, պիտի հասնէր տասնեակ հազարաւոր մարդոց ականջներուն, որոնք հաւաքուած էին Երուսաղէմի տաճարի սրահներուն մէջ: Տեղի կ'ունենային ազգային տօնակատարութեան վերջին ծէսերը: Բոլորին աչքերը կը հետեւէին այն ոսկիէ անօթին, որ լեցուած էր ջուրով եւ զինիով: Թափելու ընծան պատրաստ էր Տիրոջը մատուցուելու համար:

Քահանաներէն մէկը վեր բարձրացուց արեւի ճառագայթներէն փայլող անօթը եւ կեցաւ: Տիրեց քար լռութիւն. մարդիկ կը փորձէին լսել սուրբ ջուրի թափուելու ծայնը զոհասեղանին քով դրուած պրոնզէ անօթին մէջ: Յանկարծ այդ ամէնը ընդհատուեցաւ. Չայն մը, որ 1.000 տարի չէր հնչած, զարմացուց բոլորը: Ատիկա Յիսուս Քրիստոսի՝ Աստուծոյ Որդիին ծայնն էր: Ան այն Խօսքն էր, որ խօսուած էր սկիզբէն եւ գոյութեան կոչած էր երկինքն ու երկիրը: Այժմ, կանգնած Երուսաղէմի մէջ, Ան կը հրատարակէր թագաւորական եւ Աստուծային հրովարտակը, որուն միջոցով Աստուծոյ գործելակերպը մարդոց հետ նոր փուլ կը թեւակոխէր.

«Եթէ մէկը ծարաւ է, թող Քովս գայ եւ խմէ: Ինծի հաւատա-  
ցողը, ինչպէս Գիրքը կ'ըսէ, անոր փորդն կենդանի ջուրերու  
գետեր պիտի բխին» (Յովհաննէս 7.37,38):

## ԳԵՏԵՐ ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ

«Կենդանի ջուրերու գետե՛ր»: Գետեր, ոչ թէ շիշեր. թարմ, կայտառ,  
փայլուն, առատ եւ անվերջ գետեր: Որոշ մարդիկ կ'ապրին «շշալցուած  
իրականութեան» մէջ: Այս աշխարհի հանրախանութներուն մէջ շատ  
քիչ թարմ բան կայ: Այսօր փաթեթաւորուած հաճոյքը՝ պահածոյացուած  
երաժշտութիւնը, ֆիլմերը եւ գիրքերը, եկամտաբեր գործ է: Հեռուստա-  
տեսութիւնը կը ներկայացնէ կեանքի տարբեր դրուագներ միլիոնաւոր  
մարդոց, որոնք կը դիտեն, թէ ինչպէս ոմանք կ'ապրին կամ կը ձեւացնեն,  
թէ կ'ապրին: Այս երեւոյթները չեն շրջանցած նոյնիսկ երեխաները, որոնք  
մոռցած են իրենց խաղերը:

## ԱՊՐԵՑԷՔ ՀԻՄԱ՛

Մարդիկ միշտ «կը պատրաստուին» ապրիլ... երբ իրավիճակները փո-  
խուին, երբ աշխատանքը աւարտի, երբ անոնք դրամ ունենան, ամուսնա-  
նան, թոշակի անցնին կամ արձակուրդի երթան: Յիսուս եկաւ, որ կեանք  
տայ մեզի ՀԻՄԱ՛: Այս կեանքին ՊԷՏՔ ՉԷ ՄՊԱՍԵԼ. այն պէտք է ընդունիլ՝  
ուր ալ ըլլանք, եւ ինչ ալ ընենք: Ան կը կենդանացնէ կեանքը:

## ՊԱՏՄԱԿԱՆ ԳՐԱՏԱՆՏԱԿ

Աստուած գրի առաւ Իր ծրագիրը Իսրայէլի համար, երբ անոնք անա-  
պատին մէջ էին՝ 40 տարուան լայնութիւն ունեցող գրատախտակի վրայ:  
Իսրայէլիցիները ստիպուած չէին տիկերուն մէջ պահուող հինգած, թարմու-  
թիւնը կորսնցուցած ջուր խմել: Տէրը ջուրի յորդացող հոսանքներ հանեց  
ժայռէն (տե՛ս Ելից 17.1-7): Տաճարի «թափման նուէրը» տօնակատարու-  
թիւն էր՝ ի յիշատակ այդ անապատի ջուրերուն (տե՛ս Թուոց 20.1-13): Այ-  
նուամենայնիւ, Յիսուս նոր եւ փառաւոր նշանակութիւն հաղորդեց այդ ծե-  
սին՝ դարձնելով այն Սուրբ Հոգիի թափման խորհրդապատկերը:

## ՄԻԱՅՆ ՅԻՍՈՒԲԱԸ

**ՅԻՍՈՒԲԱԸ:** Այլեւս ոչ ոք երբեք համարձակեցաւ նման զարմանալի պնդում ընել, իսկ յետոյ նաեւ ի կատար ածել այն: Ան համբարձաւ դէպի փառքը, ուր սկիզբ առած էր արարչագործութիւնը, եւ փոխեց ատոր կարգը: Բան մը, ինչ որ նախկինին անյայտ էր, պիտի թափէր երկնքէն այս երկրի վրայ: Ան անուանեց այն «Հօր խոստումը» (Գործք 1.4): Այս ձեւակերպումը կ'առանձնացնէ այն Աստուածաշունչին մէջ գտնուող 8.000-էն աւելի խոստումներէն՝ ցոյց տալով ատոր բացառիկ եւ կարեւոր բնոյթը: Քրիստոս դարձուց այն Իր խոստումը: Այն Հօր պարգեւն էր Իրեն, եւ Իր պարգեւը՝ մեզի, ինչպէս որ ըսաւ Յովհաննէս Մկրտիչը.

«Ես չէի գիտեր Ձինք, բայց Ան, որ զիս ուղարկեց ջուրով մկրտելու, Ան ըսաւ, թէ. «Որուն վրայ որ տեսնես Հոգին կ'իջնէ եւ Անոր վրայ կը մնայ, Ան Սուրբ Հոգիով Մկրտողն է»: Եւ ես տեսայ ու վկայեցի, թէ ասիկա է Աստուծոյ Որդին» (Յովհաննէս 1.33,34):

## ԵՐԲ ԲԱՌԵՐՈՒ ԲԱՒԱԿԱՆ ՉԵՆ

Այս հատուածին մէջ Յովհաննէսը օգտագործեց մէկ այլ արտայայտութիւն՝ «կենդանի ջուրերու գետերու» փոխարէն: Աստուածաշունչին մէջ կան այս իրողութիւնը նկարագրող այլ արտայայտութիւններ, օրինակ՝ մկրտուած սուրբ կրակով (տե՛ս Մատթ. 3.11, Ղուկ. 3.16), «զօրութիւն հազած» (տե՛ս Ղուկ. 24.49), օծուած Աստուծոյ իւղով, ընկղմած Հոգիին մէջ, «լեցուած Հոգիով» (տե՛ս Եփես. 5.18), ինչպէս նաեւ՝ վարուիլ, աղօթել եւ ապրիլ Հոգիով (տե՛ս Գաղատ. 5.25, Հռովմ. 8.26). մեր մարմինները՝ Սուրբ Հոգիի տաճար (տե՛ս Ա. Կորնթ. 6.19), Քրիստոսէն բացի «ուրիշ Մխիթարիչ» ունենալը (տե՛ս Յովհ. 14.16):

## ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

Այս արտայայտութիւնները նման են ուրուանկարներու, որոնց պէտք է աւելցնել գոյներ եւ մանր մասնիկներ: Աստուածաշունչը Սուրբ Հոգիին պատկերասրահն է՝ գործողութեան մէջ, որուն մէջ ներկայացուած

են նշաններ ու հրաշքներ: Ատոր մէջ նկարագրուած են մարդիկ, որոնք «Յիսուսին հետ եղած են», գլխիվայր շրջուած աշխարհը եւ անոնք, որոնք «կը ճանչնան Տէրը» եւ ուրախութեամբ կ'ընդունին այս նոր վերապրումը: Անոնք պարզապէս խանդավառուած կրօնաւորներ կամ եկեղեցւոյ այցելուներ չեն, այլ նոր տեսակի մարդիկ՝ կենդանի հաւատքով: Պօղոսը կ'ըսէ, որ երբ մենք «մեռած էինք յանցանքներու մէջ», Աստուած «...մեզ կենդանի ըրաւ Քրիստոսին հետ» (Եփեսացիս 2.5), եւ որ մենք «ամէն զօրութեամբ զօրացած» ենք՝ «Իր փառքի զօրութեան համեմատ» (Կողոսացիս 1.11): Տէր Յիսուս Քրիստոս Անձամբ խոստացաւ.

«Բայց դուք զօրութիւն կ'առնէք, երբ որ Հոգին ձեր վրայ գայ»  
(Գործք 1.8):

Մենք՝ վերստին ծնած հաւատացեալներս, յատուկ ենք. մենք սուրբեր ենք, եւ Քրիստոսի Հոգիով մկրտութիւնը յաջորդ մեծ վերապրումն է մեզի համար: Յիսուս միակն էր, որ հնարաւոր դարձուց ատիկա, երբ մահացաւ, յարութիւն առաւ եւ նստաւ Մեծութեան աջ կողմը՝ Երկինքը: Ինչպիսի՜ պարգեւ:

## Ո՞Վ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

Տէրը չ'ուղարկեր գովազդային նիւթեր երկնային փոստով, որպէսզի պատմէ բոլորին, թէ ով է Ինքը: Անոր Հոգիին կողմէ կատարուած գործերն են, որ կը տեսնուին այս աշխարհին մէջ: Սուրբ Հոգին Անձ է. Ան գործող Աստուած է: Արարչագործութիւնը ի յայտ եկաւ, երբ «Աստուծոյ Հոգին կը շրջէր ջուրերուն վրայ» (Մանդոց 1.2): Բոլոր ժամանակներուն մէջ, երբ Աստուած կ'ընտրէր Իր ծառաները, Սուրբ Հոգիին զօրութիւնը կը հանգչէր անոնց վրայ.

«Եւ Մովսէս ըսաւ Իսրայէլի որդիներուն. «Տեսէ՛ք, Տէրը Ովրի որդի Ուրիի որդի Բեսելիէլին կանչեց Յուդայի ցեղէն՝ անունով: Եւ լեցուց զինք Աստուծոյ Հոգիով՝ իմաստութեամբ, հանձարով եւ գիտութեամբ, եւ ամէն կերպ ճարտարութեամբ... Եւ անոր սրտին մէջ դրաւ, որ սորվեցնէ ալ, անոր ալ եւ Դանի ցեղէն Աքիսամայի որդի Ողիաբին էլ» (Ելից 35.30,31,34):

«Եւ Տիրոջ Հոգին եղաւ անոր (Գոթոնիէլի) վրայ, եւ Իսրայէլի մէջ դատաւորութիւն կ'ընէր...» (Դատաւորաց 3.10):

Հոգին «հանգչեցաւ Գեղէօնի վրայ» (Ղատաւորաց 6.34), եւ Գեղէօնը պաշտպանեց Իսրայէլը (տե՛ս Ղատ. 6.11, 8.35): Հոգին շարժեցաւ Սամսոնի կեանքին մէջ, եւ ան գերբնական ուժ պահանջող գործեր ըրաւ (տե՛ս Ղատ. 13.1, 16.31): Տիրոջ Հոգին եկաւ Յեփթայի վրայ եւ Իսրայէլի թշնամիներուն անոր ձեռքը տուաւ (տե՛ս Ղատ. 11.1, 12.7):

Այդ դատաւորներէն յետոյ Սամուէլ մարգարէն առաջնորդեց Իսրայէլը իր ամբողջ կեանքի ընթացքին: Ինչպէ՞ս: «Սուրբ Հոգիէն շարժած խօսեցան Աստուծոյ մարդիկ» (Բ. Պետրոս 1.21): Միքիա մարգարէն վկայեց. «Ես լեցուած եմ զօրութեամբ՝ Տիրոջ Հոգիով» (Միքիա 3.8):

Ահա թէ ինչպէս նկարագրուած է Սուրբ Հոգին: Ան այն Հոգին է, որ խոստացաւ Քրիստոսը՝ իմաստութեան եւ գիտութեան Հոգին, ստեղծարար, զօրացնող, բժշկող Հոգին, զօրութեան, վստահութեան եւ առաքինութեան Հոգին:

Աստուծոյ զօրութիւնը նման չէ գերլիցքի այն մարդոց համար, որոնք արդէն իսկ օժտուած են երեւելի անհատականութեամբ եւ կարողութիւններով: Անոր զօրութիւնը այն մարդոց համար է, որոնք ունին ատոր կարիքը՝ տկարներու եւ անյայտներու: «Ան յոգնածին (կամ՝ տկարին) ուժ տուողն է, եւ Ան կարողութիւն չունեցողին զօրութիւնը կը շատցնէ» (Եսայիա 40.29):

## ՉՈՐՍ ՄԵԾ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Մենք մանրամասնօրէն կ'ուսումնասիրենք Աստուածաշունչի պատկերասրահի պատկերներէն չորսը:

## ՄԱՐԳԱՐԷԻՆ ՑԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Առաջին պատկերը. Մովսէսը դրաւ իր ձեռքերը 70 երէցներու վրայ ժողովքի վրանին քով, եւ Աստուծոյ Հոգին իջաւ անոնց վրայ: Այդ պահուն Հոգին հանգչեցաւ նաեւ Ելզադի եւ Մովզադի վրայ, որոնք մնացած էին ճամբարին մէջ, եւ անոնք սկսան մարգարէանալ: Երիտասարդ մը վազեց, որ պատմէր ատիկա Մովսէսին: Յետուն մտածեց, որ մարգարէանալու մենաշնորհը պէտք է Մովսէսին պատկանէր, եւ յորդորեց. «Տէ՛ր իմ, Մովսէ՛ս, արգիլէ՛ զանոնք»: Արգիլելու փոխարէն, Մովսէս ըսաւ. «Ի՞նձի համար կը նախանձիս: Երանի՛ թէ Տիրոջ ամբողջ ժողովուրդը մարգա-

րենքեր ըլլային, եւ Տէրը Իր Հոգին անոնց վրայ դնէր» (Թուոց 11.24,29):

Մէկ անգամէն եօթանասուն մա՛րդ: Ատիկա առաւելագոյնն էր մօտաւորապէս 1200 տարուան ընթացքին: Այդ փորձառութիւնը հազուագիւտ էր, սովորաբար՝ ժամանակաւոր էր, եւ նախատեսուած էր միայն առանձին մարդոց համար: Այնուամենայնիւ, դարեր շարունակ շատերը կը կրէին Մովսէսի ցանկութիւնը իրենց սրտերուն մէջ:

## ՊԱՅՇԱՌ ԵՐԿԻՆՔ

Երկրորդ պատկերը. Սողոմոնի կառուցած տաճարը լիարժէք կերպով կը գործէր, բայց մեղքը տկարացուցած էր ազգը: Մարգարէ մը կեցաւ Երուսաղէմի մէջ՝ զգուշացնելով դատաստանի մասին: Մարգարէութեան հեռադիտակով Յովէլը տեսած էր հեռուն գտնուող երկինք՝ սեւցած պատերազմական ամպերով, սարսափով եւ կործանմամբ, որոնք պիտի ամայացնէին Իսրայէլը: Այսօր մենք գիտենք, որ այդ ամէնը կատարուեցաւ, եւ ատիկա կ'ապացուցէ, որ Յովէլը ճշմարիտ մարգարէ էր: Այնուամենայնիւ, Յովէլը պատմեց Իսրայէլին աւելին: Բարձրացող փոթորիկէն շատ աւելի հեռուն ան տեսաւ պայծառ երկինք. ոչ թէ պարզապէս վերականգնում, այլ՝ հրաշալի նոր սկիզբ:

«Եւ պիտի ըլլայ ասորմէ յետոյ, որ Իմ Հոգին պիտի թափեմ ամէն մարմինի վրայ, եւ պիտի մարգարէանան ձեր տղաներն ու ձեր աղջիկները, ձեր ծերերը երագներ պիտի երագեն, ձեր երիտասարդները տեսիլքներ պիտի տեսնեն: Եւ ծառաներուն ու աղախիններուն վրայ ալ պիտի թափեմ այն օրերուն մէջ Իմ Հոգին: Եւ նշաններ պիտի տամ երկնքի մէջ ու երկրի վրայ՝ արիւն եւ կրակ ու ծուխի սիւներ» (Յովէլ 2.28-30):

## ԲՈՒՈՐԸ՝ ԱՐՏՕՆՈՒԱԾ

Այդ օրերուն երիտասարդ ստրուկ աղջիկները ջուր կը լեցնէին իրենց տիրուհիներու ձեռքերուն, երբ անոնք կը լուացուէին, բայց Աստուած խոստացաւ թափել Իր Հոգին նոյնիսկ անոնց վրայ: Իրականութեան մէջ, այս մարգարէութիւնը կը նշանակէր, որ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՊԻՏԻ ԹԱՓՈՒԷՐ ԱՇԽԱՐՀՈՎ ՄԷԿ՝ ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ ՄԱՐԴՈՑ ՎՐԱՅ՝ անկախ անոնց հասարակական դիրքէն:



Ատիկա ապշեցուցիչ լուր էր: Այն, ինչ որ Ան ժամանակ մը կը շնորհէր միայն Իր ընտրեալ ծառաներու խումբի մը, պիտի դառնար այնպիսի արտօնութիւն, որ իւրաքանչիւրը կրնար համարել իրենինը: Շատերուն համար չափազանց դժուար էր պատկերացնել ատիկա կամ հաւատալ ատոր: Բայց Աստուած ըսաւ ատիկա, եւ Անոր Խօսքը յաւիտեան հաստատ է:

## ՄԱՐԳԱՐԷ՝ ԿԱՇԻԷ ՀԱՆԴԵՐՁՆԵՐՈՎ

Երրորդ պատկերը. Յովհաննէս Մկրտիչը՝ կաշիէ հանդերձներով, կեցած էր Յորդանան գետի ափին: Ան Աստուծոյ առաջին մարգարէն էր 400 տարուան ընթացքին: Բազմութիւնները եկան Ջինք լսելու եւ մկրտուելու: Անոր հզօր ուղերձը կոչ կ'ընէր Իսրայէլին ապաշխարել եւ պատրաստուիլ, քանի որ Ան, Որուն երկար սպասած էին, պիտի յայտնուէր.

«Ես ջուրով կը մկրտեմ ձեզ՝ ապաշխարութեան համար, բայց Իմ ետեւէն Եկողը ինձմէ՛ գօրաւոր է, Որուն կօշիկները վեր առնելու արժանի չեմ: Ան ձեզ պիտի մկրտէ՛ Սուրբ Հոգիով եւ կրակով» (Մատթէոս 3.11):

## ՈՉ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՄԿՐՏՈՎ

Քսանչորս ժամ յետոյ մկրտուելու թեկնածուներուն միջեւ Յովհաննէսը տեսաւ երիտասարդ մը, որ մտած էր գետը եւ կը մօտենար իրեն, ու ապշեցաւ. «ԴՈ՞ՒՆ ՅԻՍՈ՞ՒՄ: Ես արժանի չեմ Քեզ Մկրտելու: Դո՛ւն պէտք է մկրտես զիս»: Աստուած ցոյց տուած էր Յովհաննէսին, որ Յիսուսն էր Ան, Որուն զալուստը խոստացուած էր (տե՛ս Մատթ. 11.3, Դուկ. 7.19,20): Ան պիտի կատարէր շատ աւելի մեծ ծէս, քան այն, ինչ որ կը կատարէր Յովհաննէսը Յորդանանի մէջ: Մկրտող Յիսուսը պիտի օգտագործէր ոչ թէ երկրային տարերք՝ ջուրը, այլ՝ երկնային կրակը, որ հոգեւոր տարերք է: Յովհաննէսը կանգնած էր Յորդանանի պաղ ջուրերուն մէջ, իսկ Յիսուս կեցած էր հեղուկ կրակի գետին մէջ: Յովհաննէսը արդէն քանի մը օր էր, որ կը մկրտէր, իսկ Յիսուս պիտի մկրտէր դարեր շարունակ, ոչ թէ ընդամէնը մէկ խումբի Պէնտէկոստէի օրը, այլ՝ «ամէն մարմինի»: Ան կ'ընէ ատիկա նաեւ այսօր՝ գրեթէ 700.000 օր յետոյ:

## ԽՈՍՏՈՒՄԸ ՊԱՀՈՂՆԵՐԸ

Չորրորդ պատկերը. Վախնալով իշխանութիւններէն, որոնք մահապատիժ ենթարկեցին Յիսուսը՝ 120 աշակերտները թաքուն հաւաքուած էին: Յիսուս պատուիրած էր. «Նստէ՛ք Երուսաղէմ քաղաքին մէջ, մինչեւ վերէն զօրութիւն հազմիք» (Ղուկաս 24.49): Անոնք կը սպասէին, եւ ամբողջ աշխարհը մոռցած էր զանոնք: Ոչինչ տեղի կ'ունենար, ոչ մէկ հրաշք կը կատարուէր: Ամէն ինչ այնքա՛ն սովորական կը թուար:

## ՊԵՆՏԷԿՈՍՏԻ ՕՐԵՐԸ

Տասներորդ օրը Կիրակի էր՝ Շաբաթներու տօնը, որ նաեւ կը կոչուի Պէնտէկոստէ: Առաւօտեան ժամը իննին քահանաներէն մէկը Տաճարին մէջ բարձրացուց առաջին բերթէն պատրաստուած հացը՝ երերացնելով այն Տիրոջ աջքէ: Ատիկա ըսես ազդակ ըլլար համբարձած Քրիստոսին համար. Աստուածային պտտահողմ մը պատռեց երկինքը Երուսաղէմի վերը:

Յիսուս Ինքը ձեռքեց երկինքը Իր ջախջախիչ եւ յաղթական համբարձման ժամանակ: Այժմ բաց երկինքով կ'իջնէր Սուրբ Հոգին՝ ցոյց տալով, որ ճանապարհը դէպի երկինք փակ չէր: Փա՛ռք Աստուծոյ, ատորմէ յետոյ այն այլեւս չէ փակուած: Յիսուսի մահուան ժամանակ Տաճարին վարագոյրը պատռուեցաւ, եւ քահանաները, հաւանաբար, փորձեցին կարել այն: Սակայն ոչ ոք կրնայ կարել այս պատռուածքը երկնքին մէջ, նոյնիսկ՝ սատանան եւ անոր կամակատարները: Այն նոր եւ կենդանի ճանապարհ է, որ յաւիտեան բաց է:

## ԿՐԱԿԷ ԼԵԶՈՒՆԵՐ

Սովսէսը տեսաւ Աստուծոյ՝ որպէս կրակ մորենիի մէջ: Այժմ, երկնային փառքի դռնով, որ ոչ մէկ մարդ կրնայ փակել, եկաւ նոյն կրակը՝ Սուրբ Հոգին: Գեղեցիկ կրակէ լեզուներ իջան ամէն մէկ սպասող աշակերտի գլխուն: Այն փառքը, որ կը լեցնէ ամբողջ երկինքը, բնակեցաւ ներկաներու սրտերուն մէջ: Սուրբ Հոգին անոնց մէջ էր եւ անոնց վրայ էր: Անցեալին ոչ ոք վերապրած էր ատիկա: Չկային բառեր՝ ատիկա նկարագրելու համար: Ատիկա անպատմելի էր: Ատորմէ յետոյ Աստուած տուաւ անոնց բառեր՝ նոր լեզուներ, որպէսզի անոնք՝ նման ռօբշնչուած սաղմոսերգուներու, պատմէին «Աստուծոյ հրաշալի գործերը» (Գործք 2.11):

## ՄԵԽԹԱՐՈՒԹԻՒՆ

Այս իրադարձութեան բացատրութիւնը պարզ է: Աշակերտները կը պատկանէին Քրիստոսին: Ան անձնապէս ըսած էր ատիկա, եւ քանի տակաւին Ան անոնց հետ էր այս երկրի վրայ, անոնք զարմանալի գործեր կ'ընէին: Ատորմէ յետոյ Յիսուս համբարձաւ Աստուծոյ քով, եւ անոնք միայնակ ու վախցած զգացին իրենք զիրենք: Այնուամենայնիւ, Տէրը խոստացաւ ուղարկել մէկ ուրիշ Օգնական մը կամ Մխիթարիչ մը՝ Սուրբ Հոգին (տե՛ս Յովհ. 14.16):

«Մխիթարիչ» բառը (*«փարաքլետ»*) կը նշանակէ «ինչ որ մէկը, որ կը քալէ ձեր կողքին»: Երեք ու կէս տարուան ընթացքին Յիսուս աշակերտներուն հետ էր ցերեկ ու գիշեր: Ան կը սորվեցնէր եւ յոյս կու տար անոնց այս կեանքի եւ յաւիտենութեան վերաբերեալ: Այդ գեղջուկները մխիթարող լուր ստացած էին անձամբ Տէր Քրիստոսէն: Բայց երբ Ան այլեւս այս աշխարհին մէջ չէր, անոնց անհրաժեշտ էր ուրիշ Անձ մը, Որ պիտի կատարէր Մխիթարիչի դերը՝ Սուրբ Հոգին, Որ Երրորդութեան երրորդ Անձն էր:

## ՕԳՆԱԿԱՆՆԸ ԱՅՍՏԵ՛Ղ Է

«Օգնական» բառը կ'ենթադրէ, որ ինչ որ մէկը պատրաստ է օգնութիւն ցուցաբերելու, երբ անհրաժեշտ է: Յիսուսը անոնց կողքին էր աւելի քան երեք տարի շարունակ: Ան անոնց մեծագոյն Օգնականը, Ընկերը եւ Մխիթարիչն էր: Ատորմէ յետոյ՝ Պէնտէկոստէի օրը, եկաւ միւս Անձը, միւս Օգնականը՝ Սուրբ Հոգին: Այնպէս էր, ըսես Յիսուս կրկին անոնց հետ էր, եւ անոնք կրնային կատարել Մեծ յանձնարարականը՝ քարոզել Աւետարանը, բժշկել հիւանդները, հանել դէւերը եւ հրաշքներ գործել, ինչպէս առաջ, մէկ խօսքով՝ կատարել վկայութեան գործը, որ ամէն վերստին ծնած մարդու արտօնութիւնն ու պատասխանատուութիւնն է (տե՛ս Մատթ. 28.19,20, Մարկ. 16.15-18):

## ԺԱՌԱՆԳԱԿԻՑՆԵՐ

Նոյնը կը վերաբերի նաեւ մեզի: Մենք նոյն խոստման ժառանգակիցներն ենք: Առաջինը՝ մենք պէտք է ընդունինք Քրիստոսը եւ նուիրուինք Անոր, եւ ապա կրնանք ընդունիլ զօրութեան մկրտութիւնը: Մեր կեանքը

պէտք է ըլլայ Անոր յարութեան ապացոյցը: Անհրաժեշտ է աւելին, քան խօսիլը. անհրաժեշտ են մարդիկ, որոնք պիտի յայտնեն Հոգիին լիութիւնը:

## ԸՆԿՂՄԱԾ ԿՐԱԿԻ ՄԷՋ

«Մկրտութիւն» բառի սկզբնական իմաստը կրօնական չէր: Այդ բառը կ'օգտագործուէր ներկարարութեան մէջ: Ատոր համարժէքը մեր լեզուին մէջ «ընկղմիլ» բառն է: Կտորը կամ հանդերձը կ'ընկղմէր ներկին մէջ, եւ այն կ'ընդունէր այդ ներկի գոյնը կամ բնոյթը: Երբ Քրիստոսը կը մկրտէ մեզ Հոգիով, մենք կը ստանանք Հոգիին «գոյնը» կամ բնոյթը՝ հաղորդակից դառնալով Աստուածային բնութեան (տե՛ս Բ. Պետր. 1.4): Հոգին մեր մէջ է, եւ մենք Հոգիին մէջ ենք: Մենք Սուրբ Հոգիին մարդիկն ենք՝ ընկղմած կրակի մէջ:

## ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՅԼ ԳՈՐԾԵՐ

### ՓՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԲԵԼԻՆ

Մենք փրկութիւն կը ստանանք եւ վերստին կը ծնինք Սուրբ Հոգիին միջոցով: Բայց ատորմով Անոր աշխատանքը չ'աւարտիր: Անոր գործողութիւնները բազմապիսի են: Ան կը զօրացնէ մեզ՝ վկայելու համար: Հոգիով մկրտութիւնը կը նշանակէ, որ շնորհքով փրկուած եւ վերստին ծնած մարդիկ կրնան ունենալ նոր վերապրումներ եւ դառնալ Հոգիով լեցուած վկաներ Քրիստոսի համար:

### ԱՍԻԿԱ ԸՆՏՐՈՎԻ ԶԷ

Որքանո՞վ անհրաժեշտ է Սուրբ Հոգիով մկրտութիւնը: Այն անփոխարինելի էր նոյնիսկ աշակերտներուն համար, որոնք մինչ այդ կը բժշկէին հիւանդները եւ դեւեր կը հանէին: Ատիկա հնարաւոր էր, քանի տակաւին Յիսուս անոնց կողքին էր: Տէր Յիսուսը պատուիրեց անոնց սպասել մինչեւ Հոգիին ստանալը, եւ միայն ատոմէ յետոյ երթալ դաշտեր՝ ծառայելու համար: Մարիամը՝ Քրիստոսի մայրը, եւս մէկ օրինակ է: Անկասկած, ան գիտէր, որ Սուրբ Հոգին գործած էր իր կեանքին մէջ, եւ որ Անիկա էր Յիսուսի ծննդեան պատճառը, բայց ինքը նոյնպէս կը սպասէր Երուսաղէմի մէջ Հոգիին այս հետագայ աշխատանքին, որ կը կոչուէր «Հօր խոստու-

մը»: Եթէ ան ունէր աստոր կարիքը, կը նշանակէ՝ ատիկա պէտք է բոլորիս (տե՛ս Գործք 1.4):

## ՕԺՏՈՒԱԾ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ

Պարզապէս Յիսուսը տեսնելն ու Անոր ծայնը լսելը չէր, որ ականառու դարձուց աշակերտները, քանի որ անոնցմէ ոմանք հաւատացին, իսկ միւսները կասկածեցան (տե՛ս Մատթ. 28.17, Մարկ. 16.13,14, Ղուկ. 24.41). ատիկա տեղի ունեցաւ Սուրբ Հոգիով մկրտուելու շնորհիւ: Անոնք կը կղպէին դուռը, երբ կը հաւաքուէին, քանի որ կը վախնային հրեաներէն (տե՛ս Յովհ. 20.19): Անոնք չէին գոչեր փողոցներուն մէջ. «Յիսուսը կենդանի՛ է»: Սկսած առաջին օրերէն՝ Գալիլիայէն անոնք գաղտնի կը հաւաքուէին, եւ նոյնիսկ գացին ձուկ որսալու (տե՛ս Յովհ. 21-րդ գլուխ): Այնուամենայնիւ, այդ ամէնը փոխուեցաւ Պէնտէկոստէի օրը: Անոնք այլեւս չէին վախնար հրեաներու բազմութենէն. Փոխարէնը՝ բազմութիւնները կը դողային անոնց առջեւ՝ աղաղակելով. «Ի՞նչ ընենք, մարդի՛կ եղբայրներ» (Գործք 2.37): Իրականացաւ այն, ինչին մասին Յիսուսը կ'ըսէր.

«Բայց դուք զօրութիւն կ'առնէք, երբ որ Հոգին ձեր վրայ գայ, եւ իմ վկաները կ'ըլլաք... մինչեւ երկրի ծայրերը» (Գործք 1.8):

## ԻՆՉՊԷ՞Ս ԱՏԻԿԱ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ

### ԶԱՅՆ ԵՐԿՆՔԷՆ

Կրկին նայինք չորրորդ պատկերին.

«Եւ երբ որ Պէնտէկոստէի օրերը լրացան, ամէնը միաբան մէկտեղ էին: Եւ յանկարծ երկնքէն հնչին մը եղաւ՝ սաստիկ փչող քամիի պէս, եւ լեցուց ամբողջ տունը, ուր նստած էին: Եւ երեւցան անոնց բաժնուած լեզուներ՝ ինչպէս կրակէ, եւ նստաւ անոնցմէ ամէն մէկուն վրայ: Եւ ամէնը Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան ուրիշ լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին անոնց խօսիլ կու տար» (Գործք 2.1-4):

## ՈՉ ՄԷԿ ԴԱՏԱՐԿ ԽՈՍՏՈՒՄ

Ինչպիսի՛ Աստուածային զօրութիւն եւ փառք: Գործք առաքելոց գիրքի երկրորդ գլուխը աղմկոտ է եւ յագեցած է գործողութիւններով: Երկնային Հայրը դատարկ խոստումներ չի տար, որպէսզի յուսադէ՛ մեզ, իսկ յետոյ ծիծաղի մեր վրայ: Քրիստոս ըսաւ. «Գացէ՛ք ամբողջ աշխարհով...» (Մարկոս 16.15): Այն պահուն, երբ այդ «կրակէ լեզուները» հպան անոնց գլուխներուն, այդ յանձնարարականը դրուեցաւ անոնց մէջ: Աստուած գործեց, իսկ յետոյ անոնք գործեցին: Աստուածային ազդեցութիւնը յառաջացուց մարդկային հակազդեցութիւն, եւ ճիշդ ատիկա է պատճառը, որ այս գիրքը կը կոչուի Գործք առաքելոց (Առաքեալներու գործերը):

## ԱՐՏԱՀՈՍՔ

Տեղի ունեցաւ ներհոսք երկնքէն, եւ ատոր պէտք է հետեւեր արտահոսքը. «Անոր սրտէն գետեր կը հոսին» (Յովհաննէս 7.38, NKJV), ոչ թէ՛ «դէպի» Անոր սիրտը: Հոգիով մկրտուելու նպատակը զգացմունքային բաւականութիւնը չէր: Աշակերտները չըսին. «Եկէք ամէն շաբաթ աղօթքի հաւաքոյթ կազմակերպենք՝ այս զօրութիւնը վերապրելու համար»: Անոնք այլեւս չխնդրեցին զօրութիւն իրենց համար, քանի որ գիտէին, որ արդէն ունէին այն: Պետրոս առաքեալը ըսաւ. Գեղեցիկ դարպասին քով գտնուող անդամալոյծին. «Ինչ որ ունիմ, այն քեզի պիտի տամ» (Գործք 3.6):

## ԿՐԱԿՈՏ ԱԻՏՏԱՐԱՆ

Նոյնպէս, անոնք պարզապէս չնստան՝ ընտրելով նախագահող մը եւ ընդունելով բանաձեւեր հասարակական խնդիրներու վերաբերեալ: Անոնք չէին կրնար զսպել իրենք գիրենք: Անոնք պէտք է ոտքի ելլէին եւ գործէին: Պետրոս կեցաւ՝ ըսես լեցուած ելեկտրական ուժով, եւ սկսաւ քրիստոնէական ժամանակաշրջանը. աշխարհը լսեց առաջին ւստարանանչական քարոզը: Անշուշտ, ատիկա կրակոտ Աւետարան էր:

## ՊՏՂԱԲԵՐ ԱԻԵՏԱՐԱՆՉՈՒԹԻՒՆ

Եւ ինչպիսի՞ արդիւնք աստիկա ունեցաւ: Երեք հազար մարդ ընդունեց փրկութիւնը: Ճիշդ աստիկա էր Պէնտէկոստէի նպատակը: Իրականութեան մէջ, Երրորդութիւնը՝ ամբողջ Աստուածութիւնը, գործի դրաւ Իր փրկութեան եւ աւետարանչութեան ծրագիրները: Հայրը միաբանեցաւ համբարձած Տիրոջ հետ, որպէսզի ուղարկէր Հոգին՝ կորսուած աշխարհը փրկելու համար (տե՛ս Եսայիա 48.16): Ճիշդ աստիկա է Հոգիով մկրտութեան գլխաւոր նպատակը՝ այն, որ Աստուած կը փրկէ մարդիկ: Իսկ ի՞նչ կ'ընենք մենք: Մկրտութեան նպատակը ոչ թէ մեզի զգացմունքային վերապրումներ տալն է, այլ՝ օգնելը, որ գործենք Տիրոջ հետ: Մենք գիտենք, թէ ինչու Յիսուս եկաւ, եւ ինչու եկաւ Սուրբ Հոգին: Իսկ ՄԵ՞ՆՔ ինչու այստեղ ենք:

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՋՂԵՑՈՒԹԻՒՆԸ

Ինչպիսի՞ օր էր Պէնտէկոստէն: «Գետերը» սկսան հոսիլ եւ, ի վերջոյ, հեղեղեցան ամբողջ Հռովմէական կայսրութիւնը: Մարդիկ կը յառաջեն՝ ցանկալով ապրիլ Առաջին եկեղեցւոյ օրերուն մէջ, սակայն այդ ժամանակաշրջանը յատուկ չէր այդ օրերուն եւ այդ մարդոց պատճառով: Պատճառը Սուրբ Հոգիով մկրտութիւնն էր: Առանց ատոր՝ աշակերտները, հաւանաբար, կրկին ձկնորսներ պիտի դառնային Գալիլիայի մէջ եւ պիտը ծերանային՝ պատմելով տարօրինակ պատմութիւններ իրենց երիտասարդ օրերէն: Այնուամենայնիւ, անոնք փոխեցին ամբողջ աշխարհը: Այսօր այդ մկրտութիւնը հասանելի է բոլորին:

## ԱՅՍՕՐՈՒՄՆ ՀԱՄԱՐ

Այսօր ոմանք կը ցանկան զրկել հաւատացեալները՝ ըսելով, որ Հոգիով մկրտութիւնը, որուն կը հետեւին նշանները, նախատեսուած էր միայն առաջին հաւատացեալներու համար՝ «մինչեւ եկեղեցւոյ հաստատուիլը»: Անոնք կը համարեն, որ մենք պէտք է սորվինք գործել առանց այդ հաւատացեալներու հրաշագործ պարգեւներուն: Անոնք կը ներկայացնեն Առաջին եկեղեցւոյ քրիստոնէաները, որպէս վերնախաւի պատկանող խումբ, ըսես մենք չենք կրնար ըլլալ այնպիսի քրիստոնէաներ, ինչպիսին անոնք

էին: Այնուամենայնիւ, նոյնիսկ մէկ բառ Աստուածաշունչին մէջ նման բան չ'ենթադրեր: Ատիկա տեսութիւն է, որ յօրինած է անհաւատութիւնը: Իրականութեան մէջ, երբ Պօղոսը Եփեսոս գնաց Եկեղեցւոյ հիմնադրումէն 20 տարի յետոյ, 12 մարդ մկրտուեցաւ Հոգիով (տե՛ս Գործք 19.6,7):

## ՊԷՆՏԷԿՈՍԵՆ՝ ԲՈՒՈՐ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Ամէն սերունդ ունի Պէնտէկոստէի կարիքը: Մ.թ. 30 թուականին աշխարհի բնակչութիւնը կը կազմէր հարիւր միլիոն մարդ: Այսօր այդ թիւը կը գերազանցէ եօթ միլիառը եւ արագօրէն կ'աւելնայ: Այսօր Յիսուսին մասին չի գիտեր տասը անգամ աւելի շատ մարդ, քան առաջին դարի մէջ: Եկեղեցին տակաւին պէտք է հաստատուի շատ վայրերու մէջ: Անհաւատութիւնը եւ բացարձակ տգիտութիւնը Աստուծոյ մասին ամէնուր են: Անկասկած, մենք շատ աւելի յուսահատօրէն ունինք Սուրբ Հոգիի զօրութեան կարիքը:

Այդ իսկ պատճառով, կ'ուզեմ մանրամասնօրէն բացատրել ձեզի՝ ըստ Աստուածաշունչին, թէ ինչո՞ւ նոյն այդ մկրտութիւնը նախատեսուած է մեզի համար, եւ ինչպէս ստանալ այն: Կարդացէ՛ք այն, ինչ որ Պետրոսը՝ Սուրբ Հոգիի օծութեան ներքոյ, քարոզեց բազմութեան Պէնտէկոստէի օրը՝ ըսելով, թէ ով կրնար մկրտուիլ Սուրբ Հոգիով.

«Որովհետեւ ձեզի եւ ձեր որդիներուն համար է այս խոստումը, եւ այն բոլոր հեռաւորներուն համար, որոնց մեր Տէր Աստուած պիտի կանչէ» (Գործք 2.39):

## ՉԵԶԻ ՀԱՄԱՐ

Առաջինը՝ Պետրոս ըսաւ, որ այն «ձեզի համար» է՝ նոյն մարդոց, որոնց ան քիչ առաջ մեղադրեց. «Անոր (Յիսուսին)... առիք, անօրէններու ձեռքով փայտի վրայ գամուած սպաննեցիք» (Գործք 2.23): Չնայած ատոր՝ ան յայտարարեց. «Ապաշխարեցէ՛ք, եւ ձեզմէ ամէն մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերու թողութեան համար, եւ Սուրբ Հոգիին պարգեւը կ'ընդունիք» (Գործք 2.38): Խօսքը այն մարդոց մասին է, որոնց Յիսուս անուանեց «չար ազգ» (Ղուկաս 11.29), «անհաւատ եւ խոտորուած» (Մատթէոս 17.16, Ղուկաս 9.41):



## ՁԵՐ ԵՐԵՆԱՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Երկրորդը՝ Ան ըսաւ. «Ձեր որդիներուն համար»՝ յաջորդ սերունդին: Ոմանք ուշ երեխաներ կ'ունենան: Այնպէս որ, հնարաւոր էր, որ Պէնտէկոստէին 100 տարի յետոյ մարդիկ դեռեւս ստանային այս օրհնութիւնը եւ խօսէին լեզուներով: Ղուկաս 2.36-ին մէջ գրուած է 84 տարեկան այրի կնոջ մը մասին: Այնուամենայնիւ, «որդիներ» բառը կը վերաբերէր ոչ միայն անոնց ընտանիքներուն, այլեւ՝ սերունդներուն, այսինքն՝ Իսրայէլի զաւակներուն:

## ԲՈՒՐ ԿԵՆՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Երրորդը՝ Պետրոս ըսաւ. «Այն բոլոր հեռաւորներուն համար»՝ ժամանակի եւ տարածութեան մէջ, մինչեւ երկրի ծայրերը, ուր Քրիստոսը պատուիրեց եկեղեցիին Աւետարանը տանիլ (տե՛ս Մատթ. 28.19,20, Մարկ. 16.15,16): Այս առաջադրանքը շատ տարիներ պիտի պահանջէր, որոնք մեծապէս պիտի գերազանցէին առաքելական ժամանակաշրջանը: Օրինակ, Նոր Զելանտիան կարելի է համարել երկրի ծայրերէն մէկը. ոչ մէկ առաքեալ գացած էր այնտեղ մինչեւ 1814 թուականը: Այդ առաջադրանքը աւարտած չէ նոյնիսկ այսօր. այնպէս որ, մենք տակաւին ունինք այս զօրութեան կարիքը:

## ԱՆՈՆՑ ՀԱՄԱՐ, ՈՐ ՄԵՐ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ՊԻՏԻ ԿԱՆՉԷ

Չորրորդը՝ Պետրոս ըսաւ այն, ինչ որ անկարելի է սխալ հասկնալ. «ամէն (մէկուն)... համար, որ մեր Տէր Աստուած պիտի կանչէ»: «Աստուծո՛մէ կանչուածները» անոնք են, որոնք կ'ընդունին Քրիստոսը. «Ոչ ոք կրնայ Ինծի գալ, եթէ Հայրը, որ Զիս ուղարկեց, չքաշէ զինք» (Յովհաննէս 6.44): Բոլոր հաւատացեալները կանչուած են, եւ բոլորն ալ խոստում ստացած են նոյն պարգեւի մասին, որ այդ օրը ստացան Պետրոսն եւ անոր 119 ընկերները: Ըրէ՛ք այն, ինչ որ առաքեալները ըրին, եւ դուք պիտի ստանաք այն, ինչ որ ստացան անոնք: Հաւատացէ՛ք, որ Աստուծոյ խոստումները տրուած են բոլորին. «Եւ մի՛ գինովնաք գինիով... այլ՝ լեցուեցէ՛ք Հոգիով» (Եփեսացիս 5.18):

## ԱՆՄԻՋԱՊԷՍ ՅԻՍՈՒՄԷՆ

Սկրտողը միայն Յիսուսն է, ուրիշ ոչ ոք: Մի՛ բաւարարուիք երկրորդական վերապրումով: Ունեցե՛ք ձեր անձնական Պէնտէկոստէն: Մի՛ փորձէք օգուտ քաղել ինչ որ մէկու մը փորձառութենէն, որեւէ խարիզմաթական հաւաքոյթի մը ժամանակ: Սուրբ Հոգիին կրակը չեկաւ մեծ ընդհանուր կրակէ լեզուով, որ բոլորը հաւաքուէին աստոր շուրջը եւ տաքնային՝ յարմարաւէտ համաժողովներ անցընելով: Փոխարէնը, այն եկաւ առանձին «լեզուներով»՝ փոքրիկ կրակներով, եւ «նստաւ անոնցմէ ամէն մէկուն վրայ» (Գործք 2.3): Ասիա շատ կարեւոր է: Իրականութեան մէջ, այդ կրակէ լեզուները նման են հզօր շարժական ելեկտրակայաններու, որոնք մարդոց հետ են, ուր ալ անոնք երթան:

## ՎԱՌԻԼ ՀՈԳԻՈՎ

Մենք կ'ապրինք հոգեւորապէս խաւար եւ ցուրտ աշխարհի մէջ: Չպաղելու լաւագոյն միջոցը Սուրբ Հոգիով վառիլն է: Աստուած կը վառէ ձեր սրտի զոհասեղանի կրակը, որպէսզի դուք դառնաք կրակը տարածող:

# ՄԱՍ ԵՐԿՈՒ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ. ԻՆՉՊԷ՞Ս ԸՆԴՈՒՆԻԼ ԱՅՆ

Թերեւս մտածէք, որ Սուրբ Հոգիին նման թանկ պարգեւ ընդունիլը շատ բարդ կ'ըլլայ: Ճիշդ հակառակը՝ աստիկա շատ դիւրին է: Դուք կրնաք ընդունիլ մկրտութիւնը Սուրբ Հոգիով ճիշդ այնտեղ, որտեղ կը գտնուիք: Այս բաժինին մէջ ես շատ պարզ պիտի սորվեցնեմ, թէ ինչպէս ընդունիք Սուրբ Հոգին:

## ՀԱՒՏՏԱԼ ՊԱՐԳԵՒՈՂԻՆ

Հազարաւոր անհաւատներ կու գան մեր ւեւտարանչական հաւաքոյթներուն: Անոնցմէ ոմանք իսկապէս հեռու են Աստուծմէ. անոնք չար եւ անբարոյ են, կախուածութիւններ ունին, կապուած են արդի հաւատալիքներով կամ խորհրդապաշտութեամբ (occultism) կամ մեծ աշխատանք կը կատարեն այնպիսի կրօններու համար, որոնք ոչինչ կու տան իրենց: Առաջին հերթին, անոնք պէտք է փրկութիւն ստանան: Պօղոս ըսաւ իր օրերու նորադարձներուն մասին. «(դուք) լուացուեցաք... սրբուեցաք» (Ա. Կորնթացիս 6.11): Թերեւս անցեալի մէջ անոնց մարմիններուն մէջ կը բնակէին անմաքուր հոգիներ, սակայն մենք կը տեսնենք, թէ ինչպէս հարիւր հազարաւոր այդպիսի մարդիկ կը դառնան Սուրբ Հոգիին տաճարները: Ինչպէ՞ս: Կայ ընդամէնը երկու պայման. առաջինը՝ ապաշխարութիւնը, եւ երկրորդը՝ հաւատքը Տէր Յիսուս Քրիստոսին հանդէպ:

«Պետրոսն ալ անոնց ըսաւ. «Ապաշխարեցէ՛ք, եւ ծեզմէ ամէն մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունով՝ մեղքերու թողութեան համար, եւ Սուրբ Հոգիին պարգեւը պիտի ընդունիք»» (Գործք 2.38):

## ԱՊԱՇԵԱՐՈՒԹԻՒՆ

Յիսուս ըսաւ. «Ես պիտի խնդրեմ Հօրմէն, եւ ուրիշ Մխիթարիչ մը պիտի տայ ձեզի... Որուն աշխարհը չի կրնար ընդունիլ» (Յովհաննէս 14.16,17): Պետրոս ըսաւ. «Ուրեմն, զոչացէ՛ք (կամ՝ ապաշխարեցէ՛ք) եւ ետ դարձէ՛ք, որ ձեր մեղքերը ջնջուին, որ Տիրոջ երեսէն հանգստանալու ժամանակները գան... Ապաշխարեցէ՛ք... մեղքերու թողութեան համար, եւ Սուրբ Հոգին պարգեւը պիտի ընդունիք» (Գործք 3.19,20, 2.38):

## ՍՈՒՐԲ ՊԱՐԳԵՒ

Սուրբ Հոգին սուրբ է: Աստուածաշունչը կ'օգտագործէ աղանիի խորհրդապատկերը՝ Սուրբ Հոգին նկարագրելու համար: Աղանին մաքուր թռչուն է. այն իր բոյնը չի կառուցեր աղբակոյտի քով: Սուրբ Հոգին չի բնակիր մեղաւոր մարդու կեանքին մէջ. Ան չափազանց զգայուն է: Երկնային ջուրերը չեն հոսիր աղտոտ ջրանցքներով՝ ո՛չ աղտոտ մտքերով, ո՛չ ալ աղտոտ բերաններով:

## ԼՈՒԱՅՈՒԱԾ ԱՐԻՒՆՈՎ

Սուրբ Հոգին միայն կը տրուի Աստուծոյ որդիներուն եւ դուստրերուն, որոնք լուացուած են Յիսուսի արիւնով: Ոչ ոք կրնայ արժանանալ ատոր՝ առանց Գողգոթայի աղբիւրին մէջ մաքրուելու: Արիւնը կը նախորդէ կրակին: Ոչ մէկ ուրիշ մաքրման միջոց անհրաժեշտ եւ հնարաւոր է: Մենք չենք կրնար դարձնել մենք մեզ աւելի սուրբ կամ աւելի արժանի, քան Յիսուսի արիւնը, որ կը դարձնէ մեզ: Սուրբ Հոգին պարգեւ է, որուն անկարելի է շահիլ:

## ՀԱՒԱՏՔ

«Բայց առանց հաւատքի անկարելի է հաճոյ ըլլալ (Աստուծոյ), որովհետեւ Աստուծոյ մօտեցողը պէտք է հաւատայ, թէ Ան կայ, եւ թէ Իրեն խնդրողներուն վարձահատոյց կ'ըլլայ» (Եբրայեցիս 11.6):

«Ասիկա ըսաւ այն Հոգին համար, որ պիտի ընդունէին Անոր հաւատացողները» (Յովհաննէս 7.39):

«Ո՛վ անմիտ գաղատացիներ... օրէնքի գործերէ՞ն ընդունե-  
ցիք Հոգին, թէ՞ հաւատքը լսելէն» (Գաղատացիս 3.1,2):

## ԵԿԷ՛Ք ՀԱՍԱՐՁԱԿՈՒԹԵԱՄ

Յիսուսին քով գալ խնդրելով եւ աղաչելով՝ կը նշանակէ բոլորովին հա-  
ւատք չունենալ: ՀԱԲԱՏՔԸ Կ'ԸՆԴՈՒՄՆԻ: Մի՞թէ դուք պէտք է համոզէք Յի-  
սուս Բրիստոսին մկրտել ձեզ Իր սուրբ կրակով: Ան արդէն խոստացած է  
ատիկա: Եկէ՛ք համարձակութեամբ, որ ընդունիք այն, ինչ որ Ան կ'առա-  
ջարկէ ձեզի: Ատիկա պարզեւ է, եւ դուք պէտք է հաւատաք Պարզեւողին,  
մինչեւ ընդունիք այն, ինչ որ Ան կու տայ:

## ԱՅԼԵԿԱ ՊԷՏՔ ԶԷ ՍՊԱՍԵԼ

Ի՞նչ կ'ըսէք «Երուսաղէմի մէջ նստելու» մասին: Յիսուս պատուիրեց  
աշակերտներուն սպասել, բայց այդ ժամանակ Սուրբ Հոգին տակաւին  
չէր տրուած, քանի որ Յիսուս տակաւին չէր փառաւորուած (տե՛ս Յովի.  
7.39): Անոնք պէտք է սպասէին այդ պատմական պահուն: ԲԱՅՅ ԱՅԺՄ  
ԱՆ ԱՅՍԵՆԵՐ Է: Պէտնտկոստէն իրողութիւն է, եւ դուք կրնաք անձամբ վե-  
րապրիլ այն: Մեր հաւաքոյթներուն ժամանակ մենք չենք աղաչեր. մենք  
կ'ընդունինք: Յիսուս կը սիրէ կատարել Իր Խօսքը մեր կեանքին մէջ: Մենք  
հաւատացեալներ ենք, ոչ թէ մուրացկաններ:

## ՍՈՒՐԲ ԼԵՁՈՒՆ

Երբ մենք կը ստանանք Սուրբ Հոգիով իրական մկրտութիւնը, ատոր  
կը հետեւին այդ մկրտութեան իրական նշանները.

«Ամէնքը Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան ուրիշ լեզուներով  
խօսիլ, ինչպէս որ Հոգին անոնց խօսիլ կու տար» (Գործք 2.4):

Ինչպէ՞ս: Հարիւր քսան աշակերտները փառք կու տային Աստուծոյ,  
երբ յանկարծ եկաւ «սաստիկ փշող քամին» (Գործք 2.2) եւ կրակէ լեզու-  
ները, եւ անոնց սրտերը պայթեցան ուրախութենէն: Անոնք բացին իրենց  
բերանները՝ խօսելու համար, եւ Հոգին խօսիլ տուաւ անոնց՝ իրենց հա-  
մար անյայտ լեզուներով:

## ՆՈՅՆ ԱՐԴԻՒՆՔԸ

Եթէ մենք կը ստանանք նոյն մկրտութիւնը, այն պէտք է ունենայ նոյն արդիւնքը: Մկրտող Յիսուսը չէ փոխուած, չեն փոխուած նաեւ Անոր մեթոտները: Աստուծոյ Թագաւորութեան մէջ մենք պատճէններու պատճէններ չենք. մենք բնօրինակներ ենք Բնօրինակէն՝ ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԷՆ: Երբ կը մկրտուինք Սուրբ Հոգիով, մենք չենք ստանար մնացորդներ, այլ՝ իրական փորձառութիւն:

## ԼԵՁՈՒՆԵՐ

Լեզուներով խօսելու կարողութեան մասին գրուած է ամբողջ Գործք առաքելոց գիրքին մէջ.

«Եւ զարմացան Պետրոսին հետ եկող հաւատացեալները, որ թլփատութենէն էին, որ հեթանոսներու մէջ ալ Սուրբ Հոգիին պարգեւը կը թափէր, որովհետեւ կը լսէին, որ անոնք լեզուներով կը խօսին եւ զԱստուած կը փառաւորէին» (Գործք 10.45,46):

Առաքեալները լեզուներով խօսիլը կը համարէին Սուրբ Հոգիով մկրտուելու ապացոյց: Սիմոն մոզը «տեսաւ» Հոգիին այս գերբնական դրսեւորումը (տե՛ս Գործք 8.17-19): Պօղոս ստացաւ այս մկրտութիւնը (տե՛ս Գործք 9.17) եւ ըսաւ, որ ինքը լեզուներով կը խօսէր (տե՛ս Ա. Կորնթ. 14.18): Այս մասին գրուած է նաեւ այլ պարագաներու (տե՛ս Գործք 11.17, 13.52, 19.6):

Պէնտէկոստէի օրը Պետրոսը բացատրեց, թէ ինչ կը կատարուէր՝ մէջբերելով Յովէլ մարգարէին (տե՛ս Գործք 2.17-19): Յովէլը մարգարէացաւ, որ մարդիկ պիտի մարգարէանային: Երբ անոնք կը խօսէին լեզուներով, Պետրոս ըսաւ. «Ահա՛ ատիկա» (Գործք 2.16): Երբ լեզուներով խօսիլը կը թարգմանուի, ատիկա մարգարէութիւն է:

## ԱՐՏԱՔԻՆ ՆՇԱՆ

Մի՞թէ Աստուած կրնար տալ արեւի լաւ նշան, քան լեզուները, որպէսզի վստահեցնէր մեզ, որ Հոգիին ներկայութիւնը մեր ներսն է եւ մեր վրայ է,

երբ մենք կը քարոզենք Աւետարանը: Երբ մենք տկար, վախցած եւ ճնշուած կը զգանք, ինչպէս Պօղոսը (տե՛ս Ա. Կորնթ. 2.3), հրաշալի լեզուները վստահութիւն կը ներշնչեն մեզի: Առանց որոշակի արտաքին դրսեւորման՝ մենք կրնայինք յաւիտեան աղօթել եւ այդպէս ալ չունենալ համոզուածութիւն, սակայն մենք ստացած ենք նշան Անորմէ:

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԱՂՏՆԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ

Ինչպիսի՛ հրաշալի բան: Պօղոս ըսաւ, որ երբ կը խօսինք լեզուներով, մենք զաղտնիքներ կը պատմենք Աստուծոյ (տե՛ս Ա. Կորնթ. 14.2): Լեզուները միակ հաղորդակցման միջոցն է, որը սատանան չի հասկնար: Ամէն ինչ շփոթեցնողը ի՛նքը կը շփոթուի, քանի որ ան չի գիտեր նոյնիսկ Սուրբ Հոգիին այբուբենը: Սատանան չի կրնար կոտրել Սուրբ Հոգիին զաղտնի ծածկագիրը, որ կապ կը ստեղծէ մեր եւ երկնային գահին միջեւ:

## ՆԱԽԱՏԵՍՈՒԲԾ՝ ԱՂՕԹՔԻ ՀԱՄԱՐ

Մեր մարմինները «Սուրբ Հոգիի տաճար» են (Ա. Կորնթացիս 6.19): Յիսուս ըսաւ, որ տաճարը աղօթքի տուն է (տե՛ս Մատթ. 21.13, Մարկ. 11.17): Եթէ մեր մարմինները տաճարներ են, այսինքն՝ աղօթքի տուներ, որոնց մէջ կը բնակի Սուրբ Հոգին, Ան պիտի բարձրացնէ մեր միջոցով պարզ եւ ազդեցիկ աղօթքներ, որոնք պիտի հասնին Աստուծոյ գահին: Հոգին կը սիրէ աղօթել, եւ ճիշդ այդ պատճառով է, որ Հոգիով լեցուած մարդիկ մշտապէս պատրաստ են աղօթել: Ատիկա դառն պարտականութիւն չէ, այլ՝ փառավոր հաճոյք եւ արտօնութիւն: Յիսուս ըսաւ. «Երբ որ Ան՝ ճշմարտութեան Հոգին գայ, Ան... Զիս պիտի փառաւորէ» (Յովհաննէս 16.13,14):

## ՊԷՆՏԷԿՈՍՏԻ ՆՇԱՆԸ

Երբ Սողոմոնը ընծայեց Տաճարը, «շխիհայի»՝ Աստուծոյ տեսանելի փառքի լոյսը շողաց Սրբութեան սրբոցին մէջ գտնուող ոսկիէ Քաւութեան (Ուխտի տապանակի կափարիչին) վրայ: Անոր աղօթքէն յետոյ տաճարի ամբողջ տարածքը՝ սրբարանը եւ արտաքին գաւիթները լեցուեցան փառքով: Քահանաները չէին կրնար տաճար մտնել աստոր

պատճառով, եւ բոլորը ինկան գետին՝ երկրպագելով Աստուծոյ եւ գոհանալով Անորմէ (տե՛ս Բ. Մնաց. 7.1-3): Ասիկա հինկտակարանեան պատկեր է:

## ԼԵՑՈՒՆՈՒԹԻՒՆ

Եթէ մենք փրկուած ենք, Քրիստոսի լոյսը կը բնակի մեր սրտի ներքին սրբարանին մէջ, բայց երբ մենք կ'աղօթենք Սուրբ Հոգին ստանալու համար, Ան ազդեցութիւն ձեռք կը բերէ մեր ամբողջ էութեան վրայ՝ հոգիի, անձի եւ մարմինի: Ան ամբողջովին կը հեղեղէ եւ կը մկրտէ մեզ:

## ԽՆԴՐԵՑՔ, ՓՆՏՈՇԵՑՔ, ԹԱԿԵՑՔ

Այսպիսով, խնդրեցէ՛ք, եւ վերջ: Մաքրուելով Յիսուսի փրկարար արիւնով՝ մենք կը դառնանք Աստուծոյ զաւակներ, եւ Սուրբ Հոգիով մկրտութիւնը կը դառնայ մեր բնածին իրաւունքը: Յիսուս կը խրախուսէ մեզ յատկապէս այս պարզեւի վերաբերեալ. «Խնդրեցէ՛ք... փնտռեցէ՛ք... թակեցէ՛ք... Որովհետեւ ան, որ կը խնդրէ, կ'առնէ, եւ ով որ կը փնտռէ, կը գտնէ, եւ ով որ դուռը կը թակէ, կը բացուի անոր» (Ղուկաս 11.9,10): Խնդրեցէ՛ք «հաւատքով... առանց երկմտելու» (Յակոբոս 1.6):

## ՈՉ ՄԷԿ ՀՆԱՐԱԻՈՐՈՒԹԻՒՆ՝ ԻՆՔՆԱԿՈՉՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ

Այն, ինչ որ մենք կը ստանանք, կը տրուի միայն Աստուծմէ: Սատանան չի կրնար պատասխանել Յիսուսի անունով եղած աղօթքներուն: Ան ոչ մէկ հնարաւորութիւն ունի՝ միջամտելու մեր եւ երկնքի անմիջական կապին մէջ, երբ մենք կը խնդրենք Սուրբ Հոգին երկնային Հօրմէն: Ոչ մէկ պիղծ դէւ կրնայ գալ մեր քով՝ Սուրբ Հոգիին կերպարանքով: Կարդացէ՛ք Ղուկաս 11.11-13-ը.

«Եւ ձեզմէ ո՞վ է, որ հօրմէն իր որդին հաց ուզէ, մի՞թէ քար կու տայ անոր, կամ եթէ ձուկ՝ մի՞թէ ձկան տեղ օձ կու տայ անոր: Եւ կամ հաւկիթ ուզէ, մի՞թէ կարիճ կու տայ անոր: Արդ եթէ դուք, որ չար էք, գիտէք բարի պարգեւներ տալ ձեր որդիներուն, ալ որքա՞ն աւելի երկնաւոր Հայրը Սուրբ Հոգին կու տայ անոնց, որ կ'ուզեն Անորմէ»:



Ահա եւ վերջնական պատասխանը: Մենք չենք կրնար աւելի պարզ հաւաստիացում ստանալ:

## Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԸՆԷՔ ՀԻՄԱ

Այժմ, կարդալով այս գիրքը, դուք գիտէք, թէ Տէրը ինչ մտադիր է ընել ձեր կեանքին մէջ. մկրտել ձեզ Սուրբ Հոգիով: Յիշեցէ՛ք, որ ՅԻՍՈՒՄԸ եւ միայն ՅԻՍՈՒՄՆ է Սուրբ Հոգիով Մկրտողը (տե՛ս Յովհ. 1.33): Եւ Ան ձեզի հետ է ձիշդ հիմա:

Եթէ դուք ընդունած էք Յիսուսը՝ որպէս Տէր եւ Փրկիչ, ձեր մեղքերը ներուած են: Դուք լուացուած էք Աստուծոյ Գառան արիւնով՝ մաքրուելով ձեր բոլոր մեղքերէն, եւ կրնաք ստանալ այս փառավոր պարգէւը: Նոյնիսկ կարիք չկայ, որ սպասէք որեւէ յատուկ եկեղեցական ծառայութեան: Յիսուսը ձեզի հետ է ձիշդ այս պահուն: Սկսէ՛ք փառք տալ Անոր անուանը:

Երկրպագեցէ՛ք Տիրոջը, փա՛ռք տուէք Անոր անուանը, եւ Յիսուս Քրիստոսը պիտի մկրտէ ձեզ Սուրբ Հոգիով եւ կրակով:

Այն, ինչ որ ունէին առաջին քրիստոնէաները, նոյնպէս ձեզի համար է, ինչպէս եւ իւրաքանչիւրի, քանի որ Յիսուսը կը սիրէ ձեզ: Յիշեցէ՛ք. Յիսուսին պէտք չէ համոզել, որ մկրտէ ձեզ Սուրբ Հոգիով: Անոր պէտք չէ համոզել, որ սիրէ ձեզ, եւ Ան այնքա՛ն կը սիրէ ձեզ, որ պիտի մկրտէ Սուրբ Հոգիով հիմա... ՃԻՇԴ ՀԻՄԱ:

## ԹՈՂ ԱՏԻԿԱ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱՅ

Եւ հիմա, թանկագին Տէր Յիսուս, թող որ հետս կատարուի այն, ինչ որ կատարուեցաւ այն 120 աշակերտներուն հետ, երբ լեցուեցան Սուրբ Հոգիով: Ես կարդացի Մարկոս 16.20-ը. «Անոնք ալ դուրս գացին, ամէն տեղ կը քարոզէին, եւ Տէրը կը գործակցէր անոնց հետ եւ Խօսքը կը հաստատէր այն նշաններով, որ կը հետեւէին: Ամէ՛ն»: Ես չեմ սպասեր, այլ խոնարհաբար կ'ընդունիմ Քու զօրութիւնը, առաջնորդութիւնը եւ շտկումը: Շնորհակա՛լ եմ Քու օծութեան համար: Թող որ իմ մահկանացու շուրթերը քարոզեն յաւիտենական Աւետարանը, եւ իմ մահկանացու ձեռքերը կառուցեն Քու յաւիտենական Թագաւորութիւնը՝ Հօր փառքի համար: Թող ամբողջ աշխարհը փրկուի, Յիսուսի անունո՛վ:



Այցելելք ՌԷՅՆՀԱՐՏ ՊՈՆՔԻԻ Ֆեյսպուքի էջը,

«Evangelist Reinhard Bonnke – Official Page»



որպեսզի խօսք ստանաք

*Ղարուծող գահեն՝ ամեն օր:*



«Աւետարանչութիւնը հրեղէն կառք է՝ բոցավառող անիւներով, որուն մէջ ջերմեռանդ ավետաբերը կը քարոզէ կրակէ ԱՒԵՏԱՐԱՆԸ»:

ԱՅՏԵԼԵՑԷՔ ՄԵՁ ԱՅՍՕՐ:

# «ԱՄԵՏԱՐԱՆՉՈՒԹԻՒՆԸ ԶՐԵՂԸՆ ԿԱՌԷ Է՝ ԲՈՑԱՎԱՌՈՂ ԱՆԻՒՆԵՐՈՎ, ՈՐՈՒՆ ՄԵՋ ՋԵՐՄԵՌԱՆԴ ԱՄԵՏԱԲԵՐԸ ԿՐ ԶԱՐՈՉԷ ԿՐԱԿԵ ԱՄԵՏԱՐԱՆԸ: ԹՈՅԼ ՏՈՒԷՔ, ՈՐ ՍՈՒՐԲ ԶՈԳԻՆ ՁԵՐ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ ԴԱՐՁՆԷ ԻՐ ԿԱՌԸ»:

## ՌԵՅՆԱՐՏ ՊՈՆՔԷ

Դուք հրավտա՞նգ էք, թե՞ հրակայուն: Այս աշխատության մեջ, որ Սուրբ Հոգիին մասին է, ամետարանիչ Ռեյնհարտ Պոնքեն կը պատմե իր յաջողության գաղտնիքի՝ Սուրբ Հոգիի կրակին մասին: Նա կը ներկայացնե շարք մը անփոխգիշումային եւ մեծագոյն ճշմարտութիւններ Սուրբ Հոգիին մասին, որոնք կը հանդիսանան իր՝ աւելի քան յիսունամեայ ծառայութեան անկիւնաքարը: Միսիոներական դաշտին մեջ վերապրած դժուարին պահերու եւ նեղութիւններու ընթացքին ծնած այս ճշմարտութիւնները՝ Սուրբ Հոգիին կրակէ սկզբունքները, կը պարունակեն խորունկ դասեր Սուրբ Հոգիին մասին, որոնք քննարկումի ենթակայ չեն այն հաւատացեալին կամ ծառայողին համար, որ կը ցանկայ գործել Սուրբ Հոգիին գերբնական զօրութեամբ եւ պարզներով:

Այս գիրքին մեջ դուք պիտի ծանօթանաք Ռեյնհարտ Պոնքէի հաւատքին եւ Սուրբ Հոգիի մասին ուսմունքին, որ թարմութիւն պիտի բերէ ձեր կեանքին մեջ, պիտի խթանէ ձեզ եւ նոր ձեռք պիտի ներկայացնէ Երրորդութեան երրորդ Անձի գործունէութիւնը: Եթէ կ'ուզէք ունենալ կեանքով լեցուն եւ պտղաբեր ծառայութիւն կամ քրիստոնէական ընթացք, անպայման ընթերցեցէք այս գիրքը: Սուրբ Հոգիին մկրտութիւնը կը շարունակէ մնալ այս աշխարհը ամետարանչութեան կրակով վառելու բանալին: Եւ մեր գիտելիքը Սուրբ Հոգիի Անձին, ներկայութեան եւ զօրութեան մասին, նաեւ Անոր հանդէպ ունեցած մեր արձագանգն ու հաւատքը այն գործունէ է, որ այս աշխարհը պիտի փոխէ :



Աւետարանիչ Ռեյնհարտ Պոնքեն «Քրիստոսը՝ բոլոր ազգերու համար» ծառայութեան հիմնադիրն է, որ յայտնի է իր մեծ ամետարանչական հաւաքոյթներով Ափրիկէի մայրցամաքի մեջ եւ աշխարհով մէկ: Ներկայիս այս ծառայութիւնը կը ղեկավարէ Դանիէլ Քոլենտան: Աւետարանիչ Ռ. Պոնքեն մեծ նախանձախնդրութիւն ունի Աւետարանին համար եւ կը ծառայէ փրկութեան եւ բժշկութեան հզօր օժութեան ներքոյ: Ան շարք մը գիրքերու հեղինակ է, որոնց կարգին են «Աւետարանչութիւն կրակով» նաեւ «Սուրբ Հոգի. յայտնութիւն եւ յեղափոխութիւն» գիրքերը: Անոր գիրքերը թարգմանուած են բազմաթիւ լեզուներով, եւ միլիոնաւոր օրինակներ հասանելի են ամբողջ աշխարհի մեջ: Ան ամուսնացած է Աննիի հետ, ունի երեք երեխայ եւ ութ թոռ: Այցելէ՛ք [ReinhardBonnke.com](http://ReinhardBonnke.com) կայքը:

**CfaN** CHRIST  
FOR ALL NATIONS  
[CfaN.org](http://CfaN.org)



Չենուեցէ՛ք Ռեյնհարտ Պոնքէին: Տեսածեցէ՛ք պատկերակը:

Այս գիրքը նուէր է հեղինակին կողմէ  
եւ վաճառքի ենթակայ չէ: